Բ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԻԱԹ

Ա

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԿԱՐԱՎԱՆՔՆԵՐ

1

ԼԱԼԱՋԱՐ

(Հուլսպ գիւղի բարբառով) *)

Է թագաւոր կըլլի, ըդոր իրէք խատ աղջիկ կըլլի, էդ աղջիկներ ասին.

—Մեր խէր ընչի մեզի չտար մարդի. արէք, ամէքիս մէ ձմերուկ բերէնք, գրեէնք վրէն, օղորկենք թագաւորին։

Ձմերուկ որ գրին, պրծան, ամենք մէկ դանակ զանին ձմերուկներէն մէջ, օղորկին թագաւորի կուշտ։

Թագաւոր վախիլ, վազիրը խանչեց, էկան ուր կուշտ, ասին.

—Թագաւոր ապրած, քո աղջիկներ խատած են, ձմերուկներ կտրենք, որ մէկ մարդացու է, էնի մարդի էթայ։

Էն ջոջ աղջկայ ձմերուկ կտրին, որ լաւ էր, ասին.

—Ըսու սաղ եղի գիւթիպ (ողջ տեղը գնացեր է)։

Միջնեկ աղջկայ ձմերուկ կտրին, տեսան որ խատուկ ա, ասին.

—Էսի մարդացու աւ։

Էն պստրկին էլ կտրին, որ խակ աւ։

Թագաւոր էն միջնեկ աղջկան ասաց.—Արի, քեզի տամ մարդի։

—Թագաւոր ապրած, ասաց, ընձի մէ ձի տուր, էթամ աշխըրք-

*) 1891—92 թուի ձմեռը Սուրմալուի գաւառի Կուլպպ գիւղը մնացած՝ գիւղացոց օդաւետ յանախած՝ մօտ 10 հէքիաթ լսած եւ գրի առած եմ։ Սոյն լեռնայինն գիւղացիբը յայնցի հէքիաթ ասողներ են։

ներ պատահիմ. մէ ձեռք էլ ասպասպ տու, որտե որ լաւ տղայ մը գտայ, գամ քեզի ասեմ, ընձի տու ընդունի

Խօրհից թամանեատար էլաւ, ընկաւ ճամբան։

Տղամարդի դրացին խոպաւ, ձինը քշեց, գնաց մէ խէլի ճանրախ. տեսաւ մէ գէլ, մէ էրախայ առիւր բերան՝ գալըմա. ձինը քշեց վրըէն, գէլը էրախան թողեց, վախաւ։

Էդ աղջիկ գնաց, վերցրեց տղին ուր գիրկը։

Էդ տղէն ասաց.—Ղարիպ աղբէր ջան, ես թագաւորի տղէն եմ, կը տանես իմ խօրս. ես եմ, մէ ումուտ (յոյս). ընձի տար թագաւորի կուշտ, քեզի մալ ու դոլվաք կուտայ՝ չառնիս. ընոր մէ լալազար անուն ձի կայ, էնի ուզայ, որտե որ նեղութենի մէջ ընկնես, էնի քեզի կը փրցընէ։ Որ կը խեծնիս, նավալանիսը կըլլի էրկնքի էրես, քեզի կուտայ Սամուէլայ քամու բերան. ասա,—ես կը խաղամ քո փորի տակ։ Որ կասայ՝ զանեմ, կեթաս օխտը դաբաղա գետնի տակ, դու ասա՝ քամվիդ վրէն կըլլեմ։ Էն գախ լալազար կասայ՝ դու իմ տէրն ես, ես էլ քո ձին եմ։

Թագաւորի աղջիկն էր, տղէն առաւ-գնաց, էն տեղէն մէ լըփրատին (չառատ) մէկն էկաւ.

—Շան որդի, ասաց։ Թագաւորի տղէն դուր ես տանըմ, մեր թագաւոր ցնդուաւ։

Թագաւորի աղջիկ ասաց ուրին-ուրին.—Ա՛յ-հմ, ես աղջիկ եմ, էդի աղամարդ, իմ ձեռնից կառնի, կեթայ։

Թագաւորի աղջիկն էր, չարաց նամարտութեն, մէ չափալեղ զանեց, որ զանեց՝ բերնից ջուրը թռաւ։

Ըդ տղէն էր, ետ դարձաւ, թողեց-գնաց։

Աղջիկը մէ խէլի տեղ էլ գնաց, մէ մարդ էլ էկաւ բռասց, ասաց.

—Շան որդի, թագաւորի տղէն դուր ես տանըմ։ Էկաւ, ինչ ա՝ տղէն թագաւորի աղջկայ ձեռնից առնէր։

Թագաւորի աղջիկ մէ վէտ որ չզանեց՝ էդ մարդի վիզ լելուեցաւ։

Թագաւորի աղջիկ էդ տղէն վերցրեց, տարաւ, տուեց թագաւորին։

Թագաւորը ուրախցաւ, էլաւ էդ տղի էրեսները պաչեց։

Մէ ժուկ ու ժամանակ էդ թագաւորի աղջիկ մնաց էդ թագաւորի կուշտ. մէ օր ասաց.

—Թագաւոր, ընձի մուրախաս (արձակում, հրաման) տու, ես էթամ։

—Որդի, ինչ ես ուզըմ, քեզի տամ, քո ամակի տկից թու ըլլեմ։

—Թագաւոր ապրած, ես չնորհակալ եմ քեզնից, ինչ պտի տաս։

—Չէ, ուզա։

—Էդքան ընձի չարչարըմ ես, քո Լալազար ձինը տուս։

—Հայ քո սորվեցնողի վիզը կտրի, որդի, իմ ձինը մի ուզեր, ինչ ղսար մալ ու դոլվար կուզես՝ տամ։

Թագաւորի աղջիկն էր, խոռվաց, էլաւ focկ ու սարից դուս։

Էն տղէն ընկաւ էդ աղջկայ էտև, ասաց.

—Էնի իմ խէրն ա, էնի ընձի դիլու բերընից ազատեր ա։

Թագաւոր գնաց, ըդոնց դարձրեց-բերեց, խոտղին ասաց.

—Խոտղ, գնա, Լալազար ձինը թամքա, բեր, թող խեծնի, ըդոր տայ Սամուէլայ քամու բերան, էթայ ընի սար, ձոր, ըդոր ջանդակ չան ու գիլու փայ ըլլի։

Լալազար ձին էր, քաշին, դուս խանին. Թագաւորի աղջիկն էր, խեծաւ ըդոր։

Լալազար ձին էր, հաւալաճմիս էլաւ էրկնքի էրես, ասաց.

—Թագաւորի աղջիկ, քեզի պտի տամ Սամուելայ քամու բերան։

—Կիջնեմ քո փորի տակ, ասաց աղջիկ։

—Թագաւորի աղջիկ, կը գանեմ կէթաս օխտը դաբաղա գետնի տակ։

—Կը խաղամ քամկիդ վրէն։

Լալազար կակղացաւ, ասաց.

—Դու իմ տէրն ես, ես քո ձինը, ուրտե մուրազ ունես, քշէ էթանք։

Թագաւորի աղջիկ Թագաւորից թամաճար էլաւ, քշեց գնաց մէ չայիր-չիման տեղ լուսաս էկաւ ըդոր. մէ աղբուրի վրէն նստաւ. ասաց՝ մէ բիբա խաց ուտեմ, դինջընամ քնեմ, ըլլեմ էթամ։

Ղայդը գանեց Լալազարի ոտներն ու քնաւ. եափունջին քաշեց վրէն։

Էն դեվէն իրեք ձիաւոր էկան։

Լալազար խրխընջըմ ա, էնդար խրխընջաց՝ դետինը մէ չոք քանդեց. էդ ձիաւորնեը բօռացին.

—Շան որդի, ընչի չէս իմանըմ, քո ձին չէթողնըմ ա՝ մենք մեր ճանդով էթանք։

Է՛, Թագաւորի աղջիկն ա, իմցաւ, մէ ծմրկուաց,—մղուկ քշեց, ղայդը ձիու ոտներից առաւ, խեծաւ։

—Աղբրանք, ասաց, դու դո՞ր էք էթըմ։

—Ըսոե մէ Թագաւորի աղջիկ կայ, էթըմ ենք էնի առնենք. ը- ուսուն գազական լենուէթեն խոր ա փորէ. ուրը ձիով թռցրեց խորը, էթայ Թագաւորի աղջիկը առնի։

—Աղբրանք, արի, ձեր մէ ձին տուէք ընձի, իմ ձին տամ ձեզի։

Էն մեկը ասաց.—Շան որդի ճլի, մեր ձին քո ձիուց պակաս ա, որ փոխենք։

Ընդունք քշին, գնացին քառասուն զաղական խորի կուշտ կայնան։ Ջուղապ գնաց Թագաւորին։

Թագաւոր վերցրեց դոշուն, էկաւ խորի առէջ կայնաւ, ասաց.

—Ձեր ձիանք թողցրէք, տենանք։

Էն մէկը թողցրեց, ինք, ձին էլ ընկան մըջ խորին, ջարդուանն։ Էն մէկն էլ էն օրինակին ընկաւ. էն մէկելն էլ էն օրինակին ընկաւ մըջ խորին։

Մնաց մինակ Թագաւորի աղջիկ. ուղեց որ կա դառնէր, էթէր. Թագաւոր ասաց.

—Շան որդի, դո՛ր կա էթըմ, քո ընկերտանք ընկան մըջ խորին, չան ալէս սատկան, մկայ քեղի կըտամ սրտանել։

Աղջիկն էր, բազատաճ էկաւ խորի կուշտ, կայնաւ։

Լալազար ձին էր, Աստըծու խրամանքով լիզու էլաւ, ասաց.

—Շան որդի, բուղդա-բիբի (ցորենի ոջիլ), դըռ հալա ուր ա դու ընձի նեղութենի մէջ էցդիս. դէ, ըզի, մէ լաւ արաբի-բիմար տու ընձի, իմ ղոլներ լաւ կը քաշես, իմ պոչ դալիմ կը կապես, կըլլես, էրկու դլօխ կակուղ կնեթաս-կուզաս, մէ ջուխտ զանկու կը դանես իմ փորի մէջ, որ քառասուն զաղական թողիմ դէս, քառասուն զաղական էլ խորից դէն թռնեմ։

Խաղցուց, զանկու տուեց, թռաւ։

Էն տեղ Լալազարի ծծած կաթը պնչներից էկաւ։

Ուրախ-ուրախ տարան էդ աղջկան Թագաւորի աղջկան foof ու սարին։

Թագաւորի աղջիկ ուրախցաւ, թէ իմ մարդը էկաւ։

Տեսեր էր խօրոտ, էրեցեր էր ընդոր դիմաց (պատճառաւ)։

Արև մտաւ, բերեց ճրագը վրէց, տղին քաշեց ուր դոլթուղ։

Տղէն թուրը քաշեց, դրեց orբալախ։

—Էսօր խաբր անեմ Աստըծուն, ասաց աղջիկը։

Մնաց էն գիշեր, էլի տղէն թուրը դրեց orբալախ։

Աղջիկն էր, էլաւ դրռ հլա լուս չբացուեր էր, լըփլըփալէն գնաց Բըխ ուր մէր, ասաց.

—Ո՛չ ինք ըլի, ո՛չ ուր անուն ըլի. էն էլ ա աղջիկ, ես էլ եմ աղջիկ։

Թագաւոր լսեց, ուր խոտղին օղորկեց վեսի էտև, բերեց։

Փեսէն էկաւ, թամանեսար էղաւ, ասաց.

—Հա՛, Թագաւոր տպրած, ինչ կայ։

—Փեսա՛յ, ասաց Թագաւորը, դէ էն սարի վրէն օխտը դէվ կայ, օխտը տարուան խաբեր չեն տուած, գնա բեր։

Տղէն դարձաւ լալկին Լալազարի մօտ, յըմմ ը աչքեր ուեեր ա։

—Շան որդի, բողդա-բիբի, ասաց Լալազար, դու որ էդ օրի-

նակին էր, ընչի ընձի բերիր, էդ էր կրակները մէջ. թագաւորի աղջիկ, մի վախենար, դնա, կոտ մը չամիչ բեր, լիկ իմ առէջ, ես ուտեմ. կըլլես մէ լաւ բիմար կըսաս, թամքա կը դնես վրէս, ղոլնեըս լաւ կը ղլես, կըլլես մէ սամուռ կտոր կառնես քո ձեռ, կը խածնես, քշես. իմ դիվկին չես քաշէ, սըտե կեթամ, ես կեթամ։

Դնացին, էլան մէ սարի կող, էնտե մէ ջաղի քար կէր, ասաց ձինը.

—Դէ, ըջի, իմ պոչ օլրըա, էդ քարի ծկով ընցրցըրա, պոչիս ծէրը խանդուրցայ՝ սալին ընցրցըրայ իմ պոչի ալանք։

Խնծաւ Լալազարը, էդ քարը Ֆրռֆրռացնելով առաւ, գնաց, դևերի գլուխը կայնաւ, բօռաց.

—Դէվ՛ևր, բերէք օխտը տարուան խարճը։

Դէվերն ասին.—Շուտուց իսանաթի մը չինք կերէ, մեր ատըմներ ճլվրատրմ էր։

Դէվերի ջոջ աղբէրը դուս էլաւ, տեսաւ էդ տղէն մէ քար Ֆրռֆրռացնըմ ա. դուտումը կոտրաւ, խելքաթափ գնաց, ընկաւ։

Էն մէկել դէվերը ասին.—Ջո դուտումը ... ընչի վախեցար։

Միչնեկ աղբէրը ասաց.—Դու կեցէք, ես ըլեմ դուս, աճնախ մէ իսանաթ ա կալէ ձեռ մեզի։

Էլաւ դուս, ընդու դուտումը տաիա չուտ կոտրաւ. ասաց.

—Էս՝ ձիու դուվաթն ա, ըլա էդ չան որդու դուվաթն ինչդար ա։

—Դէ, չուտ արէք, խարճը բերէք, թը չէ՝ ձեզի կը ջարդեմ. չանորդի փրչոտներ, դու էսա օխտը տարի ա ընչի թագաւորի խարճը չէք տալըմ, զօռպուխեն անըմ էք։

Էն պստիկ դևն ասաց.—Կենցէք, մէ դուս ըլեմ, ընդու ճըղճըղեմ իրարուց։

Էլաւ չեմը չենքեց, դուտումը կոտրաւ, ոչ կարցաւ դէս էթէր, ոչ կարցաւ դէն էթէր. լիդունը կսլաւ։

Դէվերը ասին.—Բերէք, օխտը տարուան խարճը տանք, էդ չանօրդին մկայ մեզի կը ջարդայ։

Բերին օխտը տարուան խարճը լցին մէ մաղէ տոպրըկի մէջը, թալին ձիու բարկը։

Լալազար ասաց.—Թագաւորի աղջիկ, դարձրէ ընձի, էթանք։

Բերաց, էդ քարը ուր տեղը դրեց։

Խարճը տարաւ, թագաւորին առէջը դրեց։

Թագաւորը ուրին-ուրին ասաց.—Էս ինչ դոչաղ տղայ էր, Ֆարազի մենք ըսու գլօխ կորցնըմ ինք։

Թագաւորի աղջիկն էր, տեղը էգդեց, սլսուկաւ։

Տղէն էր, էլի թուրը քաշեց, դրեց օրթալախ։

Աղջիկը ուրին միտք արեց.—Կըլլի որ դէվերի խնամ կուիւ ա արեր, իարբ անեմ։

Մնաց էն դիշեր, էլի էնպէս արաց տղէն։

Դըռա նալա լուսը չըացուեր էր, թագաւորի աղջիկ էլի քնաւ Թըխ ուր մէրը, ասաց.

—Ո՛չ ինք ըլլի, ա՛չ ուր թագաւորութեն. էն էլ ա աղջիկ, ես էլ։

Թագաւոր ուր վաֆիլ-վազիր խանչէց, բերեց, ասաց.

—Իմ լաչառ (չաուախաօս) աղջիկ իմ ապուռը տարաւ. ասըմ ա՝ «էն էլ ա աղջիկ, ես էլ եմ աղջիկ», մենք որ տեղ օղորկինք, որ կուըխի։

—Թագաւոր, ասին, սև ծովի, սիլտաակ ծովի արանք մէ խրեղէն ձի կայ, օղորկայ, էնի բերայ. էն խրեղէն բօզ ձին որ իսանաբի տեսաւ, փարալամիս կանէ։

Թագաւոր խոտղին օղորկեց ուր փեսի էտու։

—Որդի, ասաց, կերթաս սև ծովի արանք, սիլտաակ ծովի արանք, մէ խրեղէն ձի կայ, կը բերես։

Տղէն դարձաւ Թըխ Լալազար, տեսաւ ձինը էնդար լացեր ա, ուր աչքեր ուռեր ա. նէրս մտնալուն էիմի՝ ձինը ասաց.

—Շան որդի, բողդա-բիթի, էն խրեղէն ձին իմ մէրն ա, էնի բերել դժար ա. է, Աստուած օղորմած ա. դնա, մէ ղիտը դինի առ, մէ ղիտը կուպը առ, օխտը դումլի կաչի առ, մէ ղազան առ, բարձի ընձի ու խեծի։

Առաւ, խեծաւ, քշեց։ Ձին ասաց.

—Իմ դիզկին չքաշես, չթեքես. ես որտե կայնայ, ընտե ըջի։

Քշեց-դնաց, ծովի ղրաղ կայնաւ։

Լալազար ասաց.—Ղազնի տակ մէ կըտակ դի, կուպը խալա, բեր քսա կաշուն վրէն, օխտն էլ կպցրա իմ մէջքի վրէն. դնա էդ կղզու պրանք, էնտե մէ աղբուր կայ, էդ աղբուր լաւ կը կրճես, էն օխտը ղիտը գինին լից էն աղբուր. կէսօրուան ջրշոքին էնի դուս կըլլի, կուգայ աղբուր որ ջուր խմայ. խոտ կառնի, կը ֆրռայ, ես կը քաշուի. էդ ջրշոքն էդ բօզ ձիուն յաղթ կառնէ. էն կը խմայ, աչքերը կը կարմրի, կը էֆռմնայ, կասայ.—«Մէ իսանաբ ըլլէր, իմ Թամքն ինա քարին տակն ա, կեսամն էլ էնտե ա, բերայ դնայ իմ վրըէն, ղոլներ լաւ դայիմ քաշայ, էրկու գլօխ կակուղ էթայ, դայ, էլ ընձի բռախայ իմ ծովի մէջ»։ Դու կը լսես, կը խեծնես։

Լալազար ձին էր, կուպը որ կպցրեց ջան, ասաց.

—Ես կերթամ գնա (հետու) կայնեմ, դու գնա։

Տղէն գնաց մէ տալտա տե կայնաւ։ Ջրշոքին էկաւ խրեղէն ձինը, գինին խմեց, էֆռվցաւ, էնպէս էլ ասաց։

Տղէն որ խեծաւ, բօզ ձին հաւալանմիս էլաւ էրկինքու էրես։

Տղէն ասաց.—Սէրն Աստծու, բօ'զ ձի, ընձի մի՛ տու Սամուէլայ քամու բերան, քո Լալազարի տեղն ասեմ։

Որ ասաց, բօզ ձին ասաց.

—Դէ՛, չուտ արա, ասա, թը չէ՛ կուտամ Սամուէլայ քամու առէջ, խոզիդ կը խանեմ բերանդ։

—Ընձի մ'ըսալանէ, գօ էն ա Լալազար տղէդ։

Լալազար կասայ Թագաւորի աղջկան.

—Ղալիմ բռնա, չընկնիս վրընէց, Թագաւորի՛ աղջիկ. ասաց ու փախաւ։

Բօզ ձին ընկաւ էտև, լարեց. օխտը խետ բերան Թալեց Լալազարի կաշուն, բօզ ձիու սէյրը բօզմիօ էլաւ։

Ըս խետ Լալազարը ասաց.—Մօրս մ'էլլի, արի, ընձի խեծի։

Տղէն բօզ ձին տարաւ, տուաց Թագաւորին։

Թագաւորը ասաց.—Էսի լինչ դոչաղ ա, ըսդու սըլանել մեզք աւ։

Էլի էն գիշեր Թագաւորի աղջիկ մտաւ ուր տեղը. էս տղէն էլի Թուրը օրթալախ դրեց. էլի դրա հալա լուս չբացուեր էր, աղջիկ քընաւ Թըխ ուր մէր, էլի մօր էնպէտ ասաց։

Թագաւորը օրոն էրեց, գտաւ մէ խարիբ տարեկան պառաւ, խարցրեց.

—Պառաւ, յըմալ տեղ գիտես, որ ես իմ վեսին օղորկեմ, չգայ։

—Թագաւո՛ր ապրած, ասաց պառաւը. Չինըմայինայ քաղաքը, ընդոր քամակը մէ Սև, մէ Սիպտակ սար, ընդոր արանքը մէ դէվ կայ, ընդոր աղագը մէ ծամդան կայ. էն ծամդընին կըլլի խարիբ մարդ գացեր ա, էն դէվը ամենքին էլ սըլաներ աւ։

Թագաւոր օղորկեց, վեսին բերեց, օ ղրկէ էն Սև, Սիպտակ սարի արանքը, որ դէվի առջևից ծամդան առնէ, բերայ։

Տղէն էր, դարձաւ Թըխ ուր ձին, տեսաւ Լալազարն էլի լալըմ ա, Լալազարի մէրն էլ. ասաց.

—Շան որդի, բողդա-բիթքի, դու էդ հուճարի տէրն էր, ընչի բերիր մեզի ... Աստուած-օղորմած ա, էս խետ մէրս էլ խետդ մո՛ւ, ես մինակ չկարնամ։

Ձամիչը կերան ձիանք. տղէն խեծաւ-քշեց, չուրի Չինըմայինայ քաղաք ընցան, գնացին Սև սարի արանքը, Սիպտակ սարի։

Լալազար ասաց.—Թագաւորի աղջիկ, մեզի Թող ըդ դեն, էս տալցա տեղը՝ դէվը մեզի չճանչնայ, որ խրեղէն ձի ենք, որ յիմանայ՝ քեզի էս տեղ կը ճըղճըղայ, մեզի էլ կը ջարդայ. եավաշ-եավաշ գնա Թըխ դէվը, դէվի քամակը կը կայնիս. էնի իրիք խետ ա ննջըմ. Թէ որ փախցըիր, ասա. «Լալազա՛ր, իմ տակը ըլլաս», ես քո տակը կըլլամ, մի՛ վախենար։

Էդ աղջիկն գնաց, կայնաւ դէվի քամակը. դէվը մէ խետ նըն-

ջաց. ձեռը թալեց, չկարցաւ վախցըցէր։—Աստուածծ, խանչեց, դու ընձի ազատես էս դէվի ձեռնիցւ

Դէվը մէ խետ էլ ննջաց. էլի աղջիկ ձեռ թալեց, չկարցաւ, էլի Աստուածծ խանչեցւ

Դէվը մէկ էլ որ ննջաց, շամդանը վախցրեց, ասաց.

—«Լալազար, դու իմ տակը ըլլես»ւ

Լալազար էկաւ ըդոր տակը։ Ջլեց, դնաց։

Դէվը իրիչկեց, ասաց.—Շան որդի, դըռ ճալա ես իմ քունը չեմ առնը, մէ բիրա աչքս կոլցնեմ, գնա, չուր ըստուց էրևըմ ես. մէ տիս էթաս, մէ օրը ես կը խաանեմ։

Էդի ուր քունը առաւ, էլաւ տեսաւ, ինչ որ կրակը դատ տեղը բժկըտըմ ա աստղի դայտի. ասաց.

—Ա՛յ-հայ, բօլ ճանբախ ին դացածւ

Էդ դէվն ուրին էդ տեղից թալեց. ընդոնք մտան ծովը, ինքն էլ ծովի ափով ընցաւ, ասաց.

—Խոզածին, կայնի՛ քեզի մէ բան ասեմ. դու տարար իմ շամդան, երկու-իրիք խարիր մարդ էկան, չկարցան տանէն. ջարդի՛, խոզածին, դու որ տղայ ես, աղջիկ դառնաս. թէ որ աղջիկ ես՝ տըղայ դառնաս. ասաց, ղարձաւ հաւ

Դէվն որ անիծեց, էս թագաւորի աղջիկ տղայ դարձաււ

Լալազարն էլ դարախ՝ Լալազարի մէրն էլ որձ ձի դարձաււ

Էդ աղջիկը էլաւ տղայ, տարաւ շամդանը տուեց թագաւորինւ

—Ա՛յ-հայ, չըլի, էսի իմ քաղաք կընցըցէ, ըսդու վիզը կոլեմւ

Էս տղեն յիրկուն դնաց ուր տեղ. թագաւորի աղջիկ լուսուն դնաց, ուր մօր ասաց.

—Աղէ՛, էսպէսդ տղայ աշխարքներ էլ ման գի, չի դանիւ

Մնաց մէ ժուկ-ժամանակւ Մէ օր թագաւորի տղէն լալըմ ա.—«ընձի՛ էլ խեր-մէր կայ», ասըմ աւ

Գնաց թագաւորից իզին առաւ, դարձաւ ուր խօր տուն։ Եր մօտկըցաւ ուր խօր բալախանիքին, խապար ճանբեցւ

Թագաւոր էկաւ, տեսաւ ուր աղջիկ տղի բռանկին ա. խարցըրեց, իմցաւ, ինչ որ աղջկայ դլօխ արինք-դարինք էկեր էր։

Նոր խերը ուրխըցաւ, իրեն տղայ չկէր։

—Փանք տընեն քեզի, Աստուածծ, ասաց։

Վեց, օխտը օր խարսնիս արաց. ընդոնք խասան ուրանց մուրազին . . . ։

2

ՄԻԹԻԼ ԽԱԻՔ

(Նուլպպ գիւղի բարբառով *)

Ժամանակով մէ աղքատ կնիկ կըլլի, ընդոր բսկի տղայ չըլլի։ Լուսը կը բացուի, կը վերցնայ ջվալը, կ'երթայ սարի կողը թիթրեն ժողվելու. կը տեսնայ՝ մէ օձ էթըմա, ուր ճաերն էտևն։

—Աստուածծ, ասաց կնիկ, դու ընձի մէ տղայ տիր, օձի ձագ ըլլէր։

Էդ պատահն ա, թիթրեն ժողվեց, դարձաւ, էկաւ յուր տունը։

Գիշերը քնաւ. լուսը բացուաւ. խմոր չաղեց, խաց թխեց, տեհաւ պատի կողից մէ օձ էլաւ։

Պատաւի խելքը գնաց։

Օձն էր, էկաւ ջուր լցեց պատուի վրէն, պորտը բռնեց. պատաւ օյաճմիշ էլաւ։

Օձը ասաց.—Աղէ, դու ընչի ընձնից վախեցար. չէ դու ասիր՝ «Աստուածծ, ընձի տղայ մը տիր, էս օձից ըլլէր». մկայ Աստուածծ քաղցրացաւ. ես էկեր եմ, քե տղայ եմ էլեր։

Ժամանակ մը մնաց. էն մէկ օր ասաց ուր մօր.

—Աղէ, դնա թագաւորի աղջիկ ընձի ուզայ։

—Դու օձ ես, ասաց մէրը, էնի թագաւորի աղջիկ ա. թագաւոր աղջիկ չտայ քեզի։

—Աղէ, դու դնա, ուզայ, քո ինչ բանն ա։

Մէրն էր, էլաւ-դնաց թագաւորի դուռ, խնամաքարի վրէն նստաւ։

Մէյքարներ գնացին թագաւորին ասին.—Պատաւ էկէ, նստէ խնամաքարի վրէն, քու աղջիկ ուզըմա ուր օձին։

Թագաւո... էլաւ-էկաւ պատուի կուշտը, ասաց.

—Պատա՛ւ, ինչ կուզես։

—Էկեր եմ, քո աղջիկ կուզեմ իմ տղին։

---

*) Ջայս եւ «Փոկոսն» ետիաքներն պատմած է մի կոյր-բառոյախօս ասն, որոյ անունը դժբախտաբար չեմ յիշեր։

—Պառաւ, ես ինչ ասեմ, որ չկատարեցիր՝ քո բեղլեն կը թռցնեմ. կեթաս, ասաց, մէ բաղ-բաղչա կեցգես, քո դռնից իմ դուռ, որ իմ աղջիկ եր պսակ էթայ, արև չառնի վրէն։

Պառաւ էլաւ-դնաց թըխ ուր տղին, ասաց.

—Տղա, ո՛չ դու ըլլէր, ո՛չ քու թագաւորի աղջիկ. ընձի ասըմ ա, «գնա, քո դռնից իմ դուռ ըմալ բաղ-բաղչա կեցգես, ըսկի իմ աղջըկայ վրէն արև չառնի, եր էթայ պսակ»։

—Աղէ, ասաց օձը, ընչի ես վախենըմ, գնա էն սարի կողը, ասա. «Մէթել-խաւքը Մէթել-խաւին ա ասըմ, պզտի բաղչեն օղորկայ դայ»։

Լուսը բացուաւ. մերը էլաւ-դնաց սարի կողը, ասաց.

—«Մէթել-խաւքը Մէթել-խաւին ա ասըմ, պզտի բաղչեն օղորկայ դայ»։

Պառաւը դարձաւ, էկաւ. ըդոնք քնան. լուսը բացուաւ էլան-տեհան, ըմալ բաղչա ա ընկեր, որ թագաւորի օխտը պորտը ըմալ բաղչա չէր տեհէ։

Պառաւն էր, էլաւ, ուրախ-ուրախ էս խետ դնաց, նստաւ խընամաքարի վրէն։

—Թագաւոր ապրած, ասաց, քո խօսք կատարեր եմ, դէ, աղջիկդ տո՛ւ իմ տղին։

—Պառաւ, ասաց թագաւորը. մնաց մէ խօսք, որ կատարիր-կատարիր, որ չկատարիր՝ վիզդ կը թռցնեմ։ Պառա՛ւ, կեթաս իմ տանից չուր քո դուռ մէ խալիչա կը փռես, իմ դռան առաջ էլ, քո դռան առաջ էլ էրկու ծէրը կօլոնուկ ըլլի, որ մարդ նստի վրէն, ոտք գետին չառնի։

Պառաւ էլաւ, փօսման-փօսման էկաւ, ասաց.

—Որդի՛, ո՛չ դու, ո՛չ թագաւորի աղջիկ. թագաւորը ընձի ասաց. —«կեթաս քո տնից իմ դուռ մէ խալիչա կը փռես, քո դուռն էլ, իմ դուռն էլ կօլոնուկ ըլլի»։

—Աղէ, գնա էլի էն սարը, ասա.

—«Մէթել-խաւքը Մէթել-խաւին ասըմ ա. պզտիկ խալիչեն օղորկայ դայ»։

Պառաւը էլի գնաց սարի կողը, էլման ասաց.

—«Մէթել-խաւքը Մէթել-խաւին ասըմ ա, պզտի խալիչեն օղորկայ»։

Գիշերը քնան. էլան-տեհան, որ մէ խալիչա է փռուկ. ըսկի թագաւորի եօթ պորտն էլ չէ տեսէր։

Պառաւ էլի գնաց, նստաւ խնամաքարի վրէն. ասաց.

—Թագաւոր ապրած, խօսքդ կատարեր եմ, ինչ ես ասըմ

—Պառաւ, կէթաս մէ foof ու սարեմ կը չինես, որ գիշեր, ցերեկ հովը վրնիցը չկտրուի. էս որ արիր, խօսքդ կը կատարեմ։

Պառաւը դարձաւ, աղին ասաց.

—Ո՛րդի, ո՛չ դու, ո՛չ թագաւորի աղջիկ. ընձի ասիմ՝—«կէթաս մէ foof ու սարեմ կը չինես, որ գիշեր ցերեկ հովը վրնիցը պակաս չըլլի»։

—Ադէ, կէթաս էն սարի կողը, կասես. «Միթիլ խաւին եմ ասիմ, թո պզտի բալախանեն օղորկայ, գայ»։

Պառաւ էլի գնաց սարի կողն, էլի ասաց, դարձաւ։

Լուսուն տեսան, որ յըմալ բալախանիք ընկեր ա։

Պառաւը ուրախըցաւ, թումպաղ քաշելէն քնաւ Թըխ Թագաւոր, խնամաքարի վրէն նստաւ, ասաց.

—Թագաւոր, իրէք խօսքդ կատարի, ընչի՞ չես տալըմ աղջիկդ իմ աղին։

—Պառաւ, մնաց մէ խօսք. էն խօսքն կատարի՞ր-կատարիր, չկատարի՞ր, վիզդ կը կտրեմ, կանեմ քէ սոսրաք։ Կէթաս մէ ձեռք շոր կը բերես՝ ոչ մկրըտի կտրած՝ ոչ ասեղ կտրած ըլլի։

Էդ տե պառաւ պռունկ ճղաւ ախու. փօշման-փօշման դարձա՜, էկաւ Թըխ աղէն, ասաց.

—Ողրի՛, ո՛չ դու, ո՛չ թագաւորի աղջիկ ըլլէր. ընձի ասիմ ա. —«կէթաս մէ ձեռք շոր կը բերես, ոչ մկրըտի կտրած, ոչ ասեղի կտրած ըլլի». յինք թագաւորը չանի՞ մկրըտով չկտրէ, չկտրէ, չմանի, ես ուստ բերեմ, տամ թագաւորի աղջիկ խագի։

—Ադէ, ասաց աղէն, գնա՛ Թըխ սարը, ասա՝ «Միթիլ խաւին եմ ասիմ, թո պզտիկ բողչեն օղորկայ գայ»։

Պառաւն էր, էլաւ, գնաց Թըխ սարը. ասաց, դարձաւ։

Պառաւի դուռում կոտրեր էր. լուսը բացուաւ, էլան, տեսան շոր չկայ։ Դող առեր պառաւի ջան. աւել առեց աւիլըմ էր, գնաց էս քունճ, գնաց էն քունճ. էն քունճն որ աւիլեց, տեհաւ իրէք գուզ (ընկոյզ) աւելի խետ դընկըրտալէն էկաւ։

—Ադէ, տա՛ւ դէս, տեննանք էդ գզերը։

Տուեց։

Տէն մէկ գուզը ջարդեց, ուր մօր ասաց.

—Ադէ, մո՛ւռ դու էս չորերը խագի։

Պառաւը ուր խին չորերը զարկեց Թունդրայ ակը, գզի միջի չորերը խագաւ։

Էն մէկել գզերը ջարդըմ են, աղէն ասիմ ա.

—Էս էլ մո՛ւռ, տար Թագաւորի աղջկան։

Պառաւն էր, ասլերն խագաւ, խնեց, ճըլը՛ճ-պըլը՛ճ անելով՝ գնաց Թըխ Թագաւոր, նստաւ խնամաքարի վրէն.

—Թագաւո՛ր ապրած, չորս խեռ ասիր խօսքդ կատարի. ասաց պառաւ, բողչէն խանեց, դրեց Թագաւորի առէջ։

Թագաւորը բացեց տեհաւ, բերնէից ջուրը գնաց. ասաց.

—Ճոռ մարքներ պառաւը էս բաւուր չորերը յո՛ւստ բերից. ես Թագաւոր ըլեմ, չեմ կարըմ, եարա՛պ-Աստուած, ասաց Թագաւոր.—պառաւ, իմ աղջիկ տուի քո տղին, գնա՛ քո բաստիր տե՛ս։

Բաստիր տեհան, նաղարով, զուռնով, էն խօրոտ բաղչի մէջով, խալիչի վրէջով տարան պատկ։

Թագաւորը ուր բալախանից իչկեց աղջկայ էտև.—«հայ-հայ, ասաց, իմ աղջիկ պախի-պախի, տուի էդ օձին։

Օձը, էդ Թագաւորի աղջիկ, ընկան էդ խալիչի վրէջով էթըմ են. պառաւ ուրխըցեր ա։

Պատկուան, մէ ժուկ-ժամանակ մնաց պառաւի տանը։

Էդ Թագաւորի աղջիկ ասաց.—Աստուած, դու ընձի հմալ ղրսմաք արիր էդ օձին։

Մտնըմ ա Թագաւորի աղջիկ ուր տեղին մէջ պարկըմ. էդ օձը կտոռվըմ, նստըմ ա վրը Թագաւորի տեղին։

Թագաւորն էր, ուր տղէն նշանեց, նաղարով, զուռնով էկաւ, տեհաւ որ օձը ուր չապիկ Թողեր վրիցը, իսանաքի չոր ա խագեր։

Թագաւորի աղջիկը որ տղին տեհաւ, ասաց.

—Ֆո՛ տուն չակոլի, դու՛ որ իսանաք էր, ընչի՞ ըսկի ընձի խեռ չէր խօսար. ես մտնըմ ի մըջ իմ տեղին, դու կտռվըմ իր։

—Թագաւորի՛ աղջիկ, մենք որ կանք, հուրի ենք. քեզի Թագաւոր տանըմ ա ուր տղի իսրսնիս, ես իմ չորերը իրեք խեռ կը փոխեմ, իրեք ռանգ ձի կը խեծնեմ. ես գինամ, կըլնէք Թագաւորի բալախանեքի վրէն, կուգամ ընտե ջրինդ խաղալու, չասես քո քուրտանց՝ «էնի իմ մարդն ա»։

Նաղարէն զանին, ձիանքը խեծան, ջրինդ էն խաղըմ. մէյտանը էդ օձին էր. դամար ձիու պոչը զանեց կըսկին, Թանկը դռուտս էկաւ. էդի խեծաւ, գնաց մէյեցի գլօխ կայնաւ. ըսդոր զանեց ջրինդով էցգեց, ընդոր զանեց էցգեց, ընկաւ Թագաւորի տղի յետև. զանեց, Թագաւորի տղէն ձիուց ընկաւ։

Թագաւորի ջոջ աղջիկն էր, զանեց քուր գլխին.—«քո ուսուցը (յոյս) մեռնի, ասըմ էնք՝ արի՛, էս տղին առ, դու գացիր օձին առաբ», ասաց։

—Աստուած ընձի օձին էր դամաք արեր, ասաց։

Էդ տղէն էր, էս խեռ դամար ձին Թողեց. էն մէկել օր բօզ ձին խեծաւ, էլի էկաւ մէյտան, ըսդոր, ընդոր զանեց, էցգեց ջրինդով. էլի զանեց, էցգեց Թագաւորի տղին։

Էլի թագաւորի աղջիկ գոմբով զանէց ուր քւոր.—«մեր խող քո դլխին, էսմէլ աղէ մի չառաը, գացիր օձին առար»։

—Աստուած մէ խետ ընձի օձին էր դսմաք արեր, մէ զօռի բան կէր։

Էն մէկիլ օրը էս խետ կարմիր ձիու պոչ զանէց կրակ, ձին թանկ ու դրուսց օձի կուչտ կայնաւ։

Էդ օձն էր, ուր չապիկը թողէց, էլաւ, կայնաւ վրր ձիուն, գնաց էլի մէյտան։

Էլի ըդոր զանէց էցգէց, ընդոր զանէց էցգէց, ընկաւ թագաւորի աղի էտև. էս քուչով էն քուչով լարէց, տարաւ բալախանի դուռ. խասցրէց. մէ փէտ չպըտուէց, առաւ թագաւորի վզքոքին։

Էլի թագաւորի ջոջ աղջիկ ուր քւոր գոմբով զանէց։

—Ջա՛նըմ, ասաց պզտի քուրը, ընչի՛ էք գոմբըմ, fonնըմ էք. էն իրէք ձի խեծնող մարդն էլ իմ մարդն էր։

Աղջիկ որ ասաց՝ «իմ մարդն էր», մարդը էլաւ մէ էղնըվէկ, էկաւ ըդոր մայրամեն (թաչկինակ) վերցրէց, գնաց Թըխ պառաւ, ասաց.

—Աղէ, թագաւորի աղջիկ կուգայ քո կուչտ, կասես, «էրկթէ չաւազան չքայ, մէ ջուխթ էրկթէ չարոխ խագնի, յընկնի աչխարքներ պոռաի, քանի՛ էն չարոխը չկտրաի, գաւազանը չմաշի. որ մաշաւ, ընձի գտնի»։

Էդ աղջիկ էկաւ պառաւի կուչտ, պառաւ ասաց.

—Որդի՛, էդ ինչ խող էր տուիր գլխիդ, ասաց. «էրկթէ չարոխ խագնի, էրկթէ գաւազան ... որ մաշաւ, ընձի կը գտնէ». որդի՛, գնա՛ դարբնի կուչտ, չքէլ տո՛ւ ու գնա՛։

Աղջիկը չքէլ տուէց. պառաւին ասաց.

—Խալա՛ղ արա, էս պտի էթամ, իմ մարդ գտնեմ։

Էդ աղջիկն էր, ընկաւ չոլ-չոլատան (մեծ անապատներ), բաւիրի եապան (օտար ծովեր), ման էկաւ, գնաց մէ խալիւորի ըռատս էկաւ։

—Բարի իրիկուն քէ, պապէ ջա՛ն, ասաց։

—Թագաւորի՛ աղջիկ, ղուշն ուր թռով, օձն ուր պորտով ըստեղրանք չէր գտնըվըմ, դու ի՛նձ գտնուար։

—Պապէ ջան. քո սէրն ա բերեր։

—Թագաւորի՛ աղջիկ, դու սիրով կենաս, դո՛ր էթըմ էս։

—Պապէ ջան, իմ մարդն էլաւ մ'էղվըներկ, Թռաւ. իմ մայրամեն վերցրէց, գնաց. էթըմ իմ մարդի էտևի խետ։

—Թագաւորի՛ աղջիկ, քո մարդ գնացէ Զինուամաչին. սարը մէ դէվ ա փեյտա էլել. էկայ որ ես էլ էթէ Զինուամաչին, չկարցայ դէվի ախուն էթէ. ձախ ծիծը թալէ ալ թևի վրէն, ալ ծիծը թալէ ձախ թևի վրէն, ամէն տեխէ էրկու թիզ կախ ա ընկեր. մէ լիտր էլ գիւղ-

լա արեր ուրին ծամոն. լուսը կը բացուի էնի խմոր կը չաղայ. ըդոր օխտը տղայ կայ, կնեքան ավ ու ղուշ, որ գնացիր ընդոր ծիծը առաբ բերանդ, էնի կը բախշայ ուր կաքին. թէ որ չառաբ բերանդ, կը թալայ քեզի էն գիւղի խեռ կը ծամայ, ըսկի չդինայ՝ թէ իսաւնաթ ես, թէ չես։

Աղջիկը տեհաւ, որ չարխընները ծակուեր ա, գաւազանն էլ չավեց՝ մէ թիզ մաշեր ա. լուս բացուելուն՝ վախվխելով գնաց, ըդոր ծիծը առաւ բերանը։

Դէվը դարձաւ որ մէ իսաւնաթ ա. ասաց,—Ո՛ս սրվեցնողի վիզը կոտրի. չուտուց իսաւնաթի միս չէի կերեր, առումներս ճլվսըմ ին։ Թռղածին, ասաց, ես քէ ինչ քաւոր պախեմ, ընձի օխտը տղայ ունեմ, կուգան քեզի կոտր-կոտր կանեն։

Դէվը թագաւորի աղջկան տարաւ յէրի մէջը, ղրօ ու ղալը թափեց վրէն, պախեց։

Իրիկուն դիւանք էկան, ասին.—Ա՛տէ, ահա, իսաւնաթի խոտ ա գալըմ։

—Որդի՛, դո՛ւ էք չօլից գալըմ, դո՛ւ էք ընձի ասըմ։

Էն ջոջ տղէն ասաց.—Չէ՛, ամէ, իսաւնաթի խոտ ա գալըմ։

Էդ խինդ աղբէրն էլ պախին ջոջ աղբօր քամակ, ասին.

—Աղէ, իսաւնաթի խոտ ա գալըմ։

—Խռղս ձեր գլխին, ես ձեզի խամար խաց ու խմոր եմ անըմ, մի՛ մէջը fօnնըմ եմ . . . : Էդի խոռվաւ տղեկներից։

Էդ պղտիկ տղէն ասաց.—Մեռել . . . վրսլընքռոններ, մենք մէ իսաւնաթ չկերանք։

Դարձրին ուրանց մօրը, բերին ուրանց կուշտ։

Մէրն էր, գնաց կծկուաւ էրի fուցճ. լուսը բացուաւ ընդոնց վրէն, ընդոնք էլան, գնացին ավ ու ղուշ։

Դէվը գնաց թագաւորի աղջկան բերեց, ասաց.

—Թագաւորի աղջիկ, մեր արանքը մէ սինօր կայ, էն սինօրից դէնը կրակ ա. թէ որ մեր արանքը, էն կրակի արանքը թալեցիր քեզի, իմ տղէկներ չեն կարայ քեզի խաաներ, ուտեր։

Աղջիկը էլաւ, եավաշ-եավաշ գնաց. քիչ էր մացեր, որ խաանէր կրակէ էրկիր, դէվերը տեսան։

Էդ աղջիկ իրիչկեց տեսաւ, որ դէվերը քնան թըխ ուրին, որ ուտեն՝ աղջիկ ուրին թալեց կրակէ էրկիր։

Դէվերը ասին.—Հայ քո սրվեցնողի վիզը կոտրի։

Էդ աղջիկն էր, էլաւ եավաշ-եավաշ գնաց մէ չոպնի ըռասս էկաւ, ասաց.

—Բարեւեն քէ, չո՛պան։

—Բարով էկար, Աստծու բարին, Թագաւորի՛ աղջիկ։

Աղջիկն ասաց.—Զոպա՛ն, էս քավուր, էս քավուր կերպարանքին մէ մարդ քո կուշտ էկեր աւ

—Թագաւորի՛ աղջիկ, ասաց չոպան. էսօր քո մարդի օրին ա, որ ընձի խաց բերայ։

Չոպան Թագաւորի աղջկէն փաթըտեց կուլապի մէջ, դրեց ընտե։

Ըդոր մարդն էր, կէսօրին խաց առաւ-էկաւ։

Չոպանը խացը կերաւ, վերցրեց. մարդը առաւ ետ դառնալու ասաց.

—Աղա, տէս, էս վիր օխչարն ա՝ որդներ աւ

Աղէն էր, ետ դարձաւ, էկաւ ասաց.

—Ո՛ւր ա, չոպան, էն օխչարը։

—Աղա, ասաց. ինչ կուտաս, Թագաւորի աղջկայ տեղ ասեմ։

Թագաւորի աղջիկն էր, կուլապը թալեց, վազեց, փաթըտուաւ ուր մարդի վիզ։

Մարդը ասաց.—Թագաւորի՛ աղջիկ, ես քեզի ինչ քավուր տանեմ, էդ իմ լիրը մօր ձեռնից քե պրծըցնեմ. որ քեզի տեսաւ, իրա-բուց կը ճղճղայ։

Տղէն էդ աղջկան վերուց, տարաւ ուրանց տուն, փաթեց մըչ խալըն, դրեց դռան էտև։

Էդ գիշերն էլ էդ տեղ խարանիս էր. էդ տղէն ինք ու ուր մէր էլան, գնացին բոեղ խարանիս։

Ընտե ինչ դ9ար գինի խմըմ ին ուր ընկերտանք, ամենք խըմըմ ին Թագաւորի աղջկայ կենաց։

Էնտե մօր ծամերը գըրկծնաւ (բիզ-բիզ), էկաւ, տղին ասաց.

—Տղա, էլի էթանք տուն, քեզի բան եմ ասըմ։

—Աստ, աղէ։

—Որդի՛, էն ինչ թաս էր, խմըմ իր Թագաւորի աղջկայ կենաց։

—Աղէ, քեզնից պախեմ, Աստծուց ինչ պախեմ, Թագաւորի աղջիկ էկէ, խասէ ընձի։

—Որդի՛, ձկա թող գայ, տեկամ ինչ քավուր աղջիկ աւ

Տղէն էր, գնաց դռան էտևից բերեց։

Մէրն օրթէ տեհաւ աղջկան, ուզըմ էր իրարուց ճղճղայ. Թագաւորի աղջկան ասաց.

—Էդ ինչ fօուլրդուԹեն ես տուէ իմ տղին, դու էկար, խասար իմ տղին։

Մէրն ա՝ մէ ջոջ դազան դրեց տան օrթալախ, ասաց.

—Թագաւորի՛ աղջիկ, ես էթըմ եմ խարանիս, որ Ֆասլ թաւ, էկայ-տեհայ, որ էս դազան սրցունք չես լցէ, վիզդ կը Թուցնեմ։

Պառաւ վերցրեց տղին, որ էթայ։

—Աղէ, ասաց աղէն, դու գնա, իմ ղալոճ մնաց տունը, դառնամ, առնեմ։

Տղէն էկաւ տուն, թագաւորի աղջկան ասաց.

—Ինդ կուժ ջուր ի սրախն ա, կը բերես, կը լցես մըջ ղազնին. էնա տան վերևն էլ աղն ա, կը բերես, կը թափես մըջ ջրին, ոչ շատ շօր ըլի, ոչ շատ անլի, սրցնքի դայդի ըլի։

Ըս խոտ էլաւ, գնաց խաբսնիս. Ֆասլը բմաւ. մէրը վերցրեց աղին, էկաւ տուն, գնաց ղազնի վրէն, ասաց.

—Թա, աղջի, էս մէ պատիճով վրցա՛ր։

Լուսը բացուաւ. բերեց օխտը բարտան (մեշոք) տուեց ըղոր ձեռը, ասաց.

—Տանիս սարի կողը, յըմէն ըրուվ (վիտուր) կը լցես։

Էդ աղջիկն էր, բարտանքներ առաւ, գնաց սարի կողը. մարդը գողտուկ գնաց, ճլաց, ինչ դեար դօհղէն կէր, էկան էդ տեղ, ասաց.

—«Ձեր թեպուրներ կը թախթըպէք, կեթաք»։

Ըդոնք թախթըպին, գնացին։

Թագաւորի աղջիկը էդ օխտը մեշոքն էլ ճխտեց։

Պատաւն էր, էլաւ, գնաց էդ սարի կողն, տեսաւ որ օխտը մեշոքն էլ ճխտեր ա. վերցրեց, առաւ, էկաւ տուն։

Լուսը բացուաւ. էդ տղէն սեր արաց, որ սեր արաց, էլան մէ դուռ, ջհտով թռան։

—Թագաւորի՛ աղջիկ, ասաց տղէն, դարձի էտև, տես դէն, դումանի պէտ թէ որ գալըմ ա՝ իմ քուրը կըլի։

—Վ՛ալա, մէ դումանի պէտ գալըմ ա, քիչ ա մնըմ մեզի խասնի։

Տղէն կնկան արաց աղբուր, ինք էղաւ մէ ճանճ։

Էդ դումանն էր, էկաւ աղբուրի վրնից անցաւ, հա դարձաւ։

Էլի սեր արաց, էլան մէ դուռ թռան։

—Աղջի՛, ասաց տղէն, դարձի էրէյկայ, իմ պզտի քուր յմնից լիրը ա։

—Ինչ որ դումանի պէտ գալըմ ա, քիչ ա մնում մեզի խասնի։

Ինքն էլաւ բոստան, կնկան արաց բոստնճի։

Էն դումանն էկաւ, ասաց.

—Աղբէր, էս տեղով մարդ ընցա՞ւ։

—Մէ մարդ, մէ կնիկ խէլի վաղը ընցան։

Էդ դումանը մէ խէլի տեղ գնաց, դարձաւ. մէրը խարցրեց դումանին.

—Որդի՛, զատ տեսա՞ը ըսկի ճանըախ։

—Վ՛ալա մէ բոստնճի տեսայ։

—Դու չկարցա՞ը բոստան քոքախան անէը, բոստնճին սըպանէը, էնի իմ տղէն՝ թագաւորի աղջիկն էն։

Մէրը ճերտատաւ, բերանը փսլնքոտաւ. էս խեռ լինք էլաւ ընկաւ աղի էտևը։

Տղէն ասաց.—Թաղաւորի՛ աղջիկ, էս խեռ մեր մէրը կզայ սարը, ծով ուր ձէնը կը լցայ։

—Խա, վալա, էկաւ, մէ սև, մուտալ, անալիտան չեհիք ա։

Տղէն կնկան ալաց վարդ, ինքն էլ էղաւ մէ օձ, կտոտաւ էղ վարդի բոլոր։

Մէրն էկաւ, ճանաղն առաւ ուր ձեռ, ըղոնց վրէն կայնաւ, ասաց.

—Թէ զանեմ օձին, վայթէ վարդը կոտրի, թէ զանեմ վարդին, վայթէ առնէ օձի դլօխը թռնի. առէջ որ ես դի, մէկդ որ էլաք աղբուր, մէկդ ճանճ, աղբուրը լիքը խող կը լցի, ճանճի թևերն էլ կը քաշի. էն վաղր որ մէկդ էլաք բոսցաւ, մէկդ բոսցնճի, կը բռնի բոսցնի թաղերը կը քաշի, կը թալի դէն, բոսցնու վիզն էլ կը թրոցընի։ Որդի՛, ասաց մէրը, էլի՛, դնա՛, որ տեր մուրազդ ա, դնա՛, կատարայ։

Մէրը ես դարձաւ, էկաւ Թըխ ուր տուն։

Տղէն էլի սեր արաց, էլան մէ դուռ Թռան, էկան պառուի տուն, որ իջնէն. տղէն սեր արաց, էդան մէ իսաճաթի չեհիք. գնացին հորթարածի կուշտ, ասին.

— Աու քե մէ ճանկ օսկի։

Հորթարածն էր, վազէ-վազ էկաւ Թըխ պառաւ.

—Պառա՛ւ, աչքդի լուսի, քո տղէն, խարսն էկան. մուտուլուխ տու։

—Խո՛զս գլխիդ, ասաց պառաւ, իմ տղէն էլ էղնի ընձի տղայ ու խարս։

—Թէ որ չես խաւտնըմ՝ էլի՛, իմ խեռ էթանք։

Գնացին, խասան ուր տղին։

Տղէն, խարսը գալըմ ին. պառաւը ուրախ-ուրախ գնաց Թըխ Թագաւոր. մուտուլուխ կը տանայ, կասայ.

—Թագաւոր, աչքդի լուսի, քո աղջիկն էլ, իմ տղէն էլ էկան։

—Ջեյնմի դէն, գնեքուռա պառաւ, իմ աղջկան խաբէր, տարաբ, կորցրիր, կըլեմ՝ վիզդ կը զանեմ, ջանդակդ կը Թալեմ չները ուտեն. իմ առջևը կայներ ես։

Տղէն ու խարսը էկան. Թագաւորը, վախլ-վազիր ուրխըցան։

Տղէն ու խարս բերեց Թագաւոր ուր focf սարի մէջ, օխտը օր, օխտը գիշեր քազատաց ուրխըցան. ընդոնք խասան ուրանց մուրազին, որ տեղ նեղ մարդ կայ՝ էն էլ խասնի ուր մուրազին։

3

ՓՈԿՈՏՆ

(Պալտր-դայիճ)

(Նուլաք գիւղի բարբառով *)

Ա ուաջի ժամանակ մէ թագաւոր կար. էդ թագաւոր ըսկի ավլաս չունէը. մէկ օր նստաւ ուր թախտի վրէն, մկուք արաց.—Տէր Աստուած, ասաց. դու էս թագաւորութեն ընձի տուեր ես, ավլաս չես տուեր, խնդիրք կանեմ քեզնից, իմ թագաւորութեն վերցնես, ընձի ավլաս տաս։

Աստուած ըդու ձէն լսեց. թագաւորութենը քիչ-քիչ պակասաւ, ըդու մէ ավլաս տուեց։

Տղէն չոջըցաւ, թագաւորը բերեց, կարգեց։

Թագաւորը որ մեռաւ, էս տղէն սկսեց բհօճախութեն (հայրենական աւանդութեանց անհաւատարիմ գտնուիլ), ընկերտիք ժողուեց, տարաւ ուր մալ ընկերտոցը կերցրեց, խաւցրեց, փճացրեց։

Մէ օր՝ ընկերտանքը ժողուան, գացին ուտել խմելու. թագաւորի տղէն քամակներէն գնաց. ըդու տարան խեռընեերը. նստան, կերան, խմեցին, էլան ցրուըուան։

Էն մէկել օրն էլ էլան գնացին, թագաւորի տղէն էլի քամակից գնաց. ընկերտոցը մէկը դարձաւ թագաւորի տղին.

—Տօ, ղուռումսող. էրեկ սոլմար, պատիհավա կերաը, խմեցիր, փարա ունես, արի մեր խեռ ընկեր էղի, թէ չունես, թորկ գնա, ասաց։

Տղէն էր, սիրտը լցուաւ, աչքերէն արտըսուք թափեց. էկաւ ուր տունը, քիթ ու բերնի վրէն ընկաւ։

---

* Սոյն հէքիաթի մի այլ ձիւղը լսած եմ Վաղարշապատցի Առաքել Ղրիմեանէ որ աւելի ընդարձակ պատմած է. պատահարներն մեծ մասամբ ծովեզերքը կամ ծովի վերաց տեղի ունեցած են։

Մէրը տուն էկաւ, տեսաւ որ տղէն էղէկոդ ընկեր ա.—Որդի, ասաց. յընչի էդպէսդ ընկեր ես։

—Ա՛խ նանէ, իմ դարs չատ ա։

—Ցընչի խասա, որդի։

—Գնացի իմ ընկերտանքին խնտ, ընձի խրկին։

—Որդի, էն օրը որ ես քեզի ասըմ ի. էդմալ մի՛ անէ, դու ընձի ականջ չարիր. քաչա, ջանդ դուս ըլի։

Տղէն կծկծուն իրեք տարի խիւրնդցաւ։

Մէկ օր միտք արաւ.

—Տէր Աստուած, ասաց. էս նեղութենից ընձի ազատա՛. յուխտ անեմ, գամ Երուսաղէմ, յուխտս կատարեմ։

Մէ քանի օր մնաց, էլաւ եավաշ-եավաշ փէտը ձեռը առաւ, ըստեղ, ընտեղ պըտըրտըմ էր. տեսաւ մէ բազրկեանց էկաւ, քաղաքի դրաղը դրաւ, գնաց բազրկեանի մօտ, գլոխ տուեց, ձեռ քաշեց, կայնաւ։

—Որդի՛, ինչ ես ասըմ, ասաց բազրկեանը։

—Բան չեմ ասըմ, խնդրըմ եմ, ասաց. քո հոգուն սաեսաղէն՝ ընձի տանիս խնտդ Երուսաղէմ։

—Որդի՛, լաւ ես ասըմ, ասաց բազրկեանն։

Իրեք օր գնաց, միտք արաց, բազրկեանն.—ես էսի բերեցի որ ընձի օգուտ ըլի. տանա աւելի իմ բեռը ծանրցաւ։

Գիշերը քնան. բազրկեանն էդ տղին թողեց ու ուր դաւլաղաքըրը (ջորի, ջորեստան-բեռ.) բարձաւ, յընկաւ ճանապախ, գնաց։

Տղէն յիմցաւ որ լուս ա, բազրկեանն չկայ. յէլաւ ըստեղ՝ ընտեղ պըտրտեց, մէ բարակ ճանապախ ընկաւ առաջ, գնաց։ Շատն ու քիչ Աստուած գինայ, գնաց տեհաւ մէ սարի մէջ մէ հովիւ ուր օխչարը արածացընըմ ա, ասաց՝ անօթի եմ, էթամ էս հովիւի կուշտը, մէ կտոր խաց ուտեմ։

Խասաւ, չոպնին բարև տուեց։

—Բարո՛վ էկար, . . . վըր իմ գլխին, վըր իմ աչքին, վըր իմ յերսին էկար. խաց խլըսեր.ա, սրի՛, խեծի էշը, էթանք տունը, քըզի լաւ պատիւ կանեմ։

Էս հովիւը բելլէ-կեօզ էր, տղին դրեց իշու վրէն. ոտները փորի տակ կապեց, օխչարը ժողուեց, տուեց առաջը, տարաւ ուր յերը. տղին տարաւ վերևը. ոտները դրեց զնճիլ, կապեց։

Էս բելլէ-կեօզը էկաւ ուր փուռը վառեց։

Էն տեղ էռսուն կապուած մարդ կար, տղէն ընդոնց խարցրեց.

—Էս ինչ բան ա։

—Ջո տուն ակօլի, դուն էլ էկար էս տեղ. օրը մէ մարդ ուտում ա։

Փուռը վառեց, նիզէն (նիզակը) դրեց կրակը. կարմրաւ, բերեց կոխեց մէկ մարդի սրտին մէջ, առաւ գնաց. բռնեց վուի վրէն, էփեց կերաւ. ըն տեղ մէ դուռ ջուր ունէր, լմեց, ու վրը քամկին քնաւ։

Թագաւորի տղէն ուր ընկերտանքին ասաց.

—Ըտղու մէ ճար չէք գտնըմ։

—Չէ, ասեցին ընկերտանքը։

Տղէն ուր ձիաներու կապէր քանդել տուեց, ուր ընկերտանքին օտի զնճիլը կոտրեց, էկաւ նիզէն վուի միջէն խանեց, քնուկ տեղ տարաւ դրաւ ըդու աչքի վրէն. որ ճխտեց, աչքը փլխաւ, գնաց, մի թիզ մտաւ մըջ օչխրի տարթին։

Օր փլխաւ աչքը, պոռաց.

—Թագաւորի տղա, էսի քո բանէրն ա։

Էլաւ էս յէրի մէջ ընկաւ տղի յետևը լափըլափէլէն, ըստեղ-ընտեղ լարեց, չկարցաւ բռնէը. էկաւ իճաւ արաց, ջաղջի քարը օչխրի դռնից վերցրեց. մէ օտը դրեց չէմի էն տեղ, մէ օտը էս տեղ. օչխրներին անուն տուեց.—«սև օչխար, արի, սիլտակ օչխար, արի, կարմիր օչխար, արի»։

Օչխրները մէկ մէկ էկան էս բեղէ-կէօզի չէնքի տակով ընցան, դուս էկան։

Թագաւորի տղէն տեսաւ որ ըդու մէ ճէրի կայ, ալպիալը ըդու փորը թափեց. ճէրին օր խանչեց, «սիլտակ սէյիզ, արի՛», տղէն մտաւ ճէրու փորը, էկաւ ըդու չէնքի տակէն ընցաւ, խանչեց.

—Ա՛յ քո հէրն անիծած, տեսա՞ր, քո ձեռքէն պրծայ։

Բեղէ-կէօզն որ ըդու ձէնը առաւ, հերսոտ ընկաւ ձէնի էտև. ըդու յէրի առջև մէ գնար կար. տղէն գնաց էդ գնարի գլոխը, ձէն տուեց, ետ վախաւ. բեղէ-կէօզն ձէնի վրէն գնաց որ բռնէը, պատաւ, էլաւ հազար կտոր։

Գնաց իջաւ վրէն, տեսաւ ըդու եախից մէ կոբալ փետ կայ, յըմեն անդին քարով նշչուած. վերցրեց կոբալն, էկաւ, մտաւ յէրն. գնաց կապած ընկերտանքի կուչտ.—Աչքներդ լուսի, սըզանեցի, ասաց։

Էլան ըդոնք թափան տղի օտի վրէն. ուրխըցան։

Տղէն բերեց, ըդոց յարձկեց։

Դացին օչխարը ժողուեցին, ըդու էդ յէրի մէջ բերած ապրանքը յըմեն դուս բերին. թագաւորի տղէն փայ էրաւ. ուրին փայ չառաւ։

—Աղբէր, ասեցին. էս յըմեն քոն ա. դու ընչի՞ փայ չես առնըմ։

—Էդի ձեր արընի գլենն ա, ձեզի ըլի. էս մէ կոբալը թէ որ կուտաք ընձի, կըտանեմ։

—Խալալ ըլլի քեզի, դու մեզի ազատեցիր։

Իրար խալալաբմիս էղան, յիրարուց բաժանուան, ասին թագաւորի տղին.

—Աստուած քո խնդան ըլլի. գնա։

Տղէն ընկաւ մէ բարակ ճանբախ, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, խասաւ մէ մեծի (անտառ) մէջ. կէս օր էր, նստաւ խաց կերաւ, ուզեց որ քնէր, ասաց.—Թէ քնեմ, արի առս, գազանաւարները դան, ընձի դատինը ուտեն. յէլաւ մէ ջոջ ծառի վրէն, ուզեց որ քնէր. տեսաւ որ սարից մէ վերու-եզ իջաւ. էկաւ, էդ տեղ մէ ջրի հաւուզ (դուռ) կար, իջաւ վրէն, բերնից մէ ջաւահիրաթ քար խաննեց, դրեց դատին ջուրը խմեց. էն քարը ղուլ տուեց գնաց։

Տղէն ասաց.—ես մեռնեմ, չանք էս քարը էս եզան ձեռնէն չառնեմ, ըստուց չեմ էթայ։

Ցիջաւ ծառից, երկք խատ տլից խոփ գտեց, առաւ յէլաւ ծառի դլոխ, նստաւ։

Մնաց էն մէկէլ օրը, եզը էլի էկաւ հաւուզի վրէն. բերնից քարը խաննեց, որ կզաւ ջրի վրէն՝ ջուրը խմըմ էր, տղէն խփները մէկ մէկ թափեց, էն անդին քարը ծածկեց։ Եզը դարձաւ իրէնկեց, որ անդին քարը չկայ. էս տեղ, էն տեղ իրիչկեց, տեսաւ ծառի դլոխ մէ մարդ կայ. էնպէտ քննաւ, էդ ծառին մէ բիլէ զարկեց, որ ծառը բօքախան արաց, վիզը մտաւ փորը, ընկաւ, սատկաւ։

Տղէն քարը վերցրեց, իջաւ. ընկաւ մէ բարակ ճանբախ գնաց. գնաց-գնաց մէ դուզ տեղ, տեսաւ մէ թոզ, տուման ըլլում ա, ասաց.

—Տէր Աստուած, էս ինչ ա, խաբեն (փորձանք) ընձենից չի՛ պատանըմ ա։

Գնաց տեսաւ մէ դէաստա մէյմուն էն կայնած. մէ դէաստա էլ բազի (բարակ) էն կայնած, կռիւ անըմ են։ Տղէն տեսաւ որ բազիքը մէյմուններին (կապիկ) զօռ են անըմ, ուր կօբալը քաշեց, գնաց, մէյմուններէն քամակը կայնաւ. բազիքներին ջարդեց, սըպանեց, փախցրեց. ամենքը մէ չօլ էցդեց։

Մէյմունները էկան, ժողնըվան վրը տղին. փեչերից ձեռք էցդեցին, բռնեցին ու գնացին ուրանց ջոջ թագաւորի կուշտ, ուրանց լեզուով թագաւորին խասկցրեցին. «Էս մարդը մեզի ազատեց էն զալըմների ձեռքէն։

Թագաւորը ասաց.

—Ի՞նչ տանք ըդու խալաթ, օսկի՞ թէ անդին քար։

Մէյմունները լայեղ չտեսան. թագաւորը բերեց ուր աղջիկը տուեց էդ տղին։

Տղէն ժամանակ մը էդ տեղ մնաց, միտք արաց.—ըստե մնալը

ընձի ձեռք չտայ, դառնամ էթամ, տենամ իմ մէրն՝ իմ կնիկ մեռաւն թէ ապրաւ։

Էլաւ յետ դարձաւ, ընկաւ ճանրախ էկաւ Թըխ տունը։

Էկաւ-էկաւ խասաւ մէ մեջի. ընտեղ ծառի տակ տեսաւ մէ մարդ նստած աւ։

—Բարի օր քէ, ասաց, խօրոխբէրաւ։

—Բարով, հազար բարով, Թագաւորի տղայ։

Թագաւորի տղէն միտք արաց,—կըլլի թէ էսի իմ խօր ճանչնըմ ա, ընդու իմ անուն իմացաւ։

—Խաց ունիմ, անօթի եմ, ասաց տղէն։

—Խաց էլ ունեմ, փառք Աստու, ջուր էլ, յրմայ ոտ չունեմ, գունդ եմ. արի ընձի չկայ էթանք, մեր տունը էս դարի տակն ա, քեզի խաց էլ տամ, ջուր էլ տամ, պատիւ էլ անեմ։

Տղէն միամտաւ, էկաւ ըդուրը չկեց։

Ըդուր հնալք, Ֆեհց ունէր, մէջկըլից ցածր դայիճ էր, վերևը իսաւնաք էր, անունը Փոկոտն (Պալտրդայիճ)։

Փաթթուաւ տղին օտներից չանքի թևերը. էլաւ նստաւ վրի վրէն։

Մէ ամիս տղին չատ չարչրեց, հա քշեց ըստեղ, հա քշեց ընտեղ, հա ջուր բերեց, հա փէտ բերեց չթողեց, մէ սահաթ դենըներ։

Մէ օր էս տղէն էս չարչրմունքի մէջ գնաց մէ դղմի ըռաստ էկաւ, մէ խոր «ախ» քաշեց։

—Շան որդի, ասաց Պալտրդայիչ ուր վրի վրուց. ընչի ես «ախ» քաշըմ, չէ՞ քո խոզին իմ ձեռն ա, դու պտի պրծնես իմ ձեռից։

—Աղա, ասաց տղէն, գլխիդ դուրբան, իմ խօր խորակն էս ա, միտքս ընկաւ, իզին տաս, էսի անեմ մէ կերակուր, ուտենք։

—Դէ, չուտ արա, տենանք ինչպէսդ կերակուր աւ։

Տղէն դղմի գլոխը կտրեց, մէջը խորդեց, ծառներից խաղող բերեց, մէջը քամեց. դրեց արևը, գնաց։

Էն մէկ օր Պալտրդայիչին միտք ընկաւ, ասաց տղին.

—Է՛, չանորդի, քելէ, էթանք կերակուրը ուտենք։

Տղէն էկաւ դղմի վրէն կայնաւ. սկսեց որ ինք առաջ ուտէր էս դատից. Պալտրդայիչ տուեց տղին չափալեխի առաջ։

—Շանորդի, ըմալ էղնիս՝ դու ընձենից առաջ ուտես։

—Ջաննըմ, աղա, առ կեր, ընձի մի սըպանէ. դու քու Աստուած, թէ մնաց՝ ես էլ կուտեմ։

Պալտրդայիչ կերաւ, խմեց, fհՖովցաւ. դայիճները թուլցաւ, էկաւ ոտներից ընկաւ ցածր։

Տղէն ազատուաւ. գնաց մէ ջրի վրէն չորերը խանեց, լուաց.

ըսարկևց, փուշց չորցաւ. խաղաւ, էլաւ էկաւ որ Պալտրղայիչ էհՅը թողէր՝ նսաեր աւ

—Բարի օր քեզի, ասաց. խօրոխբէր։

—Բարիմ խազար բարով եկար, Թագաւորի տղա. իմ դվխին, իմ յերսին։

—Իմ օրս քու ձեռ. ընկալէսդ էր, ընձի ընկալէսդ իր չարչրըմ, տրորըմ, բեալի ես չի, մէ անդէս մարդ էր ընկնըմ քո ձեռ, չանքի մեռնելուն պտի չարչրիր, քեզի Աստուած չկայ։

Թագաւորի տղէն չոմախը խանեց. ընդու դվխի օրթալախը չոմախը յիջաւ, գլոխը արաց խազար փշուր. ջանը դժոխքի փայ արաց։

Ցրնկաւ մեջի մէջ, որ տեր ընդոնցից տեսաւ, ջարդեց, սըպանեց. ըդոնց fofը (արմատ) կտրեց։

Էլաւ ընկաւ ճանբախ, էկաւ Թրխ ուրանց երկիրը, խասաւ ուր քաղաքի մէջը. դիշերուայ կէս էր, գնաց ուրանց դուռը, ձէն տուեց.

Կնիկը ձէնը լսեց, ուր կեսլող ասաց.

—Էս քո տղէդ աւ

—Հա, լիրբ, լրբի որդի, միաք ես տուե խրլդի ջինեներին, ասըմ ես «քո տղէդ ա», իմ տղէն էս տաս տարի ա կուրխեր աւ

Տղէն մէկ էլ ձէն տուեց. կնիկ էկաւ դուռը բացեց. տղէն մտաւ ներս, մօրը բարև տուեց. մէրն էլ ճանչըցաւ, որ ուր տղէն աւ

—Կնիկ, ասաց տղէն, էլի, մէ ճրագ արա, իրար էրես մէ տեննանք։

—Ջեանի դու գնացեր ես, մեզի ճրագ չէ էլեր, ասաց։

—Էլի, գնա դրկըցի տնէն մէ ճրագ բե, յիրար էրես տեննանք, ասաց տղէն։

—Չէ, ես յօրդում եմ կերեր, ըսկի դրկեցի տուն չեմ գնացեր, ըսկի էլ չպտի էթամ, էթըմ ես, դու գնա։

Տղէն էլաւ քուչի միջով էթըմ էր, հասանները էկան, բռնին, տարան Թագաւորի դուքսաղխանէն. գացին Թագաւորին ասեցին.

—Ջո խազինի դողն բռներ ենք։

—Շատ լաւ էք արեր, ասաց Թագաւորը, Թըղ մնայ. սապախտան ըդու դիւանը կանեմ։

Լուսացաւ, Թագաւորի մըտից ընկաւ. էդի մէ ժամանակ մնաց դուքսաղխանէն։

Թագաւորին մէ ցաւ պատահաւ, խանչեց ուր այամներին, ասաց.

—Էկէք մէ էնպէսդ մարդ գտէք, մէկ խօսք ասա, ես լամ, մէկ խօսք ասա ես ծիծղամ. բեալի իմ ցաւին մէ աղատութեն ըլի. Թը չէ, ձեր յըմընի գլոխ կը կտրեմ։

Այամներից մէկը ասաց.

—Թագաւոր, մեղի միուլ տու իրիք օր, էթանք, չուս դանք, կըլլի օր գտնենք։

Էդ բանտի վերակացուն էլ էր էդ տեղ. մէ երկու օր էդ տղին խաց չէր տարեր, անօթի էր մնացեր տղէն։

Վերակացուն էլաւ խաց տարաւ։

—Դու Աստուած չունիս, ասաց տղէն, բունաւոր եմ, Թագաւորի բունաւորն եմ, ընձի ընչի՞ խաց չես բերըմ։

—Թագաւորի տուն Աստուածն աւերայ, էնպէսդ չիոթուբեն էդպէր ա մեր մէջն....

—Ըընչի՞ խամար։

—Ընդու խամար՝ մէ մարդ ա ուղըմ, ասըմ ա, ընձի մէ մարդ դտէք, մէ խօսա՝ ես լամ, մէ խօսա՝ ես ծիծղամ։»

—Էդի ես իմ, դնա Թագաւորին ասա, մէ խօսք ասեմ Թագաւորը լայ, մէկ խօսք ասեմ ծիծղայ։

Բանտի վերակացուն գնաց Թագաւորի առէջ կայնաւ։

—Է, ինչ ա ասաց Թագաւորը։

—Էն մարդն որ դու ասըմ ես, բունատուն բռնուած ա։

—Ինա խան, տո արի։

Գնաց Թագաւորի տղին բռնատնից խաննեց, առաւ, էկաւ Թագաւորի դիւանխանէն. ձեռ բռնեց, կայնաւ։

—Դու ես, որդի, ասաց Թագաւորը։

—Ես եմ, Թագաւոր ապրած։

—Արի, նստի, խօսա տեսնամ։

Տղէն սկսեց ուր դվեց անցած բաներ խօսացյ։ *

Ասաց.—Ես չատ հարուստ էի, ունէի անսպառելի ինչք, չատ լաւ բարեկամներ, որտակից ընկերներ, որոց հետ ձի կըընտէի, զուարճալի վայրեր կը գնայինք, կեր ու խում կանէինք, կուրախանայինք։

—Թագաւոր ապրած, եթէ դու լինելիր իմ տեղ, ինչ պիտի անէիր։

—Հարկաւ պիտի ուրախանայի. իսկ չարունակէ որ լամ։

—Իմ ամբողջ կարողութիւնը ծախսեցի-վատնեցի, իմ լաւ ընկերներուս սիրտը չահելու համար, այլ ես ինձ մի վարայ անգամ չմնաց. սակայն յոյս դրած լաւ ընկերներուս վերայ՝ չարունակեցի նոցա հետ ուրախութեան գնալ, բայց ընկերներս երես դարձուցին, գիս չարաչար ծեծեցին, յետ դարձուցին։

---

* Այս տեղէն ետիքաթի պարունակութիւնը պիտի կրկնուէր զոր աւելորդ համարած էի գրի առնելու միջոցին, սակայն ըստ պահանջման Մեծ. գիտնական Պ. Գր. Խալաթեանի լրացուցած եմ, բայց գրական բարբառով։

—Թագաւոր ապրած՝ դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի լայի. իսկ չարունակէ որ ուրախանամ։

Տեսայ, զղացի իմ անխոհեմ ընթացքը. միտք արի՝ Սրուսաղէմ դնալ և Աստուծմէ չնորհ խնդրել։ Ճանապարհ ընկայ, մի կարաւանի պատահեցայ։ Կարաւանապետը բարի մարդ էր, ինս վստահացայց որ ապահով տանի Սրուսաղէմ և վերադարձնէ։ Ճանապարհի կէսը կրտրեցինք, ես ուրախ էի որ փափաքիս պիտի հասնեմ։

—Թագաւոր ապրած՝ դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի ուրախանայի, իսկ ասա որ տխրեմ։

—Դու մի ասեր, ես կարաւանապետին ծանր բեռ եղած եմ։ Մի առաւօտ զարթեցայ, տեսայ որ կարաւանապետ առանց ինձ իմաց տալու, թողած է զիս քնոյ մէջ ու գնացած։

Մնացի մենակ, անծանօթ անտառին մէջ. ճանապարհս կորուսի. հաց չկայ, գիշերը քնելու ապահով տեղ չկայ։

—Թագաւոր ապրած, դու լինէիր իմ տեղ ինչ կանէիր։

—Ի հարկէ պիտի տխրէի, իսկ չարունակէ որ ուրախանամ։

—Ես փրկուեցեան մի նշոյլ կորոնէի. մութ և ահռելի անտառին խորը պատահեցայ մի հովուի, որ գոյնզգոյն ծաղկանց և կանանչ մարգագետնոյ մէջ իւր հօտը կարածեցնէր. փրկուեցեան յոյս լցուած տեսնելով անոր ուրախացայ. ուրախանալով դիմեցի դէպի հովիւն։

—Թագաւոր ապրած, դու լինէիր ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի ուրախանայի, իսկ չարունակէ որ տխրեմ։

—Անօթութենէ աչքերուս լոյսը գացած՝ հասայ հովուին, հաց խնդրեցի. իսկ նա ինձ ասաց. «արի, նստի իշու վերան, գնանք տուն»։ Ես անխոհեմաբար նստայ. դու մի ասեր այս հովիւն Բելէկեօզ մարդակերներէն էր, իմ ոտներս իշու փորու տակէն կապեց որ ես խոյս չտամ։ Զիս տարաւ իւր քարայրը, դրան առաջ դրուած մեծ ժայռը մի կողմ առաւ, տարաւ ներս. ուր երեսուն հոգի ես կային, որոնցմէ մին զարկեց չամփուրի, կրակի վերան խորովեց, կերաւ. իսկ ես, որ ականատես էի այդ դժբաղդ մարդու չարաչար վախճանին, գիտես, ինչ եղայ, մանաւանդ կը մտածէի, որ մի օր ես ինձ պիտի պատահի։

—Հարկաւ պիտի սարսափէիր, իսկ չարունակէ որ ուրախանամ։

—Ես ես գիտես, ինչ արի, Բելէկեօզին ուշադրութիւն դարձուցի, երբ նա ընկաւ խոր քնոյ մէջ, սողալով գնացի ընկերներուս մօտ, ասացի «պարել մեռնելու օր է, ձեր ատամներով կրծէք իմ կապերս»։ Բոլոր ուժ մարդու ատամներն կրծելով թափաւ, իմ կապերս ես կտրեցայ։ Սակայն այս-այն կողմ ման եկայ, դուրս գալու հնար չկար. մեծ ժայռն դէմ տուած էր քարայրի դրան։ Գիտես, ինչ արի. գնացի այն չամփուրը առի, կրակի մէջ տաքցուցի, ու-

ժով մղեցի Բելլեկեօզի ալքին. ալքը փլլաւ. չամփուրն մխուեցաւ դեպին։ Բելլեկեօզն վեր թռաւ. «Թաղաւորի տղա, քու բանըն է», ասաց. լափըլփելլն (խարխափելով) այս-այն կողմ ըրաննց դիս, իսկ ես առջևէն խոյս կտայի միշտ։ Նա առաւօտեան հօտը դուրս հանեց որ դիս դանէ, ես մտայ նոխազի կաշիի մէջ, նորա չէնքի (քայլի) տակէն անցայ։ Երբ դուրս ելայ, ձայն տուի.—«չանորդի, պըծայ քեզ-նէ»։ Իսկ նա եռանէս վազեց. ժայռէն դլորեցաւ, եղաւ հաղար կտոր։ Նա մի չոմախ ունէր ակռանքով պատած, առի, դնացի այն մարդիկը արձակեցի, նորա տպրանքն ևս յանձնեցի նոցա. իսկ ես երբ դիս պատուած դտայ, չատ ուրախացայ։

—Թաղաւոր ապրած՝ դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի ուրախանայի, չարունակէ, որ լսեմ։

—Ես անտառին մէջ ճանապարհս չարունակեցի, դարձեալ մոլորեցայ, հաց չունէմ. դազաններըը չորս կողմս առին, արջէն կը փախչիմ, դայլի ձեռք կընկնիմ, դայլէն կը փախչիմ առիւծի ձեռք. փախայ, ելայ ծառը. ծառէն չեմ կարող ցած իջնել, դիշերը քուն չունիմ, եօթ օր սոված, անքուն, դազաններու սարսափէն կուլայի։

—Թաղաւոր ապրած, դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի տխրէի, ասա որ ուրախանամ։

—Դազաններըը հեռացան, որոց սարսափէն չէի կարող իջնել ցած. տեսայ մի եղնիկ եկաւ ծառի տակ, բերնէն մի անդին քար հանեց, ջուր խմեց, դարձեալ առաւ բերանն, դնացու Մտածեցի դարձեալ կգայ։ Իջայ, տղմէ երեք խուփ չինեցի, հետևեալ օր եղնիկն եկաւ, քարը հանեց. խուփերն վերևէն մի մի վայր ձգեցի, անդին քարը ծածկուեցաւ։ Եղնիկն երբ տեսաւ անդին քարը չկայ. կատաղեցաւ, վեր նայեցաւ, քննաւ. ծառին դարկեց, շրջեց, ինքն ևս սատակեցաւ։ Առի անդին քարը, որ կ'արժէր միլիօն, ճանապարհս չարունակեցի։ Հետուէն տեսայ մարդիկ անտառին մէջ նստած՝ ուրախ ուրախ կը խաղան, «այս լաւ եղաւ մտածեցի, թէ անդին քարը չահեցայ, և թէ կերթամ այն մարդերէն հաց կուզեմ։

—Թաղաւոր ապրած, իմ տեղ լինէիր, ինչ կանէիր։

—Հարկաւ կուրախանայի, չարունակէ որ տխրեմ։

—Գնացի այն նստած մարդերէն հաց ուզեցի.—«որդի, ասաց. մին, հաց ունեմ, սակայն տունն է, ես ոտք չունեմ, դիս չալակէ, տար, քեղ հաց տամ, ջուր ևս։» Գնացի որ չալակեմ, դու մի՛ ասեր, այդ Փոկոտն էր, մէջքէն նեղքև փոկ, փոկը փաթուքեց իմ ոտներուն, մէջքին, ելաւ ուսիս վերայ նստաւ, սկսաւ դիս ապտակել, «չանորդի, կասէր, այս տեղ գնա՛. այն տեղ գնա» ևլնւ։ Ես եղայ փոկոտներու ձեռք գերի, երբեմն մին կը նստէր վդիս, երբեմն միւսը, երբեմն ջուր կը բաւնային վերաս, երբեմն ցախ կամ փուշ։

—Թագաւոր ապրած, դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի լայի, իսկ չարունակէ որ ուրախանամ։

—Հնարքներ մտածեցի, մի օր գնացի դիմի մի մօտ, հառաչեցի, «Շանորդի՛, ասաց. ինչո՞ւ կը հառաչես». ասացի հօրս կերակուրը այս դղումն էր. տեսայ, միտս ընկաւ» Փոկոտն լինձ մի ապտակ զարկեց, «չանորդի՛, ասաց. պատրաստէ, ուտենք» Դղումը ծակեցի, մէջը խաղողի ջուր քամեցի, մնաց երկու-երեք օր, Փոկոտն ինձ մի ապտակ զարկեց, ասաց.—«Գնա, կերակուրը ուտենք» Գնացինք, ձեռք զարկի ուտեմ. մի ապտակ ևս զարկեց. ասացի «ես չկերած՝ ինչպէս կը համարձակիս ուտելու» Դղումը կերաւ. խաղողի ջուրը խմեց, թուլացաւ. ալեակուտեցաւ ընկաւ. որ ընկաւ, գոմբալով մի հարուած տուի սպանեցի, սլծայ։

—Թագաւոր ապրած, դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ կուրախանայի, չարունակէ որ տխրեմ։

—Անտառին մէջ պատահեցայ կապիկներու և բարակներու պատերազմին, կապիկներու կողմ բռնեցի, 2—3 օր պատերազմեցանք, բարակներ մեր վերայ զօռեցին, սպանեցին մեր զօրքերն. իմ չորս կողմս ևս պաշարեցին. մնացի թէ կատաղի բարակներու ձեռքը և թէ արեան հեղեղի մէջ։

—Թագաւոր ապրած, դու լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի տխրէի, չարունակէ որ ուրախանամ։

Ուժս հաւաքեցի, հարուած հարուածի վերայ տուեցի. յաղթեցի, բարակներն, երկրէն հանեցի։ Կապիկներն զիս տարին Թագաւորին որ վարձատրէ։ Բերին զիս Թագաւորի աղջկան հետ պսակեցին, հարսանեաց ամեն պատրաստութիւն տեսան, կերանք խմեցինք, խաղացինք, ուրախացանք։

—Թագաւոր ապրած, դու լինէիր, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի ուրախանայի. ասա որ տըրտմեմ։

Մի ժամանակ մնացի, դարձայ որ տուն գնամ. տեսնեմ կինս, մայրս ողջ են, ինչ-եղան։

Գիշերը հասայ տուն, դուռը զարկեցի, ձայն տուեցի. կինս մօրս ասաց —«որդիդ եկած է» Նա ևս բարկանալով ասաց. «այ անառակ, տես քո որ մի սիրահարն է» Կրկին զարկեցի, վերջապէս բացին։

—Ձրագ վառեցէք, իրարու տեսնենք, մեր կարօտ առնենք, ասացի։—«Ձրագ չկայ», ասացին։—«Դրացիներէն բերէք», ասացի։

—«Քանի որ դու գնացած ես, ես դրացու տուն, ուխտ արած եմ, ոտք չդնել, դու գնա բեր», ասաց իմ կինս։

Դուրս ելայ որ ճրագ գտնեմ, գիշերապահներն զիս բռնեցին. —«դու Թագաւորի գանձարանը կողոպտած ես», ասացին. զիս բան-

տարկեցին։ Թագաւորի մաքէն ելաւ. մնացի բանտի մէջ կնոջս և մօրս կարօտը քաշելով. որոնք ևս չէին գիտեր ինչ եղայ, ուր եմ։

—Թագաւոր ապրած, դուռ լինէիր իմ տեղ, ինչ կանէիր։

—Հարկաւ պիտի ասէի. չարունակէ որ ուրախանամ։

—Թագաւոր ապրած, ասաց. կուզես ուրախացի, կուզես ախրէ, դիս անմեղ տեղ բանտարկած եսւ

Թագաւորը մտածեց, որ սոյնպիսի անմեղները պատժելու պատճառաւ իրեն այդ ցաւը պատահած է. որչափ անմեղները կային, քննեց և արձակեց, այս տղին ևս թոյլ տուեց, հազար հատ ևս ոսկի տուեց։

Տղան գնաց տուն, ծախեց բեղկեօզի չոմախը հազար միլիօնի, այն եղնիկի բերնի անդին քարը հազար միլիօնի։

Նստաւ խնդքով կառավարուեցաւ, այլ ևս երես չտուեց հացկատակ ընկերներուն։

4

ԲԱԲԸՌ

(Կուլապի բարբառով) *

Ժամանակով մի Թագաւորի երեք տղայ կար, փոքր տղի անուն Մելէք-շահ էր։ Սոցա կարգուելու ժամանակն հասաւ, ըստ իրենց հնաւանդ սովորութեան երեքն ևս մի մի նետ կը ձգեն։ Մեծ տղի նետը կընկնի վազիրի դուռը, այն կառնէ վազիրի աղջիկը՝ փոքրի նետն ևս նազիրի դուռը. այն ևս կառնէ նազիրի աղջիկը. իսկ Մելէք-շահի նետը գնաց ընկաւ մի ժայռի մօտ, մի գորտի առաւ։

—Իմ բաղդս այս է, ասաց Մելէք շահ. գորտը առաւ բերաւ։

Թագաւորի մեծ որդիքն հարսանիք արին. Մելէք-շահ գնաց նոցա հարսանիքին, ձեռները ծոցը դրած, խեղճ-խեղճ։

* Պատմած է Կուլապ գիւղացի Ասլանի Գէվոն, որ Սիմէկայ հովտավայրերուն մէջ ձիերու հիւանդութիւնը դարմանելով կը պարապէր. միջահասակ 60 տարեկանի մօտ առոյգ մի անձ էր. ունէր խոհս ձայն։ Սոյն հէքիաթի առաջի երկու էջերն կորսուած լինելով որոյ պարունակութիւնը գրական բարբառով կը ներկայացնեմ, ապա կը շարունակուի ասողի բարբառով։

Հանդիսականները ծիծաղեցան Մելէք-չահի վերայ. մայրն ևս ասաց.

—Ծօ՛, անոյշ քու էրկու լուսն, գնացիր բան չգտար, գորտը բերիր քեղ կենիկ։

—Նանէ, ասաց. Աստուած էն է կամեցեր։

Դիշերը աուն դարձաւ Մելէք-չահ, տեսաւ մի սերուն աղջիկ գորտենին հանելով դուրս եկաւ, այնքան գեղեցիկ, որ արեւուն կասէր, դու դուրս մի գալ-մի ծագիր, ես պիտի ծագիմ։

Մելէք-չահ նորա լուսնեակ դէմքի գեղեցկութեան վրայ զմայլեցաւ. առաւ իւր հետ, գնաց եղբայրներու հարսանեաց հանդիսին։

Թագաւորը երբ տեսաւ, ոքանչացաւ. եղբայրներն ամօթահար եղան. հանդիսականք ուրախացան, ասացին.

—Սա հուրի-մելէք է, երկնից իջաց լոյս մ'է։

Մելէք-չահ առաւ Հուրի Մելէք, դարձաւ տուն։

Թագաւորը լուր յղեց որ հետեւեալ օր Մելէք-չահի հարսանեաց հանդիսին գնալու է. այն չքնաղ հարսը կրկին տեսնելու փափագով։

Մեծ եղբայրները նախանձեցան, իւրաքանչիւրը 1500-ական ձիաւոր իրենց հետ առին որ իրենց եղբայրն անպատրաստ գտնեն, ամաչեցնեն։

—Ա՛յ կին, ասաց Մելէք-չահ, մնացինք ամօթով, մենք որպէս կառավարենք այս ահագին բազմութիւն։

—Մելէք-չահ ջան, ասաց Հուրի փէրին, գնա՝ այն քարի մօտ որ գիս դուրս, այս գաւազանով երեք անգամ քարին զարկ, ասա.

—«Ղասապի ճումերտ» (առաստաձեռն մսագործ). որ երեք անգամ ասացիր, մի արաբ դուրը կը բանայ, դու ևս կասես. «Հուրի փէրին իւր փոքր սեղանը կուզէ»։

Մելէք-չահ պատուէրի համեմատ կատարեց։ Դարձաւ տեսաւ. Աստուծոյ ստեղծած ամեն տեսակ համադամ կերակուրներ պատրաստ՝ սեղաններու վերայ զետեղուած, ոսկի սրծաթի սամաններու մէջ։

Կերան, խմեցին, կէսն ևս ուելացաւ։

Հրաման արաւ Մելէք-չահ, որ իրենց առաջի սամաններն ևս իրրև նուէր, առնեն տանեն։

Հետեւեալ օր Մելէք-չահի մայրն Հուրի փէրին տարաւ բաղանիք որ լողացնէր։

Մելէք-չահ Հուրի փէրու գորտենին կը ձգէ կրակ, կը վառէ, որպէս զի այլ ևս չմտնէ գորտենոյն մէջ։

Հուրի փէրին անմիջապէս ցաւ կզգայ. թագաւորի կնոջ կասէ.

—Ծո տղան իմ տունը վառեց, ահա ես կերթամ Զինուամայինն քաղաքը, թող ինձ չհետևի, կարող չէ գտնել. և մի ակնթարթի մէջ աղաւնու մորթենի կզգենու, կը թռչի կերթայ։

Թագաւորի կնիկը տուն կդառնայ։

Մելէք-չահ կը հարցնէ.—Ո՞ւր է Հուրի փէրին։

—Ձիս տղան իմ տունս վառեց», ասաց. աղաւնու մորթ հագաւ, «Վերթամ Զինաստան» ասաց. Թող հոնս չդայ Մելէք-չահ, գիս չէ կարող գտնել։

—Մայրիկ, ասաց. ես պիտի գնամ, զայն գտնեմ։

—Որդի, ասաց. նա գնաց Զինաստան, ով գիտէ ուր է Զինաստան, չես կարող գտնել, մի գնար։

—Չէ, մայրիկ, պիտի գնամ, գտնեմ. կարօտս առնեմ։

—Որ կը գնաս, որդի, ես ևս քու հետ կգամ։

—Մայրիկ, մի գար, իմ ճանապարհս չատ դժուար ու հեռու է։

—Չէ, որդի, չեմ կարող զքեզ Թողուլ, գնաս կորսուիս. ես ևս քու հետ կը տանջուիմ, քո կերակուրը կը պատրաստեմ։

Մայրն ընկաւ Մելէք-չահի հետ, գնացին։

Շատ և քիչ Աստուծոյ միայն ծանօթ է, գնացին, տեսան որ իրենց առաջը մի անապատ բացուեցաւ. այդ անապատին մէջ մի ծուխ կը բարձրանար, չտկուեցան այդ ծուխը գնացին, տեսան որ մի բարձր քօշկ ու սարայ։ Մտան ներս, տեսան որ մարդ-բան չկայ, ամեն կահ կարասիք, կրակ, սուրճ ու սրճաման պատրաստ կայ։

Թագաւորի կնիկը սրճամանը հրեց կրակի մէջ, սուրճ եփեց ու սկսաւ խմել։ *

Նստան դինջացան (հանգստացան)։

—Ադէ, ասեց Մելէք-չահ, դու ըստե դինջացիր, ես էթամ ձինը ջրեմ։

Որ էնի գնաց ձինը ջրելու, էն սարայու տէր Բաբուն ա յուշիկ-յուշիկ էլաւ ցալտից,ուրը նշանց տուեց թագաւորի կնկան։

Թագաւորի կնիկը խաբցրեց.

—Դու ինչ մարդ ես։

—Ես էս սարայու (պալատ) տէր Բաբուն եմ։

—Մէ գմա տունջ, ես նեղացեր եմ, իմ ոտներս մաժես։

Բաբու էկաւ մաժեց։

Ուրանց խօսքերը մէկ արեցին։

Բաբու ինք խորոտ մարդ էր, թագաւորի կնիկ վառուաւ ըդու տէրից։

—Բաբու, ասեց թագաւորի կնիկ, կարող ես մէ բան խանես ըստու գլուխը, որ մենք մենակ ես foef ու սարի մէջ։

—Դու քեզի կը թալես խիւրնդուքեն, գիշեր որ քնար, սուտ

* Այս տեղն կը շարունակուի նոյն Ասլանի Գէվոյի բարբառով։

էլաղ կը տեսնաս, կասես. գիշերս էրազիս տեսայ, Սև սարը խնձոր կայ, որ էքաս էն խնձորից բերես, կուտեմ, կը սաղանամ։

Բարո յէլի գնաց ուր զհարզհանպին տափաւ։

Մելէք-չահ ուր ձին ջրեց, եկաւ կապեց, դարին տուեց, ղայֆի խմեցին, խաց կերան, պարկան քնան։

Լուսը բացուելուն Մելէք-չահ չուտ ուր տեղից յէլաւ, ձէն տուեց ուր մօր։

Էնի տեղիցը չէլաւ։

—Ադէ, ընչի՞ չես ըլլում տեղիցդ։

—Մելէք-չահ, ես ինքս չատ խիւանդ եմ։

—Ըլա ինչ պտի ըլի քու հալդ։

—Ես գիշերս էրազ տեսայ։

—Խէր ըլի էրազդ. մէ ասա, ինչ աւ։

—Էս տեղ մէ Սև սար կայ, խնձոր կայ, դու բերես, ուտեմ, կը սաղնամ։

Մելէք-չահ մնաց չիւար. պտի էքամ, ինչ անեմ, մերս ա, միտք արեց։

Էլաւ ուր Աստուածը ապաւինեց. ուր ձինը խեճաւ, դպա էդ Սև սարը գնաց։ Էդ սարը մեհէլխ (անտառային) էր. պտըտվըմ էր էդ տեղ. երկու ասլան (առիւծ) ըռատս էկան ըդու. էդ էլ թագաւորի տղայ, չճանչընմ՝ ասլան էն։

—Էսի վիր հորթերն ա, մոզրուած ա, ըստղրանքը պըտըրըմ էն։

Ըդոնք լքնան դպա Մելէք-չահը։

Մելէք-չահ քաշեց թուրը, զարկեց սըպանեց էդոնց. գնաց ծառից մէ խուրճին խնձոր լցեց թարկը, էլաւ որ գայ, Աստ հրամանով էրկու ասլանի ձագեր ընկան խըտ ըդու՝ էկան։

Թագաւորի կնիկ ու Բաբըռ. էլած ին սարայու գլոխ, թամաշա էն անըմ։

Թագաւորի կնիկ ասեց.

—Դէ, ա՛. Մելէք-չահ գալըմ ա։

Մկայ ասլաններըը էնի ցրուեցին իրարուց. էնտեղ ասլաններու վաթան ա (հայրենիք)։ Մէկ էլ տեսան որ գալըմ ա։

Էլի Բաբռ իջաւ գնաց տափ էկաւ։

Մելէք-չահ ինքը էկաւ իջաւ։

Մերը էկաւ դստու (դիդմամբ) մտաւ տեղի մէջ, պարկաւ։

Մելէք-չահ խնձորները տուեց մօրը, ասեց.

—Ի՞նչպէտդ ես, մայրիկ ջան։

—Մելէք-չահ ջան, դու էկար սալամաթ։

—Հրամանքէ, ադէ, փառք Աստ, էկայ։

—Խնձոր բերեցիր.

—Բերեցի, ահա, ասեց, տուէց մօրը։

Մէյը կերաւ, ասեց.

—Փառք Աստու, կը լսւանամ, առաւտուն կ'երթանք։

Էլի Մելէք-շահ ձինը տարաւ ջրելու։

Կանչեց թագաւորի կնիկ.

—Բաբըս, արի տեսնանք, գացի «հորթիկ եմ սրպանէ» ասըմ ա, էրկուսն էլ խաբը բերեր ա։

—Ծո տուն աւիրի, էդի ասլան ա սրպանէ. էրկուս էլ խաբը բերեր ա, ըդու չարա կըլլի։

—Ըսպա ըդու ինչ չարա կ'ենիս, որ սրպանենք. մենք հեյծ անենք, կառնք անենք խաս իրար. մէ իլաճ ալա, ըդու գլօխ կորցընենք։

—Ըդու իլաճ էն ա, որ էն մեկել Սև սարը կայ, էնի քառասուն հարամու վաքաճ ա. էնտեղ որը որ էթայ, սաղ չդառնայ. կը վչացնեն։ Կը քնես, էրազին կը տեսնես՝ էն Սև սարը տանձ կայ.—«Որ բերես, ես կը սաղնամ, որ չբերես ես կը մեռնեմ», կասես։

Մելէք-շահ քնաւ, առաւօտա խաս չուտ տեղիցը վեր կացաւ, խանչեց.

—Մէը, մէը, անգան ա, էլիր։

—Շատ խիւանդ եմ, ընձի հալ չունեմ. Մելէք-շահ ջան, էրազ եմ տեսեր, էն մեկել Սև սարի տանձը, որ չբերեցիր, ես կը մեռնեմ։

—Ես ինչ անեմ, աղէ, ասըմ ի մի գայ, ըդու ինձանից ձեռ չքաշիր, քեզի թողեմ էս չօլերը էթամ, կաթդ կերեր եմ, վախենամ կաթդ ընձի պատիճէ։

Մելէք-շահ ուր Աստուածը ապաւանեց, ուր ձինը խեծաւ, դէմ արաց, դալա Սև սարը քշեց։

Հարամիքին մէ ղուրուխ ունեն, (պահպանուած, հսկողութեան նեղքև եղած մարդ), ըդուեղ մէ աղբուր կար, գնաց էդ աղբուրի վրէն իջաւ, ասեց.—Ես էլ դինջանամ, իմ ձինն էլ։

Թաց կերաւ, իրիչկեց որ սարը մօտ ա, ասեց.

—Քնիմ, դինջանամ, կ'երթամ կը բերեմ։

Ղայթը զարկեց ձիու ոտը, քնաւ։

Հարամի պաճին դուրպին (դիտակ) դրեց վրը աչքին. իրիչկեց, տեսաւ մէ ձիաւոր, իջեր ա ղուրուխի մէջ, խանչեց, ձէն տուէց ուր հարամիքին.

—Էկէք մէ տեհէք, ես իրիչըմ եմ մեր ղուրուխի մէջ օձն ուր պորտով, հաւքն ուր թևով չեկեր էր, գացէք ընդու գլօխ ընձի, մալը ձեզի։

Էլան չորս ձիաւոր խեծան, խառ էկան. էկան ըդու մօտենալու իմին, քշեցին, վրայ տուէցին, որ ըդու սրպանեն։

Մելէք-չահի ասլաններըը խմցան, պրծան դալա էդոնք. ձեռ թալեցին, ձիաւորներ ցած բերեցին, ճրղճրղեցին իրարուց։

Հաւամի պաշին դուրպին դրեց, իրիկվեց, տեսաւ որ տեղ-պըստեղ փչացրեցին, ասեց.

—Էլէք, մէ տաս ձիաւոր էլ դնացէք։

Ասլաններըը էդոնց էլ սըպանին, ճրղճրղեցին։ Իսանի ջանեսակը ջոկ էն դնըմ. ձիան ջոկ իրար վրայ։

Հաւամի պաշին էլի տուրպին դրեց, իրիկվեց.

—Ես ինչ ա, էլի էս մարդիկ փչացան. էն մարդ պարկուվ աւ

Խանչեց, հաւաըը էցդեց ուր ձիաւորներին. ամենքը իրար իրարի խեծան, հաւամի պաշին էլ խետ դիմաւորաւ, էկաւ դալա Մելէք-չահ։

Մելէք-չահ քնած ա. ձին էլ էկեր, կայներ ա գլխին վերև, էնքան վեքօլ ալեր ա որ դեսին մեկ չոք իջըցրեր ա, չիմանըմ։

Մելէք-չահ իմացաւ որ քիչ ա մացեր ձիաւորը ուրը վերցէ։

Էլաւ ուր ձինը խեծաւ, էդ տեղ կռիւ դցեցին. էն որ Մելէք չահ՝ ուր ձին էն սըպանըմ, էն որ ասլաններն էն ճղճղըմ։

Էդոնց ջարդեցին. հաւամի պաշին ուր ճօfարը դարձան, փախան։

Մելէք-չահ ընկաւ ըդոնց էտև, խրկվեց, (փախցուց) տարաւ դալա Սև սարը, էցգեց մէջ մեջին, կուրցըրեց։

Ետ դարձաւ, ասեց՝ մէ էթամ տենամ, մէ վաթան, հաթահախ տեղ կըլլի։

Գնաց չուռ դալու ընդոնց օթախները, տեսաւ ջոկ-ջոկ քառասուն հաւամու տեղը։

Քառասունն էլ որ հաւամութեն արեցին. տես թէ ինչքան ապրանք են լցած։

Ընկաւ օթախները չուռ էկաւ, մէ օթախի էլ ըռաստ էկաւ. դուռ բացեց, տեսաւ մէ գեճաբու (փափկակեաց կին կայ) որ ձեն տուեց.

—Հա, հաւամի պաշի, դէօր էս գալըմ դալա ընձի, մէ ձեռս աղուն ա, մէ ձեռս խանչալն (դաշոյն) ա, գաս մօտիըննաս, ընձի զարկեմ պտի սըպանեմ։

Մելէք-չահ ասեց.

—Քաւբօ, ես էն հաւամի պաշին չեմ. ըդոնց ամեն փչացրեցի. դու ինչ օղուլուշախ էս ըս տեղ։

—Մըրայ փաշի աղջիկը՝ Տէրվիշ փաշի նչանածն եմ. էս հաւամի պաշին ընձի տաս, տասնըվեցնդ տարի ա բերած էր էստեղ, ես չէի թողըմ ընձի մօտենայ։

—Էնպէսդ ա դու իմ քուրն ես, խալի հոգ մ'աներ։

—Որ ես քու քուրն եմ, դու էլ իմ աղբէրն ես։

Էլան քուր ու աղբէր իրար խնա։

—Բայց, էս քու էյութեն ինչ ա։

—Ընձի զօռով էր բերեր, հըմի վառք Աստ, էկար էդ բեաֆիբի ձեռքից ազատեցիր։

—Եթէ տանես Տէրվիշ փաչին ընձի խաստըննես, մեծ լաւութեն կանես. Տէրվիշ փաչան շատ պատիւ կուտայ քեզի։

Մէլէք-շահ ասեց.

—Մէրս կը մեռնի, էկայ որ տանէ տանեմ. քուրս, վեր կաց, չեմնեմ թէ մեռնի, ես քեզի պտի տանեմ Մըսըր։

—Հարամա պատու մալը շատ ա. մի դատ մալ վերցընենք։

Էլան էրկամ ընկան էդ օթախները. պազիրկեանի լաւ լաւ ապրանքներ կային, տարան։ Մէլէք-շահ դնաց օթախներից էլ մի լաւ ձի բերեց. պատրաստութեները տեհան։ Էդ մալից մէ դատ (չափ) բարձան, չոկուան դպա Մըսըր (Եգիպտոս), դացին Էլան Մսըրայ ֆեաւտան. տեհան էդոնց հոբթարածներըր հոբթ արծացընըմ են, խանչեց։

—Փանփուլ, արի էստեղ, կնթաս մուտուլուխ կը տանես Տէրվիշ փաչին՝ թէ յաչքդ լուս ըլլի, Մէլէք-շահ առաւ ուր քուր-Ֆէնէրի խանըմ, էկաւ։

Էդ Փանփուլ յինք մէ ֆեչիլ տղայ մ'էր. գնաց ձեռ թալեց Տէրվիշ փաչի յականջ։

—Տէրվիշ փաչա, ասեց. իմ մուտուլուխը տուր

—Քե'չիլ, ասեց. ինչ մուտուլուխ ա։

Մէլէք-շահ ուր քուր Ֆէնէրի խանըմը առաւ էկաւ, Ֆէնէրի խանըմ ասեց. թող առնէ մէ խազար խատ ասկեր գայ։

Տէրվիշ փաչէն մտածեց.

—Ֆէնէրի խանըմ իմ նչանածն ա. էս Մէլէք-շահ ասածը ճրը պտի էլնի։

Փանփուլ ասեց.

—Ընձի Ֆէնէրի խանըմ պատուէր տուեց թէ Տէրվիշ փաչէն իմ աղբօր առէջ գայ։

Տէրվիշ փաչէն ծանաը դոռուն վեր կալաւ, էկաւ դպա Մէլէք-շահ, ուր քուր Ֆէնէրի խանըմ։

Ֆէնէրի խանըմ ասեց.

—Տէրվիշ փաչա, էս Մէլէք-շահ ընձի ազատեց. բատու ինչ աղեկութեն էնենք, որ բատու աղէկութենի տակէն ըլլենք։

—Դէ, Ֆէնէրի խանըմ, դու գինաս, քու աղբօր ինչ կամք ես տեսնըմ։

—Էնի ոչ ձիու փափաք ա, ոչ փողի պէտք ա, էնպէտ լաւութեն անենք որ միշտ ասուի։

Մելէք-շահ էդոնցից խնդրուաս.

—Ես էքամ տենամ, մէրս ապրմա, մեռա՞ւ։

Տէրվիշ վաշէն սանթանաթով ճանդրու դրեց։

Ճանդրու մէջ մէ նշան ուզեց քուրը մօտէն, Մելէք-շահ։

Մաանէքնեըը վոխեցին։

Տէրվիշ վաշան, ֆէնէրի խանըմ դարձան, մասլահաթ տենան, որ մէ աղբատանոց չկըռէ տան, որ ընդու լաւութենի տվից դուս ըլլեն։

—Ինչքան աղբատ ըլլի, ասեցին, բերենք կերակրենք որ ընդոնք էլ Աստուած ապաւինին, ըդու (Մելէք-շահին) ջանսաղութեն տայ, որ մէկ օր դայ մեզի ղոնաղլըխ։

Մելէք-շահը դիմաւորաս Բաբրոի վաթանը ու դնաց։

Մելէք-շահի մէրն ու Բաբրոն էլ արխային էն ընկած. էլած ա սարայքու գլօխը սէյր էն անըմ ուրանց համար. մէկ էլ տեսան մէ դուման դուս էկաւ։

Բաբրոին ասեց թագաւորի կնիկը.

—Կարող ա Մելէք-շահն ըլլի էս էկողը։

—Ինալէսդ տեղ չեմ օղորկէ. մկայ ընդու օսկրտանք փչացեր ա։

Ընդու դէն սրնաթը էրկուս քրմաս, Մելէք-շահ ինքն ուր ձիով դուս էկաւ (յայտնուեցաւ). էլի Բաբրոը վախաս տափաս։

Մէրը դնաց տղի առէջը, բարև տուեց.

—Բարով որդի, խաղար բարի. էսքան վախտ դու ո՞ր տե իր, փաթ Աստ, սաղ սալամաթ էկա՞ր։

Մելէք-շահ իջաս օթախը. տանձը տուեց մօրը, ասեց.

—Մէրս, քաւդիրդ տես, որ էդուց դուս ըլլենք, էքանք։

Էս խոտ Մելէք-շահ տարաս ուր ձինը ջրելու։

Մէրը խանչեց.

—Բաբը՛ռ, էլ ինչ օյին խաննենք ընդու գլօխ։

—Ո՛ր տեղ ուղարկինք, սաղ սալամաթ էկաս, էլ էդոր իլաճ չկայ, իրանից խարցու-տես, ըդու ինչքան ղուվաթ (ոյժ) կունենայ։

—Կարելի ա էքանք ուրիչ տէրութեն, ասա, մեզի դևեր ըռաստ գան, ես իմանամ քո ղուվաթ ինչքան ա. ինչով պէտք ա յաղթուեա։

Բաբրո էլի տափաս։

Մելէք-շահ էկաս, մէրը խարցրեց.

—Որդի, ինչով կը յաղթուես, յիմնամ քո ղուվաթ, էլաս որ մեզի դևեր ըռաստ էկան։

—Մէ դուքնի ջանբարակ բե՛, իմ թևերս կապայ։ Մէրը կապեց-ասեց.

—Մելէ՛ք-շահ ջան, քեզի ղուրպաճ ըլնեմ, դու կարող ես կորել։

Թևերը յիրար տալու քիմին, ջամբարակ կորուաւ, օղերը ամէկը մէ տեղ թափաւ։

—Ք՛ե ղուրպան, ասեց մէրը, քեզի ինչ կ՛աղթէ։

—Դէ, ասեց. մէրս, ինչ շատ բանի խառն իս յընկեր։

—Դէ, ուղում եմ քո վրէն ծրծղամ. էհ՜քս դայ, ասեց մէրը։

—Ընձի յաղթողը իմ նետ ու աննեղի թեվն ա. բեր իմ էրկու բուքը կապայ։

Էրկու բուքը կապեց։

—Մելէք-չահ, մէ թափ ասւ տեննանք, կալմղ ես կտրել. ասեց մէրը։

Ըդու թափ տուած վախտին, միսը կտրեց, մնաց օսկորը։

—Մէրս, Ասու սէրն ըլնի, ասաց. արձրկայ, միսը կտրեց, յընկաւ օսկորը։

—Բաբըռ., խանչեց մէրը, արի բսուե։

Բաբըռը էլաւ, էկաւ։

Մէրը ասեց Բաբըռին.

—Արի, ըսդու սըպանայ։

—Մէրս, ասեց Մելէք-չահ, ես ինչ վատուքեն եմ արէ քեզի, որ ընձի սըպանել ես տալըմ։

—Բաբը՛ռ., սըպանէ, ասեց մէրը։

—Դէ՛ւ քո Աստուած. սպանել էս տալըմ սպանել տու, Աստուած քո դիւաւ էնայ։

—Բաբը՛ռ., արի Մելէք-չահին սըպանայ։

—Ախոս ա Մելէք-չահ, ընձի՛ սըպանեննք, աչքերը խաննենք տաննենք, մէ քառասուն դաղանոց խոր կայ, քցենք ընդու մէջ։

Աչքերը խաննեցին, տարան քցեցին խորը։

Էդ ձին, ասլաններըը դնացին խեաը։

Մելէք-չահ մնաց խորի մէջ։

Ասլաններրի սովորութը՝ որ էթող գալող ըլնէր, կէթին առաջը, հաց կըլնէր, կերակուր կըլնէր, կառնին, կէսը իրանք կուտին, կէսը խորը կը քցին։

Մելէք-չահ մէ վախտ էդպէսդ ապրեց։

Մէ վախտ Մըսրայ փաշի բազրկեանը դայեր էր խրիտ աննելու. հետ դարձաւ, էկաւ մէ դեղ իջաւ, ըդուն ասեցին.

—Ձամբիսի վրէն, որ դու էթըմ էս, էրկու ասլան ա փայտան էլէ։

Ասաց.—Ըսլա ինչպէսդ պտի ընցնենք։

—Ասլաններըը մարդի չեն դալի, մարդի կուտի հաց կառնեն։

Բազրկեանը պատիճ ճօճարներին հրամայեց, մէ ոչխար առան, բիրեան չքեցին, հացի խետ փեռանի ձիուն վրէն դրեցին, էկան ասլաններրի դէմը։

Ասլաններըը էկան, դաստախուճով (վերան հաց ուտելու չոր) էդ բիրհաւը քցեցին ընդոց առէջ։

Ասլաններըը վերցրեցին, դացին դալա խորը։

Մնծ մարդը ախը խելքով կըլլի։

Էդ բազրկաւը ըդոնց էտևից դնաց, տեսաւ որ Ասլաններըը բիրհաւը կլեսցին, կէսը իրանք կերան, կէսը քցեցին խորը։

—Էթամ, իրիչկեմ, տեղամ ինչ կայ էդ խորը։

Դնաց, ձէն տուէց, տեհաւ մէ իսաճաթի ձէն էկաւ, ասաց.

—Դու ինչ մարդ ես ըստեղ։

—Ֆօռ մարդ եմ, ընձի թալած ա խորը, Աստըծու խէրին՝ ընձի խանայ։

Խանչէց իրա ճօfարներին, շիրիճներըը թալէցին խորը, խաննեցին Մէլէք-չահը։

Բազրկեաւ դրէց ուր ձիուն վրէն, տարաւ Մըսըր, որ դնայ էն աղքատանոցը։

—Բազրկեաւ, դոր ես տանըմ ընձի, ասէց Մէլէք-չահ։

—Մըսըր Ֆէնէրի խանըմ կայ, աղքատանոց չքեր ա, քըզի գլխի վրէն կրընդունայ։

—Ընչի են չկած։

—Ֆէնէրի խանըմ ուր աղբօր խաթրի խամար չքել տուած ա, որ ընդու էնքան լաւութեն արած ա, աղքատներըը, fօռերըը, խիւանդներըը, կուտեն, կը խմեն, աղօթ կանեն Մէլէք-չահի խամար։

Էդ բազրկեաւը տարաւ տուէց Ֆէրվիչ փաչին. տարան էդ fօռին աղքատանոց։

Էդ աղքատներրի սովորութքը. առաւօտեն առաւօտ ըլնըմ էն, Աստուած էն ապաւինըմ. ասըմ էն. «Կարելի ա Մէլէք-չահ մէկ էլ դայ ուր քուր Ֆէնէրի խանըմին ղօնախ, Աստուած, ընդու ջանսաղութեն տասս»

Մէլէք-չահ միտք արաց.—Մէլէք-չահ ասած՝ ես եմ. Ֆէնէրի խանըմն էլ իմ քուրն ա. խանչէց ղայվաչուն, ասէց.

—Ղայվաչի, դու քու Աստուածը, կեթաս Ֆէնէրի խանումին կասես որ ինքը ըլի ուր աղբօր Մէլէք-չահի արև՝ ուր օսկէ ֆինճանով որ զայվայ ա խմըմ, մէ թաս օղորկէ գայ, ես խմեմ։

Ղայֆաչին գնաց, Ֆէնէրի խանըմին ասէց. Ֆէնէրի խանըմ որ Մէլէք-չահի անուն լսեց, ասէց.

—Դէ, չուտ արէք, որ Մէլէք-չահի անուն տուեր ա, իմ օսկեթասի մէջ լից, տար ընդուն։

Լցեց, տարաւ Մէլէք-չահին։

Մէլէք-չահ ձեռնիցը առաւ, մէ էրկու ղում խմեց, ըդու մատնէքը քցեց թասի մէջ, խանչէց ղայվաչուն, ասէց.

—Ղայվաչի, դու քո Աստուածը կը սիրես, ձեռդ կը դնես էդ քասի վրէն, տաննես տաս Ֆէնէրի խանըմին, կասես, ինքը ըլի ուր աղբօր սրև, թող էս իմ կիսատ քասը խմայ։

Տարաւ տուաւ Ֆէնէրի խանըմին, ասաց.

—Ինչ սրեցի, չարամուխուն չկրաւ էն քօռի խաւ. կասայ «ինք էղնի ուր աղբօր սրև, էս քասը թող խմի»

Առաւ խմեց, ասաց.

—Որ աղու (թոյն) ըլի, որ իմ աղբօր անուն տուեց, պտի խմեմ։

Խմած վախտին մէ պընկոց էլաւ քասի միջէն, մասը պարզեց, խանեց, տեսաւ մէ մատնիք ա, պրծեց. տեսաւ ուր մատնիքն ա, կարդաց ուր Ֆամիլեան, ասեց.

—Ղայվաչի, կեթաք էն քօռ մարդուն էնպէտ կը բերէք, ըսկի ինջիմիջ չըլի։

Գացին վերցրին, տուան էկան։

Ֆէնէրի խանըմը իրկեց, տեսաւ ուր աղբէր Մէլէք-չահն ա, փաթըթուան, լացին։

—Աղբէր, էդ ինչ օղիաք էկեր ա քո դլոխ։ Ուրախացան իրար վրայ. նստան էճ ուրախութեն արեցին։

—Է՛ս քանի սպասէ իմ մէրն էլաւ. բեզիրկեան իմ ձին, սպասաններ բերէք ա։

Ֆէնէրի խանըմ մարդ օղարկեց, տաւ էկաւ, տուեց պահ։

Տէրվիշ փայչէն, Ֆէնէրի խանըմ նստան, միտք արեցին.

—Ախր մենք ինչպէսդ բան բռնինք, որ Աստուածութեն օղորմանայ իմ աղբէր Մէլէք-չահին, բեալէի աչքի լուս տայ։

—Կնիկ, դու գինաս, ինչ որ դու կամք ես տեղրմ։

—Աչխարքս հիմի թանդութեն ա, անօթի են, մեր խազինի բերանը բացենք, ամպրեների բերանը բացենք, ամեն ցրուենք դուս, օղորմութեն տանք, որ Աստուածութեն ընդու օղորմանայ։

Բերեցին ամպրեների, խազինի դռները բացին, ցրուեցին, ասեցին.

—Աստուած կապաւինենք որ ընդու աչքի լուս տայ։

Մէլէք-չահի ուր սովորութեն էլ էն էր, ըդու դռան առէջ մէ չինարի ծառ կար, աղբուր կար, էթըմ էր ընտէ քնըմ։

Մէկ օր տեսան որ մէ ջուխտ հուրի էդ ծառի վրէն իջած են. ըդոնք իրար իրար խօսացին, են մէկը, են մէկին վերցուց.

—Քուր, էս որն ա ըստէ քնողը։

—Մէլէք-չահն ա, Մէյմունե խանըմի նշանածը։

—Ընչի համար քներ ա։

—Ըդու աչքերը խանած ա, իլաճ չունի։

—Նարապ, կարելի ա սաղանայ, ըդու իլանը ինչ ա։

—Աստուածաւթեան օղորմացեր ա ըդու, դուս չատ օղորմութեան տուած, Աստուած էն ապաւինած. մինք թեւելու համր՝ մեզնից թեպալուր կընկնի, որ էնի իմաց ըլի՝ էն թեպալուրը վերցէ, ուր աչքերը չեպլից խանայ, մէջ էս պղպուրին թրջայ, դնայ տեղը. էն թեպալուրը քաշէ մէջ էն ջրին, ուր աչքեր քանայ, կը սաղնայ։

Էդոնք թուռան, թեպալուրը վեր ընկաւ։

Մելէք-չահ խմցաւ.

—Նարա՛պ, էս էրմղ էր, ինչ էր։

Զեռը պլտչտեց, տեսաւ՝ էդ թեպալուրը ընկաւ ըդու ձեռ, ասեց.

—Փառք քէ, Աստուած. Աստուածաւթեան ընձի օղորմացեր ա։

Զեռ տարաւ ուր չեպլ, աչքերը խանեց, չորցեր էր. առաւ մէջ ձեռին. ճակըզին մէջ տորեց, կակղցրեց, դրեց տեղը։ Թեպալուրը քաշեց չաւրը, բերեց քաշեց ուր աչքերը։

Աստուածաւթեան օղորմացաւ ըդու, սաղցաւ, ազատաւ։

Աստուածաւթեան նեղ մարդերին էնպէսդ օղորմանայ։

Մուժդայ տարան քաւրը.

—Աչքդ լուս ըլի, Աստուածաւթեան օղորմացաւ, Մելէք-չահին աչքերը սաղցաւ։

Քաւրը ուրախ-ուրախ էկաւ, վաթաթուաւ աղբօրը վիզը, չատ ուրախցաւ. փառք տուեց Աստուն, գացին նստան իրար խետ։

—Իմ ապաւնիերը, իմ ձին լաւ պահեք ես, քուր, ասաց Մելէք-չահ։

—Հրամանքես, Մելէք-չահ, էնպէսդ պահեցիմ որ չաւրը հալից լցես, սաղից կուգայ, կը թափի։ Ապաւնիերն էլ էնպէսդ եմ պահեր որ ուրինց պոչը կեռեր, էկեր առեր վերը ճակտին, ասեց.

—Քուրս, ընձի դասաս (մեկուն արած վատութեան փոխարէն վրէժ լուծել) ունիս, պտի էթամ. իմ ձինը ապաւնիերը օղորկայ, գայ։

Օղորկեց, առաւ էկաւ, չատ ընտիր պահեր էր, չատ յօժար էլաւ քաւրից։

Խեծաւ, դնաց դպա մէրը։

Բաբաը, ու մէրն էլ կերած՝ խմած, էլած ուրանց խամար էեֆ էն անըմ. իրիկնեցին մէ թոզ ու դուման ա գալըմ, զարզանդը ուրանց կոխեց, ասեցին.

—Նարապ, չըլի՞ Մելէք-չահը ըլի։

Սանաթը իրեքը չթմեր ա, Մելէք-չահ ուրին խասուց սարալը։ Բաբըը փախաւ, տափաւ ուր գերզամպին. մէրն էջաւ առէջ։

—Վայ Մելէք-չահ ջան, քու համբերնեերին դուրպան, քեզ դուրպան, քեզի ինչ էր պատահեր, որդի՛, դմբ էր գացեր։

Զիուց իջաւ, խանչեց.

—Բաբըռ՛ս, չանօրդի՛, դուս արի՛։

Բաբըռ դուս էլաւ, ուրին Թալեց Մէլէք-շահի ոտի վրէն, պա-դեց, ասեց.

—Մի սըպաներ, իմ մեղքի տակ մի մանի՛։

—Քեզի մեղք չկայ, էլի՛ վեր։

—Մէրս, ես քեզի ինչ վատութեն արեցի, որ դու էս օյին իմ դլխիս խանեցիր։

Լալկուսաւ մէրը, չկարցաւ պատասխան տէր։

Խանչեց ասլաններին, խասան, ամէկը ըդուն մէկ ձվից բըռնե-ցին. քաշեցին, ճըղճղեցին, դղըղնեցին. ճեճեմէ վեասիլ արեցին, (դժոխք ուղարկեցին)։

Մէլէք-շահ Բաբըռին ազատ արեց. դարձաւ էլի էկաւ Մըսըր, ուր քուր դոնախ էլաւ։

Նըստան խըտ իրար ուրախացան։

—Քուրս, ես պտի էթամ իմ նշանածի էտի։

—Քու նշանածը Մէլէք-շահ ջան, որ տեղն ա, ասաց քուրը։

—Իմ նշանածը Զինուսմայինայ Թագաւորի աղջիկն ա, պտի էթամ. իմ ասլաններըը, իմ ձինը կուտամ քեզի ամանաթ. ըստուց էտև ղրմ-լախ ա, ձի չի բանըմ։

Էլաւ ուր Աստուած ապաւինեց, ուր ճանըտախ ընկաւ, դնաց։ Շատ ու քիչ Աստուած դինայ. դնաց մէ ղրմլախ (աւազոտ) տեղ որ իրեք խոդի, աճըճ-մաճըճ, (թզուկ) էդ տեղ ղրուպ դրած իրար զա-նըմ էն, ըդոնց թրեր էլ փէտից ա, ըդոնց դամեճնէհէն էլ (ատրճանակ) փէտից ա. իրար փրթած են, յըմալ են փրթած որ յարնի մէջ իրար չաղած են։

Էդի ասեց.

—Աղբրտանք, յընչի՛ համար էք կռիւ անըմ։

—Ըդոնք ըդու ասեցին.

—Մեզի հայրենական մալ ունենք։

—Ձեր հայրենական մալը ինչ աւ։

—Մէկը մէ խալիչայ ա, մէկը մէ fօլոզ, մէկը մէ չպուխ աւ։

—Ըդոնց չնորհք ինչ աւ։

—Ըսկի դու զազուքեն արէր ես, որ մեր մալը կիսես։

—Օխտը տարի իմ խօր զազուքեն եմ արեր։

—Դէ՛, լաւ, դու մեր մալը փայ կանես։

—Դէ՛, բերէք էդ իրեքն էլ տուէք ընձի, բաժնեմ։ Ըդոնց ինչ խուճար ունեն, որ դուք դաւի էք անըմ.

—Խալիչին մէ էնպէսդ հուճար ունէ, որ դնես, նառես վրէն

fօլոզը դնես գլոխդ, չիպուխը՝ առնես ձեռքդ, որ գարկես, ասես, «ընձի տար Զինումայչին», էն սանաթին կը խասուս։

—Շատ լաւ, խալիչի հուսարը էդ ա, fօլոզին ինչ ա։

—Ինչ որ fօլոզը դնես քո գլոխը, մտնես ինչ շհարի մէջ, ըսկի իսաւ քեզի չհանայ։

—Ձեր Թրերը տուէք, ասեց Մէլէք-չահ։

Թրերը առաւ, ասեց.

—Ես ձեր շառը կը կտրեմ, մէկ մէկ Թալեմ ձեր Թրերը, դուք կէթաք Թրերու էտևը. որը չուտ էկաւ՝ խալիչին կըտամ. որը ետ էկաւ՝ fօլոզը. էն ետ գալողին էլ չիպուխը կըտամ։

Ասեցին.—Էսի շատ լաւ ա, դապուլ արեցին։

Էդի վերցրեց, էս եաեը, էն եաեը Թալեց. Մէլէք-չահն էր, որ Թալեց, գնաց իրէք աւուր ճանբախ հետուն ընկաւ։

Ըդոնք գնացին իրանց Թրերի էտև. Մէլէք-չահն խալիչին քցեց, իր տակը, fօլոզը դրեց գլոխը, չիպուխը առեց ձեռքը. գարկեց, գնաց էլաւ Զինումայչին։

Սը խասաւ Զինումայչին, խալիչեն, fօլոզը ու չիպուխը կապեց, գնաց մէ ղայվախանայ. տեհաւ ընտէ պախս են անըմ Թէ՝ էգուց պտի Հուրի-մէլէք-Մեյմուն խանըմին խեղդեն, եարապ, ինչ մասի են խեղդըմ։

Էն մէկէլը ասեց.

—Գնացեր, խոզածինը առեր ա. ինչ անըմ են, ձեռ չքաշըմ. հրաման արեր ա Թագաւորը ուր հլիս, որ սապախսաև բերեն, խեղդեն. սապախսաև պտի ջաղ խանչեն, որ ամեն գան թամաշայ։

Սապախսաև տեսան որ Հուրի-մէլէք խանըմին լալով, տրորուելով բերըմ են, ասեցին։

—Արի՛, խոզածնից ձեռ քաշայ, որ չխեղդեն։

Տղեն fօլոզը գլոխը դրած՝ հազր կանգնած էր. բերեցին կախեցին դարաղանից, վեր քաշեցին օր խեղդուի. քաշած վախտին Մէլէք-չահ Թուրը Թալեց, շիրիդը կտրեց, վեր ընկաւ էդի։

Էլի ասեցին.

—Դու էն խոզածնից ձեռ քաշայ։

Ասեց.—Անկարելի բան ա, խեղդըմ էք, խեղդէք, ես նրանից ձեռք չեմ քաշըմ։

Էլի շիրիդ Թալեցին վիզը, էլի Թուրը Թալեց, կտրեց։

Իշխան մարդիկ ասեցին.

—Կարելի ա ըսդու աջալը չի էկէ, մի՛ք խեղդի։

Վերցրին տարան խօր կուշտը, նստեց տարեկուսած։

Մէրը կասէ.

—Արի՛ խոզածնից ձեռ քաշայ։

Ինչքան ասեց, իլան չելաւ ասեց.

—Ես խողածնից ձեռ չեմ քաշեր, որ չեմ։

Մելէք-շահ դնաց զայվիքը ասեցին.

—Եարապ, իմալ աղայ ա Մելէք-շահ, որ աղջիկը ընդուց ձեռ չի քաշըմ։

Ին մեկը ասեց.

—Եարա'պ, Մելէք-շահ լսաւ բլի, լաւ աղայ բլի. կըլի որ Թագաւորի քուրը մէ իլան անի ընդուս։

Մելէք-շահ միտք արաց, դնաց դլա Թագաւորի քեռը. մաս դարկաւներից նէրս. տեսաւ խացկերոյթք էն անըմ։

Թագաւորի քուրը, ուր աղջիկը ու աղէն էն նստած իրար խետ խոսըմ. էլի էդ Հուրի-մելէքի պախսն էն անըմ. ասըմ էն.

—Հուրի-մելէք ձեռ չքաշըմ ա. եարապ, բլի որ լսաւ պատախի աղէն, որ դու տենաս, խաւանես. բլի որ մէ իլան անես։

Ասեց.—Վ.ատա ու շարդ բլի Աստ առէջ, որ էդ աղէն ես տենամ, խաւնեմ. էթամ Թագաւորից ինքիման (խնդրիք) անեմ, էն աղջիկը առնեմ, տամ էն տղին։

Մելէք-շահ լսաւ կայներ ա, անկաջ անըմ ա, ասեց.

—Վ.ալա, պտի ըդուս նչանց տամ ընձի։

Դէմ ու դէմ կայներ էր. folոզը թէքեց։ Աղջիկը ասեց.

—Լսաւ մարդ ա էրևըմ։

—Որդի', ասեց. սրն ա լսաւ, զարկաւնէրը ամէն կապած էն։

Տղէն ուրը նչանց տուեց, աղջիկը ասեց.

—Ահա, աղէ', լսաւ մարդ ա էրևըմ։

Տղէն ուրը ամէնին նչանց տուեց, ասեց.

—Հուրի-մելէքի նչանածը ես եմ։

—Որ դու ես, ասեց Թագաւորի քուրը, դու լսաւ մացի, ես էթամ Թագաւորի կուչեր։

Դնաց Թըխ Թագաւոր, որ տեղ նչանց տուեց, նստեց։

Թագաւորը ասեց.

—Խէրն բլի, յընչի ես էկեր էսպէս վախտը։

—Փեզի խետ բան ունեմ։

—Ինչ բան ունես։

—Էկեր եմ քո կուչտ ինքիման։

—Ի'նչ չատ բանի խետ ես ընկեր։

—Որ դու էն տղին տենաս, խաւանես, կըլի որ Հուրի-մելէքին էն տղին տաս։

—Դէ', քուրս, ես տենամ, խաւանեմ, կուտամ։

Մարդ օղորկեց, տղէն առաւ էկաւ, տեսաւ որ դռնից մտաւ, չատ ընտիր դուր էկաւ Թագաւորին, էլաւ կայնաւ։

—Ֆուրս, ես իմ աղջիկ հալալութենով տուեցի էդ աղին։

Իրենցին օխտը օր, դիչէր ցերեկ խարսնիս արեցին։

Ես խեա մէ վախտ մացին էս Ֆաջանց Թագաւորի կուշտը, կէրան խմեցին։

Ժամանակ էկաւ, ուր խօր քաղաք միտք ընկաւ. լացաւ մէ օր։

Զոքանչը տեսաւ լալիս ա, ասեց.

—Մէլէք-չահ ջան, ընչի՞ համար լալիս ես, Հուրի-մէլէքի նման նշանած ունես, ընձի պէս զոքանչ ունես, Ֆաջանց Թագաւորը աներդ ա, էլ ինչ խոդ ես անում։

—Ես ինքս էլ Թագաւորի որդի եմ. իմ հոս, վաթանս, գավըմ-ղարդաս (ցեղ, ընկեր) միտքս ա ընկնում։

Զոքանչը Թագաւորին ասեց.—Մէլէք-չահ միտք ունի էթալու։

Թագաւորը ասեց.

—Որդի՛, միտք ունես էթալու, քո իզին ա։

—Որ դու ընձի մուրախաս անես՝ կէթամ։

Պատրաստութենը տեսան, Հուրի-մէլէք ասեց.

—Մենք օր կանք, հուրի ենք, ըսկի չհինաբները չենք մտնի, ես կառնեմ իմ քառասուն ղարավաս (աղախին), կէթամ էն Սև քարը, դու էլ էտևանց արի։

Հուրի-մէլէք վերցրեց չատ մալ ու դոլվաք ուր խօրից, էկաւ, իջաւ Սև քարը։

Մէլէք-չահ ուր պատրաստութենն տեսաւ. զոքանչի, աների խետ հալալլաճմիս էղաւ։

—Աղ ու խաց հալալ արէք, ասեց. ըստուց յետև իրար չենք տեսնալ։

Էլաւ ուր Աստուած ապաւինեց. ֆօլոզ դրեց գլոխը. խալիչին չալխով զարկեց, ասեց.

—Խալիչա՛, քեզնից ուզում եմ, ընձի վերցնես, Մըսըրայ մէջ Տէրվիշ փաշի, Ֆէնէրի խանըմի կուշտը դնես։

Գնաց Մըսըրայ մէջ իջաւ. գնաց ուր քուր կուշտը։

Քուրը չատ ուրախացաւ։

—Գալուստդ բարի, աղբէր ջան, խազար բարի, ինչվէսդ արեցիր։

—Փառք Աստծու, նշանածս առայ։

—Ծընչի չբերեցիր, որ մենք էլ մեր փափաքն առնինք։

—Ընդոնք որ կան հուրի են. ըսկի չինուբեն չեն մտնիր։

ՔհՖ, ուրախութենն արեցին։

—Քոյր, իմ պատրաստութենն տես, չնորհակալ եմ։

Առաւ ձինը, ասլաններըը. քուրը գաթա թխեց, մուրթուզայ (հալվա, խորիս) չքեց, պաշար դրեց։

Առաւ ուր ձին, ասլանները, գնաց։
Էս խոտ էկաւ էն Սև քարի առէջ կայնաւ, ձէն տուեց.
—Ղասապի ճումհուռ։
Արաղները էլի Թաւարզէքը թևին՝ դուս էլան քարից։
—Մելէք-չահ, ասեցին. աշխարքը աւերենք, թէ չէքենք։
—Ոչ աւերէք, ոչ չքէք, Հուրի-մելէք դարավաճների խոտ էկեր աս։
—Փառք Աստծու, սաղ սալամաթ էկաւ։
Խանչեց, դուս էկաւ։
Պեզեճմիս էլեր ա խըտ դարավաճներին։
Միտք արեց ուր մէջ Մելէք-չահ.
Դարձաւ էլի Սև քարը, ձէն տուեց արաղներին, դուս էկան։
—Հա, Մելէք-չահ, աշխարքը աւերենք, թէ չէքենք։
—Ո՛չ աւերէք, ո՛չ չէքէք, իմ աղբրատնէք իմ խօր սրպանած՝ քաղաք զաճրած էն, ձեղնից չամ ասկար ուղում եմ։
Շատ ասկար թափան դուս, էնպէսէդ որ աստղերին նսապը կայ, ասկարին չկայ։
Ասկարը ուղում ա ջհիհարը վէչացնայ, քաղքի բոլորը վաթտեր աւ։
Խէլքով մարդ կար.
—Էլէք, սիլտակ մօրուս մարդիկ, էթանք տէնանք, էս ինչ բան ա բռնած։
Քանի ընաիր մարդիկ դացին Մելէք-չահին դէմ, դլոխ տուեցին.
—Թագաւոր, էս ինչ ա, վիր վրէն էթում ես, չենք դինում վիր վրէն ղազապլի էկեր ես։
—Ես էկեր եմ, ձեր թագաւորը, վաքիլ, վազիրը վէչացնեմ, դու ըսկի իհթիաթ մէք անէ, (երկվուղ մի անէք)։
Գնաց ասկարը քաշեց մէջ ջհիհարին. Թագաւոր, վաքիլ, վազիր վէչացրեց։
Ջառ էցդեց մէջ ջհիհարին, խանչեցին թէ.—Ես թագաւորի տղէն—Մելէք-չահն եմ, ըսկի իհթիաթ մէք անէ, ըստուց էաև ձեղի լաւ կը պահեմ, պահպանեմ, անվոդ մացէք։
Բերեց քազա վաքիլ, վազիր դրեց, շատ ատալէք թագաւորու-թևն—ուղիղ դատաստան արեց։

5

ԶՈՒԿՈ ԵՒ ԶԷՑՐԱՆ

(Զարսաճճագի բարբառով *)

Կըլլի թագաւոր մի. իրեք հատ աղայ կունենայ. կըսը մենծ տղին.

—Տղաս, ես էալ **) ծեր եմ, տասնըհինգ տարի սայմանիս գլօխը չայիրը չիմ գըցեր։

—Արքայ հայրիկ, կըսը տղան. միշտ սայմանիդ գլխու չայիրը չատ մեր կինիս (կը դուկես)։

—Էսան ա մանի չայիրին օդն է օր եօմիւրս (կեանքս) երկընցաւ. էաս տասնըհինգ տարի օր չիմ գըցեր, եօմիւրս վճացաւ. գնա ո տեսնըս՝ չայիրին գլօխը աղբիր մի կայ. չայիրին տկուն տէ աղբիրը սաճար մի կը քաշէ, աղբիրն էալ լեռան տակ է. աղբրէն տէ լեռան գլօխը տասւերկու սահար կը քաշէ։

Էլաւ մենծ տղան հարիր հատ ձիով առըց. գըցին, հասան չայիրը, տեսան ո մէ արաբ մի նսաեր է աղբրին վրայ։ Մի սև անպ էլաւ, էրկինքը գոռաց, արգևն ու կարկուտը առըց։

Թագաւորին տղան ըսըց.—Գնացէք, բընկնք աղբիրը։

Չայիրը կէս ըրին-չըրին՝ ջրին ու մին մէջ մնացին, չկրցին ո հասնէին։

Արաբը թուրը քաշեց, ընկաւ էաս հարիր հատի մէջ, հարիր հատին էալ գլօխը կըրեց, ձիանն էալ մորթեց, եղիւը ըրըց (դիզեց) չայիրին օրթըլըխը, էջաւ սրբն ի վէսր, գնըց։

---

*) Պատմած է Զարսաճճագ գաւառի Իսմայէլ գիւղացի Մինաս-բաբար Խաչատրեան։

**) Էալ՝ ալ եւ էլ բառերուն միջին ձեւն է, նեթեւաբար կարդալու է երկու ձայնաւորներն մի հնչմամբ։

Մի ամիս թագաւորին խապար չդնըց։
Թագաւորը կանչեց օրբաճճա (միջնակ) տղին.
—Ա՛յ տղա, աղբէարդ ճանփեցի սայմանի գլօխը, եա՛ բըռնուան, եա՛ ծեծ (պատերազմ) կինին, եա՛ ֆեֆի տէղ է, իրանց ֆեֆը կը հային. գնա, խապար մի առ, էկօ։
Օրբաճճա տղան էրկու հարիր հոգի խզմէքֆեար (ծառայ) ուներ. առաւ, ընկաւ առջևնին, գնաց, հասաւ չայիրը, տեսաւ մի սև մալդ աղբրին վրայ կերևայ։
Արարը սև ձինը հեծաւ, թուրը քաշեց, չայիրը չմտածտան հասաւ ընդոնց վրայ, էրկու հարիր մալդն էլ տողրամ-տողրամ բրըց (կտրտեց), լցեց ըն լհաճերուն (դիակ) վրայ, թողնց, դընըց։
Իրեք ամիս խապար չդնըց։
Թագաւորը կանչեց պղտի տղին.
—Աղբրտանքդ դրցին, չէկան. գնա, խապար առ, էկօ։
Էլաւ ըս տղան հրնգէն ձին հեծաւ։
Պապը ըսրց.—Մինակ մ'երթըր։
—Չէ, ըսրց, ես մինակ կերթըմ։
Գնրց, հասաւ չայիրը. տեսաւ աղբրին վրայ մի սև ձին, սև արաբ մի, օր մի պուռնկը գետինն է, մին էրկինքն է։
Տղին չմտ ճեյպէք (սոհռելի) երևաց։
Տեսաւ օ մէկ սև անալ մի էլաւ, էրկինքը ձէնոտաւ (որոտաց), հովով արգև մի առաւ, դուսանը էջաւ, էալ էսեն աղբիրը չտեսնըր։
Տղան պաշլայնց ձինը զենկու տալը, օ սահաթ մի չեղած՝ աղբիրը հասնի։
Չայիրը հալա կէս չրրեր էր, արարը ձինը հեծաւ, հասաւ աբղին, չայիրին մէջ առին իրար. տղան տուսէրկու թուր նետեց աբրուն, չկրցաւ կրչրէր, չայիրին մէջ կը պարտցնէ. մի թուր զարկեց ձիու պարդիին, թրին ճոթը գետինը հասաւ. արբուն ձին ընկաւ, արարը ընկաւ գետինը. տղան էջաւ օ արբուն դլօխը կըչրէ, արարը տղին ձինը հեծաւ, լհառն ի վեր տնկուաւ, չտկուաւ էլաւ, պատեցաւ (լհառն միւս երևան ի վայր դարձաւ, անյայտացաւ)։
Տղան վեց օր, վեց գիշեր հոտ մնըց. գնրց, տեսաւ օ, օհօ, աղբրտոցը լհաճերը իրարու վրայ բերդ է չիներ։ Ձին էալ մոռցաւ, տուն էալ մոռցաւ, կուլար, կաղաղակէր։
Առաւօտը տեսաւ օ, արևը ցաթեր է աղբրին վրայ, փառըլ-փառըլ փառլամլը կըլլի. մի հատ աղջիկ կայ հոտ, օր աշխարքի էրեսը չգտնուիր։
Գնրց-մօտեցաւ. տեսնըմ, ինչ է, ըսրց։
Մօտեցաւ. աղջիկ չէ, էլաւ մէկ ճեյրան (էգ եղնիկ) մի, պաշլայեց էսա թռփալ ճեյրանին էտևը վազիլը։ Վազեց, կռնեց չայիրին

մէջ. պաշլայեց պատրաստիլը, օ սաղ բռնէ կեօյէ (իբր) թէ. չկրցաւ. խանջրցաւ, քաշեց թուրը.

—Զինիմ, պանիմ, ըսըց։

Տեսաւ օ, էղաւ մէկ թոփալ կէլիկ (վայրի ոչխար) մը, տըն-կուաւ եօխուշն ի վեր (զառիվեր)։—Էհ հուսա բռնիմ, հա հունա բռնիմ, ըսըց. մինչև լեառան գլօխը էլաւ, մթնեց, կէլիկը աչիցը կորաւ։

—Նո դառնամ, էրթըմ, ըսըց։

Նէլալուն էլաւ, էջնալուն չկրնըր էջնըը, սարփ (անմատչելի) տեղեր ըուսուս էկաւ, ճանփան կորուս, օտքը նեռէր, կտոր-կտոր կըլլար։ Հոնի նստաւ։

—Ձսղող մի լեցընիմ, տեսնըմ Աստուած ինչ կը յաջողէ։

Տումանը էջաւ, արդևը առաւ, տղան Թրջաւ, Թրջած բազի գարձաւ։

Հայաւ, ճրագ մի կերևայ. ճրագին չաւը (ճառագայթ) ի վինք կառնէ։

Հովը դադրաւ, տումանը էլաւ վրուն, արդևն էլաւ։

—Ճրագին չաւէն ինձիս առաւ, ըսըց։

Պաշլայեց մտիը. կինէ Թը էլայ, Թմրուկը է. մեհեմիք է, փէտ մը գտաւ, թոփալ-թոփալ առաւ ճրագին լոսը գնըց, հասաւ մէ էմ-մեր-խափու մի (համարակապ դուռ), օր էմմերնուն քարիրը պիրուն օսկի էին։

Տղան կայնաւ էմմեր-խափուին մէջ, մտածեց.

—Ըսի իմ պապուս սարայը ըղանկ չէ, ըսպա ըսոր տէրը ինդուր է, ես ինդուր ո՞էրթամ նեբաւ Սահաթ մի կայնաւ, տիւշիւմիս էղաւ։

Վախը փարայ չինեբ, ըսըց. մտաւ նեբաւ։

Տեսաւ կնիկ մի, օր նստեր ճայը կը մանէր. ծծերը նեռեր էր էտին ուսին վրան, օր իջեր էր գետին։ Տղան ինք իր մտցը անցոց.

—Ըսի դէվի կնիկ է, ինձիս պիտի ուտէ։

Պաշլայեց էտևուն ծծերը ծծիլը։

Կնիկը խոշլանմիս էղաւ. օլրուաւ էտին, հայաւ՝ օ մէկ աղկեկ տղայ մի, կպեր է էտին, ծծերը կը ծծէ։

—Մախլուճ, (ձուկօ) ծծերս չծծիր, թելին հետ քիզի ճաղին վրայ սարմիս կինէի (կը փաթաթէի)։ Մախլուճ, ուսկա գուգաս, ուր կերթըս։

—Հէչ մ'ըսեր, մի՛ հարցնեբ, ան՛։

Էան լմանը գլխուն գալածը նախլ ըրըց։

—Որդի՛, էկօ քիզի պէյիմ. եօթը հատ տղայ ունիմ, եօթ տա-բի է դրցած է, ըսօր պտի դան, քիզի էալ կուտին, ինձիս էալ՝ մեղք իս։

Դէվի կնիկը մի չպոխ ունէր, տուաւ, զարկեց մեումեր քարին, ըսաց.

—Մեումե՛ր քար, բացուի՛ր։

Քարը բացուաւ, տղան կոխեց էաղ տեղ, առջին գոցեց։

Հետէ հայաւ, ο տղաքը քեֆ-քեֆ էկան, մտան ներս, պիրիմիճ էդան (հաւաքուեցան) մէկտեղ։

—Ացա՛, մենք ճանփու էք էկեր, միզի դայվի մի։

Էփեցին, խմեցին, նստան լախտու ընելը։

Մենծ տղան ըսաց.—Ացա՛, դուն մարդ կը սիրես, իսանի հոտ կուգայ։ Ուրիշն էալ մէկ հեղ ըսին.

—Մեր տղէքերը չիտակ կըսէ. չիտակ կըսե՛ս, ըսէ, չէ՞ նէ՝ քիզի կը մորթինք։

—Կաթիս վրայ էրթուի էրէք, ο բան չէք ըներ, չիտակ կըսիմ։

Տղաքը մօրը կաթերնուն վրայ էրթուի էրին։

Մէտերնին չպոխը զարկեց մեումեր քարին, հանեց դուս։

Տեսան ο, ինչ շահզադէ տղայ է, աչխլիքին էրեսը չդոնուիր։

Պաբայեցին հարցնելիքը.—Մախտուիթ, դու ես մեր մենծ աղբէաբը, դու ինդուր էկար, ճճճուղը թեուլը, օձը պորտովը, չէր կըբներ գար հոս, դու ինդուր էկար։

—Իմ գլխու գալածը ճախլ էնելու չդար։

Էան լմանը ճախլ ըրբց էղածը. ըսաց.

—Ձիուս էտև կերթամ։

—Էրկու օր կը կենաս, մեք նոր իք էկեր, քեզ տաւաք կինինք. դու կենաս տունը, մեք կերթաք ալ ու դուրը, կուտինք, կը խմինք, քիզի կը դնինք ճանփու։

Կերան, խմեցին, իրանք դբցին ալը, մօրերնուն քեցպեյ ըրին.

—Մեր մենծ աղբէաբը ինդուր գիտէս, ճանփու կը դնես։

Առաւօտը կէր-կերթակուր ըրին։

Դէվի կնիկը ձեռացը տէյճեկը տուեց, ըսաց.

—Կը տանիս orթաճա քրոջս, էան քիզի ճանփու կը դնէ. տէյճեկը տանելուն բիմի անոքէն կըլլիս, էան քիզի բան չըսեր։

Կէս դիշերուն անցած՝ խորոզը կանչելու կըլլի, ճամփու վրան ջուր չկար, դդում մի ջուր լեցուց. առաւօտը տնկուաւ լեառն ի վեր, եասուլին (քնելու միջոցին) անուա էլաւ լեառան գլօխը։

Տունն էալ հոնի էր, գնըց ο քորը նստեր, ճայր կը մանէր։ Տէյճեկը նետեց առջին։

Հայաւ ο քրոջը տէյճեկն է, տղուն լաթ ձգեց, իբրամ ըրըց.

—Բարի՛ ես էկեր, հազար բարի, ըսըց. քորս ինդո՞ւր է։

—Լաւ է։

Տէյճեկին վրայ կը հայի օ, դրեր էր քորը.—«Ըսի տղայ իմ ըրեր»։

Հաց կերաց, ջուր խմցուց։

—Տղաս, ինձի ուր հատ տղայ կայ, դարչելիստանը չըլլեր, օ քիզի բան մի ըսին։ Էլի՛ քիզի պէյիմ։

Էնն լմանը տղան պէյեց։

Ուրիշն էալ էկան, չեն նստիր, կայնուկ տեղ կըսին.

—Շիտակ կըսիս, հոս մարդու, խամ մարդու հոտ գուգայ։

—Ձեր վախուն լեառտանը կը դողան, վճիվ գուգայ հոսի. նըստեցէք ձիզի մերդէ շէրպէթ մի ընիմ, խմեցէք, օ իմ գլխուն գալածը նախ ընիմ։

Խմեցին, մէարեբնին տէյճեկը բերըց, նեարց առջևնին։

Ուրիշն էալ ըսին.—Ըսի բերողը տի դննաս։

—Էլաս, թողըց, գընըց։

—Ջիզի տողրամ-տողրամ կինիք, տի հանիս, թագաւորի պզտիկ տղան—Մախալութը դայ, ճանփու դնիս. չըլլիր, տի հանիս։

Էնն լման ըսըց տղոցը. հանեց, կերան, խմեցին, առաւօտը լոսցաս. էնն լմանը ճանփու դրըց։

Ըդոնք էալ մնոծ աղբէար էրին, հաչտուան (բարև առին, սըրին), իրարու հետ։

Ինոնք էալ.—Մէարեբնիս դիտէ, ըսին։

Առաւօտը էլաս, հացն ու ջուրը տուեց, իրան բզպին էալ տուեց, էնն լմանը բզպին վրան դրմուն՝ ճանփու դրըց։

Գնըց, լեառնի վեր էլաս. տեսաս մնոծ ղոճախ (պալատ) մի, օր աշխրքին մէջ չդտնուիր. տեսաս ղոճա սարայն էալ ալափ-ալափ կը վառի. մտաս ներս, օ հալուզին մէ խոռ (կարդ) Ֆըրդոլայի (չորս բոլորը) կարմիր, մի սրան ճերմակ, մի սրան դեղին, կապոյտ, մշմշդուն, մեղրիկ վարդ է. մի սրա էալ նուան ծառ, սրա-սրա չորս բոլորը պատած են։

Օսկիէ չիֆթէ շամադանը (աչտանակ) մէկը աղբրին ընդին, մէկը ընդին։

Գնըց ներս, մտաս օ ղոճա բիրեազ չպողը լեցուցեր, հոխանոց (երեք ֆունդ) լիւլէ մ'էալ անցոցեր է վրան, նստեր կը խմէ։

Տէյճեկն ու բզպին նեստեց առջին։

Քորը առաս, պագնեց, դրըց գլխուն։

—Օձը պորտովը, ճնճուղը թևովը ըս տեղանը մարդ չկրնըր գար, ինդիւր էդաս քու ճանփան ընկաս ըդին։

—Էկայ, խսմէր էր (ի վերուստ վճռուած, չնորհուած)։

Գլխուն գալածը էան լմանը նախ ըրըց։

Էդ էալ տասւերկու տղայ ունէր, էկան։

Գալողը էկաւ.—Մախալուէք բարի ես էկեր, Մախալուէ, բարի ես էկեր ...։

Քէյֆ, ուրախութեան ըրին, Մէարևրնին ըսեց.

—Մախալուէին կըսէք թէ՝ «բարի ես էկեր», ձէչ չէք ըսեր, թէ պէսուդ ինչ պատահեր, անցեր է։

Խմացան տղին պէսուն էկածը։

Դէվին տղաքը ըսին.—Մէք տաւէրկու տղայ էք, մէ մ'էալ գուն՝ տաւէրէք տղէյար թող ըլլէք։ Տաւէրկու տարի է օ, էադ աղբուն հողուն մէջ ավ ու դուշ կինէք, մեր ալվանը չկըշրէր, օ օլլակէք էդոր սայմանը. գողտուկ կորտէք։

Ինոր սարային ձէ՛ գուռ կայ, ձէ՛ էրդիկ. մի փէնճէրէ կայ, ևօթը խաթ, պիքուն մեռմեր քարէ չինած է։ Չէք գիտեր, ինդուր կը մննայ նէրս, ինդուր կելլայ. մեկ էալ կը հայէք, օ չափուճախ փէնճէրէն ճնճղու պէս կը մննայ։

Մէարևրնին ըսեց.—Դնա, էտ դարձիր, Մախալուէ, չատ նէզուէին կը քաշես։

—Անկարելի բան է, պղտի էրէտամ, օր էրէտամ։

Խապար ճանփեցին պղտի, օրթանճա քրոջը. էկան, նստան մէկտեղ, օ իրանք իրանց խնդէ խնդալ տան։

—Տէսնըք ինդուր տի ըլլի, ըսին. էաս տղան մէք տղայ էք ըրեր, մեռնիլը աչիցը առեր, տ'երթայ։

Մննծ քրովբտանքը ըսեց.—Էյտ տղան հեմի կը մեռնի, հեմի նեղուէան մէջ կը մննայ. հկըր կօդնէք նը՝ տղան ճանփէք, չէ նէ՝ էտ ճանփէք։

Ձեռուանը կրծքնին դարկին, ըսին.

—Ամեն բանի տէր էք մէք, թող էրթայ։

Բերին էրկրէթէ լուծ մի տննկեցին, դեռևրը վորեցին, զարկեցին, էրկրէթէ սամի մ'էալ անցոցին գլօխը։

—Տեսէք, էաս լուծը նշանակ է. հկըր էրկը էրան կորզուաւ գեռևրը՝ տղան մեռած է. հկըր սամին կոյրուած է՝ տղան նեղուէան մէջն է, ժմնեցէք, հանէք։

Հերfեւ էրան տեղ գըցին։

Տղան էալ էլաւ տաւէրկու տղօր հետ, մննծ չայ (գետ) մի կաբ, անցոցին, տղաքը էան արբու ղոճախը ցունց տուին։

Հայան օ մարդ չերևաբ. արաբը տեղ է գըցեր։

Արաբը էրեք ամիս քուն չըլլէր, գալած ժամանակը քսանը չորս սահաթ խոռուն քունի մէջ կը մննայ։

Դէվին տղաքը ըսին.—Գալդ լաւ, դու էադ տեղ էլլալդ հայէր։

—Տասը դաթ էալ ըլլի, ես կելլըմ, ինչ օլսուղին (տեղեկուէիւն տուէք արաբի վերայ) ինձիս հասկըցուցէք։

—Օր էկաւ, էլաւ վերը, մի սահաթ կը կենաս վէրը. էնէ լաթերով կը պարկի. իրան թուրը քակիս, կառնիս, լաթերն էալ կը հանիս. մաննի մը ունի, էնանկ իլմով կը հանես օ, չաս սխմուն էնանկ իլմով հանես, օ չիմանայ։

—Օ մաննին չիլաւ, մասը կը կըլրիմ։

—Զեղաւ. մասը կըլրես, չես խալըսիր։

Տղան պէյվաւ։

Տեսաւ օ արարնը էկաւ, ձիու վրայէն իջաւ, ձինը ըրբց ախորը, դուռը դրեց, քսանը չորս սահաթ էր, ձինը յոգնէի էր, հեծած վարդը կարծուէր։

Ձինը սաստիկ քորքըղնաց, էանքան օ նեբսէն քորքըզաց, էրկինք, գետին դողաց։

Տղին համար էր քորքըզաց, ձիին այտին էր։

Արարը օլրուաւ եա, ձիուն չորս ճուռը կապէց, փալուդի մոլ (բողբոջ) մի կըլրէց, ընկաւ ձիուն վրայ, էանքան զարկէց, օր ուռեցաւ ձինը. զարկած տեղը կը բարբնար կայնի։

Ըսբց արարը.—Ըս ձիուսին քու տէրդ մվրը անցնէր։

«Քառասուն օր է բերեր իմ, ձէն չես խաար, էանանկ պռաացիը, օր սիրաս վախցաւ, տունս վրաս, գնար ըսի, վրաս»։

Դուռը դրեց արարը, էլաւ վերևը։

Դաան դնիլը, էլլալը, փեճճեհէն ներս մտնելը մէկ էղաւ. տղան խմաց չեղաւ, հեմ էլ հայաւ փեճճեհէն ներս կը մննայ։

Տղան ուսուլ դուռը բացեց, դնըց ձիուն քով, բան տուեց։ Անքան աերդիր է, օ բան կուտէ։ Ջամիչը լեցուց առաջը, չկերաւ, այիցը արցունք կը թափէր։

Էլաւ դուռը դրեց, ուսուլ-ուսուլ ընկաւ ճանիփու դէվերու քովը. դէվերը կէս սահաթ հեռուն էին։

Դէվերը ըսին տղին.—Խէ՛ր ըլլի, Մախալաթ։

Մախալաթ տեսած էր ձիուն չարչարանքը, պաշլայեց լացը, չկրնար ճուսպ տար։

Դէվերուն մենծ էաղբարը ըսբց.

—Մախալաթ, խօսկիր, ինչո՞ւ կուլաս, մեք քու կռնակդ կ՛ք։

Տեսածին լմանը ըսբց։

Թաժա կեղիբ մ՛էին դինած. դէվերուն պզտի էաղբարը փոսքը դրեց տորպըկին մէջ, տուին, թեզ մի էկան ձիուն վրայ քաշեցին։

Մէկէլտանք էալ էկան, դուրսը պէյվան։

Տղան մտաւ ներսը, փոսքը քաշեց, դէվի վրու էիչին էալ տուաւ, ցգեց վրան, կապեց, էլաւ դուս։

Մի սահաթ կար իրիկվայ, կէս սահաթ հեռըցաւ արքուն սարայէն, գըցին մորին (անտառ), նստան։ Արևը պատեց, դէվերը ըսին.

—Մախպուռ, ասըլ քնուն խոր վաղրն է, ինչ տի ընխա նը՝ էլիր։

Էլան, ընկան հանփայ, էկան, հասան սարայը. պղտիկ էաղբըրտանքը չալակ մը ցից էր բերեր։

Տղան էրկրքէ ցից դմբուկով կը գինէր, ևերդիվան կը չինէր, կը բռնըր ու կ'ելլըր։

Էլաւ, մտաւ նէրս. տեսաւ օ փեցնեէրեն արբուն փէրտեն (երեսէն դիմակը) դրմուն էր, մի պրկունքը գետին է, մի պրկունքը երկինքն է։

Տղան չատ վախցաւ, ըսըց.—Ձհար արաքն է։

Թուրը քաշեց, հայաւ օ սուրաքը տաւրանմիշ չըլլիր. Քրին ճոթովը մեթեց, տեսաւ օ պատկերք է, էրկու արչուն դէն գնըց, պղտիկ դուռ մի էկաւ էտուչին. տեսաւ օ արաբը պարկեր, քնացեր է, չուվ մի ծամադաս գլխու վերդին է՝ չուվ մի օտաց դին. տեսաւ օ աղջիկ մ'է, գօտուն ի վեր բաց է, գլխու բարաճը։

Մէկ ձեռաքը Թուրը առաւ, մէկ ձեռաք էալ գօտին քակեց։

Էրեսը բարձին եաւ, եասդուղի վրան է դրեր, չէ տեսեր, դէշ է, Թէ աղկեկ։

Գօտին քաշեց, տկուն առաւ. աղջկան էրեսը օլրուաւ, տեսաւ էանքան աղկեկ է, օր աշխրքի էրեսը չգտնուիր։

Թուրը ձեռացը ընկաւ, խեչքը անցաւ, ընկաւ աղջկան քովը։

Ախըլլանմիշ էղաւ, ըսըց՝ «ես էաս ինչ է կինիմ»։ Վրու զրպուցը հանեց, չապկին էալ հանեց, օսկի դդակն էլ գլխուն առաւ, բոփեց, դրեց տորպըկին մէջը, տարաւ դէմի փեցնեէրեն, օր ցից էր զարկեր, կախեց պարան ի վէար։ Օլրուաւ-էկաւ, այնուկ ձէառաքը դրեց սրտին վրայ։ Մաննու ակը՝ պատն է զարկեր չաւլան. ձէառաք նետեց մաննուն, տեսաւ՝ չելաւ, չատ սխու էր. էարընէ քրտնուց մէջ մնըց, բերըց, Թքոտեց, մանի ին հանեց, դրըց իրան մատը։

Աղջիկը արԹըցաւ, տղի պիլեկը բռնեց։

Խապար չունի օ մաննին հաներ է։

—Մախպուռ, Աստըծու սիրուն Թող ըլլի, լաՀելս տուր, ես քումն իմ, դու իմն իս։

Ջտուեց տղան։

Աղջիկը հայեաւ մատին վրայ, տեսաւ օ մաննի չկայ. չարան կըլրաւ, ըսըց.

—Էդի վերջս (կեանքիս վերջն) է. առիր ըսըց՝ սրտըս, հիմայ հսԹիւկ-հքեկ (կինարմատ) իմ, հաւուր մի պարաս դուվաթ չունիմ։

Տղան էրդում ընել տուեց.—«Ի՛նչ սրտ ունիս նը՝ պտի ըսիս, չէ նը՝ կը մորԹիմ։

—Իմ սրտըս, իմ դուվաթս, իմ աչխարքը ուտելս (յաղԹել), էդ մաննին էր։

Տղան էջաւ, դէվ աղբրաոցը խապար տուէց, էլան-էկան, տեսան օ՝ աղջիկը եաթաղին մէջ նստէր է։

Աղջիկը ըսէց.—Դու տղամարդ չես։

—Էնոնք եօթն էալ իմ էաղբրտանքն է, զարար չունի։

Տղան լաթերը տուէց, աղջիկը հագաւ. էլաւ դայվէ մի էփէց, սրայէն տուէց, ըսէց.

—Իրաւ, ըսոնք քու աղբրտանքդ ին։

—Մի մօր մինէ չիք մէք, նոր իք էղեր աղբէար։

—Ի՛նչ օ ըրին՝ էսոք ըրին. տասէրկու տարի ինչո՞ւ իմ հողին մէջ էսոք թողիմ, օ էասանկ ընին իմ գլօխ։

Էաղ տղան էաղ աղջիկը առաւ. իրէք ամիս աղբրտոցը հետ կուտէին, կը խմէին, կերթային ավը։

Էաղ արաբը վէց ամիս էր իրա այմանի fճարը մի թագաւոր կար, Ֆօրօղլու պէս՝ ուր օր կերթըր նէ՝ կը գինէր, կը ջարդէր-տաննէր, ուր օր կըյրհ մի տեսնէր։

Սայմանի մարդիկը խնդիրք տուին թէ՝ ամանի էկեր իք, էասանկ արաբ մի կայ, ամանի է բերեր մեզի։

Էան թագաւորը պատրաստ տեսեր, էկեր, սարայի բոլորը բրուներ է, կըսէ՝—«սարայը փլեցէք»։ Տղան էալ խապար չունի, պիրէցի ներսը պարկուվ ին։

Սարայը տասէրկու դաթ պիրէցի մէրմէր քար է։

Առաւօտը լուսացաւ, չորեքշաբթի օր էր. դէվերը չորեքշաբթի օրը կիրակի կը պէյէին. տեսան օ արևը ցաթեր, փէնճէրէն ներս մտեր էր. պզտի աղբրտանքը արթըցաւ, էլաւ փէնճէրէն, հայաւ օ էրկնուց աստղերուն հասպը կայ՝ էաղ ասկրին չկայ։

Խապար տուէց աղբրտոցը, էլան ուրթն էալ եայ օխով պաւելայեցին ասկրին գինելը։

Սարայէն հեռըցուցին քիչ մի։

Մի ամիս ներսը մնացին. իճէեանին կըյրտաւ։

Մախպուրթը ըսէց դէվերուն. — Դուք էաս փէնճէրէն նետեցէք, ես էջնըմ, ձիուս հայնիմ։

Էնոք նետեցին, էդ բարաճէնը հեռըցուցին։

Տղան էջաւ վէար, գնըց ձիուն քով, այարը գարկեց, ախորի մէջ հեծաւ. մզրախը առաւ մէկ ձեռը, թուրը քաշեց, տալմիշ էզաւ մէջվանը։

Աղջիկը հագաւ տղի չորերը, սև փէրտէն անցոց երեսը։

Երկու թագաւորն էալ փէնճէրէն աղջկան կը հայինն. տեսան օ տղի դլլըխ մտաւ, էջաւ պատերուն վէար։

Թագաւորը զօրապետնուն ըսէց.—Ըդու բռնեցէք։

Աղջիկը ախորին դռան վրուն բռնուաւ, մաննին քովը չէր,

ինդուր օ ձեռ նետեցին. կայնաւ, էրեսի վրու արաբի փիւռեն նետեցին, հայտե՛, էրկու թաղաւոր աւին, գըցին։

Տղան ու դէվիլը կռիւ կինէին, խապար չունէին ո աղջիկը տարին։

Թագաւորնուն ասկիրը նո գարձաւ. կոռ կըսէին թէ՝—զօռ ըրած իք, առջևնուս կը վախին,—խապար չունին՝ ո աղջիկը առած կը վախնին։

Էսոնք քչեցին էնոց վրան, էնոք օխ մի նետեցին, տղան գարկուաւ։

Օխի ճոթը տղի սրտին մէջ մնըց, տղան խելքէվաւ, ընկաւ. հասան ձինը բռնեցին, ո աղին գլօխը կըլրին, ձինը աղին գօտուն բռնեց, առաւ դէպի դէվիլու դին։

Դէվիլը պատռայեցին լացը։

Գարձան տանա զօռ ըրին էնոց ասկիրին։

Էնոք աղջիկը առին գըցին։

Էսոք էալ տղան առին, էկան սարալը։

Եօթ աղբէարը՝ «Մախպութ, Մախպութ» կանչեցին ու կուլան։ Կը հային եարալի տեղ պիդլու չէնէր։

Ինքը իրեն քաշէր էր օխը, ճոթը մնացեր էր սրտին մէջ։

Էադ դևէրուն մէաբը հայաւ, ո էրկըթէ լուծը ընկեր է. խապար տուեց քորվըտացը, թոփվան մէ տեղ. մեծ քուրվըտանքը ռամ նետեց, բացեց թուղթը, հայաւ ո Մախպութը գարկուեր է։

Էլան իրեք քորն էալ մէկ-մէկ ձի հնծան, հասան տղին քով։ Տղան չկրցուցին, հայան ո եարի տեղ պիդլու չըներ։

Օրթաճինա քորը ըսըց.—Սրտէն էարին առնինք, էարին է գօլեր, տղան մեռած չէ։

—Մէք օր էարին առնինք, էարինի առաջ չէք կրնըր կըլրեր, էասուր մեղիմը հազիր տի ընէք, ա՛ճեա տ՛առնինք։

Գղտի քորը ըսըց.—Էասուր մեղիմին ծաղիկը՝ Մախպութի աղբըրին գլօխը հողէ լեռ մը կայ, տասևերկու քոռ է, էան տեղ կըսի, քսանըհինգ աւուր ճանփայ է։

Մենծ քորը ըսըց։—Գանի՛ աւուր կերթաս դու, դէ Մախպութի աղբրին գլխու լեռը։

—Անճախ հինգ սահաթով էրթամ, իդամ։

—Գու բանը չէ։ Գղտիկ քո՛ր, քանի՛ սահաթուն կերթըս։

—Չորս սահաթուն անճախ։

Հերոստաւ մենծ քորը։

—Ինչո՞ւ կը հերոստիս, դու քանի՛ սահաթուն կերթըս,—ըսին քորվըտանքը։

—Էրկու սահաթուն։

Մենծ քուրվըտանքը չաս մենծ հեխիմ էր, թուղթը քոչ էր. էրկու սանապան դնից, տասներեօթը չեփս ծաղիկ առաւ-էկաւ, դըրկից ծաղիկնը պզտիկ պղնձի մը մէջ. էփեց, եօթէն մէ մը կայնեցուց, լցից եօթ Ֆիլճընրնի մէջ. չախու առաւ, փորը ծակից, սրտի շիշը հանից, էառջի դիզը լցից բերան ի վէրա, էարիկը սրբից, դալայից, բերան դուրս բերըց. մերդը, կալապ, աղ խառնից, խզած տեղը լցից, կարից։ Եօթ Ֆիլճընրնի էրկուքը խառնից, տկու Ֆիլճընրնին բարզը հարայի վրայ քաշից։

Աչկս լոսը դրցեր էր, մի Ֆիլճանը աչքը լցուց, լոս էկաւ։

Պալասան չիչեկուն էփեց, խառնից էան մէկ Ֆիլճընրնին հետ, լցից պողազն ի վէրա։

Տղան էլաւ, նստաւ։

Պղինձ մի ջուր տաքցուցին, էան էրկու Ֆիլճանն էալ լցին մէջը։

Բերին տղան լոքցուցին։

Էվէրքու աղկևուքինը, հվէրքու դուվաքը էկաւ վրան։

Եօթը Ֆիլճանը ջուր առին, պալասան ծաղիկը էփեցին, էատ եօթ Ֆիլճանին խառնեցին, օրը Ֆիլճանը մի առին անօթի վորուն, եօթն էալ լմնցուցին։

Տղին աչկը աչխարքը դէօր (համեմ) կուգայ, էվել մէ դուվաք ունէր, էնանկ տաս էղաւ։

—Ա՛յ սրդի, ըսըն իրիք քորն էալ, դու էտա ինչ բան բռնեցիր։

Տղան կանչեց.—ձիւրաո, ձիւրաո։

ձիւրաո չկայ։

Աղրտանքը պաշխեցին լացը։

Իրեն այտին էղաւ։

Էդ եօթ Ֆիլճանը եօթ օրը լմնց, ինչ իմաստութին օր ուզես, էկաւ վրան, ըսըց.

—Աղրտանք, մէրեր, կեցիք հոս, ես ա՛էրթամ ալիկան։

Մենծ քորվըտանքը ըսըց.—Ա՛յ սրդի, կեցիր տհանըմ, թուղթը ինչ կը սպղցընէ, աճտա դնա։

Թուղթը հայաւ, տեսաւ.—

ձերկու թաշտաւը ամէնկը աղբէր մ'է, ամէնկը տեղ մ'է զաֆթած. մենծ աղբօրը մի տղայ կայ, քառասուն օր է՝ օ աղջիկը սուտ հիւանդ էղեր, վատա է կըլլեր քառասուն օր. քառասուն օրը լմնցեր է, հէյտանիք բռնած լինի։

—Մախսուվթ, ըսըց թուղթ հայողը։

—Ի՞նչ է, ավա։

—Ըսէ տհանըմ, քառասուն աւուր ճանփայ է, քու ձինդ քանի՞ սահաթան կը կըլլէ. դու հմտակայ էկու (այդ բանէն տեղեկութիւն առաւ)։

—Ջօ՛ւ ընէմ էրկու սահաթուն, իլմով էրթըմ հինգ սահաթուն կը կըլլէ։

Տղան ձիուն բան տուաց, եմը կըլլաց, հեծաւ, ընկաւ ճանփան. իրաք սահաթուն առաւ (ճանապարհը վերջացուց)։

Տեսաւ օ տարած է աղջիկը համամ, կը բերին։

Իրաք քորը հոս պատրաստ տեսան։ Տղան հասաւ, ձիուն մի զենկու տուաց, առաւ աղջիկը թէրին, մի զենկու էալ դարկաց ձիուն, ձին թռաւ, առաւ-գնաց։

Թագաւորը բամասա կինէր, ըսաց.

—Բռնեցէք, վճվ առաւ, իրան. վեվ առաւ, իրանը ըլլի։

Չկրցան բռնին։

Վեզիրնը ըսաց. — Թագաւոր ապրած, թելալ կանչէ, ուր օ ֆիւֆէ-պիճեճ (ձեռամ հեծնող, կախարդ պառաւ) կայ, էրկնոց կերթայ. օսկի լից, տուր, էրթըն, տղան իշալա գինէն, ետ բռնին. մեր աշխարքը եամանի է բերած։

Վեզիրը չէր դիտեր թէ աղջիկը վախուցին, գինար թէ արաբն է կիճե էկած։

Ֆիւֆէ-պիճեճենին էկան, օսկիքը ֆիւֆի կը լցնէր, զափալը կը գինէր բերանը, ինքն էալ վրան կը հեծնար, կէլլըր էրկինքը։

Հինգ հազար հատ էլան։

Տղան էրկու սահաթվայ քաղքէն հեռացեր էր. վեր մի թին կերթայ, առջին կըլլմուն է, առած է մէջտեղը։

Ֆիւֆէ-պիճեճենին հասան վերևուն, վրան մարդ, տակը մարդ, չորս բոլորը մարդ։

Տղան խամխամիճ էղաւ, մնըց։

Իրաք քորվըտանքը, էնոք էալ ֆիւֆէ-պիճեճ ին, ջարդելէն էկան, իմտաս հասան տղին. էնոք մէկել ֆիւֆէ-պիճեճենուն վեր մի կարասին գինէին, կարասն էալ հետը կը վառեր կըլներ. ֆիւֆէ-պիճեճ չմնըց, ֆուլլին վառեցին։

Իրաք քորը աղջիկն առին, էկան տեղը։

Սօթ աղբէարը մէարևրնին ճանփեցին տղին դէմ։

Սօթն էալ դըցին, հասան տղին՝ օ էարնին մէջ է, կռիւը պըրծած է։

Գըցին աղբերի մի վրայ, ձինը լոքցուցին, մնացին հոտ։

Աղջիկն օր տարեր էր, էան թագաւորը թուղթ ճանփեց մէկել աղբօրը. գրած էր.

—«Դու ըդ դըուն, ես ըս դըուն կռիւ ինէք»։

Էնի ըն դըուն, էսի ըս դըուն տղան առին մէջտեղը, չորս թին կըլրեցին, վախելու ճար չկայ, պաջլայեցին կռիւ։

Դէվերուն էրկուքը զարկուան, մնացին վեց հատ տղուվ. օր

մարդ չմնաց ջարդուցին. տղան վերցուցին բերին տունը, իրիք օր մնացին, ինչ օ մալ կար առին, էկան մենծ քրոջը տուն, էան էալ ճանփու դրաց պապու տունը։

Դէվերուն մէկը ճանփեց միւժեճի (աւետաբերը).

—Թագաւոր ապրած, տղաղ էկաւ։

—Ի էանանկ է, պատրաստ տեսէք, ըսաց։

Պատրաստ տեսան, աղջիկն ու տղան պսակեցին, հօթ օր, հօթ գիշեր հէարսնիք էրին։

6

ԲՂԵԼ ԱՂՋԻԿ

(Ջարտաճագի բարբառով *)

Կըլա՛, չըլա՛ վախտին թագաւոր մը կըլա. թագաւորը կը վախճանի. տղան տասնըհինգ տարուայ տղայ է, տեղը կը նստի։

Աւուր մէկը կելլայ, կերթայ լեառը ավը. մը էղնար [1]) կը գինէ, հինգ հատ կաքաւ. մէկալ օրը կերթայ՝ ճէյրան մը, էրկու կաքաւ. մէկալ օրը պօճ կուգայ։

Վէզիր կըսը թէ՝—Էաղ դին մ՚էրթըր, Ֆիլան ճանփով դնա։

Մէկալ օրը էանդին կերթայ, տաս հատ կաքաւ. մէկալ օրը տասը կաքաւ, խումբի մը բռնաց. հաց չէր առեր, անօթեցաւ. էլաւ լեառան գլօխը, տեսաւ օ՝ թիւրքմէններուն չադրնին, էրկնուց ատղերուն հասպը կայ՝ չադրին չկայ։

Գնաց մի չադր. անօթի էր, բազա պանիր ու սեր կերաւ, էլաւ, ընկաւ ճանփայ։ Չադրնին սըրա-սըրա զարկած ին. ճանփու ըսդին էալ կար, ընդին էալ կար, միջուն գնաց, ճնարի չադրը կայնաւ։

Զպոզը լեցաց, կրակ չունէր. հայաւ օ չադրին մէջ իրիք հատ աղջիկ կայ, իրիքն էալ քոր ին. մենծ քորը կրակ մը բերաց, դրաց չըպղի վրայ։ Թագաւորը հայաւ, օ չատ աղկեկ աղջիկ է։

Աղջիկնը ըսաց.—Թագաւորի տղին խե՛ք բլլիր, ինձիս առնէր,

*) Պատմած է Միհնա-բարար։

1) Էղնար էգ եղնիկն է, որմէ ճէյրան կասեն։

Էանանկ չադր մի տի չինէի՝ օ թադաւորին ինչ դժար ազպայ կար, մէջը նսաիր, պարկիր, մի հաճը պօօ մնար։

Աղջիկը մտաւ չադրը, աղան էլ ընկաւ ճանփայ։

Թադաւորը մտածեց.—«Աղջիկը լաւ է, չադրը պատիհավա էկաւ։

Դնաց սարայ, կանչից վեզիրը, ըսաց.—Առէք էտա ալմաս մանրին, տարէք Ֆլաճ չադր։

Տարին, աղջիկը անցոց մտաը։

Թադաւորը էան մէկալ օրը, էտա հագուն ձինը հագաւ, դնաց ավը, զարկից մի էղնար, մորթից, կախից կէսը ընդի հաճը, կէսը ընդի հաճը—ձիու բերիին, դնաց, չադրը էջաւ։

Օրթաճնա քորը էկաւ ձիուն կիմը բռնից. մինճ քորը հագուր էր, վախաւ, պէյվաւ։

Թադաւորը նէրս ընցաւ, նստաւ. բերին մերդը, կարագը, էլաւ էղնարին կէս ըախան տուից էղոց, ընկաւ ճանփայ, հասաւ տունը։ Թօփից դնարլիկ գլօխնին, տօլմա ուտողնին։

—Դրցէք, աղջիկը աւէք, էկէք ինձի։

Դրցին, աղջիկը առան-էկան. պատկուաւ։

Իրէք օր մնաց աղջկան քով, կիճի հագաւ, դնաց ավը, իրիկունը դարձաւ չադրը. էկաւ օրթաճնա քորը, ձինը բռնից։

Թադաւորը ըսաց.—Ձինը մի բռնէր, կրակ մտ էկօ։

—Էջիր, դայվալթի (նախաճաշ) մի էրէ, ճնաւ։

—Ջուգեր, կրակ մի բեր։

Կրակը բերաց, դրաց չղլին վրայ. թադաւորը ձիուն գլօխը օլորից դէպի ճանփան։

Աղջիկը ըսաց.—Թադաւորին տուն խեղք ըլիր՝ ինձիս կառնէ, էտանանկ մէկ խալի մի գործիմ, օ ինչ օր ասկեր կայ, վրան նսաի, մէկ թին պօօ մնայ։

Թադաւորի տղան չաս մտածեց.—Շատ պզկիկ աղջիկ է, խալիչան էլ պատիհավա էկաւ։

Մընաց մի տարի ժամանակ. հա էօր չադրը կը գործեն, հա էդուց խալին կը գործեն. իրկունը պարկաւ, սուլթաննեբուն կանչեց.—մէկդ մէկ քով, մէկդ մէկել քով պարկէք, ձիզի բան տի ըսիմ.

—Դուք օ չադր, խալի տի գործէիք, ինչ էդաւ։

Էրկու քորն էլ ըսին.—Մեք քիզի չկարիէաք նա՝ դու մեզ կառնէիր։

Գոլվաննուն էլաւ, քէն բրաց, դնաց իրան տեղը պարկաւ։

Պաբայնց ավը կերթայ-կուգայ, վուռուլիկը (սիրահարուած) հագած է ավի, աղջնեբուն քովը չպարիկիր։

Աւուր մէկը կիճն էան լուսը դնըց, զարկաց մի էղնար, իրէք հատ կաթաւ, դնըց էադ չադրըը. պզտիկ աղջիկը էկաւ, ձիուն կեմը բռնաց, կրակ բերըց, չպոխը խմաց, ձիուն պօխը օլըրաց դէպի հանվիան։

Պզտիկ աղջիկը ըսըց.—Թագաւորի տղին խէրք ըլիը նէ՝ ինձի կառնէր, էանանկ մէկ տղայ մի, մէկ աղջիկ մի բերիմ, օ իճճի-տիւլի (մարգարտեայ առամ), սրտմա-սաչլի (ծամերը սրմայ), դալեմ-դաշլի (մրայօն), իճճի սէլլու (բարակ մէջքով)։

Թագաւորին չըպղի կրակը ընկաւ, ձինը կայնեցաց. աղջիկը ինքիզինք բացաց, վազաց, հովը վրու չիթը տարաւ. տղան տեսաւ՝ օ աղջիկը ուզածին պէս չատ տղիկ է. տղուն խէրքը անցաւ, աչքը մթնաւաց, ընկաւ։

Աղջիկը բերըց պաղ ջուր մի լցնց սրտին վրայ, խէրքը պօխը էկաւ, ձինը քշնց, դնըց սարայը։

Թօփիկ դնդլիկ դլօխնին հոնի, (մենծ ու պզտիկ աղանին) ըսըց։

—Ձիպի բերած իմ, օ էաս էրկու կնիկը Թող տամ, էան մէկալ քօրվընին բերիմ։

—Կանոնը էդի չէ, էան կուզիս նէ՝ բեր, ըդոք Թող մնըն, ըսին Թագաւորին։

Թագաւորը մարդ հանվիաց, դրցին էան աղջիկը բերին, պահկեցին։ Իննը տիս ժամանակ սուլթանը ըսածին պէս բերըց մէկ տղայ, մէկ աղջիկ։

Սուլթանը ցաւ կը քաշէր, էրկու քոր իրարու հետ խօսացին։ Մենծ քորն ըսըց.—Մէք սուտ էլաք Թագաւորի քով, էաս մեր պզտի քորը իրաւ էլաւ։

Մենծ քորը ըսըց.—Ես ըդոր չարան (հնարը) կը գտնըմ։

Կանչեց պառաւպի մի ըսըց.—Էրկու հատ չան լակոտ գնա, առ էկօ։

Մի անուռկ հազրեցին, փէչ մի օսկի պառաւպին տուին։ Պըզտիկ սուլթան օ տղայ մի ու աղջիկ մի բերըց, վերուցին տկուն, չան լակոտնին դրին տակը, սուլթանը ցաւու զօռուն չդիտցայ։

Խապար հանվիեցին Թագաւորին. — Թագաւոր ապրած, աչքդ լոս, սուլթանը պարկաւ։

Տասը մարդ միւտեհ բերըց։

Թագաւորը ըսըց.—Վէզի՛ր ու նազիր, գալողը կըսը՝ «պարկաւ». աղջիկ է, տղայ է, հէչ իմաց չէք ըլիր։

Մի խելօք տղայ հանվիեցին, խապար առան, օ չան լակոտ է։

Թագաւորը խելօք մարդոց հարցոց.—Մարդն էալ հէչ չան լակոտ կը բերէ. դրվոր քննութինը, բան մի կայ, իմաց էղէք։

Շատ քննութին բացին, չկրցան գննային։

Թագաւորը ըսըց.—Տարէք, դրէք սուլթանին ետք հանվիան

չաթը, ցից մի զարկէք, զհնձիլով կապեցէք, դոմչու կաշի մ'էլ վրան ցգնցէք, վէտէ ծայրը (ծանր) թակ մի կախեցէք, դէլալին ըսեցէք, թող պոռա.

—«Թագաւորին խափող մարդուն ճալը ըսի տի ըլլի։ Հէր վ'ով ο կընցնի նէ քովուն, մէ թոխմախ էալ գինէ, վրան դնէ, ընցնի»։

Թագաւորը էլաւ գնաց քովը, չպոխը լեցոց, վհզիրն էալ չախմախը զարկաց, կրակը դրաց, պաօլայեցին իրար հետ գրուցիլը։

Թագաւորը կհկաւ, թակը առաց, մէջացը մի հատ զարկաց.— «Թագաւորը խափող մարդուն ճալը ըսի տի ըլլի»։

Գալող-էրթողը կուգայ, կը գինէ ու կերթայ։

Էան մէկալ քորվընին պառապին փէչը օսկի լեցոցին, դուքին առին ձեռքը, ըսին.—Կը տանիս, նետիս ծովը։

Տարաւ նետեց. ծովի չալխաուն (ալիք) զարկաց, բերաց fնաարը։ Էադ ծովուն էալ յարմար տեղ կաը,—fնաարը ջուր էին հանած, ջաղացք չինած։ Էաս անտուկը էկաւ ընկաւ օլուխն ի վէար, ջաղցին պողազը, ջաղացքը կայնաւ։

Ջաղցըպանին էալ տղայ չկաը. էարիկ, կնիկ ծեր մարդ էին, չունուխ չունէին։

—Կնիկ, էլի դուս, ջուրը կըլլէ, ըսաց։

Կնիկը էլաւ կըլլեց. մարդը մտաւ տոնդուզլուղը (ալրաան տակ, ջրի դուրս ցայտած տեղն), դուքին հաննեց, կնկան ըսաց.

—Ջուրը կապէ։ Մտան ջաղացքը, դուռը կղպեցին։

—Էարիկ մարդ, էադ ինչ էր մտեր ծակը, հարցաց կնիկը։

—Անտուկ մի գտեր իմ, ծայր է, տեսնըք ինչ է։ Մէկ մարդ մի եա էխտիարութան տովկէր տի գընայ, եա ճաճիլութան. ճաճիլութան չգտաք, մեր տովկերը էխտիարութան էկաւ։

Բացեց դուքին, հայաւ ο էրկու հատ չունուխ, օր իճճ-տիճլի, սըրմա-սաչլի, դալէմ-դաճլի, իճճ-պէյլու։ Լոսը զարկեր դուքին մէջ, անքան ο սիրուն են. մի աղջիկ՝ մի տղայ։

Մարդը բերաց ալիրը, մալէզ ըրեց ջրի, չէքէրը ցգեց մէջը։

Օր աւուր կերածնին ընի էր, ղլաւցան, էդան քօմօ մեծ. որը սաբով կը մեծնայինն, էսոք օր աւուր վրայ կը մեծնայինն։

Ջաղցըպանին կնիկը մեռաւ, մնաց մինակ. աղջիկը ջաղացքը կաբլէ, տղան էալ ջուրը կը կապէ։ Ջաղցին բունը կոյրաւ, ջաղցըպանը աղջիկնը, տղան թողեց, գնաց քաղաք չինելու։

—Ես էալ կուգամ, պապա, ըսաց տղան։

—Ա՛յ որդի, դաս ինչ տի ինիս, ծոցս հինգ փարայ չկայ, մի քառասուն փարայ կայ, քեխ տի տամ, օր չինէ մարդը։

Թունը լցեց տոլպակը, նետեց վէչը, ընկաւ գնաց. տղան էալ հետը գնաց։

Թուեը չինել տուեց, ընկաւ քաղաքը օլրտաւ. գնըց թէրզիի (դերձակ) թիւքեան կայնաւ։

Տղան ըսըց.—Պապա, ըդ ձեռ. լաթը ինձի առ (այն լաթը որ կարուած էր Թագաւորի տղուն համար)։

—Ա՛յ որդի, հինգ փարայ չունիմ ο բուս (ածիլուել) ըլլիմ, ինդուր ըդ լաթը քիզի տ'առնիմ։

Թէրզին ըսըց.—Պապա, ինչ կըսէ տղաղ։

—Ըդ ձեռք լաթը կուզէ։

—Էաս տղան ο լաթը կուզէ, փեշկեշ կինիմ. ըսըց, հանեց հագոց տղին։

Ընկան չարսուն ի վէար գըցին, հասան աք-բազարին։

Արաբիստանցի արաբ մի՝ մէկ հրեղէն քայ (քուռակ) մի բերըց. սաղ քաղքին մարդիկը քսփուած ին, գինը չեն կրնըր տար՝ ο առնին։

Ըս տղան ձինը տեսաւ, պաշլայեց օաքը ծեծիլը։

Արաբը ըսըց.—Էաս տղան վ'ըրն է։

Պապն ըսըց.—Իմն է։

—Ի՞նչ է կըսը տղաղ։

—Կուլայ տէ, ձինը ինձի առ. իմ իսկս հինգ փարայ չկայ, ըս լաթերն էալ թէրզին է տուած։

—Թէրզին ο լաթերը տուեր է, ես էալ ձինը փեշկեշ կինիմ. էաս սաղ քաղքին ժողովուրդը ο իմ ձինը չեն կրնըր առնիր, տղին փեշկեշ է։

Տղան հեծաւ ձինը, պապնը ընկաւ առաջ, գըցին. անցան մի խըրչու (թրագործ) թիւքեան, կայնան։

Տղան պապուն կանչեց. — Պապա, էաղ թուրը, ղալխանը ինձի առ։

—Ա՛յ որդի, իմ քովը հինգ փարայ չկայ, վրուդ լաթը թէրզին, ձինը արաբը տուեց։

Խըրչին ըսըց.—Էնոք ձի ու լաթ պաշխիշ ըրեր ին, ես էալ թուր ու մի ղալխան պաշխիշ կինիմ։

Տղան թուրը կապեց մէջքը, ղալխանը անցոց չնլին, ընկաւ չարսուն ի վէար կիճե կերթըն. գըցին հասան թամք չինողի թիւքեանը։ Այարճին՝ այար մի չինած է Թագաւորի տղուն։

Տղան ըսըց.—Պապա, այարը ձիուս տի առնիս։

—Ա՛յ որդի, քովս հինգ փարայ չկայ, էաղ բուլլի խալխն է պաշխիշ ըրած։

—Պապա, ինչ է կուզէ, ըսըց այարճին։

—Այարը կուզէ։

—Ձինը տուողը ο տուեր է, ես այար մի տամ չամ է, ըսըց, պաշխիշ ըրըց տղին։

Տղան գարկեց ձիուն վրայ, գնըց։

Գըցին հասան մզրախին մեյտանը (տեղի հրապարակը). տղան կայնաւ հոսի, մզրախ ուզեց։

Մզրախն էլ առաւ, ընկաւ ճանվայ։

Գըցին հասան ջաղացը, ձինը կապեց ջաղցի մէ բարաճը։

Պառլը ըսըց.—Որդի, էլի, ջուրը կրցրէ։

Տղան ջուրը կրցրեց, պառլը բուճը տեղը անցոց. ջաղցին սազը (կարդաւորութիւն) տուին։ Մի ամիս ղրետ մնրց, պառլը հիւընդցաւ. տղան ձինը կը հնծնըր, կերթըր ջուր ի վեր, ջուրը կը կապէր, քորն էլ ջաղցին սազը կուտար։

—Որդի, ըսըց հէարը. չես կրնըր կաթուէն, ճանապարհէն բան մի գինիր, բերիր։

Տղան էլաւ ձինը հնծաւ. չաս քիչ-գնըց, գնըց հասաւ Զմրեղու լեռը, կաքաւ գարկեց, հասց պապուն։

Պառլը fեպապ ըրըց, կերաւ. տղուն օրհնեց, մեռաւ։

Տղան իր պապը հող ու գերեզման ըրըց։

Մնացին քոր ու տղրէար։

Տղան մէկ օր ըսըց քրոջը.—Դու հոս կեցիր, ես կերթըմ ավը, կուգամ։

Պապերնին օ մեռաւ, միւոեհերին (յաճախորդ) կըլըռաւ, ջաղացքը էղաւ խարապա. ինսուզ տեղ մ'էր, էն ղրետ օ բնակըրան էր։ Տղան օր աւուր վրայ էլ կը հեռանար. էլ աւի վուռուլմիշ էղաւ, հրեղէն ձինը տակը, ուր ըսես կերթըր։

Մի օր Առուտած չյաղոդիկ. ընկաւ լեռէ լեռ, գնըց էլաւ մէկ բարս լեռան մի գլօխ, տեսաւ օ մէկ ուլի (մեծ, անվերջ) օվայ (դաշտ) մի կայ, օ էտ լեռան առջին է, ճոթ (ծայր), ճոթեղեր չկայ։ Թագաւորին քաղաքն էլ լեռան տակ է. բաւեղ մի մենծ չայիր կայ, կէս սահաթ էլ թագաւորին սարայը կը քաշէ։ Սարայը բարս է, չայիրը պռաչն է. լեռան ի վեր էջաւ տղան. ինք ծարաւ, ձինը ծարաւ, չայիրի գլխու տղրին վրայ էջաւ. մզրախը գարկեց հոսի, ձինը սկսավեց չայիրը, ինք մզրախին չուքը պարկաւ (տեղի պոչի ծայրն չաս մեծ փունջ բրդեայ ծոռ կայ)։

Թագաւորը էլաւ գնըց տղրերը, վացուաւ, ջուր խմեց. հայաւ տղայ մի խոտերու մէջ պարկեր է. ձինը վկարէն հրահրաւաց։

Թագաւորը ըսըց.—Նայս ինչ դուր մարդ է, օ էկեր է իմ չայիրը պարկեր. օձը պորտովը, ճնճուղը խաճատովը իմ չայիրը մարդ չէր իգար, հաս ինդուր էկեր է։

Գնըց տղին վրայ, տեսաւ օ քնուկ է. արև էկեր վրան, ինճիթիլի, սրմա-սաչլի, գլեխմ-գաւլի, ինճե-պէյլու, աղկեկ, սիրուն տղայ մի։

—Նայս տղան իմը ըլլէր, մէ աչքս for ըլլէր, ըսըց ինչ իրան։

Տեսաւ օ պատուղ-պատուղ քրտինքը կը վազէ. հանեց ծոցուն աղլըղը, քրտինքը սրբեց, աղլըղը ցգեց վրան, նստաւ, պաչլայեց լացը. չպողը լեցուց, չախմախը զարկեց, կրակը դրաւ վրան, քաշեց ու կուլայ ու կուլայ.

—«Իրենք հատ կնիկ ատի, իրենքն էալ մէ մի էտտանկ տղայ չրնըլըց»։

Թագաւորը մտածոց մէջ մնրց, թէ «ըսի իմ տղան է»։

—Վ.ալլա «Ինճի-տիլլի, սոմա-սաչլի, ղալեմ-ղաշլի, իճճի-պէյլու» օ կայ՝ էաս է, ըսի իմ տղան է։ Տեանըք ոնր կը կայնի։

Տղան արթըցաւ, էլաւ նստաւ, տեսաւ Թագաւորին, սրսըփաց։

— Մի վախիր, տղաս, մի վախիր. որդի, վ'եր տեղաց գուգաս։

—Ալն էլի ղըցկը։

—Վ.'եր տեղաց իս։

— Ա'լքայ հայր, ես էալ չիմ գիտեր։

—Որդի, տ'ղղ էալ չես գիտեր. ձեր տունը վ'եր տեղ է։

—Մեր տունը ծովուն քնարը—ջաղացքն է։

—Ի՞նչ ունիս, որդի։

—Մի քոր ունիմ։

—Պատլ չունի՞ս։

—Պատլս ծեր մարդ մ'էր, մեռաւ։

—Շէնըքդ չկա՞յ, էալ տուն չկա՞յ բոլորնիդ։

—Չէ, մեր տունը ջաղացքն է։

Տղան Թագաւորին ձեռաքը պագնց, ձինը հեծաւ. էրկու ճէրան էր զարկեր, մէկը տուեց Թագաւորին։

—Որդի, ես չիմ կրնըր տանըր, չնորհակալ եմ, ծայր է, էկէ տանիք, դայվի մի խմէ։

Էլան, Թագաւորին հետ ընկան ճանփայ։ Կէս ատհաք տեղ գըցին, տղան էջաւ ձիուց ի վէտր, ըսըց Թագաւորին.

—Ալքայ հայրիկ, հրամմէ, հեծիր ձինը, ծեր ես։

Թագաւորը չխմբեաց օ հեծնըր։

Վէզիրը տեսաւ Թագաւորն ու տղան, վազեց դէպի Թագաւորը։ Տղան ճէրաճը տուեց վէզիրին ու հարցուց.

—Վէզիր, էաս ճանփան ոնր կերթայ։

—Էաս ճանփան կերթայ ծովուն բնաւրը մէկ քէֆ ջաղացք կայ։

—Տղա՛, դու քաղաք տ'երթըս, ջաղացք տ'երթըս՝ ինչ տի ինիս։

—Իմ վինտուածս էալ ընի է։

—Կեցէ՛ք բարով, ալքայ հայրիկ, ըսըց սա ձեռաքը պագնց։ Թագաւորն էալ էրեսը պագնց ու պատլայեց ցոլուխիրը ըսելը, էալ լեզուն չդառնար օ ըսա թէ—այ որդի, ատչն օր էկօ էաս չայիրը։

Տղան գնըց, թագաւորը կանչեց տղուն էտևէն.

—Ի՞նչ ղեի կուգաս, էկո ըս չայիրը։

Տղան հասաւ չաղացքը։

Իրկուն էղաւ, թագաւորը գնըց սուլթաններուն քով. ըսին.

—Էդի ինչ մարդ էր, չայիրը էկեր էր ձիով, դու էալ պատիւով ճանփեցիր։

—Էսաօր մի տղայ տեսայ ես. էադ տղան Թող իմը ըլէր, իմ աչքս էալ fon ըլէր։

Սուլթաններըը իրարու հետ խորհուրդ ըրին, կանչեցին պառաւին։

—Դու էրկու չուճուխը ուր տարիր, նետեցիր։

—Ծովը նետեցի։

—Է՛, տղան մեննցկը է. էրէկ թագաւորը տեսեր է։ Զգիտէմ, տղան տ'երթըս գընըս։

Պառաւին փէչը լեցուցին օսկի։

Պառաւն է, ընկաւ ճանփայ, գնըց հասաւ չաղացքը, օր մի աղջիկ նստեր է, աշխըքին էրեսը չդտնուիր։

—Բարև քիզի, աղջիկս։

—Աստուծոյ բարին, մէյրս։

Էլաւ միճտեր ցգեց տակը, պառաւ նստաւ, հարցուց.

—Ի՞նչ ունիս, որդի։

—Բան չունիմ, աղբէար մի ունիմ։

—Աղբէարդ ուր է դցեր։

—Ավ-ղուշն է դցեր։

—Ա՛յ որդի, սև աւիցը տակ (երդիքի ներքև) նստեր ես մինակ. ես բան կը բանիս, ես տիւլրդ կայ (հանգստութիւն չկայ). էան կերթայ ավի հետ տիւլեմիշ կըլլի։

—Հըպա ես ինչ տ'ինիմ։

—Աղբէարդ օ, էադ ղեի կըյրիճ տղայ է, կը ճանփիս կերթայ Բլէլ աղջկան մօտ. ձեռացը դասնախը կը բերէ, օր դու fհրկէճ բանիս, հղկեմիշ (զբաղուիլ) ըլլիս։

—Ի՞նչ դուր ճանփիմ աղբէարս էրթայ։

—Օր էկաւ՝ ձիուն եուլարը (սոուը) մի բռնըը, քէն ըրէ. էան կը հարցնէ՝ ուր կը ցաւի. ըսա՝—տեղ չցաւիր։—Հըպա ինչո՞ւ էսօր ձինը չես բռնըը, կըսէ։ Ըսա—դու կերթըս ավի հետ հղկեմիշ կըլլիս։ Փիղի կըսայ—հըպա ինչ կըսիս։—Բլէլ աղջկան fհրկէճը կուզիմ, օր հղկեմիշ ըլլիմ, ըսա։

Տղան էկաւ, աղջիկը պառաւի բսածին պէս ըրըց։

Տղան ըսըց.—Էլի, ձինը կապէ, ըդի է քու ուզածդ, դասաճէք մի ինիր։

Տղան առաւօտը չուտ, խորոզը կանչելուն էիմի ընկաւ ճանփայ։ Շատ գնըց, քիչ գնըց էտսունըվինը օր գնըց, ղռճախլուղը (իշևան) հետուն էր. կէս գիշերուն քաղաքը մտաւ. Ախուն կէմը նետց չնչին, Ախինը խաւնեց առաջ. Ախինը գնըց մի պզտիկ դուռ կայնաւ. էտս տունը մի պառապի էր։

—Բարև քիզի, մէմբիկ։

—Աստուծոյ բարին, որդի։

Պառապը տեսաւ օ շահզատեի տղայ է, ըսըց.

—Ի՞նչու էտի ես մնացեր (ուշացեր)։

—Ըսանկ-ըսանկ պատահեցաւ, ըսըց տղան։

—Օրըւիր տանը տակ։

Տղան Ախով էջաւ տանը տակ, դուռը բացեց օ էտս տանը ճոթ-ճոթեղեր չկայ, պիբուճ էհվկիր է, մզրախը չհանիր. քաշեց, Ախինը կապեց բաւլան. նստան պառպուն հետ, պաճլայեցին զրուցել ու չպող քաշիլը։

Պառապը ըսըց.—Որդի, ուսկայ գուգաս, ուր կերթըս։

—Էկեր իմ Բըլեղ աղջկան, տ'երթըմ։

—Ա՛յ որդի, Բըլեղ աղջկան մօտ գցողը չկրնըր գար, մեղք իս, չիմ թողիր օր երթըս։

—Չէ, անկարելի է, տ'էրթըմ։

—Կերթըս, էառջիդ էրկու լեառ կայ. էտ 'էրկու լեառը կը բացուին ու կը խփուին քսանըչորս սահաթվայ մէջ։

—Անկարելի է, տ'էրթըմ։

—Որդի, էտ լեառան էառջին իրեք սահաթ տեղ դէօր է, իրեք սահաթ կը քշես Ախնդ. Ախուն սարդին թիզ մի ճերմակ փըրփուր կը կապէ. լեառը կը բացուի, Ախուդ գլօխը կօրիս, մի գենգու կը գինիս Ախուդ, գենգուտանը փորուն մէջ իրուր առնին. զըցիր օ անցար լեառը, խորուն ձորու մի մէջ է Բըլեղ աղջկան սարայը. չորս դին լեառ քար է. մինակ էտ ճանփան է, էտ ճանփով էալ մարդ չկրնըր էրթըր-գար։ Կէս սահաթ կը քշես, կը հասնիս մի աղբիր, Ախուն ի վէար կէջնըս. ջուրը Երկու տեղէ կը վազէ. մէկը թարախ կուգայ, մէկալը էարին կը վազէ։ Կը խմիս թարախէն.—«Աբուհայաթ (կենաց ջուր) կը լմանի միւպարհէր», կըսիս։ Կը խմիս էարինէն, —«էնաս ինչ անուշ գեմզեմ-սույի է», կըսիս։ Աղբիրը քիզի էալ բան չըսեր, Ախնդ կը սէալես էտ աղբրին քով, կէս սահաթ օտօք կերթըս, էառջիդ կուգայ Ախն մի, ասլաև մի, ճանփուն վրայ կապմուն են վէարդին. ասլաևին առաջ խոտ կայ, Ախուն առաջ ճաճատակ. կը փոխիս, ճաճատակը կուտաս ասլաևին, խոտը՝ Ախուն. կը հասնիս Բըլեղ աղջկան դուռը. էրկրթէ թախմախը դուռ ի վէար կախմուն է. կը գինիս թոխմըխով դուռն. կը կանչիս—Բըլեղ աղջիկ, Բը-

լէլ աղջիկ։ Կըսայ.—Լրպէ։ Դու կըսես—լրպէ ու խարնախոսախ, էկօ, քանի մի ըսիմ քիզի ու ա՛էրթըմ։ Ղասնախը ձէառքն է, կուգայ դուռը քանալու, կասիկա, կը փախնիկա, էսիդ չես հայիը, կը հասնիկա ձիուն, ապաւնին քովի Բլէլ աղջիկ—«Ասլան, ըդի վարչըտէ», կը պոռայ։—«Ինչո՞ւ ու վարչըտիմ, դու ինձի խոտ կուտայիը, էնի ինձի միս տուէք», կըսայ ասլան։ Էնի կը պոռայ.—«Ձին, էդի բռնէ»։—«Ինչո՞ւ ու բռնիմ, դու ինձի միս կուտայիը, էնի խոտ տուէք»։ Կը հասնիկա աղրիրը, էնի կը պոռայ.—«Էարքին, բռնէ»։—«Ինչո՞ւ ու բռնիմ, կըսայ, դու ինձի էարին կըսէիը, էնի ինձի զեմզեմ-սուլի ըսըց»։ Կը պոռայ.—«Թալա՛ն, բռնէ»։—«Ինչո՞ւ ու բռնիմ, ապուհայաթ ինձի ըսըց», կըսայ։ Կը հնծնիկա ձինը, կիներ էան լմանը կանցնիկա լուռն, ա բայուռա։

Առաւօտը պառաւը ճանվու դրկց. պառաւին տուէք քանի օսկի, առաւ ֆիրայով ձի մի, պառաւը էլաւ հնծաւ, ընկաւ տղի առանջ. քանի լուռը չէր էրևալ՝ կէրթըր, լուռն օ էրևաց, պառաւը էջաւ. տղան չպտղը լցուց, չախմախը պարկէց, տուէք պառաւին, քալէց։

Պառաւը ըսըց.—Ո՛ըդի, ա՛կս, լուռն օ իրուր կը դինէ, հինդ սանաք ձէանը կէրթայ. որդի, մ՛էրթըր, կը մնըս մէջը, կը կորսուիս։

Տղան վուսուալան հայաւ, պառաւը լինչ չէըիs կըսայ՝ տանա չաս է. սիրտը դողաց։

Պառաւը ըսըց.—Տղաս, հայիը, լինչ սարսափելի է, մ՛էրթըր։

—Չէ, ա՛էրթըմ։

—Էրթըր բարով։ Ձիուդ պոչը կապէ, օ լուռն խփուելուն՝ մէջը չմնայ (ձիուն պոչը հայիւը էդկայ է մնացկը)։

Շատ քիչ դնըց, հասաւ լուռը, ձիուն դլօխը օլրևց, իրևք սանաք խաղցոյ, թիզ մի փրփուր կապեց ձինը, լուռը բացուաւ, զեմկիան գարկեց, քշեց ձինը, անցաւ։ Լուռը խփուաւ, ձիուն պոչը մնաց արան, էջաւ օ ձիուն պոչը կըշրէ. ձինը հոտի դրուցեց.

—Ես քէ պոչս կըշրէիը. պառաւին մոխիկ չէրիը, էան ծովի միջու պառաւալ էր, ամէն բան դիննար։

Կարեց պոչը, հասաւ աղրիրը, ձինը սէապեց, դուռը էան լըման գարկեց.—Բլէլ աղջիկ, Բլէլ աղջիկ։

Էկաւ, ան լըմանը ըսըց։

Ղասնախը առաւ փախաւ. բերըց, էան լման անցաւ լուռան մէջէն, էջաւ պառաւի տունը։ Դուռը գարկեց, պառաւը չնչին գըրկեց, էրևը պագեց, տղան էլ ձեռքը պագեց. ձին կապեցին, նաման պառաւին հետ խօսալը։

—Որդի, ըսըց պառաւը, չըլի օ հա մ՛էլ գա՛՛ս, ուրուշ տեղ

կերթաս՝ գնա, իմ քով դաս, քեզ թագաւորին դանդատ կինիմ, նապ ինել կուտամ (կը վախցնէ որ չդայ)։

Տղան տարաւ դասնախը ինք իր տունը։

Գանք թագաւորին։

Իրիկ ամիս է, թագաւորը հիւրընդունէր է. աղին կակծուն պէճեի (սպահատան) է դրեր, մէյ դիշեր ցերեկ չայիրը կը հայէն, օ տըղան դայ։

Տղան իրկունը էկաւ, աւաւօտը ձինը հեծաւ, դնըց ավը. մըտքով ըսըց.—Գինս չատ է խոնջցեր, երթըմ թագաւորին չայիրը։

Զարկեց մի կեղիկ, մի նեյրաև, էջաւ չայիրը, մզրախը տնկեց, չուքը պարկաւ։

Խապար տուին թագաւորին. թագաւորը օտաց ամանն ալ չըհադաւ, էանանկ բըճով (պիւլայով) դնըց աղին էրեսը պադեց, դըլխուն վերդին նստաւ։

—Վ՛եզի՛ր, դայվին յուտմիշ ըրէ։

Տղան արթըցաւ, բերին դայվէ։

—Ա՛յ արդի, իրիկ ամիս է էաս ուր ես, ուր դըցիր, ինչ կը բանէիր։

—Տունս վրեր էր, կը չինէի։

Թագաւորն օ աղին խօսալը լսեց, սրպ-սաղ էղաւ։

Տղան կեղիկը տուեց թագաւորին, ձինը քաշեց թագաւորին տակ, հեծոց, ընկան ճանփայ, էկան սարային տակ։

—Որդի՛, հայտ ըս իրկուն էրթըք դոճախ, իմ մսաձըս ես (հիւր)։

—Թագաւոր ապրած, չնորհակալ իմ, չըլլիր, քորս իմ ճանփաս կը հայի։

Դըցին իրանց տեղը։

Թագաւորը դնըց տուն, խառա-փալուտի հատա վէյատ մի կըրեց, ընկաւ էաս էրկու քրոջ վրայ, պաբայեց զինելը։

—Դուք էկք, օ մէկդ չադր տի գործէկք, մէկդ խալի. էօր ես մի տղայ տեսայ, մի օտքս չըլլէր; մի աչքս fonնար, էան տղան իմնը ըլլէր։

Սուլթաններըը կանչեցին պատասխին.

—Էան տղան կինի էկեր է, ուր ճանփեցիր։

—Բըլէլ աղջկան ճանփեցի։

—Թագաւորը էան տղին համար մեր աչքը, գլօխը կույրեց։

Պատասխը ձեռքը էսին կապեց, ընկաւ ճանփայ, գնըց ջնդաքը։ Բարև տուեց աղջկան, բարևը առաւ։

—Հա՛, հա՛, հա՛. ըսըց պառաալը, տեսա՞ր, որդի՛, դու էալ աղկեկ, դասնախան էալ աղկեկ, էյլեմիբ էալ կըլլիս։ Մի բան պակաս է։

—Ի՞նչ է պակաս, մէ՛րիկ։

—Ըս դասնախին ասեղը հետը տի բերէը՝ չբերեր. ճանիէ, էրթայ բերէ։

Տղան իրկունը էկաւ տունը. աղջիկը դասնախը էդիր դէնը, չդնըց ձինը բռնելը։

—Ա՛յ քոր, էկօ ձինը քաշէ։

—Ի՛նչ տի ինիմ, ինդուր կը հնծնաս, էանանկ քաշէ. դըցիր դասնախ մի բերիր տէ՝ ասեղը հետը չբերիր։

—Կերթամ, կը բերիմ։

Առաւօտնը տղան ընկաւ ճանիլայ, էան լմանը դնըց. պառաալի տունը չդնըց վախուն։

Գնըց էան լմանը Բլէլ աղջկան ձեռքէն ասեղը վախոց, առաւ էկաւ, տուաց քրոջը։

Էան լմանը ավլա ավը դնըց, ավլա չայիրը, ավլա թաղաւորը ծեծաց սուլթաններուն։ Պառաալը ավլա դնըց աղջկան քով.—Փէ՛ն, փէ՛ն, փէ՛ն. աղջիկս, տեսա՞ր. դու էալ աղկեկ, դասնախն էալ աղկեկ, ասեղն էալ աղկեկ, ինչ ինիմ օ ըսոր վարպետը բերէը. ճանիէ Թող էրթայ վարպետն էալ բերէ, օր ձեմ իրարու հետ ըսիք ու խնդաք։

Տղան էան լմանը էկաւ ավէն, էան լմանը քէն էրաւ աղջիկը. տղան էան լմանը գնըց, պառաւուն տունը չդնըց, էան լմանը լեռուէն ընցաւ գնըց, կայնաւ Բլէլ աղջկան ֆեմեր-դափուլի վրան, օ քարերը ֆուլլի օսկի է, զարկած քոխմախն էալ ֆուլլի օսկի էր։

Կանչեց.—Բլէլ աղջիկ, Բլէլ աղջիկ։

—Լըպէ (ինչ է)։

—Մի սահաթ առաջ էկօ, բան կըսիմ։

—Ահա, սպասէ կէս սահաթ։

Մաննին մատը չէը, անցոց մատը, էլաւ ֆեմեր-դափուին գըլօխը, հայաւ դէպի տղան.

—Դո՛ւ ես, օ իմ դասնախնը, ասեղը տարիր։

Մաննին բարսըցոց, լիզեց, ըսըց.—Թաֆ օտքն քար կըլլես։

Հէ մ'էլ լիզեց.—Անգին մաննիս, ամէն տեղ քար կըլլես, բերանը, աչքը, քիթը բաց Թողես, մէ մ'էլ մի ականջը լսէ։

Տղան կայնուկ տեղը քար կըլլաւ, մնըց։

Բլէլ աղջկան բիւր-բիւր հազար մարդիկներ՝ էրթողը պիքուն քար կըլլուեր, էատանկ կայներ է. մի մարդ է մնացեր, օ էատանկ քեմիկ ըլլի։

Հրեղէն ձինը պաշլայեց լացը. լեռուը բացուաւ, ընկաւ ճան-

փայ ներսէն.—Հասնելուն իմմիկ տէ փարչատիմ աղջկան, ըսըց. քառասուն աւուր ճանապարհը մի սահաթը գնըց, զաթի տունը խարապա էր, էղաւ խարապա ըսըց։

Աղջկան օ տեսաւ, աղկեկութեան չխըմըշաւ. մի մօր մինէ էին տղուն հետ. ըսըց ձինը.

—Մի լման էին, չէ նէ՝ ճանփուն ներսս ըլլիր, տի սպանէի. բերանս չբացուէիր, օտքս չկլլիր։

Աղջիկը առաւօտը էլաւ, մազը թոփեց, աղբօրը խըլլըղը (կերպարանք) մտաւ։

Ձինը ըսըց.—Յարկ այստս, քաչէ խոլաճս, ժիր էլիր, հեծիր։

Հեծաւ, էլաւ ընկաւ ճանփայ. դըցին, պառաւպի տունը էջան. դուռը բացեց։

—Որդի, դու բարի ես էկեր, չարի ես էկեր։

Աղջիկը կը մտածէ.—«Աղբէարս հոսի էկեր է, օ ձին ըստեղ էկաւ»։

Պառաւպը առանց աղջկան հետ խօսալու, բիւլբիւլի թիւղով եաթախ էր չիներ տղին համար, օսկի թելով քաչեր էր վրան, բերըց ցգեց տղին տակ (աղջիկն էր տղի կերպարանօք, պառաւպը կարծեց տղան է)։

Աղջիկը մտածեց.—Աղբէարս էս եաթախին մէջ պարկեր է։

Առաւօտը էլաւ.—Մէարիկ, տ'երթըմ։

—Ո՞ւր տ'երթըս։

—Բըլէլ աղջկան տ'երթըմ։

—Որդի, մ'ինէր, մ'երթըր. գեղը, էկար՝ սորվար։ Բիւր-բիւր մարդ գեղ, քար է կըլլըեր. էրկու մարդ է մնացեր, օր քմի բիւր-բիւր մարդը։

—Մէ մ'էալ ես տ'երթըմ, թող քար կըլլըուիմ։

Հեծաւ ձինը, քշեց. պառաւպը պատլայեց լացը ու ինքզինք գետինը զինելը։

Շատ կենկզցաւ (խնդրեց) պառաւպը, աղջիկը մտիկ չըրըց, թողեց գնըց, հասաւ էան լեառն։

Ձինը խօսաց.—Էլի, պոչս կապէ, էրկնցեր է պոչս։

Պոչը վլաց, կապեց։

Ձին ըսըց.—Ինձիս կը խաղցնես, թիզ մի փրփուր օ կը կապէ վրաս, լեառան բացուելուն էիմի էանանկ զեռնու մի կը զինիս՝ օ զեռնուստանը փորիս մէջ իրուր առնին։

Գնըց հասաւ աղբէրը։

Ձինը ըսըց.—Էջիր վրաս։

Էջաւ, աղբօրը պէս էան լմանը վլացուաւ, էան լմանը գնըց։

Ձինը ըսըց.—Դուռը հասնելուն ինչ իրիք հող գարկ, աճուա կանչէ, ըսա.—Բլէլ աղջիկ, Բլէլ աղջիկ։

Էնի կըսայ.—Լրպէ։ Դու ըսա.—Լրպին վիրդ մննայ, մի սանաթ առաջ էկօ, ես տ'էրթըմ։ Էնի դասնախը ձեառք բռնելէն կուդայ, դուռն օր ու բանայ՝ չպախ թևդ՝ էնոր մարերը դեռինը բըսէլէն կուգայ՝ կը պըլլես թևդ, աջուկ թևովդ կը պաճալիս վինիլը. էնոր մաննին վիճճեռին է, կը վինիս, կըսես.—Ձդիտեմ, աղբէարս ու հանիս, չէ նէ՝ քեզ կը մորթեմ։ Բլէլ աղջիկ կըսը.—Թող, օ էրթըմ մաննիս առնեմ օ աղբէարդ հանեմ։—Թող չսաս, դու ձեռօքդ կառնես. էսպրպար (հաւատարմութիւն) մ'ինիր, մաննին լիզէ ու ըսա.

—«Մուրազ մաննիս, աղբօրս քամ օտին քարը թափիս»։ Ձև մ'էլ լիզէ.—«Մուրազ մաննիս, ըսա, աղբէարս հանիս»։ Աղբէարդ էլաւ նա՝ մաննին կուտաս աղբօրդ։ Դէ, դնա, ըսըց ձինը, ես քիզի կը հասնիմ երբ ըլլի։

Աղջիկը էսն լմանը դնըց հասաւ դուռը, գարկեց իրիք հող, կանչեց.—Բլէլ աղջիկ, Բլէլ աղջիկ։—Էսն լմանը ըսըց, էսն լմանը բռնեց, ծեծեց, մաննին առաւ, լիզեց, աղբէարը հանեց, մաննին տըւեց աղբօրը։

Ձինը չսա ելծոտաւ, հրուհրուալէն էկաւ, աչխարք իրան նոր տուին։

Բլէլ աղջիկ ըսըց.—Թեմիլ էղաւ, վինաւեցի, գասայ։

Տղան՝ աղջկան, աղջիկը՝ տղին թևէն բռնեց, առաւ էկաւ օսկի օդան։

Էսս աղջիկը 240 խալայեղ ունէր. գայվէ բերին, կերան խըմեցին. տղէն ձեառքը բռնեց, գնըց աշխատեան, քառասուն պղինձ դրմուն է, կերակուր կեփեն, էտ քարէ մարդոցը համար։

Էնոք քար կըլրած ին, ամմա կերակուր կուտին, բերան ի վէար կերակուր կը լեցնեն, բերաննին բաց էր։

Տղան մաննին լիզեց, ինչ օ բիւր-բիւր հազար մարդ կար նէ՝ քաշեց քարերը, էլան ասբեարայ։

Հրաման ըրըց, քաշեցին կերակուրնին էտ մարդոցը։

Բլէլ աղջիկ հոտ գրուցեց.—«Ծօրանայ ախքս, օ դու բիւր հազար մարդոց գլօխ ես էղեր, ես քիզի քար գարձուցի. աւուր առաջ էրեսդ տեսած էի, քար չէի կրլրեր, դու իմ սրտի ուզածն ես էղեր։

Էլան էսն մարդիկը ճանփաւ գրին, ճերճեր գրցին իրանց տեղերը։

Մնացին քոր, աղբէար ու Բլէլ աղջիկ, հարիր քառասուն խալայեղ ու խզմէթճիք։

Վեց աւուր էտև գրուցեց տղան.

—Բղեխ աղջիկ, pkտարիէդ տես, օ տի էրթըք։

—Թագաւորի տղա, ախր տ'էրթըք, հոսի կենաք (աղջիկը ոհմ նետած էր, գինաը թագաւորի տղայ ըլլիը), օսկի ուզես չատ է, ես էալ քիզի պէս մարդ կը վնտռէի. Ասոնց քիզի իմ ճակատը դրեր էր, կեցիր հոսի։

—Բղեխ աղջիկ, դու բան մը ըսիր ինձի, էնի ինչ էր ըսիր։

—«Թագաւորի տղայ», ըսի։

—Ես թագաւորի տղայ չիմ։

—Հըլաս վեր տղայ ես։

—Ջաղցրըներն տղան իմ, էաս իմ քորն է։

—Էադ աղբէարդ չէ։

—Գորս է. էաս քորս էր, օ էկայ էսոր համար դասնախը տաբայ, քար կըլլըուայ։

—Դու թագաւորի տղայ ես։

—Ես ջաղացքը մենծցեր իմ, պատս, մէարս ծերունի մարդ էին, մեռան։

—Սօրա իմաց կըլլիս, թագաւորի տղա։ Կըլլիճ տղու ձեխսաձիլեր կայ իմ քովէ։

—Կըլլիճ չըլլէիր, էաս դեար մարդը քար չէիր կըլլեր։

—Բիւր հազար մարդու գլօխը էղար դու։

Էլաւ Բղեխ աղջիկ իրան սարայը թխալիմ ըրըց ծառանուն, իրանք մէկ-մէկ ձի հեծան, ընկան ճանփայ, գըցին ջաղացք։

Բղեխ աղջիկ ըսըց տղին.—Դու թագաւորի տղայ ես, քու մէարդ նալլէքլիճ է ըրած։

—Իմ ծնըդած տեղը ըսի է, էաս ինձի պիննայ (բաւականանայ)։

—Թագաւորի տղա, բեր պօյդ չափիմ։

Չափեց, քաշեց տղին սուրաքը, տուեց տղին ձեռաքը։

—Մաննին լիդէ, ըսըց, ինչ դեի օսկի ուզես, կը բերէ։ Էադ օսկեստանը կը լցըննես խուրճինը, կը նետես ձիուն բէրինն, կըլնես ճանփայ. կերթըս Ուլի քաղաքը օր հոթ-հոթեզեր չունի. օր հասնիս քաղքին օրթալխ տեղը—չարտուն, մզրադդ կը գինիս, պատկերքը վրան կանցընես. դալպին կուտաս խուրճին մի օսկի, կանչել կուտաս, դու տասնըհինգ տարուայ տղայ ես.—«Քառասուն հատ տասնըհինգ տարուայ տղայ պէտք է ինձի էաս լըմանը, էաս պօյը»։ Ամէնքուն էալ հարիր-հարիր օսկի կուտաս։

Ծղան էան լմանը ըրըց, հազար հատ տղայ էկան, ուրնը չափեց՝ հազարէն հինգ հատ էան լմանը հանեց սուրաքն չուանի պօյը։ Իրեք տարի կեցաւ, քառասուն տղայ լմանը՝ լմանին, պօյը՝ պօյին բերեց։ Ինք ինչ էր հագեր, տղոցը էն չհեիթը հագոց. ինչ

չհեյս ձին հեծէր էր, տղոցը էան լմանը հեծոց. մէկ-մէկ դալխաև, մէկ-մէկ թուր, մէկ-մէկ դարդը (տէգ) առաւ։

Էլան հեծան տղաքը, թապուր-թապուր ետ մնացին, ինք առաջ կուգայ. ետ վէվ օ կը տեսնայ գվսուն խելքը կորթայ, զարմանք կը մնայ.—Զուտիմ չխմիմ, գիշեր ցերեկ էսոց բամասա ինիմ։

Էլան էկան ջաղացը, ձիանուն վէար էջան. ջաղցին առաջ մի սահաթ երկէան, լէան չայիր կայ, ամմա օտ է, չայիրը (խոտը) չերկընննար։

Ըստեղ երկրթէ ցից զարկեցին, թապուր-թապուր կապեցին ձիանը։ Բլէլ աղջիկ մերդէ շերպէթով դայվին բերեց, քորը աթոռքը քչեց աղբօրը տակ, Բլէլ աղջիկ տուեց դայվէ թագաւորի տղին. էաս քառասուն էալ ձեռաք կապեցին, կայնան տղի առաջ։ Բլէլ աղջիկը հայաւ ու հայաւ տղոցը, սիրուտէր (բախտեցաւ, գրաւուեցաւ) մնըց. ըսըց տղին.

—Թագաւորի տղա, էդոց քսանը՝ առջիդ, քսանը՝ էտիդ կը ցդես, կերթըս ավի, կէչնաս չայիրը կիենէ. չայիրին արևցրթուն թին տասնըօթը չհեյս վարդ կայ, ամեն վարդի վրան երկու-երկու բիւլ-բիւլ կայ, արու էդ են. կառնիս, ամեն չհեյտեն մի հատ կը բռցընիս դու քու ձեռօքդ, էաս վարդ ծախողի տղան էալ մենէ կինիս, տհusէ (վունջ) կապել կուտաս. դու երկու տհusէ կառնիս, տղաքն էալ մէկ-մէկ. թագաւորը, վեզիրը ու նազիրը կելլեն, կուգան ձիդի տեսնալ, չըլլի օ դու քնանաս, հվել ինչ տեղ օ կը նստէիր նէ՝ կիենէ նստիր։

—Ինչո՞ւ, Բլէլ աղջիկ։

—Թագաւորը կը տեսնայ զարմացք կը մնայ. զօրք կը հաննէ վրադ, օ ձիդի չարդին։

Էդ խրատը առաւ էլաւ. գրցին ավի, էկան էջան չայիրը։ Վեց օրով չէ քնացած տղաքը, էկան սեպեցին չայիրը։ Տղան մըզրախը հվելու տեղը զարկեց, մէկալ տղաքը՝ ձերբէ իրան մզրախը զարկին, տակը պարկան։

Թագաւորը ըդ ժամանակ պարկաւ, քուն կըլլի. տղաքը քներնին առին, էլան գրցին տեսան օ, Բլէլ աղջիկը ինչ դուր օ կըսայ, էան լման է. ամեն էալ վարդ առին, բիւլբիւլները բռնեցին, դաճեա ցդեցին, վարդի տհusէն էալ դաճեա ցդեցին, գրին սրային թապուր-թապուր աղբրի վրայ։ Տղան նստաւ բիւլբիւլնուն գլօխը, բիւլբիւլնին էալ մէկ դիու կը կարկինէին։

Թագաւորը էլաւ տեսաւ, օ չայիրը մզրախ-մզրախի տայանմիշ է էղեր, մզրախնուն գլօխն էալ ալ, եօխլ, կանաչ, կապոտ է։

Էաս օ տեսաւ, բերնէն էլաւ թագաւորին.—Խա՛պար մի. չէ նա՝ զարկէք։

Նազիրը հասաւ չայիրը, տեսաւ տղան, օլրուաւ յետ, խապար տուէց՝ թէ ըն տղան է։

Վէզիրնը, նազիրը ու թագաւորը, իրեքը մէկտեղ էլան գըցին. էրկու սահաթ նստան, խոնուտիւճ էղան. էլան հասան չաթ ճանփան, գնըց տղան թագաւորի ձեռքը.

—Կեցիր բարով, հէյրիկ։

—Ա՛յ որդի, ըսի դեռ ժամանակ կերթըս, կուգաս, էաս օր էկօ մեր, մէ լեղի դայվէն խմէ, գնա։

Նոր թագաւորին հետ գըցին. օ գըցին, հասան մօրը քով, ձիանուն վէար էջան, հվէլ իրանք—վէզիրը, նազիրը ու թագաւորը մէկ-մէկ թոխմախ զարկին, ընցան.

—«Թագաւորի խաթող մարդուն նալը ըսի է» ըսին։

Մէարն էալ ամէն զարկողին «Աստուած կայ» կըսէր։

Տղի քաւսուն խզմէքթեարն էալ վարդով զարկին, ընցան։

Սրան էկաւ, տղան էալ վարդով զարկեց, ձգեց մօրը առաջ։

Մէարնը ըսըց.—Աչխարքը թոխմախով կը պինէ՝ չցաւիր, դու կիլլով զարկիր, նիկէս ծակեց ընցաւ։

—Ժամանակը լեցեր է, մէարիկ, ըսըց։

Անցան գըցին ներս, դայվէն խմեցին, էլան հեծան ձիանը, ընկան գըցին իրանց տեղը։ Իրեք օր մնացին, Բղէլ աղջիկը ըսըց.

—Թագաւորի տղա, իմացար։

—Իմացայ, ըսըց տղան։

—Չորս հատ խզմէքթեար կը ճանփիս, թագաւորին դավէք կինիս։

Չորս հատ էկան թագաւորին պէօխ տուին, հանեցին թուղթը տուին, ինչ օ ժողովուրդ կայ, ինչ դեղի օ ասկէր, ագպայ կայ (չրջապատող անձինք) ամէնը կը ժողվես, կուգաս։

Թագաւորը վէզիրին ըսըց.—Գրէ ինք պիտի գայ, դըցէք թող ինք գայ։

Էլան գըցին. թուղթը տուին տղին. տղան քաւսուն խզմէքթեարն էալ առաւ, գնըց։ Զըգըցածցաւ մաննին հոտ տուէց Բղէլ աղջկան (տէ հիմա էխթիպար չէր ընէը)։

Բղէլ աղջիկը ըսըց.—Գնա, քեզ էկէք, ես պատրաստ կը տեսնըմ։

Բղէլ աղջիկը պատլայեց մաննուն հետ խօսուքին ըսըց. լիզեց.

—Մուրազ մաննիս, էանանկ մէկ բիլիմ մի չայիրին վրայ վուռես օ, օսկի թելով, ինչ օ թագաւորի մարդ կայ՝ նստի, մէկ դին էալ պարապ մնայ։

Թագաւորը իրան ագնայը առաւ, էալ մարդ չթողեց, առաւ

էկաւ, խորխոր (գորդի վրայ կարդ-կարդ ծալապատիկ նստիլ) նըստաւ։ Թագաւորն ու տղան էլ Բըլէղ աղջկան չադըրը նստան։

Թագաւորը հայաւ դէպի իրան աղջիկը, դիմուն խելքը գնըց, աչքը մթնաւեց, մաօքը ըսըց.—Ըս աղջիկնը, ազան, մէկ էլ էաս հարսը իմը ըլլիր, երկու օտքս էլ չըլլիր։

Վէզիրնը ըսըց.—Ըս տղան խենթ-ախմախ է, ըս չէի մարդը նաւեր է, ես՝ պղինձ կայ դըմուն (դրաւած կրակի վերայ), ես՝ կըրակ, էաս՝ ըսել կուզէ մեր վրայ կը խնդայ։

Բըլէղ աղջիկը հրաման բըրըց իրան խզմէքթեարներուն.

—Չադըրը հոտա խուրմիս ըրէք։

Ըրին։

—Տղաք, դըցէք մարդիկը արա դրէք, օ կերակուրը քաշէք։

Տղաքը հանիւեց, ինք մաննու հետ զրուցեց, լիզեց մաննին.

—Մուրազ մաննիս, օսկիէ աման, օսկիէ դդալ, օսկիէն մէկ-մէկ ջրի բաս։ Հազր էղաւ, պատրաստ տեսնուաւ։

Տղաք քաշեցին կերակուրը, կերան կշտացան։

Տղան դնըց վրանին, ըսըց.—Հերէս իրան դդալը, իրան առջևու բախտմը Թող առնէ, իրան ճեռիչ ըլլի։

Առին, էլան։

Պօռին վչուաւ, ասկէրը քաշուաւ. վէզիրնը, Թագաւորը իրուր հետ լսօսութին ըրին.—«Ես, էս ղէի վէճկիէ չաս բան է. Թագաւոր տղրած, ապա մենք օ տավէր իննք, ինչ ալ տանք, օ էսոր տակէն էլլէք, էաս անհաչիւ բան էղաւ»։

Վէզիրին տուաց ալմասէ բաս մի, Թագաւորին տուաց անգին քարէ բաս մի։ Տղան ըսըց.

—Արքայ հէարիկ, նոր տուն կըլլիք, քիչերնիս չատ համարէք։

Թագաւորին խելքը տաղըլմիճ (ցրուիլ) էղաւ, վէզիրին խելքը գիվանճէն (հաստատուած տեղէն) էլաւ։ Տէ կէս ճանփան՝ ճանփեցին, դարձան էկան։ Էնոք էալ գըցին, իրանց տեղը նստան։

Հրամայեց Թագաւորը վէզիրին, վէզիրը լալային, դնդիկ գըլօխնին, չէփին դալ ... տօլմա եուտաճլար (դօլմա կուլ տուող), բօփուան էկան Թագաւորի քով, խելօք մարդիկ նստան մեջիս ըրին.

—Իտոք տահա նոր տուն տի ըլլի սէ՝ միզի էան տղան էտաքան փէճկիէ տուաց, ըսըց. «քիչ չատ համարեցէք»։

Թագաւորը հանիւեց.—Գըցէք, ագայով տուէք էկէք տղին։

Տղով քաղաւնըմէկ հոգի էլան գըցին։ Տղան վէր տեղ օ սէճռուի վրայ նստէր՝ քաղսուն էալ ձեռուք կը կալէին, կը նստէին։ Աչքերի ճօքէն մարդ չմնըց, Բաւսուան էկան տեսուքին ու զարմացք մնա-

ցին խզմիբհարնուն վրայ.—մի պօլին, հագուածնին մի է, մի սուրաբին։

Ձիանուս եմին վախքն էկաւ. թագաւորի անպարը բացուաւ, եմը գնդց ձիանուն։ Կանչեցին քառասուն խզմիբհարնուն, օ էնոց էալ ձիանուն եմը տան։ Խզմիբհարնուն մէկը հարցոց թագաւորի զօլադասուն (հինգհարիւրապետ)։

—Ըսի ինչ է։

—Գարի է։

—Մեր ձիանը գարի չին ուտիր։

—Հրպի ինչ կուտեն։

—Մհրճաճ կը կրցրեն։

—Սխալ ես, ձիանը գարի կուտեն։

Մէ մը էնի, մէ մը էնի, «հա» «չէ» ըսին, կրիւ մը հանեցին. իրարու գարկին, գարին գարկեց թափեց, ցանեց ընտղանը. էրան վեր՝ պակին քովը։

—Ձիաննուն գարի աւելը, կը հարցնէ վեզիրը։

—Մեր ձիանը գարի չեն կրցրեր, ըսեց խզմիբհարը։

—Հրպա ինչ կը կրցրեն։

—Մհրճաճ կը կրցրեն։

Թագաւորը հայաւ տղին էրեսը, ըսեց.—Իրաւ ձեր ձիանը մհրճա՞ճ կը կրցրեն, օ էտքան դալմադալըխ էղած է։

—Հա, մեր ձիանը մհրճաճ կը կրցրեն, ըսեց թագաւորի տղան։

—Չէ, այ որդի, ճիչ կարելի է, ձին մհրճաճ կրցրէ, խեչդ թուցիր, որդիս, էադանկ բան չըլլիր։

—Լսեցէք, մեղիսի մարդիկ, կնիկ-մարդը օ չան լակոտ կը բերէ, մեր ձիանը ինչո՞ւ մհրճաճ չկրցրեր։

Մեղիսի մարդիկը հախ տուին տղի խօսուքինին, ըսին.—Օ կնիկը չան լակոտ բերէ, ձիանն էալ մհրճաճ կուտեն։—Ծունց տուր, ուր է։

—Տէ՛ ահա, թագաւորի ֆհմիր-խափուի ճանփուն վրայ է։ Լսեցէք, մեղիսի մարդիկ. էադ սուլթանը ինչ մեղաւոր է, էրկնուց թըռչուննէն էալ իրան նգուլով (կտուցով) կը պինէ կանցնի. կէրէրան էալ կուգայ կօղով (կրիայի պատեանը) կը պինէ կանցնի. օձն էալ պոչով չարփիւը կինէ կանցնի. ագուէսը վրուն կանցնի, արջը վրան կը ցոէ կանցնի, գէալը ճուռը կը խածնէ կանցնի, օզնակը փուշը կոխէ կանցնի, մրչումը ցրհմ մի միս կառնէ կանցնի, բղէզը քաքը կը գըլորէ, կը բերէ քնթին առաջ կանցնի. ճանճը կուգայ աչքը կուտէ, մրծէղը կը մննայ, աչքը կաւրէ, կը թողէ կերթայ. տրզուկը կը մննայ պողազը, էարինը կը խմէ, կանցնի կերթայ. կորչը (կարիճ) ման-

ները խածնէ կերթայ, որդը կը մնայ եարին մէջ, կուտէ, կելլէ կերթայ: Լսեցէք, մեղիսի մարդիկ, լաւ դատ կըլլեցէք։

Բոլոր աշխարքի մարդիկ իմացան, օ ըս տղան սուլթանի տըղան էր, սուլթան անմեղ էր։

Թագաւորը իմացաւ, հրամայեց։

Առին սուլթանը տարին համամը. լոքցուցին, հադուցին, բերին սարային մէջ նստեցուցին։

Հրաման ըրաց թագաւորը.—Գըցէք բերէք աղջիկս ու Բլուէլ աղջիկը։

Տղան ըսաց.—Ձիմ հաւատար օ քու մարդ էրթայ, առնէ բերէ, հաւատարիմ մարդ չկայ։

—Օ չես հաւատար, որդի, քու մարդ ճանվէ, օ առնէ բերէ։

Տղան ճանվեց իրան քառասուն հաւատարիմ խզմէքճիները, գըցին, առին էկան սարայը. օ հասան սարայը՝ Բլուէլ աղջիկը կայնաւ էհմեր-ղափուն, ներս չդնըցաւ։

Թագաւորը էկաւ էհմեր-ղափուի վրայ, գըուցեց.

—Աղջիկս, ինչու ներս չես իգար։

—Ըս սարայէդ կելլըս նէ՝ կուգամ։

Էջան պատ ու տղայ, գըցին էան չայիրին աղբրին վրայ. Բլուէլ աղջիկն հանեց մաննին, լիզեց.

—«Մուրազ մաննիս, ըս աղբրին վրայ էանանկ սարայ մի կը նստըցընես, օ աշխարքի վրայ չգտնուիս։

Էկաւ սարայը տեղը կայնաւ։

Մտան ֆօֆ ու սարայի մէջ. Թագաւորը չատ ուրախութին ըրաց, նոր աշխարք էկաւ. պատրաստ տեսաւ, մնծ հէյրանիք ըրաց, պսակեց տղան։

Էնոք հասան իրանց մուրազին ...։

7

Ա Մ Պ

(Տուման)

(Ձարսաճձագի բարբառով *)

Երկու հոգի կըլլին, էսոք Աստուծոյ առաջ անո ու դամաց կինին, աղբէար կըլլին, իրուր հետ կերթըն ղուրպէր։

Մենծ աղբէարը ըսըց.—Աղբէար, չիք կրնըր բանիր, մեք ինչ դուր տի էնիք։

—Չիք կրնըր բանիր, լեառը թուրուցուբին էալ չիք կրնըր ինի, դէ, էլի երթըք լեառը։

Էլան գըցին լեառը, հուսա, հունա զարկին, բան մի չըստացան։

—Աղբէար, մեք բան մի չըստացաք զդա. երթըք Ֆիլաճ Թադաւորի էրկիր։

Էլան գըցին էսոք դէ Հնդստան, Թագաւորին պաղչի դուռը կայնան. հայան օր էրկու աղջիկ կէօլին վրայ կայնած, ման կուգան։

Ամէնքը տասը տարուց են։

Մենծ աղբէարը ըսըց։—Աղբէար, մեք ինչ դուր տ'էնըք, դուն ինչ մարիֆեք ունիս։

—Ձեառքս ինդուր դուռ օր գինիմ, կը բացուի։

—Աղբէար, լաւ մարիֆեք ունիս։

—Դուռը իմ մէնէ, աղջիկները բերելը իմ մէնէ, դու ինչ տ'ինիս։

—Ես ալ ձի մը ունիմ. տասվերկու սահաթվայ ճանփայ մի սահաթվայ կը կըլըէ։

*) Պատմած է Միհոս-բարբար։

—Է՜, աղբէար դու կը կրյրես, ես ինչ ս'էնիմ։

—Ես, աղբէար, քեզ կը խալըսեմ, ձէչ հոգ մ'ինար։

Էդի դուռը զարկից բացից. աղջներու այվանը կապեցին. հեծուցին թեֆիտանը, ընկան դըցին. չատ դըցին-քիչ դըցին, Աստուած գիտէ ինչ ոտի (չափ) դըցին, ամբլայ մը ճանփայ դըցին։ Էն Թագաւորի էլչէն *) հետացան. դըցին, մէկ մեծ մը մէջ բնակուանո։

Մենծ աղբէարը ըսըց.—Աղբէար, մեք էս մեծի մէջ բնակուանք. էալ մեք մեծի մէջէ չպտի հետանանք. մեք հոսի խրտիչ մի չինենք։

—Մենք ըս աղջները բերաք, վիճակ նեռիք հայիք, վեր կրյնի էրկանը։

Էրկանը ընկաւ մենծ աղբօրը։

—Աղբէար, ըսըց. ձինը հեծնէր, դնա տէրտրու էաւ։

Փուճուրը գնըց, տէրտրու ըսըց։ Տէրտէր հասկըցաւ դար կը բնակուին։

—Չիմ իզար, դուք թուրուսթի էք, ըսըց։

Հինդ դեղ անցաւ, չի կրցաւ գտէր էր, էկաւ հետել իր տունը աղբօրը պատմից թէ—հինդ դեղ անցայ, չի կրցայ գտէր տէրտէր։

Աղբէարը ըսըց.—Ռու բանը չէ, ես կերթըմ։

Գնըց ճանփուն տէրտէր մի ըռաստ էկաւ։

—Օրհնեա ի տէր։—Աստուած օրհնէ։

—Տէրտէր, աղբէար մի ունիմ, տի կարգիմ, չըլիր դաս պատկաս։

—Տեղդ վեր տեղ է. հետուն է, մօտիկ է։

—Տէր պատպա, էրկու սահաթվայ կըլլի։

—Աստուած օրհնէ, ես ծեր մարդ մ'իմ, չիմ կրնըր դար։

—Ինչի կը հեծցընիմ ձինը։

Հեծուց ձինը, ընկաւ ճանփայ, գնըց հասաւ խրտիչը։

—Աստուած օրհնէ. էաս ինչ է, ըսըց։

—Նաս մեր տունն է։

Տէրտէր հայաւ աղջիկներու՝ օր Թագաւորի աղջիկ են. պէտաս քար զարդարմուն չատ կայ վրանին. տէրտէր վախցաւ, ըսըց.—Չիմ կրնըր պատկեր։

—Ինչո՞ւ չես պատկեր։

—Ըպա գրեցէք ինձի փուտուպա մը, տուէք օր պատկիմ։

—Տէրտէր, ինչո՞ւ փուտուպա տանք, մեզ տի պատկես։

Տէրտէր ինչ ինէր. վախուն բերըց պատկեց. փարեն առաւ, էլաւ Թողեց գնըց։

---

*) Թագաւորին յատուկ երկրէն։

Ըս մարդիկը բերին անոնց ու դաման բերին իրարու երկու աղբէար, թէ—իմը աղջիկ էղաւ, քուվը տղայ, ես քիզի տամ, քուվը աղջիկ էղաւ նա, դուն տի տաս իմ տղին։

Էս երկու աղբէար իրար հետ պատլաեցին ավ-դուռ էրթալ ըդ մեջի մէջ, օխտը ամիս օր քմաւ նէ՝ երկուսն էլ պարկան, մենծ աղբօրը աղջիկ էղաւ, փուճուրին տղայ։ Ըսաք մենծըցան 2—3 տարեկան օր էղան, փուճուր աղբօրը, ըսաց—Աղբէար, արի նշան դնենք։

Նշան դրին, էղան խնամի։—Արի բաժուիք, օր իրար դավաք էնիք։

Բաժուան, իրար դավաք՝ չատ էլ ուրախութին բրին։

Տղաք էղան հօթ տարեկան, մէկ վարժապետ մի ձեռաք ցգեցին, վաբա չատ տուին վարժապետին, որ կուտէր, կը խըմեր, կը կարդացընէր. ևէ՛նսէ վարժապետը ըսաց.—Էտոց անվընները ինչ է։

—Անուն չիք դրեր, ըսին, վարժապետ, կըլի ևէ, ատ, դնա, մկրտէ էկօ։

Վարժապետը տարաւ մկրտեց, առաւ էկաւ. պատլայեց դատ տալ։ Աղջիկ ու տղէն օր պէր օր կը մենծնային։

—Վարժապետ, անվընները ինչ դրիր։

—Աղջիկանը անունը Ալմաստ, տղին Ալտօրօ։

Վարժապետը կարդալ քեմին բրաց, վաբան առաւ, դնաց։

—Աղբէար, վախտը ատրաժամ է, ըսաց փուճուր աղբէաբը, մեք անս ու դաման էրեր իք. աչունը հէտրանիք տի ընիմ ետ։

—Միլիօն մի ալմաստ քար կը բերես, աղջիկս կը տանես, թէ չես բերեր, չես տանիր։

Տղի պապը—փուճուր աղբէարը մատծեց, մատծեց մեռաւ։

Տարին ընցաւ, տղուն մէրը խնամուն ըսաց.—Ընանկ բան ըսիր օր, իմ հաբիկս մատծեց, մեռաւ. էկօ կերիր չերիր, աղջիկդ տուր։

—Ես չիմ խաբր, խօսացս չիմ ընիր։

Մէարը տղին ըսաց.—Ա՛յ օրդի, պապս թագաւոր է. թուղթ մի կը գրիմ, կը տանիս պապուս, ինչ օր ըսէու է, կըսէ։

Տղան էրաւ ընկաւ ճանփայ, չատ գնըց, քիչ գնըց միայն Աստուած գինայ. գնըց թագաւորի սարայը հասաւ. թուղթը հասց թագաւորին, թագաւորը առաւ կարդաց, մատծեց օր «էրան աղջիկը Ֆէյան թագուհեցին է տարեր, Ֆէյան մեջի մէջ խրտիչ է չիներ, արաւն տարի է։»

Թագաւորը խմաց էղաւ օր ըսի իրան Թոռն է. չատ պատիւ տուեց ըս տղին։

—Թագաւոր ապրած, ես նշանած ունիմ, հոնի միլիօն մի ալմաստ քար կուգեն, տի տանիմ օր առնիմ նշանածս, մէարս գամ։

Թագաւորը մատծեց, մատծեց ըսաց.—Հոս սիրուն, աղկիկ աղ-

ջիկ չատ կայ, ինչ տի ինիս ըն աղջիկ. կը ճանփեմ մէարդ բերել կուտամ, որդի, ըսըց Թագաւորը. ես ծեր մարդ մ'իմ, տղայ չունիմ, բան չունիմ, Աստուած քիզի ինձիս նորէն տուաւ, քեզ չիմ Թողիր։

Մնըց ամիս մի, էրկուք. Չինաստանի Թագաւորը Թուղթ գրեց էաս Թագաւորին, «կռիւս կռիւ է, Ֆիլաճ սայմանը կուտաս՝ տուր, չէ նէ՝ պատրաստ կեցիր։

Ըս Թագաւորը մտածոց մէջ ընկաւ. ալ տղան մոռացաւ, հրաման տուեց իրան զօրապետնուն, կռիւ տի սկսին։

Կռիւը պատրաստեցին, պաբլայեցին իրարու հետ մարդ ջարդելը։ Թագաւորին խապար տուին Թէ «մեր բարաձը չատ մարդ ջարդուաւ։»

Թագաւորը մտածոց մէջ մնըց, չատ-չատ տուզուսիը կըլլի։

Թագաւորը չատ ձերոտաւ, վէզիրին ու նազիրին ըսըց.—Ես իմ էրկիրս տի տամ, ես էնոր տեմուր դափուճ (էրկաթեայ դուռ) ս'առնիմ։

Վէզիրը ու նազիրը Թագաւորին մինէ խնդրուան։

—Հայտէ, ըսըց, կըլըածնիդ կըլըած է. ցգածնիդ էլ ցգած։

Էսոք եօթ տարվընէ եթիը տարուայ մարդն էալ տարին կռիւը, ըսին.

—Ես տի յաղթուիք մնընիք, ես տի առնիք էդոց էրկիրը։

Քանը հինգ աւուր ճանփայ Չինաստան Թագաւորի տեղ առին։

Չինաստանի Թագաւորը սիցօղը նստաւ իրան մարդերուվը. բարեկամ Թագաւորներ իրան դուվաթ (ոյժ) տուեցին, էլան էկան կռիւը ըս Թագաւորին վրան. քսանըչորս սահաթ կռիւը բռնուաւ. ըսոր բարաձը բզզուլմիը էղաւ, առին սայմաններըը, էրկրներըը, մնըց մինակ քաղաքը։ Քաղքին պարիսպին չորս դին առին, կայնան. մարդ դուրս չէր կրնըր էլլըր։ Իրիք ամիս՝ մարդիկը քաղքին մէջ մնացին եսիր։

Ծողովուրդը խնդիրք տուեց Թագաւորին Թէ «մեք դուս չիք կրնըր էլլըր. քաղքին մէջ սով ընկաւ. քեսլիմ (անձնատուր) էղիր օր սովէ ազատիք։»

Թագաւորը մտածոց մէջ է մնացեր. ճարը կըլըվեր է։ Թուր—Ալլօրօն դնըց, խնդրուաւ—Արքայ հայրիկ, կը խնդրուիմ քիզի։

—Ըսա, որդի։

—Խնդրուիմ քիզի օր ես եօթն ու տաս զօրապետ կըլըիճ տղայ առնիմ, էլլեմ պարիսպէն դուս։

—Ա'յ որդի, ըսըց, աշխարքի էրեսին մէկ դէւ ես մնացեր, ես օ վախճանիմ, վաղը Թագաւորութիւնս կը վերջանայ։

—Արքայ հայրիկ, լաւ կըսես. մեզ օր բռնեն, եսիր (գերի) տանեն ես՝ չատ լաւ կըլլի. մեռնիլը պարտ է քան գեսիր տանիլը։

Թագաւորը մտածոց մէջ մնըց. իրան մէկ քայ բերած էին

Արապստանու. մարդ քոլը չէր կրնըր էրթըր, հրեղէն ձին էր. տղան դընըց, իմաց էղաւ ըդ ձիուն. դընըց օր, մէ ծերուկի մարդ մի նըստուկ է ձիու քով չպող կը խմէ, ախ-վախ կ'ինէ։

—Հայրիկ ջան, ինչո՞ւ ախ-վախ կ'ինես։

—Ա՛յ որդի, ես ախ-վախ չ'ինիմ, վճիվ տի ինէ ըզա։

—Ի՞նչ պատճառուոլը ախ-վախ կ'ինես։

—Տղա, դու ըս երկրէն չ'իս։

—Ծերունի, ես ուրիշ երկրէ իմ։

—Ե՞ր ես էկեր։

—Էրկու աւուր դալած իմ, հայրիկ ջան։

—Ես դիտեմ օր աշխրքին ինչ օյտուղին խապար չունիս։

—Ըսա, հալւոր, տեսնըմ ինդուր աշխրքէ խապար չունիմ ես։

—Աշխրքէ խապար չունիս, մեզ եսիր կը տանէ Զինաստանի թագաւորը. բան չիմ հոգար, ըս հրեղէն ձին կը հոգամ. իմ չնիկ կըյրէին, ըս ձին չի տանէին։

—Է, հալւոր, չըլիր օր ձինը տաս, հեզնըմ, կռիւը էրթըմ։

—Չըլիր։

—Լաւ կըլի, խնդրուիմ քիզի օր տաս հեզնըմ, կռիւը էրթըմ։

—Որդի, դու ճանիլ իս, ճէչ կռիւը դցիր իս, կռիւի մէջ մտիր իս։

—Հայրիկ ջան, չիմ դըցեր, չիմ տեսեր։

—Հէչ դուն քեզ սնամիս ըրիր իս բանի մը վրայ։

—Հայրիկ ջան, ըրեր իմ։

—Ի՞նչու վրայ իս սնամիս ըրեր։

—Հայրիկ ջան, էնոր վրայ իմ սնամիս ըրեր օր, հօրս ձինը երբ կը տանէի, չայիր կը կապէի, ըդ ձիուն մէջարմանդ (չղթայ, ոտաց կապ) կար թևիս պէս հատս, կը կղպէի. աւուր մէկը բալանիքը կորուսի, օլրտայ, չի դտայ, ձեռքս նետեցի գինճիլը, քաչեցի, կըրեցի. ձինը առի դըցի։

—Որդի, ուժդ լաւ, էլ ուրիշ ինչ ունիս, անանկ կըյրուկ սուր ունիս.

—Ունիմ։

—Ի՞նչ սուր է սուրդ։

—Իմ հօրս իրէք թիզէ թուր մի կայ. քարի է եղեր, էրկթի է էղեր, կը զինիմ, կէջնայ հողը։

—Ա՛յ որդի, ըսըց հալւոր, կռիւը քիզի է լայեղ, էրթըմ, թագաւորին իմաց տամ իգամ, ձինը տամ։

—Լաւ կըլի, ծերուկի, քեզ տեսնըմ. քիզի համար ուզէ ձինը, հալւոր, իմ անունը մի տար։

Հալւորը դնըց, խնդրուաւ.—Հա, ծերուկի, ինչ է։

—Թագաւոր ապրած կենայ, քիզի կը խնդրուիմ. մէկ զօրա-

պետ մի կայ, չատ կըչրիճ է, ձին չունի. խնդրում, ձինը տաս, հեծնայ, էրթայ կուխե։

—Նադ ինդուր զօրապետ կայ մեր զօրապետանուն մէջ, օր մեք իրեք ամիս է եսիր ըլե, իմաց չի տար, հիմայ կուտայ։

—Թագաւոր ապրած կենայ. ըդ մարդ տարի մի կայ օր հիւանդ է, զօրապետանուդ կըչրիճն է. հիմա սաղցեր է։

—Դէ գնա, ձինը տուր, ինձիս էլ իմաց տուր։

Ձինը տուից, տղան էլաւ գնըց կուխե։

Թագաւորը էլաւ կը հայի դեպի կուխը։

—Մեկուսնի, ուր է, ըտա չեղըր ան մարդը կուխի։

Տղան թռաւ էլաւ ձիու վրան, հեծաւ, դուան դուս էլաւ. էրկու հեղ ձինը քշից ըտղին, ընդին, օր տաքնայ. իրեք թիզէն թուրը քաշից, տալիճ էղաւ koroսն. կըչրածը կըչրից. անքան ջարդից օր, ջարդուածին արինը՝ սաղ մարդը ձիովը կը տանէր։

Փախողը վախաւ, մնացողը բռնից։

Թագէին մարդից հրաման տուից.—Ըդ մնացած եսիրնին ժողվեցէք դուան նեբս, դուռը կղպեցէք։

Էն Թագաւորի մարդիկը կը վախէին. ինք էլ իրանց ջարդելէն կերկըբը։ Հանից Թագաւորի սայմաններն դուրս. Թագաւորը մարդ, զօրապետներ ճանփից յետին։

—Գըցէք ըդ մեր զօրապետէն՝ խապար մի բերէք. զարկուաւ թէ սաղ է։

Հազար ձիաւոր ճանփայ ընկան դըցին. վերվ օր կըչրիճ մարդ էր, դըցին, տվին հասան։

Տղան ըսըց.—Ինչ մարդիկ էք, կուուին չեկաք, հիմա էկաք։

Ընդոք ըսին.—Թագաւորը ըսըց, «գըցէք, խապար մի բերէք մեր զօրապետէն»։

Տղան ըսըց.—Դուք հոս կեցէք, պէյնցէք ըս սայմաններըր։

Տղան դարձաւ էկաւ սարայը. ձիուն լ վէար էջաւ, ծերուին բռնից ձինը։

Տղան ըսըց.—Մեկուսնի, պղինձ մի ջուր կը դնես, կը տաքցնես, մի խալիպ սապոն կառնես, կը լոքցընես սապոնով, սապոնը վրան տի քսի. ձիուն պօյովը բեչէ կը ցգես վրան. ոտուն տեղը հեհեսալէ կը թողես օր թրթէ. այվընուն տեղը ծակ կը թողես օր աչքը հայէ. բերնին տեղը բերնին կեօրեյի կը կըչրես, բերանը բաց մնայ. կարմիր չամիչը կըլլես առաջը, հօթ տարուայ գինին ջուրը կը խառնես, հետը կը դնես առաջը, էրկուք ջուր՝ մէ մը գինի. ծերուկնի, քիզի տեսնըմ, քու պախտիդ կուտամ։

—Դու ինչ մարդ իս, որ ինձիս պախտիդ տաս։

—Ես Թագաւորի թոռն իմ։

Ծեր-ուն-ին խսափանմիւ էղաւ ոտքը, ըսըց.

—Ի՞նչու եվեր ինձի՛ս չէրիր, եզիդեր տուիր։

—Ես քիզի եզիդեր տուի, պէրի իմ հայրիկս դայիլ չէղաւ կուիւ էրթայի։

Մնըց ամսուան մի օօրա. իրիք թագաւոր պատրաստ տեսան, Զինաստանի թագաւորի հետ էկան ըս թագաւորի վրայ կեռնե կուիւ. ըս թագաւորին դիր ճանփեցին. իմաց տուին կուիւ համար։

Թագաւորը մտածոց մէջ մնըց, Թոռը ըսըց.—հայրիկ ջան, ինչ մտածոց մէջ մնացիր դու, քանի՛ ես սաղ իմ, մի՛ վախիր, տասվերկու թագաւոր ըլի նէ՝ դէմը կայնած իմ։

Թագաւորը խնդաց, բռնեց, ճակատը պագեց։

—Որդի՛, թագաւորութինս տուի քիզի, ինչ կինիս՝ էրէ, կուզիս երկիրը տուր, կուզիս պէչէ։

Տղան պատրաստ կըլըրե մարդիկը թոփիլը. թոփեց էլաւ սայմանին դլոխը, հինգ սահաթվայ ճանփայ էլ գնըց էնոց սայմանին մէջ. պուրին փչել տուեց, խորոզը կանչելուն պէս՝ ձիանուն եմը տուին, իրան մարդիկը թոփեց մէկ տեղ, ըսըց.

—«Կանչեցէք երկնուց, դետնուց տեղծողին. հեծէք ձիանը, քաշեցէք ձեր թուրը, դըցէք, էնոց ասկրին առէք մէջ։»

Ըսոք պատրաստ էղան, դըցին, հախայ էրին, առին մէջ։ Էնոց վաչան ըսըց.—Զհնկուի ձէան կուգայ։

Խարախոնուն մէկը խապար տուեց փաչին թէ՝ չավրմիս էրին մեզ։

Փաչան հար էրեց թէ՝ պոռուն փչեցէք օր բատարուէ տեսնան. իրիք սահաթ կայ լռանալու։

Ըս թագաւորի տղան ըսըց—«վրայ տուէք։»

Վրայ տուին. տալմիս էղան հօրտուի մէջ, քսանը չորս սահաթ չարդածնին չարդեցին, փախողը փախաւ, տարին, դէ գՏհմուր-ղափուն առին։ (Զինաստանի թագաւորի տամուր-ղափուն)։

Չօրսակտնուն մէկը ձիուն կիւվհնմիս էղաւ.—«էրթըմ թագաւորին միւժեհ տանիմ օր Զինաստանու Տհմուր-ղափուն առաք. անհոդ էղիր։

Հեծաւ գնըց, միւժեհ տուեց։ Թագաւորը հաննց, միւժեհն տուեց, ըսըց.—Սպրէք ու մնըք։

Թագաւորը դիր դրեց տղին թէ—Ես չիմ ուզիր էնոց սայմանը. էնոց սայմանը պահիս էրէ էնոց, դուն ու քու ասկեր քաշէ, էկո տուն։

Տղան առաւ, էկաւ։

Մնըց տարի մի, էզ թագաւորներ խուրհուրդ էրին իրանց իրանց—մեք իրեք թագաւոր ըլիք ու ան մեկ ըլի. ինչ դուք (տեսակ) ա՛առնէ, միզի բաշխէ։

Կը բերեն քաղքին չորս դին խանճսակ կըլլին։

Կըլլեցին, պատրաստ տեսան. ցախ դրին վրան, ծածկեցին. օր ձինով գնացողը խանճսակը չի տեսնայ, մէջը ըլնայ։

Չինաստանու թագաւորի մէկը մտածոց մէջ մնըց, ըսըց.

—Դուք պատրաստ տեսաք, խանդակ կըլլեցէք. մեզի հարիր մարդ եսիր կայ, եսիրը չառածցան ընդ՞ւր կուիւ կինէք. թուղթ գրեցէք, եսիրը ազատեցէք։

Թուղթ գրեցին, ճանփեցին ըս Հնդստանու թագաւորին, խնդրուան օր—«եսիրնիս ճանփիս իգայ»։

Թուղթն էկաւ հասաւ . . . առաւ թագաւորը, կարդաց ասանկ.—«Կը խնդրուիք, մեր հարիր մարդը ճանփիս, գայ»։

Թագաւորը էնոց խնդիրքը լսեց. եսիրը ճանփեց։

Թագաւորի տղան էկաւ, հետուանը իրեք սահաբվայ ճանփայ գնըց, ըդ հարիր մարդուն մէջ մենծ մի կար, աղբէար էր էղեր հետը. ինքը կըլրիճ էր, կըլրիճ մարդը չատ կը սիրէր, ճանփու դրեց, գըցին։

Տղան ետ դարձաւ, էկաւ. էնոք էալ գըցին։ Վեց ամիս ժամանակ մնըց. Չինաստանի թագաւորը թուղթ դրեց թէ—«կուիւս կուիւ է»։

Կուիւը բռնուաւ իրանց սայմանի օրթալախը. ըս թագաւորի տղան ըսըց.

—Դուք տեղաննուդ չիք թնտայ, ես կուիւ կինիմ, դուք սեյիր կինէք։

Տղան ձին հեծաւ, գնըց կուիւը. թուրը քաշեց, ընկաւ միջուանը, ջարդելէն քչեց ձինը, առաջ գնըց, գնըց-գնըց մօտեցաւ խանճկնուն. ձին քչեց օր ընցնի, ընկաւ խանճսակը օր քառասուն արշուն լէան, քառասուն արշուն խոր փորուած էր. երկու սահաբվայ ճանփայ ձին խանճսակը կը նետվէր, կելլէր, կըլնէր կիննէ խանճսակը. հրեղէն ձինը խոնջեցաւ, ալ խանճրկէն չելաւ, մնըց տղան ալ վրան։

Չինաստան թագաւորի չատ մարդիկը էկան, բոլըրտեցին օր բռնին. տղան խանճրկին մէջն իբեաց իրեք հազար մարդ ջարդեց։

Չինաստանի վէզիրը ըսըց.—Ֆար լեցուցէք խանճսակը օր տակը մնայ, մեռնի. ամմա թագաւորը հմ ըրըց՝ թէ սաղ տի բռնէք էդ մարդը։

Ըդ զօրապետը օր աղբէարացած էր ըդ տղի հետ, գտնուաւ հոտի, իրան աղբօրը վրայ պաշլայեց լացը։

—Ձեառքդ տուր ինձի, ըսըց, աղբէար։

Հանեցին խանճրկէն, կապեցին թևերը, առին գըցին սաբայը։

Թագաւորը կանչեց ըդ բռնողին, ըսըց.—ապրիս, զօրանաս։

Թագաւորին տղան հանեցին էան թագաւորին առաջ։

Թագաւորը հարց ու փորձ ըրաց, ըսաց.—Քեզ Թող տամ, կինե՞ տի էրթաս, իմ հետ կուիւ տի ինե՞ս։

—Սարայէն դուս էլլելուս էիմիե՝ կուիւ տի ինիմ։

Թագաւորը բարկացաւ, ըսաց. —Տէ՛, նետեցէք բանտը։

Նետեցին բանտը, հոնի մնաց . . .։

Ան օր աղբէսար էր էղեր, գիշերը էկաւ, իրարու քով նստան, խորհուրդ ըրին։

Էնոց փայտան ըսաց.

—Թագաւորի տղա, ես քու հետ աղբէսար իմ. ես օր քիզի բանտէն ու սարայէն դուս հանիմ, ինձիս ալ հետդ կը խալըսիս, կը տանի՞ս։

—Հա՛, քիզի էալ հետս խալըսիմ, կը տանիմ։

Առաւօտուն դռուրնին բացին, ձիանը պատրաստ տեսան, հեծան. Թագաւորի տղան ըսաց.—Աղբէսար, դուն առաջ գնա՛, ես մի հայիր ետիդ. ես ետևէն ջարդէլէն կուգամ. մարդ որ էղաւ, իմաց էղան, դու առաջ գնա՛ օր խալըսիս։

Էլաւ դռան դուս, փայտան քշեց գնաց առաջ։

Թագաւորին խապար տուին Թէ—Թագաւորի տղան փախաւ։

Թագաւորը հերսոտաւ, ըսաց.—Նա՛ տի մեռնէք, նա՛ պիքուճդ տի ջարդուիք, ըդի բռնէք։ Իրեք ոհտաքուան հեռըցան քաղքէն։

Թագաւորի տղան ետ օլրուաւ, պաշտայեց էղոց հետ կուիւ ինելը. ընքան մարդ ջարդեց օր, արինէն ձիան սէքը չէր տեսնէր։

Փայէն ու տղէն պաշտայեցին ծիծաղալ էրթալը. դըցին հասանիրան սարայը, եր մտան սարայը, Թագաւորը չատ ուրախութեան մէջ մնաց։

Մըզրգանին փչուաւ, դաւուլպազնին զարկուաւ, չատ մարտղներ կըյրըվաւ. պիքուճ ըս Թագաւորի էրէկն մենծ ու պզտիկ ուրախութին էրին։

Աս Թագաւորը մի տարի մնաց հանգիստ. Թագաւորի տղան չատ միտք կինեը, Թագաւորը ըսաց,—Ի՞նչու կը մտածիս, այ որդի։

—Թագաւոր ապրած կենայ, ես չի մտածիմ, վրէվ տի մտածէ։

—Որդի, ինչ բանի համար։

—Ըս տարի եօթ տարի է գալս, ես չես հարցընէր Թէ ինչ բանի համար կը մտածիս։

—Ես ինչ գիտիմ Թէ ինչ բանի համար կը մտածիս, այ որդի։

—Ես ըն բանի համար կը մտածիմ, մէկ մէկար մը ունիմ. ես ինչ գիտիմ, անօթի մընաց Թէ չէ ծարաւ։

—Ա՛յ որդի, ինչ է խնդիրքդ։

—Խնդիրքս ընէ է օր մի միլիօն հլմաս քար տի տաս։

Թագաւորը տայանմիս էղաւ (նեղը լծուեցաւ)։

—Ըալա, թագաւոր ապրած կ'ենայ, իմ էարընգրս էրկու միլիօն ալ չ'ուժէր։

Թագաւորը կանչեց վէզիրին.—Դնա, Թանկադին խազինի դուռը բաց։

Թագաւորն ու տղան էլան դրցին խազնէն։

—Այ որդի, ինչ ոտի կը վերցընես, վերցուր։

Տղան կրցածին չափ վերցուց։

—Տէ, հայրիկ, ըսաց, ինձիս ճանփու դիր։

Նստան Թագաւորն ու տղան։—Ի՞նչ դուր քիզի ճանփու դնիմ. իմ մէնէ էալ ինչ կուզիս, քիզի կեօրէի առիր։

—Քիզի ըրնա կ'ենիմ, ինչ դուր կ'ըսես, հայրիկ. ես ըս վիարէն առնիմ, տի տամ անէրուչս, որ աղջիկը առնիմ . . . ։

Ըդի հոս թող մնայ, մէք դառնանք Չինաստանու Թագաւորին։

Չինաստանու Թագաւորը մէկ օր էլաւ ավի էկաւ ըդ մեօի մէջ. ըս Թագաւոր ճէյրանի ու կէյիկայ մարախլին էր, էկաւ, խապար առաւ որ ըդ լառան մեօի մէջ չատ կայ. հաղար մարդով էկաւ, մոտաւ ըդ մեօին, բռնեցին քսան հատ ճէյրան. զարկին տասէրկու հատ կէյիկ. մուխը վրայ առաւ. Թագաւորը ըսաց.—Մնացաք ըս մեօի մէջ ըս գիշեր։

Գիշերը տեսան օր մեօի մէջ ճրագ կը վառի. Թագաւորը ըսաց։

—Լալա, հոս դեղ կայ, ճրագին լոսը առէք, երթէք։

Գըցին հայտն օ հոտ pէf տուն մի կայ։ Ըդ տղին անէրը հայտ օր Չինաստանու Թագաւորն է, ավն է էկէր։ Պատրաստ տեսաւ Թագաւորին կերակուր։ Նստաւ Թագաւորը հաց կերաւ։ Կնկան ըսաց։

—Դու Թագաւորի ձեռաքը չուր լից, Ալմաստ, դու էալ այլըխ ցդէ Թագաւորին ձեռաց վրայ։

Թագաւոր աղջիկն օր տեսաւ, խելքը ընցաւ։ Թագաւորի սրտին վրայ բերին չուր լցին։ Թագաւորը էլաւ նստաւ ու կանչեց ըդ մարդուն. էկաւ դլօխ տուեց Թագաւորին։

—Ըդ աղջիկը քու ինչն է։

—Իմ աղջիկս է։

—Ես տի առնիմ։

—Ես խօստացեր իմ միլիօն մի ալմաստ քարի։

—Էրկու միլիօն կուտամ ես։

Աղջկան մէարը չատ լացեց ու սրզլամիշ էղաւ. ըսաց էարկանը.—Չելիր, այ մարդ, էօթը տարի է օր տղան դրցեր է ալմաստ քարի, օր աղջիկդ տուիր՝ կուգայ մեզ սուրը կը քաշէ։

Թագաւորը ըսաց—Քէ ինչ էլ ըլէ, աչխարք իրուր խաւուխ, ա'առնիմ. սուլթան տինիմ։

Առաւօտը աղջիկը առին, տարին. չէր էրթըր, կուլար. սրզա-

միշ կըլլէր, ալրաւնքնէր կը թափէր։—Չիմ էրթըր, չիմ էրթըր՛օր չիմ։

Առաւօտը աղջիկը զօրով առին տարին։

Դառնանք աղջկան պապուն։ Իրիկուն էղաւ էարիկ կնիկ նըստած էին տուս ու վուս, չատ կը մտածէին.— ինչո՞ւ կը մտածէին։

—Կը մտածէին թէ Ալմաստը տուաք, տղան կուդայ մէզ սուրը կը քաչէ։

—Ա՛յ կնիկ, էլըք վախէք։

—Դար պոի վախիս, օձուն աղջիրը (հաղջիւր) օր մըննըս, դուդայ, մէզ կը դնայ, սուրը կը քաչէ։

—Ա՛յ կնիկ, ես բան մի մտածեցիր։

—Ինչ էր մտածեցիր։

—Տղան օր ճանփայ էլլայ, աւուր մի ճանփայ օր մնըց, մէզի դիր կը դրիէ, ըն վախտը մենծ դոչը դարաւճիլով, գեճեճիլով պիպեռով՝ թուխերը կը վառէք, կէջըցընէք թուխերը, թող ըլլի պիրհաւ. էլաւ նը կը հանիք թուխերէն, բոխ մի կաւ պաստանք կէնիք, կը դնիք ըդ դոչը մէջը, կը կարկէք, դերեզման կը բանաք, կը դնիք դերեզմանը, վրան հող կուտաք, մենծ քար մ՛էալ վրան կը քաչիք. աղջկան անուն էալ վրան կը դրիք, իրիք օրվայ մեռած բարըխ կը զարկիք։

Դառնանք Չինաստան թագաւորին. Չինաստան թագաւորը ըդ աղջիկը տարաւ իրան էրկիը. սարային մէջ իրիք օր պէյեց, ըսըց թէ—ալ հարսնիք ինիմ. աղջկան հարցէք։

Աղջկան հարցոց Սուլթանը։

—Ես թագաւորը չիմ առնիր, օր չիմ առնիր, ըսըց։

Թագաւորը բարկացաւ, դնըց աղջկան քով, ըսըց.

—Դու իմ թագաւորութինս չիս հաւնիր, աղկէկութինս չիս հաւնիր։

—Ոչ, թագաւոր, ես կը խնդրուիմ քիզի. մէք պէհիմ-բերթմէ իք, աշխարքն օր իրուր անցնի, ինձիս օր առնիս՝ հօթը չուճուխկա օր տէր ըլլիմ, կինճ չիպտի առնիմ. տղան օր գայ, տղան տի առնիմ։

Թագաւորը վախցաւ, ըսըց.—Հայտէ, ես քիզի հաւատացի, աղջիկ, ես կըսէի, զանար նշանած չունիս, երբ որ օր նշանած ունիս, աւուրցայ քիզի. դու իմ քորս ըլլիս։

Գաք տղին։

Տղան էլաւ ընկաւ ճանփայ. չատ դնըց, քիչ դնըց. միայն Աստուած գիտայ ինչ դէրկ գնըց, քառասուն աւուր ճանփայ գնըց, մի աւուր ճանփայ մնըց, խոնջեցաւ. մի դիղ մընըց, մէկ օր հանգչեցաւ. ըդ տունը մի կըլրիճ տղայ կար. հանից էրկու օսկի տուէց, գիր մի տուէց։ Ըդ կըլրիճը գիրը առաւ, գնըց ուղէց մօրը։ Մէարը բան չունէր. մի սպիրկ ունէր, ըս տղին պախշիշ տուէց։

Թագաւորի տղան էլաւ ընկաւ ճանփայ, մութը վրայ առաւ, հասաւ։

Անտրը էկաւ, պաօլայեցին լացը։

—Ինչո՞ւ համար կուլաք։

—Ալմաստի համար կուլաք, իրեք աւուր մնած է, ըսաց զօքանչը։

—Ես էնոր համար եօթ տարի կաշխատիմ, ալ ես սաղ կեցնըմ, ինչ։

Տղան խենդացաւ. մէարը սիլայը վրան վէար առաւ, տղան քիչ խելքփաւ, ջուր լցին վրան։

—Տարէք ինձիս գերեզմանին վրայ, ըսաց։

—Ա՛յ որդի, գիշեր է, թող լոսնայ։

Լուսցաւ. էարիկ կնիկ էլան վախան, մնացին մէար ու տղայ։

—Մէնք ըսաց. Գերեզմանը տի քակիմ։

Փետառը առաւ, գերեզմանը քակեց, բացաւ կառւը, վերոց գերեզմանէն հաննց։

—Մէնք, քակէ պատանքը։ Քակեցին օր դոչ մի։

Տղան չատ խնդաց, նստաւ կերաւ, էլաւ վազրց, գնըց Ալմաստին տղապը հայաւ, գտաւ մի դիր. Ալմաստը դրեր, հոն թողեր էր։

—«Պապա ինձիս Չինաստան թագաւորին ծախեց, Դուն քո Աստուած օր կը սիրիս, ինձիս օր կը սիրիս, իրկունը հասաք՝ իրկունը էլնես ճանփայ, առաւօտը հասաք՝ առաւօտը էլնես ճանփայ»։

—Մէ՛արիկ, ձինս քաշէ։

—Ա՛յ որդի, ո՞ւր տի էրթաս։

—Ալմաստին էտև տի էրթամ։

—Իցցուն աւուր ճանփայ է, ինչ դուր տի էրթաս, ես հոս մինակ կը մնամ։

—Վնաս չունի, ըսաց. էլաւ ընկաւ ճանփայ։

Շատ գնըց . . . ճանփան կէս ըրաց, օրը տասվերկու սահաթ քշեց, ձին էլ անօթի՝ ինք էլ անօթի. ևէ ջուր կայ, ևէ հաց կայ. գնըց մէկ չայի տայանմիջ էզաւ. ջուրի վեար, ջուրի վեր քշեց, հայաւ օր կէյուք գտնէր, չի գտաւ, ձինը զարկեց լողը, անցաւ ընդին, մթնեց. սահաթը հայաւ, էրկու սահաթ գիշեր է գըցեր։ Գընըց ընկաւ չայիր մի, հողը սև, էրկինքը սև, ամպ, աստղիկ չերևար, աչքդ մխտեն չերևար, գընըց ընկաւ չայիրը, խոտը կելլայ ձիուն պօլը. մի սահաթ չայիրի միջուն գնըց, զօռով խալըսաւ. ըդ չայիրէն էլաւ, աղբիր մի ըռաւս էկաւ, աղբրին վրայ էջաւ, ձին եեմը առաւ, մզրաղը զարկեց աղբրին գլոխը, ձինը չայիրի մէջ. քսանը հինգ օր էր օր տղուն աչքը քուն չէր մտեր։ Տղան պարկաւ, քնացաւ. խոռոզը կանչելուն արթըցաւ, տեսաւ աչքը բարձըցոց էրկինքը օր աստղները կը փէյայ, տեսաւ օր աղբրին գլոխը մէկ բարձր լեառ մի կայ, տղան դարձաւ

կինէ քնացաւ։ Արևը վրան ցաթէր էր. ձին էկաւ դլխուն վերի դին, խածեց տղի թևը, տղան վախցաւ, վեր թռաւ, հայաւ օր իրան ձին էր, էլաւ այարը վէար առաւ, թիմարեց. այարը գարկեց, խոլացը քաշեց, իրան չուզուխը լոցոց, չախմախը գարկեց, պատրայեց թիւթիւնը խըմիլը։ Տղան էլաւ նոռուկ տեղացը, կայնաւ. հայաւ օր ըդ լեռան գլոխը մէկ խոճախ մի կայ, օր աչխէքի էրեսը չի դոնուիր. էեփիճին թամամը (անահը) արգաթ, պզտիկը (խուզին) օսկի է. փառը՛լ փառը՛լ փառլամիշ կըլլի։ Տեսաւ օր կուժը ձեռքը մէկ մի կէջնայ եամանն ի վէար, ըսըց—բարև ձեզ, տղէքար։—Աստուծոյ բարին։

—Ո՞նչ մարդ ես, էկեր ես հոս. էաս չայիրին մէջ սէտլեր ես ձին, չես վախենար։

—Ինչո՞ւ տի վախենամ։

—Մեր մեռնծը թիճպէ ըրըց՝ թէ «Թող էլլէ էրթայ»

—Դուք քանի՞ մարդ էք։

—Մեք տոխսան տօխսուզ (99) մարդ էք։

—Էյ, ինչ կլինէք հոսի։

—Ըս լեռան դլօխը սարայ մի չիներ էք, նաներ էք, ըս ճանփովը մարդ չէր իդար, օձը պըրտովը, ճնճուղը թևովը. էլի, դնա։

Տղան էլաւ, թուրը քաշեց, ըդ մարդուն մէկ թևը կըլրեց, ճանփաւ դրըց. դնըց դլխաւորին քով. դլխաւորը հերսոռեցաւ։

—Գնա, ըսա օր Թող էլլի էրթայ։

Մէկալը էկաւ։—Տէ, էլի դնա, մեր մեռնծը կըսէ «Թող էլլէ, էրթայ» էդոր էլ քինէթը կըլրեց ու ճանփեց։ Մեռնծը էլ դոչալը ճանփեց, ըդոր էլ լեզուն կըլրեց։ Էն դնըց մէկը էկաւ. ըսոր էալ անկօջը կըլրեց, մէկին էալ արդան կոլրեց։

Մեռնծը հերսոռաւ, համ ըրըց, օր ձիանը հեծան բոլրանեցին զողան, տղան չկրցաւ ժմնցընէր օր իրան մզրախը առնէր, իրան իրէք թղնէ թուրը, խալխանը առաւ ձեռքը, ընկաւ ըդ չայիրները. մել (ճահիճ) տեղը դըցին. էնքան միտքը էկաւ վրան թէ տօխսան տօխսուզէն մէկ հատ մի չմնըց. տղին ձինը էնքան եարալի էղաւ օր, փարալի մը տեղ չմնըց սաղ։

Տղան ալ իրան ձիան պէս եարալի էր. ընկաւ ճանփայ, հինգ սահաթ ձինը առաւ գնըց, ձիուն եարան պաղաւ, թուլցաւ. կէս գիշերուն դընըց, թագաւորին էգուն տակ հասաւ. տղան ընկաւ վէար. ձին էկաւ թագաւորին բեմեր դափուց, հրո-հրուաց. թագաւորին իմաց տուին, ձին տեսան օր պիքուն եարալի է, կայի օյանախ չկայ վրան. էնքան օր ծակծկէր է։ Թագաւորը հեթիմ ըրըց օր ձիուն հայի։

Լուսցաւ, թագաւորը մարդ ցգեր էր օր ձիան տէրը գտնին։ Տղան կէս գիշերուն խնդքը գլօխը էկաւ. գնըց մտաւ խաղողին թևկին (կոտորակ) տակը, իրեն ճէչ բան չէր պիննար. (սիրտը ուզիլ

վախտքիլ) բիւրին կը պիննար, ձևաոքը նետուց քնաչն. լեցուց չուպուխը, չախմախը ղարկեց. կրակը դրուց չուպուխին վրան. խմեց, ու դրըցաւ (ուշաթափ ընկալ)։

Էդ էղին Սուլթանին օդայի ախճիներին տակն էր. Ալմաստը հայաւ օր թևկին տկուն չուպուխ խմելուն լոս կերևայ։

Ալմաստը Սուլթանին ըսըց.

—Մէարիկ ջան, թևկին տկուն չուպուխ խմելու լոս կերևայ։

—Զըլլի՛ էն եարալին է, ըսըց Սուլթանը։

Մարդ ճանփացին, տեսան օր եարալին էր, առին էկան, դրին մէկ օդա մը, կանչեցին հեքիմը. մարդ ճանփաց Թագաւորին—տէ, տղան գտեր էք։

Թուխման էկան. Թագաւորը ղրուցաց տղուն հետ, տղան կը լղրցընէր (լաօք պարզ չէր խօսեր), չէր կրնար հասկըցնել. Թագաւորը հրաման տուաց հեքիմին օր բաց ինէ լեզուն, օր խնամանէք դըլխուն էկածը։

Իրիք աւուր տղին լեզուն բացուաւ, Թագաւորը էկաւ խօսուԹին ըսըց տղին։

—Տղաս, էաս ինչ է քու ուղղ. քեզի վնաս ղարկեց։

—Ես էկայ, չայիր մը էջայ. մէկ մենծ լեռ մը կար չայիրի պլօխը, մէկ սարայ մը կար օր արդաթ ու օսկի էր. փառը՛ղ փառը՛ղ փառլամիշ կայիր. կուխ էրիք ըդ չայիրի մէջ. անքան ինձ գիտիմ օր տոխսաև տսխուզին մէ մի չի մնըց.

—Թագաւոր, իմ ձինս ուր մնըց։

—Ձինդ սաղցուցկը էք։

Թագաւորը չատ խնդաց տոխսաև տոխուզի համար, կանչեց վէզիրն ու նազիրը—դըցէք ըդոց խուրդը (բնակավայրը) քաղէք, մալովմուլով առէք էկէք։

Դըցին օ fուլլի ջարդուած ին, առին բերին ինչ օր ըդոց կար։ Թագաւորը էկաւ դընըց ավը. հեքիմը էկաւ տղին բրինձէ չորպայի իզին տուաց. ըսըց օր անլի նէչ բան մի ուտեր. դնըց ինք իր տունը։ Սուլթանը էկաւ տղին տեսաւ

էկաւ ըսըց.

—Ա՛յ որդի՛, ի՞նչուր էաս։

—Սուլթանը ասպրած կենայ, լաւ իմ։

—Ի՞նչ կը պիննայ (սիրտ ինչ կուզէ)։

—Ինձիս շերպէթ մի կը պիննայ։

Սուլթանը դնըց տուն, մերդէ շերբէթ մի ըրըց, տուաց Ալմաստին, տարաւ տուաց տղին։ Տղան առաւ խմեց։ Կէսը օր խմեց վէսը տի դնէր՝ Ալմաստ ըսըց.—fուլլի խմէ։

—Չէ, չատ կըլլի, կէսը դու խմէ։ Թասը դրըց վէսը։

—Զևուցս բռնէ էլիմ, ըսըց տղան։

Ալմաստ բռնեց։ Տղան չատ էր անցկը (նիհարցկը), ձեռաքը բռնած ժամանակը մաննին մնըց աղջկան ձեռաքը, աղջիկը առաւ, հայաւ օր իրան անունը մէջը գրմուն, իրան մաննին է։

—Ա՛յ կըլըխ, ըս մաննին քիզի վէվ տուեց։

—Հայիր վրան, մաննին կը ճանչնամ։

—Ըս մաննին իմն է։

—Մաննին օր քունն է. ես էլ քունն իմ։

Հոտի ըս էրկուքը ճանչուրցան, վաթտուան իրուր, պաշլայկին լացը . . . ։ Սուլթանը հայաւ օր աղջիկն ու տղան իրուր վաթտած կուլան։

—Հա, ինչ կայ. ինչու կուլաք։

—Ժամանակը չէ, մի ժամ էտև էկօ 'պատասխանը տամ, ըսըց տղան։

Սուլթանը մի սահաթ էտև էկաւ. Սուլթանին ճաղլ ըրըց, ամեն բան էրուկ էղաւ՝ օր ըս, ըսոր նշանածն է։ Թագաւորը օր լսեց չատ խնդաց, տոխսաւ տոխսուզն էլ վերջացած էր. ընուր համար չատ իրընդաց որ ըն դէչ բուրուճիներէն իրան աշխարքը ազատեց։

Տղին ու աղջկան համար հօթն օր հօթ գիշեր հէպրանէք բռնեց. ըրըց էղաք իրան տղայ։ Մըզրկաճին վէչուաւ, դավուլպազին զարկուաւ, հէպրանէքը էրին. էնոք հասան իրանց մուրազը, դուք ալ հասնէք ձերը։

Հէպրանէքը էրեցին, էլաւ դնըց մօրը էտև. մալով միրաթով առաւ էկաւ ըս թագաւորին քով օր աղայ էղաւ, իրէք օր մնըց։ Թագաւորին խնդիրք տուեց։ Թագաւորը կանչեց տղին։

—Ի՞նչ է ինձիս խնդիրք տուած իս։

—Ինձիս իզին տաս իրէք ամիս։

—Ո՞ւր պտի էրթըս։

—Աղբէար մի ունիմ, տերթըմ աղբօրս քով պտի պահվիմ, գամ։

—«Կըլլի կըլլի վախճին մէկ պարտկնտէը, պարտկը չկրնըը տար, պարտկնտիրանը կը բռնեն էաս մարդը օր իրանց փարային տեղը մոբթեն, կելլայ գիշերը կը վախի. չատ կերթայ քիչ կերթայ էտև կը հայի օր մէ մի էտեանց կը վազէ. ըս մարդը կըսա..զրհա պարտկնտէրն է. խղինք տի բռնէ։ Վախուն ծնկվնին կը կոյրի, կը նստի։

Աղբէար. դու ինչ մարդիա։

Ի՛նչ մարդ իմ. պարտք ունիմ, պարտկնտիրանուն կը վախչիմ։

Էլան էղան ընկերը, ընկան ճանփայ. չատ դըցին, քիչ դըցին դարձան էտևնին հայան օր մէ մի էտևնին կը վազէ։—Աղբէար, էդի եա իմ պարտկնտէրն է, եա քու.. (լաւ քարող է. չատ լաւ կը խօսիս, կըսէ խումբին, դէրվիչ պապա, խօսա, պէհի գուբ ընկի թաղաւորի աղջկայ սէրտը) մեք էդոր ափուցը չկ կրնար խալըսիր. ճանփուն վերդին դու կայնիր, վարդին ես, քումը ճի ղինկը. իմնէ՝ կիճի ղինկը, պանկը։ Էկաւ ընցաւ ըն մարդ։—Աղբէար, կայնիր, խօսուքին էնկը։

—Ի՞նչ կայնիմ, պարտկնտիրանուն ափուցը կը վախնիմ։

Էղան իրէք ընկերը դըցին, չատ ու քիչ դըցին, մէ մեծի մի մէջ մթնեց։ Մէկը ճանճար էր, սղոց մի. ուրագ մի ունէր գօտին. մէկն էլ թրզի էր, մըյրատ մի ղարկեր էր գօտին. մէյն էլ կարդացող էր։ Նանճարը ըսըց.—Դուք պարկեցէք, ես մուխայէր ըլլիմ օր պարտկնտիրանը չդան. ճանճարը հայաւ օր քունը կուդայ. էլաւ սըղոցով կըլլրեց փէտը, ուրագով տաշեց, մարդ մի չինեց։ Թրզիին մնտեց, հանեց վէր. ինքը պարկաւ։ Թրզին հայաւ օր մի մարդ կերևայ. չատ վախեցաւ թէ մեր պարտկնտիրանն է. կըճկելէն գընըց դէպի էդ փետէ մարդը, փետով մնտեց, ընկաւ, հայաւ, օհ փետէ մարդ է, մեր ճանճարն է չինէր օր քունը չի տանի։ Թրզին բերեց իրան վրուն չուխան ձևեց, կարեց, հագոց էադ փէտէ մարդուն, ֆեսին տկուն դտակն էալ դրեց գլօխը, էկաւ ըն կարդացողը մնտեց։—Էլի դուն պէյէ պայմէլ, ես քնանամ։

Կարդացողը էլաւ, տեսաւ օր մարդ մի պարկուկ է. հայաւ օր փէտէ մարդ է. լաթեր է հագոցած՝ հանեց ծոցուն գիրք մի. պաշլայեց կարդալը. փէտէ մարդը սաղցաւ։

Դէրվիշը էաս պատմեց ու ձէան տուեց խումբինին։

—Շամատաճ աղբէար, էաս իրէքին վէր մինն քումն է մարաֆեքը, որ էաս փէտէ մարդը սաղցոցին։

Դէրվիշ պապա, մարաֆեքը կարդացողին է։

—Չէ, մարաֆեքը թրզուճ է։—Չէ, դու չիս գիտէր։

—Չէ, դու չիս գիտէր։ Մենծ կռիւ մի կինին դէրվիշը ու շամատաճը։

Աղջիկը կը խօսի։—Ի՛նչ կուիւ կ'ինէք, կեցէք օր ձեր գատը կը կռլրնի։ Մարաճիքը ճաճուն է օր փէտէ մարդը չինեց։

Աղջիկը օր խօսեցաւ, դէրվիշ պապան.

—Պատրաստ կեցիր, մէկ հօճդ (վրէժ) հանեցի. խումբին մտաւ դէրվիշի տորպակը։

Մէկէալ իրիկունը կ'ինէ գընըց աղջկանը օդան. խումբին սէապէց, գընըց մտաւ անտուկի մէջ։—Բարև քիզի թագաւորի աղջիկ։ Աղջիկը պատասխան չտար։—Բարև քիզի, անտուկ աղջէար։

—Աստուծոյ բարին, դու բարով էկար, դէրվիշ պապա... ևն... Թագաւորի աղջիկ «Աստուծոյ բարին» չառնէր. քարոզ մի տուր որ մտիկ ընէ։

—Կրնի կրնի, անդուխ աղջէար, պապմ ու տղայ մի, լաւ մտիկ էրէ, անդուխ աղջէար. էս քարոզս լաւ է։—Էս տըղէն կ'ելլայ դարիպուրին կ'երթայ. իրէք վարպետ մէկ տեղ կը բանին. իրէքէ չբաղ մի կրնի օր բան սորվի էդոցմէ. մի ամիս կը մնայ. էսոր հէարը չատ դժար կը հիւրընդնայ, թուղթ կը հանի էս տղին. վարպետը կառնէ, կը կարդայ. «գիրս իրիկունը հասաւ՝ իրիկունը՝ առտուն հասաւ՝ առտուն դաս, ես հիւանդ կը մեռնիմ։» Վարպետին մէկը սաճին ուզը չինեց, օրթանճա վարպետը սաճը. պզտի վարպետը թևը չինեց, տղան նստըցուցին մէջը. պզտիկ վարպետը օդը տուեց տղին, տղան թուղցին, գընըց իրան պապուն ժմնաւ, հողը գերեզմանի ըրըց։

—Լաւցիր, անդուխ աղջէար. մարաճիքը ումն է, սաճի ուզը չինողին է։

—Չէ, սաճը չինողինն է։

—Չէ, ես քու էն՝ էն էն պապու կողը... ուզը չինողինն է։

—Չէ, չէ, հա, սաճը... ։ Սաստիկ կուիւ մի կը հանեն։

Աղջիկը կըսէ։—Ի՛նչու կուիւ կ'ինէք, կեցէք ես ձեր գատը կըլրնիմ։ Մարիճիքը պզտիկ վարպետին է օր թևը չինեց, օդը տուեց, պապուն հասուց։

Խումբին էկաւ մտաւ տորպակը։ Դէրվիշը ըսըց.

—Թագաւորի աղջիկ, մընըց մէկ հօճդ, պատրաստ կեցիր օր քեզ տ'առնիմ։

Մէկալ իրիկունը կ'ինէ էկաւ։ Բարև ևն. խումբին մտաւ ղուան ծակը։

—Բարև խումբի... ։

—Աստուծոյ բարին... ։

—Դուռ աղջէար, քարոզ մի տամ, կըլլի վախտին, էարիկ մի կ'ինիկ մի, էրկու աղջիկ, մի տղայ, էրկիր անօթուքին կրյնի.—կընիկ, ես էրթամ ղարիպուրին, բանիմ, փարա բերիմ, ցորեն առնիմ։ Գընըց

ասվ ընկաւ սաստիկ, էսա կընիկը պատռայեց ժողովրդ ինիլը. չուճուխին փրցոց անօթութան։ Էարիկը էկաւ տվլոզ, փարա չունի ձեառքը։ Էարիկ կնիկ կուլա էրին, կնիկը ըսըց.—սէ դու բան չունիս, չուճուխին իմնին, անօթութան տարին ես իմ ոչխէր, դու փախար, դըցիր։

—Այ կնիկ, Աղջիկնուրը քիզի, տղան ինձի, իմն է։

—Չիմ իսար, մարդ։

—Դուռ աղբէար, լսիցիր, տղան ուսմ կըչնի։

—Մէ աղջիկը մօրը, մէ աղջիկն ու տղան հօրը։

Կիճեկ կուլա կինին, աղջիկը կըսէ.

Տղան պասուն. էրկու աղջիկն էլ մօրը կըչնի, կըսէ աղջիկը։

Ընանկ է ճեկ, թաղաւորի աղջիկ, դուռ էալ իձի կըչնիս։

Թաղաւորին խապար տարին օր դէրվիշը աղջկան խօսկըննել տուէյ։ Գատրաստ տեսան օր տի առնէ, էրթայ։

Դէրվիշը էաս աղջիկը հեծոց ձիներ, թուրը վրան էր, տի քաղէր, չթողեց. դէրվիշը ձիուն կեմը բռնեց, ընկան ճանվան, չատ դըցին, քիչ դըցին, իրանց քաղաքը հասան, մտան դունէն ներս. դրընըց տեսաւ օր՝ էաս իմ ամուիս տղան է, պեճզը տուէց, պեճզ առաւ (դունատուեցաւ)։ Դէրվիշ պապան ըսըց.—թուրդ քաշէ, տղան օր ինչ դուր քրիդ տկուն անցուցեր իս, կիճեկ էնդուր իրէք անգան տանցնես ետ։

Տղան իրէք անգամ անցոց քրի տկուն։ Տղան թուրը առաւ, կապեց մէջքը։ Դէրվիշը նատաւ ըսըց.—սէ, ես քեզ խապեցի էաս քու ըսած ամուիդ աղջիկն է, կուգիս՝ տուն ճանփէ, կուգիս՝ գլօխը զարկ, էալ չիմ խառնուիր։

Թաղաւորի տղան հազար ղուրուշ տուէց Աննային, դընըց խեճդ ջորի մի բերեց, էաս աղջիկը կապեցին պոչը, սէապեցին լեառը. մնծ կտորը անկաճը մընըց։

Թաղաւորը իմաց էղաւ, աղջիկն ու տղան տէ իմա ազապ են, նոր հէպանիք էրին, էրկու վարդապետով, ուրը տէրտէրով, իրէք հարիր տիրացուով, առին տարին ժամը, պսակեցին։

13

ՈՐՍՈՐԴ ՀԱՅՐԱՊԵՏ

(Զարսաճ՚ապի բարբառով*)

Ոռսորդ հայրապետ	(Ավեի Հարապետ).
Գեսնեի լսոլ Կարապետ,	(Եր տիլիդեն Կարապետ).
Կուսարար Գաբրիել,	(Կիւրվիճի Գաբրիել).
Աբազաճաս Կիրակոս,	(Զափուկ Կիրակոս)
Կլաճոլ Մարկոս	(Նուտրճի Մարկոս)
Բխաբեր Թոռոս	(Թիփիճի Թոռոս)

Վ*ախտին մէկին մէկը մի ու տղայ մի կըլլի, մէկրը կըսէ.—Որդի, ուր կերթաս՝ դնա, ծովուն քնարը մ՚երթի։ Ըս տղան դիշերը քունը չէկաւ.—բան մի կայ, ըսծ. ես ծովուն քնարը տ՚երթամ։

Գընաց, մեքեխս մի չինակ, մտաւ մէջը. հայաւ որ ծովուն մէջուն մէ տեղիզ ղուշի (ծովային թռչուն) մի էլաւ, թխւվերը (մազվեհասուր) օսկի էր. փառըլ փառըլ փառլամիս կըլլի։ Զարմկաց, նեռակց փնեը, ուռաւ էկաւ տունը. քանըզիկիկնը երկէն էր. կէսը ըսդին՝ դեսինը կը քսուէր, կէսը ընդինու Քերդից, չորցոց. սայրեց, կախեց պատնի վէրա։ Մէկրը ըսըց՝

---

* Ասած է Միհաս-բարար.

1 Սոյն ճէխիաթը՝ որպէս Սիհամ թագաւոր՝ Ոսկեծամ, Քառասուն ծամ, Գառնիկ աղբէր՝ Սիհամ ու Գուլ եւ այլն. որ բնիւհանուր ժողովրդեան մէջ տարածուած է. այլ եւ այլ զառոնիներու՝ միևչեւ ռուգամ վիպերու մէջ այլ եւ այլ ռեռուցիներով կրասուի. որպէս Ռուստայ Մուրաս, Ֆլերու սար. Ֆլի ոսկորէ ասրայ, Լուսաւար վասր, Տէնիզ դուշի, Տիրնեա զուգալի. Հազարաւոր բլրալ. որ այլ եւ այլ ճիւղերով կրպատմուին։

—Մեք աղքատ մարդիք, ըդի տար Թագաւորին, որ բան մի տայ, բերիք, խաբար էնիք։

Էլաւ, տուաւ գընաց Թագաւորին. վհզիրը նստեր էր fհմեր դափուն։

—Անունդ ինչ է, տղա, ըսաց.—Ավճի Հայրապետ։

—Էաս փոսը տուր ինձի.—Թագաւորին տի տանիմ։

—Երկու հարիր օսկի, էկոյ կըլլի ատոր կը փոխվինիս (զղջաս)։

—Չէ, կը տանիմ Թագաւորին։ Տարաւ Թագաւորին։

—Թագաւոր ապրած կենայ, փեշկեշ իմ բերէր քիզի, ըսաց։

Թագաւորը կանչեց վհզիրին—Էաս Ավճի Հարապետին խազինեն կինիս, ինչ դոլր օ չալկենէ. էն դոի Թող չալկէ, էրթայ։

Վհզիրը գընաց խազինեն բացեց. իրեք դրրըճնոց օսկի մի տուեց. իրեք էալ սիլլե դարկեց։—Ընձի չտուիր տէ, Թագաւորին տուիր փոսը. գնա տես, քու գլօխ ինչ օյին տի հանիմ։

Վհզիրը գընաց Թագաւորի քով. Թագաւորը ըսաց.—վհզի'ր, էաս փոսը ինչ չինիք։

—Թագաւոր ապրած՝ աղկէկ fիւրf կըլլի.

Շինեց, բերեց տուեց Թագաւորին։ Թագաւորը հագաւ, պաճլայեց Ֆորթա տալը։—Վհզի'ր, եախսիհ կըլլի։

—Շատ աղկէկ եախսիհ կըլլի. մի բան մահանայ կայ, ըսուր կհօրհյի Ֆիլի արդա տի բերես. սարայ մի տի չինես, ըս fուրfը յարմարի։

—Վճվ կը բերէ, ըս դոար Ֆիլ տիշի, որ մէկ սարայ չինիք։

—Ավճի Հարապետ կը բերէ։ Կանչեց, ըսաց։

—Ավճի Հարապետ, Ֆիլ տիշի կուզիմ, մէկ սարայ տի չինիմ։

—Ես չիմ կրնար. Ֆիլերուն լուտը վճվ օր էրթը, կուտեն։

Փիզի էցցունը հինգ օր մեօվլեր՝ բերիր՝ բերիր, օր չի բերիր՝ գլօխդ կը կըչրիմ։

Տղան լալուն էկաւ մօրը քով։—Այ որդի, ինչու կուլաս։

—Ես չլամ՝ վճվ տի լայ. Թագաւորը իմ մինէ Ֆիլ տիշի կուզէ, օր սարայ չինէ։ Տղի մօր ասդաբաց Թուղթ մի կար։

—Որդի, մենծ Թուղթս վչար տուր, ուսնըմ նեղ խօլայ ճանփայ մի կայ. մէկրը Թուղթը հայաւ, ըսաց.—Ես քառասուն աղբէար ունիմ Կանի կուսույա լուտը. որդի, գնա. ընոք ճանփայ մի հանենեցին՝ հանեցին, չէնէ՝ կը մընաս հոնի։

Գնաց, հասաւ էնոց ղօճախը. հայաւ որ մարդ չկայ, ժրկուաւ, էլաւ fհմեր դափուին վրան. Հայաւ օ քառասուն հատ ավնէ գընած. չարտատ է, կուգան։ Մենծ քեռուն սիլայնը առաւ ձեռացը, էլան վերը օդան. նստան օ հարց ու բարև տ'էնին։

—Թէր ըլլի, ընդհուր էղաւ որ էկար ըսդինն Տղի մօրը քով էղած Թղթի մէկ ընկերը էս պուճուր աղբօր քովն էր, ըսըց.—Թագաւորին ափուց մինէ փախեր է։

—Այ տղա, ինչու փոսը վեզիրին չտուիր, տարիր Թագաւորին տուիր որ հիմա վեզիրը քիզի կը չարչարէ, ըսըց մէկէլ քեռին։

Քեռէստանը ըսին։—Որդի, մեք մեռած չիք. կելս կերթես Թագաւորին մինէ կուզիս քառասուն դաբար (խումբ) տեվե. ամէն դաբար քառասունական, օր կինէ հազար վեց հարիր տեվէ, հօթը տարուայ էալ գինի կը բառնաս Իւլլի ըդ տեվհներուն։ Տղան էկաւ, Թագաւորին ըսըց։ Թագաւոր ըսըց։—Վեզիր, Իւլլի պատրաստ տես։

—Թագաւոր ապրած կենայ, ըսըց աղէն, ըդ Իւլլի վեզիրին Իսկե ոի ըլլի. չըլլի նէ՝ ձիւիսմ կաբրի։

Վեզիրը գընըց, ինք իր Իսկեն պատրաստ տեսաւ, վրու չորերն էալ ծախեց, չինեց։

Տղան քաշեց տէվեհսաանը, ընկաւ ճանփայ. չատ գընըց, քիչ գընըց, գընըց Կանի կուսույա լեառը հասաւ. փլեց բեռները, անդոի հայաւ որ քեռէստանը չատ ուրախացան։

Մինծ քեռին ըսըց.—Աղբրտանք, վեր ոի էրթայ Ֆըլէրուն լեառը։

Ամենը ձէան տուեցին թէ—մեք չենք կրնըր էրթըր։ Պուճուր աղբօրը ըսին՝ ինչո՞ւ դու ձէան չըս իտար։—Ի՞նչ ձէան տամ. մէկ էրթողը ես իմ։

Կերան, խմեցին, պարկան. առաւօտնը քեռի ու եկեն (թոռն) էլան ընկան ճանփայ. չատ գըցին, քիչ գըցին, Ֆիլէրուն լեառը հասան. էրկու սահաթ դէասը փլեցին բեռները. ընկայ (այն տեղէն) գըցին աղբրին վրայ. ջուրը դառոցին, կեօլը դարտըկեցին, գինեստանը լեցոցին հոտ։

Ըդ կեօլին վրայ մինծ չինարի ծառ մի կար. մէջը դարտակ էր, էրկուան էալ մտան էագ ծառին մէջ. սիլայները Իւլլի հազր էրին. հայան օր ճաշուայ չոքին Ֆիլէրուն ճօթը փրթաւ, կուգան. էրկնոց աստղերուն հասպը կայ, Ֆիլէրուն չկայ։ Ջուրը խմին, ընկան, պարկան ու քնան։ Էագ հօթ տարուայ գինի էր, խմողը պայիմիս էղաւ, ընկաւ։ Նահանց մէկ թուխալ մի լըճկը՝ լըճկը կուգայ. հօթ տարի է որ եարալի է, եարան էալ Թարախ է բռնէր. պառեցնող չկայ։ Էագ Ֆիլը չատ խորագէտ՝ իմաստուն էր. տեսաւ օր գինի է, խմողը պայիմիս էղեր է, ինք չմօտեցաւ։—Ա՜խ, մէ մի ըլլէր, եարաս պառեցընէր, ինչ մսուազ ուզէր, կուտայի, ըսըց։

Ավեի Հարապետ, ըս դըուն եարալին՝ ըսը՛ց ու զարկեց. Ֆիլը պայիմիս էղաւ. իրէք սահաթ Թարախը գնըց, խելքը գլօխը էկաւ, նստաւ։

—Որդի՛, ըսբց. ուսուազգ ինչ է, ուզէ, ալ տամ.

—Մուրազս Ֆիլիբուն գլօխը կըլլիմ. արդանիքը քաշիմ. Թագաւորը դազեայի էկէր՝ Ֆիլի արդա կուզէ։

—Որդի՛, անանկ բան կ՚ըսենք որ, հօն տարի Ֆիլիպուն գլօխը լսեր չդար. տեվհիներդ քաշէ, էկուր, բերդի վրայ տանիմ, բառնամ, էսո տեղ էղած՝ մեռած Ֆիլիբուն արդանիքը չմտ կայ. էսոց արդընին դժար կը քաշուին։

Գնբց, բարձաւ տեվհիները, հասաւ Կանի կուսուլա լեառը. վրհեցին հոտի։ Մէկալ օրը բեռցուցին տեվհասանը, դբցին. քեռին մրնբց իրան տունը, տղան՝ դնբց։ Թագաւորին խառնար տուին թէ Ավճի Հարապետ կուդայ։ Վեզիրը չատ մտածոց մէջ մտաւ—ես ճանփեցի որ չդայ. էս ալ վրա էկաւ։

Թագաւորը ըսբց.—վեզի՛ր, տղան տար, էրէ օսկու խազինէն. ինչ դեղիկ չալիկնը՝ Թող չալիկ։ Վեզիր դուռը բացեց, մի օսկի տուեց, հինդ էլ սիլէ գարկեց էրէսին։—«Փօսը ընձի չտուիր տէ, Թագաւորին տուիր, աճա, ինչ բանիր տի բերեմ քու գլօխս»

Էրկու պասամախ վեր էկաւ ազէն, որ Թագաւորին տ՚իմցընէ, ըսբց.—«Սապր պաշի սալամէր տըր.» (Համբերութեան գլուխը յաղողութին)։

Վեզիրը սարայը չինեց. Թագաւորը իրէք հազ գընբց-էկաւ, սարային մէջ Թագդա կը դինէ։—Վեզի՛ր, եախսիս կըլլի Ֆիլ տիօխի սարայը ու իւրէը։

—Թագաւոր սպրած. չատ լաւ կըլլի. մի բան մահանայ կայ։

—Ի՞նչ մահանայ, ըսէ, վեզիր։

—Մահանան ընի է որ զառակ չունիս, ծերացեր իս. Ընդհատանու Թագաւորին աղջիկ մի կայ, տասուերկու տարուայ է. օ բերիս, Աստուած քիզի տղայ մի կուտայ, որ քու աշխարքը պայպանէ, սամա քիզի աղջիկ կըսիմ, հա, իճճի տիօլի . . . ։

—Վեզի՛ր, չմտ հեռուն է. ծովով վեր տ՚էրթայ, ըդի բերէ։

Ավճի Կարապետը տի բերէ։ (Կըսկըծու Հարապետի անուն Կարապետ ըսբց)։

—Ես քիզ տի ճանփիմ, Հարապետ, ըսբց Թագաւոր. էրթա Ընդհատանու Թագաւորին աղջիկը տի բերես։

—Թագաւոր սպրած, սև չէ, ծովով է. ես չեմ կրնար, կուզիս գլօխս պարկ։

—Որդի՛, անկարելի բան է. տի էրթաս։

Տղան վալէն էկաւ տունը. մէարը տեսաւ, ըսբց։—Որդի՛, ես չըսի՞ թէ մ՚էրթիր, մընար, էադ վեզիրը քու գլօխս չատ օյին կը բերէ. դնա կիներ քեռնատանդ քովէ. էնոր որ ճանփայ չհանեցին, կը մնաս հոնի։

Տղան լսելով քեռեստանին քով. մնձծ քեռին ըսաց.—Ե՛տ կը դառնաս, թագաւորին կըսես. «վեզիրին տասուերկու տարուայ աղջիկ մը կայ, ընոր պոյին լման՝ քառասուն հատ աղջիկ կուզիմ. քառասուն երկու հոդու համար իրեք տարուայ ուտելիք՝ վրայ գլխով ամէնը վեզիրի բիսեն տ՛ըլլի. մէկ էալ բեմիզ» ալէկ կեմի մը, օ վեզիրև բիսեն չըլլի, տիլիմ բոզուլիսը կըլլի։

Տղան էկաւ, թագաւորին ըսաց. ինք իր տունը գընաց։ Վեզիր էլաւ, օտք զարկաց աշխարհքը. օլրտաւ օ վարպետ գընայ (կեմի չինող). գընաց, օլրտաւ-օլրտաւ, Նոյ Նահապետու թուը գտաւ, չէ որ էնոր վարպետ էին. կեմի չինած էին, իրանց փեօեն էր, գընաց, տեսաւ, էկաւ թագաւորի քով։ Վարպետը տեսաւ օ, ըսի թագաւորի բան է։—Թագաւոր ապրած՝ ես ալ չինիմ ամա, տախտակը օսկիէն ալ ըլլի, կրնըս նէ չինել տուր. անանկ չինիմ օ, քառասուն երկու մարդ ալ առնէ։

Թագաւորը վեզիրին ըսաց։—Տէ, վեզի՛ր, չուտով կատարէ։

Վեզիրը վարան զողտուկ խազինէն կառնէր, ամա հոն էալ վարա չմընաց. ինչ երթց երթց, չնկաց, պատրաստ տեսաւ, կանչեցին տղին օ էրթայ։ Տղան մտաւ կեմուն մէջ, տեսաւ իրեք տարուան ուտելիք կայ, քառասուն հատ աղջիկ կայ, ամա վեզիրին աղջիկը չկայ. մէկը ըսաց—ես իմ վեզիրին աղջիկը։

—Չէ, դու չես, ես հիմա կը բերիմ վեզիրին աղջիկը։

Տղան խապար տուեց թագաւորին, վեզիրի աղջիկն էալ բերին։

Վեզիր թող պաճալայի լացը։ Տղան ըսաց աղջիկներուն.—կեմիին միչուն չելլաք, ես էրթիմ տուն, մօրս բարև մնայ էնիմ, դուռ։

Դնաց տուն. մէար ու տղայ լացին. մէարը ըսաց։

—Որդի՛, չատ դժար տալա է, մա սը գիրքը, հայիր գրքի վրայ, գնը՛. էտա գիրքը օ չտանիս, չես կրնր էրթիր։ Տղան ըս խախտաց տուաւ, մտաւ կեմին։ Ըսաց—նոր բեմս էկաւ, չալօխ մի լեցուց, մի կրակ ուղեց, 41 կրակ էկաւ։ Խախտան հայտ ու գընաց էլաւ քեռեստաննուն սարային տակ. կեմին հոտ կայնեցուց։—Աղջիկներ, դուք հոս կայնեցէք. ես էրթիմ հոս ու դամ։ Գնաց օ քառասուն քեռին էալ նստուկ էն. էլան էկան, կեմին տեսան. օ պակաս տեղ չունի. տղին ըսին՝ խախտա ուրիշ քովդ, հանէ։

Հանեց։ Մեծ քեռին տեսաւ հայաւ, ըսաց.—Շատ պակասութիւն կայ. էսոր ընկերը մեր խախտան առ օ, էրթա։

Տղան տեսաւ. բարև մնայ էրին, քեռեստանը դարձան. տղան վրցուց կեմին, տուեց անկինը. տասուերկու ամէն բամ ծովու վրայ մնըց. ձէ՛ ձև, ձէ՛ քար, ձէ՛ լեռ. էրկինք ու ծով կար։

Խապար տուեց վեզիրին աղջիկը.—ահա, լեռտանը երեացին։

Տղան հանեց ծոցուն ցիւլպինը, հայաւ լեառւտանը օր քիչ-քիչ առջին կուգայ. հայաւ որ էրկու հատ չինարի ծառ բարս կերևայ. քչեցին, էլան էտ տեղ, ճալաթները կապեցին չինարի ծառին։ Պիրուն էլան դուս, մէկ մէկու աչքը պիտ լուանեն։ Աղջիկները ըսին՝ —Փառք քեզ, Աստուած. ևը տեսաք։ Տղան ըսըց։—Աղջիկներ՝ դուք հոս քառասունը մէկ օր իմ ճանփան կը պէյէք. ահա, խախպաց ձեղի կուտամ, օր չէկայ, ես կը դառնաք, էն քառասուն մարդու քով կելլէք։

Տղան ընկաւ ճանփայ, գընըց. չատ գընըց-քիչ գընըց ο մէ մարդ մի նստեր էր, գետինը կը հայիր։—Բարև քիզի. աղբէար. ինչ մարաֆէքի տէր ես, «ահա գընըց», «ահա էկաւ կըսես ու գետինը կը հայիս։—Ես ինչ մարաֆէք ունիմ, մարաֆէքը Ավճի Հարապետինն է օր Ֆիլ տիշիյէ սարայ է չիններ։—Ավճի Հարապետը ես իմ։ —Դու բարով հազար բարով, ուսկա կուգաս, ուր կերթաս։

—Թագաւորին աղջկան կերթամ։—Ինձիս էլ հետդ չես տանիր։

—Ի՞նչ կըլլի, կուգաս էկու. քու անունդ ինչ է։

—Իմ անուն գետնին լսող (եր տիլիյէն) Կարապետ։

Էտք էլան ընկան ճանփայ, չատ՝ քիչ գընցին, հասան մէկ մարդու, բարև տուին։—Աստուծոյ բարին ըսըց։

—Ի՞նչ մարաֆէքի տէր իս որ էսս լեառւտանուն կը գինէիս, կը դէօրեաս։—Ես ինչ մարաֆէք ունիմ. մարաֆէքը Ավճի Հալապետինն է, որ Ֆիլ տիշիյէ սարայ չիններ։—Էն ես իմ։

—Ջըլլի, որ ինձիս էլ աղբէար էնէիս, հետդ դամ։

—Անունդ ինչ է։—Անունս Կիւրղիճի Գաբրիլ է։

Էսս իրեքը էլան ընկան ճանփայ, չատ քիչ գընցին, բուռս էկան մարդու մի, ο սիւրուն կարծէ ճանփուն վրայ. էրկու ջաղցի քար հագեր է օտներուն, կոլրտի։

—Աղբէար, ինչ մարաֆէքի տէր իս, որ էտ քարերը անցուցածիս հուտդ, կոլրտիս։—Ես ինչ մարաֆէք ունիմ, մարաֆէքը էնոր է որ Ֆիլ տիշիյէ սարայ չիններ։—Էն ես իմ։

—Աղբէար, ինձիս էլ կը տանես հետդ։

—Անունդ ինչ է։—Անունս, Զաւուկ Կիրակոս։

Շատ քիչ գընցին, ջրի մի քնարը հասան. հոս ճէ՛ կէչուս կայ. ճէ՛ ֆիլլեմ. ճէ՛ դայեիս Հարապետ ըսըց. ընկերտանք, նստեցէք, մէ մի ջուրի վեր էրթամ, տեսնք, կրնը՞մ մարդ գընըր։ Մի սահաթ գընըց. տեսաւ ο մէկ մարդ պարկեր է, դէյնէկով մխտեց. արթըցուց։—Բարև քեզ։—Աստուծոյ բարին։

—Դու ինչ մարդ իս, ջուրը սի անցնինք. ճէ՛ ֆիլլկ կայ, ճէ՛ կեմի։

—Ընկերտոցդ կանչէ, դան։ Էկան։ Ըս մարդը մի ատում ըսդին նետեց, մի ատում ջրի ընդին. բերանը տուեց ջրին, խմեց, ցամաքեցոց։—Անցէք, ըսըց, վէսր դիուս։ Անցան։ Ըսըց.—Ինչ մարաֆեքի տէր իս որ էս դուր բաներ կինիս։

—Ես ինչ մարաֆեքի տէր իմ. մարաֆեք էնորնը Ֆիլ տիբիյէ սարայ չինեց։—Ես էն մարդն իմ։

—Զը՛ւլիր ինձիս էալ տանիս։—Անունդ ինչ է։—Անունս կլասնող (հուտրնի) Մարկոս։

Էլան ընկան ճանփայ. Մտխսու լեռուան պէս մի լեռուան տայտնմիս էղան, էս տեղ ձուն նու հավը չատ կուգայ. էլան չուրի եօխուօին կէսը, ընկերտանքը մնացին հոտի։ Ավճի Հարտպետ ձունը ճեղքեց. ճանփայ գտրկեց, էլաւ եօխուօին դլօխը, տեսաւ մի ծերունի մարդ, պոռուն դրեր է բերնին, կը փչէ, նա կը փչէ. երկինք՝ գետին էդոր փչելուն կը թողան. աշխարք բուք ու քամի դառուցեր է։ Ավճի Հարտպետ քանի հեղ պոռաց. ծերունին սաղ է, չլսեց։ Էչնըկով լաւ կը մնթէ։

—Բարև, պապա։ —Աստուծոյ բարին։

Էս ծերունին պօռուն ցրելուն պէս, աշխարք էղաւ արև. տաք, քամին կրտրուաւ. հաւաճ աղկէկ։

—Ի՞նչ մարաֆեքի տէր իս որ էս լեռուան գլօխը նստեր իս...։

—Մարաֆեք Ավճի Հարտպետին է որ Ֆիլ տիբիյէ սարայ չինեց։

—Ընի ես իմ։—Զը՛ւլիր ինձիս էալ հետդ տանիս։

—Անունդ ինչ է.—Անունս ըքարլը (թիփիճի) Թորոս։

Քաջ ու կտրիճ օրտրդ Հարտպետ
Գետնեն ամեն բան լսող Կարապետ,
Կուրծով լեռներ դուրող Գաբրիէլ
Ամենատրագնաս Կիրակոս,
Ծովեր ու գետեր կլանող Մարկոս,
Ցուրտ ու բուք բերող Թորոս։

Էսոք էղան վեց հոգի, դլցին. չատ քիչ գլցին՝ հասան Հնդըստանու թագաւորին քաղաքը. դայֆէ մի նստան. դայֆէնին մի ծերունի մարդ էր, հարցուկ կինէ, ուսկա կուգաք, ուր կերթաք։

—Ձեր թագաւորի աղջիկ մեր թագաւորին ուզելու էք էկեր։

—Դուք էստ թագաւորին օրէնքը ընդոր է, չէք գիտեր. ես ձեզի խրատ կուտամ. կերթաք թագաւորի բեմեր դափուն կը հատնէք. մի բարաճը օսկի սանցալիչէ մի կայ, մի բարաճը արգաթ սանցալիչէ. էտ օսկի սանցալիչէին վրայ նստիք։

Դրցին օգի սանտալիչկին վրայ նստան։ Թաղաւորը հայաց որ աղջիկ ուղղու ևն էկած. ճանփից վերադարձին ո տեղ տայ։ Թաղաւորը ըսաց.—Էդոց մինձը վէր մի է. կանչեցէք, դայ։

Ավեն Հարապետ դնաց, դլօխ տուաց թաղաւորին։—Ըսէ, որդի։

—Թաղաւոր ապրած՝ քու աղջիկդ մեր թաղաւորին տի տաս։

—Առաւօտուն էմլովը ըլլալուն սորա, օրի չտամ, կուտամ. ամա իրէք հատ շարթ ունիմ, օր հանեցիր, առաջօտ առաջ է, օր չհանեցիր՝ վեցիդ էալ դլօխը կը կըլրիմ։

Մէկ ընի է որ, քառասուն պղինձ ունիմ, ամեն պղինձին քանի ուտիճը վար բրինձ կը լցըննամ. ամեն պղինձի քառասուն հատ էալ դոմէչ կը մըթնամ. կափամ, ետկեկ կենիմ. ո կերթաք, բամ՝ քառասուն պղինձն էալ կը լցննամ ասոր տարաւայ դինի. ընի էալ որ խմեցիք, բամ, աղջիկս կուտամ։ Մէկ շարթն էալ ըդի է. դինին օր խմեցիք, քառասուն պղինձն էալ կը լցըննամ ջուր, իրէք օր, իրէք դիշեր կափիմ. հասամն էալ կը տարցըննիմ, էսն ջրով հասամի մէջ էկը կրցաք լօղցուք, աղջիկս կուտամ։

Ավեն Հարապետ ձեռքը ծոցը դրած էկաւ, բնկերտոցը ըսաց։

—Նէրէք, փախէք. թաղաւոր ըսանկ ըսանկ ըսաց.

—Նուարեմ Մարկոս ըսաց.—«Առաւօտ օղտմած է, պղինձնին լինձի հատաւ։ Առաւօտը կանչեցին ո ուտեն. ետրեհ բամաշա էլած լին, էկր չկրցան ուտիր նը, դլօխնին պիտի դինին։

Էսն Նուարեմին առավրատաւ, ըսաց—ասլի, պրին հայիմ. էտա ամեն պղինձնին մէ ձեռք մը նետաց, սրբեց, նետաց հունտա մինակ։

Թաղաւոր ետրուտաւ—լցցուէք, ըսաց, առաջ տարաւայ դինին պղինձնին։ Դինին էլ խմեց, կլօթակ պղինձնին բերնիլոտ։ Թաղաւոր ետրուտաւ, ջուրը տարցոյ. էկան ո վէրն էալ օգնան։ Թիւրեզ Թուրս պօռաւն վէրց. աշխատ եղաւ ցաւրա ու բիփի պղինձնին տուաց կասկց, դցին, լօգցան։

Ավեն Հարապետ ըսաց.—մեք անօթի էր. հայց տուք, ուտինք։

Թաղաւոր կանչեց Ավեն Հարապետին, ըսաց։—Ինձի մարդ մը կայ, քառասուն ուտիր հետաւ ճանփան ջուր մը կայ. էտ մարդը մեկ օրը կերթայ, կը բերէ։ Ջինէ մեկը երթայ իմ էլչիի հետ ո ջուր բերեց, էկաւ, աղջիկս կուտամ, ուշ էկաւ՝ դլօխը կը կըլրիմ։ Ամեն կինէ ձեռքը ծոցը դրեց, էկաւ—... ։ Չափուկ Կիրակոս ըսաց.—«Աղրըմտանք, հիչ չըլլա նը՝ ջաղցին մեկ բեռ քարը ուտայ ճամէն կը հանիմ»։

Առաւօտ բնկան ճանփայ, սահաթ մը առաջ գցին։

Էլչին հայաւ ո էսօր հետ չպտի կրնը երթը. ըսաց—Ես աղրեմ իմ. երթամ, գինի բերիմ, պղրըի վրայ բեյց էնիք։

Տղան մրնըց, աղջիկ դընըց. դինի, ըրաղ առաւ, ելաւ։

Էլան դցին, պայտաղաճի տղերքի մի բուռս էկան, նստան, պատրաստեցին դինի խմիլը։ Տղին դինին չատ դէօր էկաւ, ճերմի տուեց, խմեց, ճերմի տուեց, խմեց, խել թվաւ, ընկաւ։ Աղջիկ նէ, էկաւ, դընըց որ չուրը լացընէ, դայ։ Դատ սրտինէչէն կատաղտին մաբաճէրին. ախանջը տուեց դևտին—ատ՝ն, մեր տղան պարկաւ, քնաւ, էնոցը դընըց, ատ՝ն չուրը լեցոց, դարձաւ. մեր տղան հատի քնուվ է։

Դանք Կիւրդիճի Գաբրիէլին, նեանց կիւրզը, դընըց տղուն քով դարկեց. տղան արթըցաւ օր թադաւորի հօշին հոտի չէ. լեցոցեր է, կուզայ. ինք չաղջի քարերը հաննց օտացը. դընըց՝ չուրը լեցոց, էկաւ, քարերը հագաւ, էրկու ասլամաք էալ բեզ դընըց, չուրը տուեց թադաւորին, թադաւորը հայաւ օ իրաւ՝ էն չուրն է։

—Տուածս տուած է. ըսըց, գնէք, հանդիստ էղէք, առաւօտը կուտամ։

Իրիկունը էկան, իրանց մէջ՝ «աչքդ լոս, աչքդ լոս», էրին։ Առաւօտը Ավճի Հարապետի դընըց, թադաւորին գլօխ տուեց։

—Մեղ ճանփու դիր։

Թադաւորը ըսըց.—Հայտէ, դընչէք, ես դիր, դուք դիր, ես իրէք տարուայ հետու ճանփայ աղջիկ չիմ խտար. դընչէք բանկրնիդ։

Ավճին ձեռքը ծոցը դրըց.—Էլէք էրթք, ըսըց։

Չիք էրթը ամէ հաղով, ըսըց Թիփիճի Թորոս. պտուն առաւ, վչնց. էրկինք, գետին պաղլայէց բիփի ընկը. նստըճի Մարկոս ընկաւ քաղքին մէջ. մարդ, տեղ, դոմէչ, ձի, ինչ օր բուռս դար, կը կլար, ու կոլրաէր, սով ցգեց քաղքի մէջ. էդ մարդուն ճէ՛ քուր կը բանէր, ճէ՛ բուճեճնի, մեռնիլ էալ չի կար. վէր մի ծառին ձեռք ցգէր, կը քաչէր էտուն, նեատ դէանը։ Էնոր մեռնիլը՝ կէածակը բուռս դար նէ, գինիլու ըլլէր, կը պանէր. թէ չէ, մեռնիլ չկայ։

Թիփիճին պտուն վչնց, էնանկ ցուրտ էրաւ, էնանկ ցուրտ, որ սառայի մեռմեռ քարերը բիւլլի ճաթեցաւ ցրտուն։ Քաղքին մարդը թադաւորին տալանի կայնաւ թէ—«աղջիկդ ու տաս»։ Թադաւորը ըսըց.—առաւօտը թող գան, տանին, էրթին։

Առաւօտը աղջիկը ձինը հեծոցին, մընըք էրթք բարև ըրին. ընկան ճանփայ։ Շատ-քիչ գընցին, հասան Թիփիճու տեղը, մընըք՝ էրթք բարև ըրին, դցին։ Էադ ինք իրան ըսըց, իմ հէարս էաս Թիփճուբին կը բանէր, ես էալ կը բանիմ։

Գընցին, հասան չուրը, նուտըճին բնբանը տուեց, ցամքեցոց։ Անցան էտք. մընա՝ էրթա բարի, ըթին։ Նուտըճին էալ հոտի մընըց։

Էտք գընցին, հասան չոպճի սիւռույի տեղը, հինգ հատ օխչար կարծուի ճանփուն վրայ, մէկալ ամենքը լեռուն է էլած, գեալն կերկր։

Ավճի Հարապետ ըսըց չոպցիճ.—Աղբէօր, չատ զարար տուիմ ես քիզի։ Ջավուշ Կիրակոս ըսըց.—մէկ տասցս ջաղցի քարը կը հանիմ, գէալերը կը պանիմ, սիւռուն էալ կը թուխիմ էտ էալ հատ կեցաւ։ Մնըք, երթք բարի ըրին, հասան Կիւրցիճին լեռան վրայ. էնոր էալ մնըք բարով ըրին, դըցին. Երտինէչէնի տեղը հասան, ըդի էալ հատ մընըց։ Մընըց աղջիկն ու տղէն։ Աղջիկը տաճա չէր խօսիր տղայի հետ. Թուղթը հայաւ, ըսըց.—Թագաւորն ու վեզիր քու գլօխ օյին ուի խաղան. դու ինձիս Թագաւորին համար կը տանիս Թէ քիզի համար։—Թագաւորին համար։—Ես Թագաւորին չիմ առնիր, քիզի կառնիմ. ամա վեզիրը քիզի կէմի ուի ղրկէ որ մընըս մէջը, կէմին զեհէրլի (թունաւոր) է, չըլլի օր մընըս մէջը, ես էալ, դուն էալ կը մեռնիք, ես լմաց էղայ (լնձ յայտնուեցաւ), ինչ փորձանք է բերէր քու գլօխ, վեզիրն է բերէր։

Տուեց տղային չեղիկ մի ու ֆօլոզ մի։ Ֆօլոզը հազնիր, մարդու էալ չերևար, չեղիկն էալ դէր ղրկէր, կերթր, կը պանէր։ Գըցին, հասան կէմին օ վրցոցած՝ ես օլըված՝ կերթին քաղաք։ Տղան պոռաց. վեզիրի աղջիկ նէ, ցիրեկն ի վեր էլաւ, հայաւ, Ավճի Հարապետ ու Թագաւորի աղջիկ էկան. կէմին ես դաւոցին, հեծան կէմին. չատ ուրախութին էղաւ միջուանը, կէմին քչեցին անկինը, հավեն աղկէկ էր։ Ավճին ըսըց.—օֆ, հոգիս աճեախ բռահաթաւ։

—Ղայֆէ մի բերէք ըսըց. էան ըսըց.—ես տանիմ, էան ըսըց.—ես տանիմ. 42 Ֆիճճան դայֆէ բերին մէկի տեղ։

Գըցին, մօտեցան քաղքին. վեզիրն է, տունէն էկը՝ սարայը կերթըր, գէալի ծովը հայաւ որ մէկ կէմի կուգայ. փառըլ, փառըլ, փառլամիշ կըլլի. փուսուլաճ առաւ, այնչը դրաւ որ իրեն չինած կէմին է. պաշայէց դողալը, խաւբաճուն 100 օսկի տուեց. գիր գրեց, ըսըց, «Ավճի Հարապետ ու Թագաւորի աղջիկ էան կէմու միջուն էլլէն, էաս կէմին Թող նատին», խաւբաճին Թուղթը էրկնցոց օր տայ, աղջիկը առաւ, ճղեց, նետեց ծովը։

Էլան քնարը, Թագաւորը չատ ուրախութեան մէջ մընըց, ըսըց.—Մըզիկաճ փչուին. տավուլպազնին զարկուին. Թագաւորի աղջիկը առէք, գըցէք համամը, լոգցուցէք օր ա'առնիմ։

Թագաւորի աղջիկը ըսըց տղին.—Ֆօլոզդ զարկ գլօխդ, չեղիկդ զարկ մէջդ։ Էլան, գցին համամը, լոգցան. մէկ տեղ գըցին սարայը։

Թագաւորը գընըց աղջկայ քովը—Բարև՝, Թագաւորի աղջիկ։

—Աստուծոյ բարին։

—Էրէսդ բաց, մէ մի տեսնամ,

—Գնա վլացուիր, էկուր, էրեսս կը բանամ, անտա տեսա։

Թագաւորին իլաճը կըլրուաւ, իպրուղը առաւ, գընըց։

Ավճի Հարապետ իրան չեղիկին ըսըց.—գընըս, Թագաւորին

պօխը կըլլբնա, ցդես օտաց ճանփան։ Չելիկը գընըց։ Ավճին մտածոցի մէջ մընըց թէ-էաս խօսքով կըլա, էրթամ տեսնամ, իրաւ է։

Գնըց, ինչ տեսնէ-պօխը կըլլբմուն է, արին լցմուն։ Վեզիր Թագաւորին կնքահայը սի բլա. առաւօտ նէ, գնըց օր Թագաւորն ու աղջիկ առնէ, էրթայ պսակէ։ Ավճին վեզիրի պօխն կըլլբեց, նետեց Թագաւորի վրայ։ Հազաւ Թագաւորի չորերը Ավճի Հարսպետ, նշան էալ առաւ վրան, էղաւ Թագաւոր, կեմու միջուն աղջիկները բերեց, քեռեստանցնուն հետ կարգեց, պսակեց վիճակով։ Էնոք հասան իրանց մուրազին, դարձան Ավճի Հարսպետին հարսնիքը բըռնեցին, պսակեցին, թախտին վրայ նստրցուցին, որ խաղաղութեն էրաւ աշխարհի մէջ։

ԻԴ

ԲԺԻՇԿ ԼՈՒՄԱՆ

(Ջարասճագի բարբառով *)

Ատանու էրկիրը տանը հինգ տարուայ տղայ մի կըլա. ամեն օր կերթայ ավը. մէկ օր կառնէ լաւ արդև մի, իլաճը կը կըլբի. քար մի կեբևայ. գընըց հասաւ քարը. տեսաւ օ մաղարա մի է, մտաւ մաղարան, տեսաւ օ մի աղկէկ օձ, մի մարդ նստուկ. գօտուն ի վէար օձ, վեր մարդ, գլխը Թագաւորի գլխուն. փիւսկիւլը հալ խաչ. մօրուքն էալ ճերմակ։

Տղան Թրչէր էր, ջուրը առնի վէար կը կաթէր, կրակը վառեց, վրուն լաթերը հանեց, քըմեց, բերեց չորցոց. էաղ մօրօք մարդը՝ աջուկ ձեռուքը զարկեց տղի կռնըկին օրթալախ տեղը, նշան էղաւ. տղան ինք իր մտօքը ըսըց՝ կրակը բարկ է, ավը ֆեպալ ըրըց, մի քիչ կըլբեց, իրան առաւ. մնացածը՝ էլկու մասը վերոց, կայնի չորս հատ օձեր. քաչէքաչ առին, գընցին, մտան ծակը։

*) Առած է Միհաս-բարար։

Մերուշին ըսաց.—Տղաս, կերակուրը տուողը՝ Ջուր էալ տի տայ։ Տիկը փչաց, փապուճին կապկց, նետուց չալակը, ընկաւ ճանփայ, դէնըց հասաւ հոլուն պլօխը. լացաց, չալկեց էկաւ. քարը փորեց, ջուրը լցաց։ Էկան ներսէն հինդ տախիրալ (կոյտ խաւ) օձ, խմեցին, պրցին։

Ըսաց ծերուհին,—տղաս, ես ծարաւ պասպակայ. լինձի ինչմ՛ալ տի տաս։

Բերաց, չամրէ մէկ չանախ մի չինաց. տուաց, ծերուհին խմեց։ Երեք օր, երեք գիշեր արդև չկրցաւ. տղան մաղարհն չկրցաւ հեռը։

Մերուհին ըսաց.—Մօտիկ տեղ չկա կրնըը ջուր մի հաներ լինձի։ Վեց օր մաղարի ո՛ւրդին աշխատեցաւ. ծակեց, ջուրը հանեց մաղարին մէջ. բերաց հավուզը. ճերաքը մոբթեց, կլակը վառեց, զարկեց շիլը, ըսաց.—Նաս քու քերակուրդ է. էփանը՝ կեր, ես տ՛երթամ, իդամ։

—Ձեմ աւտար օ գաս, բուճին (դրաւ) մի տուր։

Տղան տուաց ապան ու դնըց, օլրաւ մինչև կէս օր. չորս հատ, առաւ, եկաւ ծերուհին քով, կերան, խմեցին։ Մատը վերաց կինէ, էնոք էկան. ճաղլեց էնոց։

—Կեցիր բարով, ըսաց տղան, տ՛երթամ։

Մերուհին դընըց, ներսէն քար մի բերեց, տուաց տղին. ըսաց.—տղա. չատնես մարդու տաս. զանն լինես ճնճղուն հաւկիթ է. անդին քար է ըդիկայ. ըդոր մարացնիքը՝ գիշերը կը վառի ճրագի տեղ, ցորեկը կասլատ կտաւի մէջ կը դնես։

Մերուհին տղին թևէն բռնեց, նատեցոց, ըսաց.—Որդիս, դու էղար իմ զաւակը, դուն լինձիս կերակրեցիր, լինձի ջուր հանեցիր, միաքդ պէյէ, օ մարդու առաջ չպտի. լողնաս, մարդ կռնակդ չպտի տեսնայ։

Տղան ընկաւ ճանփայ, էկաւ լինք իր տունը. քարը ծախեց Պրէնկիստան. իրան պատրաքը տուաց, տունը չինաց. քառասուն հատ օխչար առաւ. չըտկուաւ դէպի ծերուհին.—դնըց, համբուրեց ձեռաքը. օխչարները մոբթեց, ինչ օ օձ էար, կերոց, իրան էալ դառ մի մոբթեց, ճեպաղ բերաց, տարաւ դրեց առջին։

Մերուհին էլաւ, քար մի բերեց, դրեց տղի առջին։

—Ի՛նչ մարդ օ տեսնայ քեզ, իմ անունս չտաս, ես օձերուն Քադաւորն իմ. անունս Շահ Մարար է։

Տղան ձեռաքը, օտքը համբուրեց, ընկաւ ճանփայ։

Շահ Մարար մատը վերաց, էկան չորս հատ օձ. երկուքը առանջ կերթային, երկուքը էտևը. ճանփու կը դնէին տղին։

Տղան ըսաց.—չնորհակալ իմ Օլրաւան, տղուն օտքը լըզեցին։

Առանու թագաւորը չաս դժար հիւրընդցաւ. աշխարքը ճեխիմ չմընաց, բերին ցաւուն զօրութեան՝ մէկ մի աջուկ փիճին՝ մէկ մի չղ լախ (ձախ) փիճին վրան մինծ եաւա էլաւ օ մէկ մէկ օխայ կաբ։ Նադ եաւան իրան միաբ կուտէր, օր աւուր վրայ կը չուխուրնար, (խօսանայ) Ֆրէնկխաանու ճեխիմ մի կար հոսի, ըսբց.—Էրկու հաւ մորթեցէք։

Էրկու հաւ մորթեցին, բիւմբիւլը (փետուրը) վնտեցին, ըսրին, դրին եաւին վրայ. մի մարդ չպոխ խմելու չափ թագաւորը հանդչաւ. ցաւը զօր ըրբց կիճէ, քակեցին օր, հաւը կերած է եաւան։

Օրը քառասուն հաւ կը կտրէին, հաւերը կուտէր ու թագաւորէ մանն կալ կուտէր։

Նադ թագաւորին անունն էր Կիւն օ Առանու հիմը ցգեց, իրան անբռնով իրան էրկիրը Կաւիկու կրսաւ։

Ճեխիմճեռու մէջ մի եաճուտի կար. էնոր սէս չէր դրնուէր աշխարքը. չատ հասկընար էր։ Նաս եաճուտին դընբց թագաւորին վրայ, տեսաւ եաւան։

Թագաւորը ըսբց.—Ճեխիմ պաշի, իմ եաւաս տի սաղցընիս թէ չէ։

—Իմ ըսած դէղն օ ըլլի, մի սահաթուայ կը հանիմ օտաց վրայ, թագաւոր ապրած, իրաւունք տուր ինձի իրիք օր, թագաւորը վրու նչանը տուաց ճեխիմին։

—Իրիք օր չէ, ամիս մի քիչի ժամանակ, թէի ինձիս սաղցուբ։

Դէպալ կանչել տուաց ճեխիմը, ճեբեճե լսեցին օ ճեխիմը իրիք օր իրաւունք է տուած։ Կանչաց ժողովուրդին.—Էդուկի, որձի մարդ չպոտի մնայ. տի դայ։

Ճեխիմ պաշին մաս թէյնա օդա մի, ռեմ նետաց, հասկըցաւ, գալտղը չպղցաց, կռնակը հայաւ ու սէտպէց. ֆուլլին հայաւ ու սէտպէց։ Մարդ ղրկաց, էան տղան գտան իրան տունը. Զրպղցաց օ. Շահ Մարաբին մեօճիւրը (կնիք) կռնակն է. ընի մաղօտ էր, տպան էալ էնանկ է։

Թագաւորին իմցուցին.—Ավճի Փուրթօ մի կայ, էան տ'էրթայ Շահ Մուրաբին տի բերէ, չէ նէ, կը մեռնի։

—Կանչեցէք, դմայ, Ավճի Փուրթոյին։

Ավճի Փորթոն էկաւ. գլօխ տուաց թագաւորին։

—Որդի, ըսբց թագաւորը, հոգիս խալբսէ։

—Իլանը չկայ, վէվ կրնը հրթիր, օձերը ի գիս կը խրթնեն։

Հերսոտաւ Ճեխիմ պաշին, բերաց ավճի Փուրթոյին կապեց սէօնը (սիւնը). զապալ թել մէլ ըրբց. օր չը կըշրի. բերաց, կապեց ճակատը. պաշլայաց աշուղ պուրղուսու տալը։

Ավճի Փուրթոյին մի ձէանը էրկինքը էլաւ. մի ձէանը գետնի ևօթը դաթը էջաւ։ Հեմէլ եաղլաքմիշ ըրըց, օլըրեց։ Սարսափելի կը պոռար, հոգին կը նուադքէր։ Կրյրեցին ակընճվընին, աղ ու բաճ (պիպէր) լեցոյին տեղը։ Օրը տրեմ մի միս կը փրձընէին Փուրթոյէնշատ չարչարանք տուին։ Էլաւ Ավճի Փորթոն հոգու կսկիծուն շատխանաճ դրըց փեռը, դընըց դէպի Շահ Մարար թագաւորին։ Աստուծոյ ճեօֆմեքովը մաղարին օ մօտեցաւ՝ տասը հատ ճերաճ գարկեց, քաչեց, նետեց ներս, դլօխ տուեց թագաւորին։

Թագաւորը էան սահաթը մոքէն անցոց. ըսըց.—Ֆեզ օ չչարչարէին՝ ես Աստուծոյ տուած քեզ զաւակ իմ ըսեր, ընոր համար ուի գամ. վախտս տարաժամ է։ Պարկան, էլան ընկան ճանփա, տաւաօտնու դրցին։ Տղան ընկաւ առջին, թագաւորը յետին, կերթային։

Էադ էրկիրը ինչ դեի օձ կար, պիքուն էլան, ֆիւմեով (խաւ խաւ իրարու վերայ դիզուած) էին չարուան, թագաւորը ձեռօք ըրըց. պիքուն էալ ետ դարձան։ Ըսըց օձերուն.—Ֆանի օր իմ ճանփած հետիչս կուգայ ձիզինէ. տեղաննուդ մի խախտըվիք. մի տարուն uorա օր իմ պարգևս չեկաւ նը, էան էալ իմ դիտցած բանն է։

Էլան ընկան ճանփան, էկան, Ջաթ ճանփան հասան։

—Նաւրուզ լեաւան էրթք. Փուրթո։

Հասան Նաւրուզ լեաւը, ծաղկնուն մէջ մի սահաթ մընըց լեաւը, անուշ անուշ ծաղկընուն հոտը էկաւ։

Թագաւորը զգկաւ, ծաղկէն կրյրեց, ճաւրուզին մի ծաղիկ տուեց Փուրթոյին։—Կըլա, մի ծամեր, Փուրթո։ Ջորս նրճէզ ծաղիկ էալ տուեց Փուրթոյին։—Արդանեդդ չպտէ գինես ծաղիկին. տի կլաս։ Առաւ հինդ fոf պլասան ծաղիկ, օ էնոր հոտուն պէս աշխարքը չգանուիր։ Ըսըց Փուրթոյին։

—Էս պլասան ծաղիկնին կը լընըս ճեվգին մէջ, կևփես, իրևք եսի կուգայ, կը խմես անօթի փորուն. էադ օ խմեցիր անօթի փորուն նը, ճեր մէ ծաղկի, խոտի քոլ էրթանը, քեզի հետ կը գրուցին թէ—ես էս ցաւին, եարային դեղ խմ։

Ծաղկընուն անցան, դըցին. նստան քարի մի տակ։ Շահ Մարարն ըսըց.—Փուրթօ, ըս քարին վրու քարաքոսն էալ տի առնիս, պլասան ծաղկին հետ տի իրար խառնիս, խմիս։ Ֆարին ծուծը առ ծեծէ, մերդի հետ էփէ. խմէ. էան վեռ օ խմէ՝ մէջքը ցաւի նէ, կը ժրացընէ։

Գըցին, գիշերը Փուրթոյին տունը հասան, էփեցին պլասան ծաղկին հետ քարաքոսը. ու քարին ծուծը ճաւրվիզ ծաղիկն 1) խմեց անօթի փորուն։

1.) Երկու կանգուն բարձր բույի է. փայտը մոխրագոյն է, սպիտակ ծաղիկ ունի։

—Դէ, ըսըց, սահաթ մի պարկէր։

Պարկաւ, քնացաւ, էլաւ նստաւ։ Ըսըց Թագաւորը։

—Փուրթո՛։ Փուրթոն էրեսնի վեր հայաւ։

—Ի՞նչ ուհսար, բան մի ստացար, ես ինչո՞ւ դեղ իմ։

—Թագաւոր ապրած, չորս ծուծ ունիս գլխուդ մէջ, ըսդիկնը տասնը՝ աղու է. աման զաման չտար, կը վերջանայ. չոլախ Թարաւինը էան լմանը. էրկու մէջ տեղինը տասնը՝ կը սաղնայ։

Փուրթոն խմէր էր ծաղիկը, վրան խմաստութին էկեր էր։

—Փուրթո՛, ըսըց Շահմարար, ինձիս եօթ տարուայ կարմիր գինի կը խմցնիս անօթի փորուն, լաւ կշտով մի կը խմիմ կուշտ, ես ու պարկայ, ձեռաքս կը կապես, դանակդ սուր կինիս, ինձիս կը մորթիս, գլօխս կառնիս, կը դնես դէն. մարմինս էալ հող ու գերեզման կինիս, [1]) օձերուն էալ Թագաւորական բայիկ կը կապես. ու էնոք գիտնան թէ ես սաղ իմ. արմադան չերթայ նէ, իմաց կըլլին, աշխարքը կանցընին։

Խմեց եօթ տարուայ գինին, գլխուն խելքը գընըց. բերեց, ձեռաքը կապեց. դանակը սուր ըրըց, վրան դրեց, [2]) բերեց գլօխը ճղաքեց։

Տանուդին էկաւ, հա՛, Փուրթո՛, հաղր է, էփերէս.—Չիմ էփեր։

—Նիւէ տէ, մու էկոյ։

Փուրթոն գլօխը ճղաքեց ու գինու նիթը քաշեր, գըցեր մէջ տեղի ծուծին խառնուէր է, բերեց էփեց, եօթնէն մէ մի կայնեցոց, լցեց սիլտակ չուչի մի մէջ։ Մէկէալ աղուն էալ էփեց, լցեց իրեք չուչի մէջ։

Փուրթոն է, գընըց Թագաւորին քով ու, տանուտին նստեր է վերդին, բերեց էյոց տանուտուն առաջ։

Տանուտին էալ էան ծաղկընուն կերեր էր, իրեք չուչին էալ հոտ առաւ. ամա գինու նիթը ու գըցեր՝ խառնուեր էր ծուծին, չճանչցաւ, մի Ֆիճիան էրկնցոց Թագաւորին.—խմէ՛, ըսըց։

Թագաւորը ըսըց.—կէսը դո՛ւ խմէ։

Տանուտին առաւ ու խմէ կէսը, փորը չերթածտան պատաւ, էրկու ըախա էղաւ, ձէնոտաւ թիւֆէնկի պէս։

Թագաւորը հոտ զարմանք մընըց, ըսըց.—էմս էր քու հեֆիմութինդ, հեֆիմ պաշի։ Տանուտին սատկաւ։

Ավճի Փուրթոն մէկալ շուշեն բերըց, ինք խմեց, Թագաւորին էալ տուեց, սաղցաւ, էլաւ վեր։

1.) Շատ տեղեր տեսած եմ օձն սպանելէն յետոյ անպատճառ պիտի հարեն, երէ դուրսը մնայ, աստղերն ամբողջովին կը համարէ, կատաղայ։

2.) Շանմարաին գերեզմանը նիմա ես կայ, կասեն։

Ալեն Փուլման էդաւ հնոյ նիէիմ պաշի, ուր օ դրնդը, «Լոխմաճ նիէիմ», կըսէին։

—Հէիմ պաշի՛, մուրազդ ուղէ, ըսդ թաղաւորը։

Շահմարարին գօտուն ի վեր կըչքէր՝ առէր էր Փուլման. դընդց բերդ, թագաւորին ապղոցը։

Թագաւորը տեսաւ, վարմանք մընդց։—Դու ինդուր բերէր էս։

—Լսին օ Շահմարարին մորթէր իմ, մաղի պէս իրար վրայ պարկըմուն է օձերը. վերց օր օ բայիճ չերթայ, երկիրդ կանցընին։

Օձերուն բայիճը նիկեր թողնցին։ Լոխմաճ նիէիմ որ ըսդց, չտարան։—նիւ տեղը չունք դիտէր, նիւ կը վախէք, ըսին։

Տաս օր մընդց, չկրցան մորդ դընդային օ տանէր։

Նոս քաղքի միջուն էդած օձերուն՝ օձ մի ճաղորուէր՝ դըսկր էնոց մէջ ըսեր էր. «Ձեր թագաւորը մորթեցնին»։

Մաղ պարկըմուն էր, օձերը քանկաւուն, էտ քաղաքի մարդիկը խեղդեցին, պանեցին, քաղաքը [2] անցուցին։

Խապար տուին թագաւորին.— «Օձերը սիրական քաղաքդ անցուցին»։ Մալ չմընդց, կանչեց նիէիմ պաշին.—դըմոր չարէն։

Հէիմ պաշին լունք բարձաւ քառասուն ըհռ նիկերը. անդին քարէ բեզպիյ մը ունէք Շահմարար, առաւ իրան վրան։ Օձերը տեսան բեզպիյ կայ, ըսին.—Շահմարարն է, թափուան, ընկան տղին հետ, դըսկին, էլան մաղարաճ։

Տղան օ տեսան, ըսին,—ըսի մեր թագաւորն է։

Լոխմաճ նիէիմ տեսաւ օ, օձերը քաղքի մարդոցը խեղդած, նիկերնին կերած լին։

Դատաստան ըսդց. էտ տեսա ըսող օձը բանեցին, խեղդեցին պանեցին։ Հէիմ պաշին իրենք օր հոն կեցաւ, երթըդու էդաւ, ըսդց օձերուն,—քանի օր ձիզի նետիյ կուդայ, տեղաննուդ մի թնդաք։

Հէիմ պաշին քանի օ սաղ էր, նիկերը կը ճամփէր, հետս էալ ժողովուրդը կերակից կերակիր կը ճանփէր։

Հէիմ պաշին անդրաւ. էդաւ Լոխմաճ նիէիմ. մարդ օ մեռնիր, կերթր կը սաղցընէր. էտ չիչէն պէյեր էր. Լօթը տալ մարդ չմեռաւ։

Մի կնիկ ամէն օր կերթր, Լոխմաճ նիէիմին լաթերը կը վրանար, աւուր մեկը դըսկր էր վրացք. իրան տղան օ աղկէկ ու սիրուն էր, էկաւ մորը քով, ձեռնիը տուաց, մորը նետէն բանկին առաւ, դընդց։

Լոխմաճ նիէիմին կնիկը էտ օ տեսաւ. հարցուց։—Նդի վեր նէ օ բան չիօսաց, բանկին առաւ դընդց։

2.) Այժմ Իրան կէչուրէճ կասուի այս վայրին. որ գիտել մէ։

—Ի՞նչ կըլլի, ճեհիմ պաշիին խնդիրք կինիմ օ, իմ տղան աչկերա առնէ քովը՝ լալ է։

Հեհիմն օր տունը էկաւ, իրան կնիկը գրուցեց։

—Մեր գրացինը օ միղի վրացք կինէ, ընօր տղայ մի կայ. քովդ աչկերա առնես, ճամի լալ է, ճամի սադր։

Կնիկը գընդց, տղան առաւ էկաւ, տղան վարպետին ձեռքը պադեց. մէաբը թողեց գընդց։

Տղան մի ամիս դադար (չափ) մընդց. մի ամսուն էտև Լոխման ճեհիմ ըսըց իրան կնկան.—Կնիկ, էաս տղան ճէ սադր է, ճէ լալ. էտանիկ կը լմանի։

Լոխման իրան այտին էր, իմաստուն էր. գիտցաւ օ լալ չէ, ըսըց.—հզիդեմ տամ տղին օ, քոխս չկինայ։

Բերեց, բասը կարմրցոց կրակին մէջ, ձղեց գլխուն վրայ. տղան պաշլայեց լացը—ա ա ա կինէ. լեզուն չդարձներ։

Կնիկը ըսըց.—Մի չարչըրեր. լալ է։

—Իլլահի լեզու ունի բի ունի, չան տղուքին կինէ։

Բերեց, բեպապին չիչը նետեց կրակը, կարմըրաւ, զարկեց ըսդի ականջին ընդի ականջը, ալա լեզուն չէր դարձներ։ Կնիկը ըսըց.—խեղճ տղին ինչա՜ հզիդեր կինիա։

—Կնիկ, լեզու ունի ետր ունի։ Ականջը ու բասին եարաճ իրեք աւուր մէջ սաղցոց, բերեց կապեց աչօնը, բելփեքիով օրը հինգ տեմ միս կօլըրեր, կը փրցընէր. ալա ա ա ա կինէր։ Կնիկը ըսըց.—խեղճ տղան մի չարչարեր։

—Կնիկ, իլլահի բի լեզու ունի ետր, ունի։

Շատ չարչարանք տուեց տղին, լեզուն չկրցաւ դարձընէր. ճեր ձեր որ ղրկէր, գործ կը կատարէր, կը դառնար. Լոխման կուզէր օ, տղան իրան քով բան չսորվի։

Ետ֊ը տարի տղան մնըց Լոխմանի քով։

Մի գեճկին ճեհիճին մէկը, դիչեր-ցորեկ գլօխը կը ցաւէր. իրեք ամիս հեռու ճանփայ էր, Լոխման ճեհիմին անունը լսեց, հարցոց, էկաւ գտաւ. Լոխման հարցոց.—Ի՞նչ է ցաւդ։

—Դիչեր-ցորեկ գլխուս ցաւը չկրցրեր։

Դրուվընին կղպեց, առաւ էջաւ դէօրդին (բակը), դուռը կղպեց, ճեհիճին շերպեթ մի տուեց, մարդը մեռաւ. բերեց մարդու գլխու թեփին դանակով խոլոփիկ (կլոր, փերկել) կըչրեց, հանեց, տեսաւ գլխուն մէջ ուղի ճունէ ճանգլոս (մաղիլներով) մի ճաճաւար. ճեր ինդուր ըրըց՝ քանը չորս սահաթ աշխատաւ, չկրցաւ բուներ էր օ, գլխուն միջուն հանէր, բերըց խսդաճները, նետեց օ քաչէ, թոփուաւ, էջաւ վէար. բերփեքիով կը սղմէր նը՝ չէր կրնըր բուներ, կիճէ

կէջնար վէտր, ֆերփելթուն նետուց, մատան առաւ, իրիք հէղ նետուց, չկրցաւ բռնէր էր. էարինէ քրտինքի մէջ մընըց։

Լոխման էտս ղոխ ռեհիմութին կինէր, էտանկ բանի ըռատս չէր էկեր։ վէրևը դուռ կայ, տղան գողտուկ կը հայի, չհամբերեց.— վաթպէտ, մատան կրակը նետէ, պռատց, Թող կարմրի, զինելու ֆիմի կը թոփուի, կը քաշես, կը հանես։

Նետուց կրակը օ, կարմրի. քրտինքը էջաւ թոփուղը, չպողը լեցուց, դեօրդին պաօլայեց վօլթա զինելը։

—Կնիկ, դիմա կըսէիր լալ է. ինդուր էդաւ, պռատց։

Տղան վերի դռնով փախաւ, գընըց իրան տունը։

Տղան հայաւ, սանը իրիք հատ դեռեռեն գալմա պղինձ ունէին. հատը չարեկ (1/2 խալվար) մի կառնէր. տկու պղինձը կաթ լցեց. մրու պղինձը գինի, օրթըլըխի պղինձը չոր Թողեց, մատաւ մէջը, նստաւ էան Թող նստի։

Լոխման սաղցաց, ռեհիմը հանելու դրըց. էլաւ վերևը։

—Կնիկ, չռաղը ուր գընըց։—Ռու քով էր, ես ջուրը գրցի։

Էլաւ Լոխման ռեհիմ ըսոր-ընոր փառա տուեց.—վեվ օ չռաղ գննայ, ընոր ռեհիմութինս կը սորվեցընեմ։

Աչխարք օլրտան, չկրցան գտեր էին։ Ֆառսուն ֆեսի ձի մը առաւ. ինք իր տունը կուգային, կը սաղցընէր. հեծաւ քառսուն ֆեսի ձինը. բոլոր աչխարքը օլրտաւ, տղան չկրցաւ դուռ էր։

Ֆառսուն տարուայ ցօրա էկաւ տունը։

Իրան գրած Թուղթ ունէր, Շահմարար գրած։ Բիմ նետուց, տեսաւ օ, Կարմիր ծովուն՝ Ձերմակ ծովուն՝ մի եաթաղի նստելու տեղ կայ չոր, տղան հոն նստեր է։

Խայխաներ սէտալեց. կեմիատաններուն փառա տուեց։

—Գրցէք, ըդ տղան Կարմիր, Ձերմակ ծովուն օրթըլըխ ատան նստեր է. առէք, էկէք։

Կեմեճիատաները առին միլիօնով փառան. ծովերուն վրայ օլըրտան, չոր չտեսան, տուին եաճկիները (ծովի նեբսն)։

Լոխման էլաւ, գընըց աչկերտի մօրը քովը։

—Հարիր քառսուն տարուայ գրցի ես. ըհ՛մ կը նետեմ. Կարմիր ու Ձերմակ ծովուն օրթալախը մի չոր կայ. տղաղ էան տեղէն բերել տուր, ըսըց։ Երդում էալ ըրըց.—տղուդ բան չիմ ընիր։

Մէտրը, պղինձներին վէտր առաւ. միջուն հանեց։

—Որդի, դու ինձիս ծերացուցիր, աչխարքը օլրտայ, հարիր քառսունի գընըց տարիս, մեռնիմ նէ, ռեհիմութինս աչխրքի երեսէն կը սաի, անունս կը կորի։

Տղան էլաւ, վարպետին ձեռքը համբուրեց. մէկ մէկ մնկայ (չինի գաւաթ) գինի խմեցին։

Լոխման հարիր քառասուն տարի էր, վճռ ο մեռնէր՝ կը սաղցընէր, տղան տահա չէր տեսեր՝ ինդուր կը սաղցընէր, ուր օր ծեր մարդ մի կար՝ կը կէնճըցնէր, տասնը հինգ տաբուայ տղայ կը չինէր։ Տղին ըսըց։

—Պղինձը դիր վրան, ինձիս շերպէք մի տուր. ջուրը կը տաքցընես, կեռայ, քառասուն սահաք պղինձին ջրին մէջ կը մնամ. բերանը կը բանայս. ինձիս միջուն կը հանես, հինգ լիր բանբակ կը չիակես (տարածես) խալիին վրայ, մէկ մարդու մի կեօրեի տեղ կը չինես. կը բերես, էյս շուշի ջուրը կը խառնես. հինգ պուտ կը լեցընես, կեփես, եօթնէն մէ մի կայնի ջուրը։

Տղան էյն լսանը ըրըց. ջուրը պաղաւ, էղաւ մեռելի ջուր (գոլ). բերըց բանբակի վրայ լոդցոց, մէկէալ չոր բանբակը չակեց վրան, եօթը սահաք մնըց. էտև ըրեց, ընայ բերան ի վէր. Ֆինճանը առաւ, չառաւ, Թաբրէր հրեշտակ զարկաւ, Թափեց, մի տամլա (կաթիլ) դընըց պողազնի վէր. ο մի տամլան դընըց, քիչ մը հոգի առաւ, կըսէր «pk'of, pk'of, pk'of. (լից, չուտ արա)։»

Ըս տըղան տարաւ իրան վարպետը Շահմարարին քով, հող ու գերեզման ըրըց։

Կը պառկէր, չէր քընանար. իրան վարպետին «pk'of, pk'of, pk'of» ձէանը ականջէն չէր կըյրեր։ Մի տարի դատար՝ դիշեր, ցորեկ քուն չէր ըլեր, միշտ «pk'օք . . .» կը լսէր։

Աչխարքը օտք քաշեց (աչխարհի երեսն ամեն տեղ շրջեցաւ). ճեր ուր կերթըր, չէր քնանար, վարպետին ձէանը ականջէն չէր կըյրեր։

Էջաւ մենծ տուն մի, էրկու վարդապետ, մի սէրտէր. մի էկսպոկոս ու էան տանը մէջ հարիր պօխ մարդէն աւելի մարդ կար։

Տղան վեց օր կեցաւ հոս. էրեսվընին չէր խնդար տեսեցոց։

—Հայը սուրբ, ինչու՞ էրէսվընիդ չխնդար, հարցոց տղան. եկր ինձի համար է, ես կելըմ, կերթըմ։

—Որդի՛, չէ, մի հարս ունիք, էաս դատար մարդը մի դի, էան հարսը մի դի. իրեք օր է ցաւ կը քաշէ, չատ ճեխիմներ բերաք, ճե՛ կը մեռնի ο խալըսի, ճե կաղէկնայ. իրեք օր է, դիշեր-ցորեկ կը պոռայ։

—Ատանկ է նէ՝ ինձի բեզ խասյար տայիք։

Գընըց. էան սահաքը սաղցոց, հարսը բերեց տղայ մի։

Տասը օր էաս տղան Թող չտուին. պախշիշը տուին. ճեխիմը կինքասյալ (կինքահայր) էղաւ տղին. տարին ժամը, մկրտեցին, էկաւ իրկունը պարկաւ։

Գասնը հինգ տարի էր քուն չէր ըլեր, քսանը չորս սահաք քունը տարաւ։ Լոխմանի ձէանը կըյրեցաւ։

Էլան ճհիխմը առաք վառաք դրին ճանփու, էկաւ մօրը քով։ Մէարը կարգեց էսոր, հօթ օր, հօթ գիչեր հարսնիք ըրըց։

Վարպետին ձէանը ականջէն կըլլաւ։

Գնըց դայվի մի, միսաֆիր էղաւ։ Աշղնեը գիտցան օ Լոխմանի աշկերտն է, հանելիկ ըսին իրարու։—Ես էալ ձեզի բան մի ըսիմ, ըսըց ճհիխմը։

—Դուռ Լօխմանի աշկերտն իս. մեք քիզի հետ կրնը՞ք դօխ էլլը։

—Ես ձեր սազը չպտէ առնիմ. ձեր փարին էալ հիտաճ (կարօտ) չիմ. պաշլայիչ կննկէզնալը։

—Այն ով է, ջրի մէջ չթրջիլը,
Այն ինչ է. երկրի մէջ չժանգոտիլը,
Այն ինչ է, յերկինս կորոտայ,
Այն ով է, երկրի խորը կը մղկտայ։

Չեն կարող պատասխանել, ինք կասէ,

—Այն բադն է, ջրի մէջ չթրջիլը,
Այն ոսկին է, գետնի մէջ չժանգոտիլը.
Այն ամպն է, յերկինս կորոտայ,
Այն Լոխմանն է, երկրի մէջ կը մղկտայ։

15

ԴՇԽՈՅՆ ՀԵՂԻՆԷ ԵՒ ԳԻՔՈՆ

(Ջարսանճագի բարբառով *)

Ելլէ էարիկ մի, կնիկ մի, մի տղայ։ Էաս մարդը ունէը հինգ եղ։ Տարին վէվ մի եզը օ լաւ կըլլէը, Սուրբ Գէորգայ մատաղ կիներ։ Քանի տարի էտանկ գընըց։ Տղան հասակը առաւ տասնը հինգը, մատաղ չըրըց չորս հինդ տարի. չատ խարիպ իկիք-աղքատ ընկաւ։ Մարմնը ըսըց։—Պապդ տարին մի աղկէկ եզ մատաղ կիներ. Աստուած ընոր համար տուեր էր. օ պապդ մեռեր է, մատաղ չես ըրեր։

—Իրեք հատ եզ ունիմ. մէ մի կայ լաւ. էան էալ ինիմ նէ. ինչով լուծք ալ վարիմ. էան մատաղ չեղածնին չեն լուծք վարիր։

*) Պատմած է Միհտատ-բաբար։

—Որդի՛, էրէ՛, Սուրբ Գէորգ կը հասցընէ Աստուծոյ կամքովը։

Ըրաց մտաւոր, դիչեր-ցերեկ Ս. Գէորգայ կը կանչէր.—աղքատութեան ինձի՛ ազատէ։

Գիչերը էրածը էկաւ Սուրբ Գէորգ, ըսաց։

—Ճանփէ մէարդ, քու հազուն թագաւորի աղջիկն է, էրթայ, թագաւորի աղջիկը քիզի ուզէ։ Տղան արթըցաւ. հայաւ ո էրկին մէջ է. մտաքը ըսաց. ես վե՛վ, թագաւորը վե՛վ։ Մինչև լոս՝ գիչերը իրիք հեղ արթըցաւ, քնացաւ, էրազ տեսաւ թէ «թագաւորի աղջինը ուզէ»։ Առաւօտնը էլաւ, մօրնը ըսաց.

—Որդի՛, մէք վե՛վ, թագաւորը վե՛վ. էազ էրած է, էնանկ բան մէ. «ոնօթին հաց կը տեսնայ, չըպրոլը լաթ»։

Տղան էազ էրկու չեղած եզը խառնեց առանջը, գընըց արտը. իրկունը էկաւ, հացը կերաւ, պառկաւ. ալա էրածը տեսաւ ո էկաւ Սուրբ Գէորգ, խոր ձինը հեծնը, մզուաղը ձեռքը առնը, ճոթը չակնց տղին.—Քիզի չըսի թէ «Մէարդ ճանփէ, թող էրթայ, թագաւորի աղջիկը ուզէ. պօշնը առիր իմ ըսածս»։ Տղան արթըցաւ.—Մէ՛րիկ, Սուրբ Գէորգ կիներ էկեր է, առաւօտնը տ'էրթըր։

Առաւօտնը էլաւ մէարը, փէշը ժողուեց, զարկեց գօտին, հասաւ թագաւորին սարայը, սուլթանի գլօխ տուեց, կայնաւ։

Էազ կնիկն էալ սուլթանի դայեկուքին կինէր. չուճուղնուն պորտը ինքը կը կըշրէր, ժամը ինքը կը տանէր. ըսաց։

—Սուլթան ապրած, էրկու լախտու տի ըսիմ, չես հերսուիր նէ։

Սուլթանին էհֆին ժամանակը բերեց, ըսաց։

—Աստուծոյ հմրովը աղջիկդ տաս տղիս։

—Աստուած ո հմր ըրեր է, ինչ տի ըսինք։ Թագաւորին կըսիմ, դնա՛, առաւօտնը էկո՛։

Թագաւորը էկաւ սուլթանին քով։ Սուլթանը թագաւորին ըսաց։

Բան չունէր, մի աղջիկ էր, աղջինը սիրած ժամուն։

—Աղջիկդ չատ կը սիրես, վե՛ր տի տաս։

—Սուլթա՛ն, աղջիկս շէհէր չատ կը սիրէ. ըռևիջպարի տի տամ ո, արտը շէհէր ցանէ։

—Թագաւոր ապրած. մեր դայեկը էկեր՝ «Աստուծոյ հմրովը Դչխու Հեղինեայն իմ տղու տի տաք» կըսը, ինչ կըսես։

—Առաւօտնը ո էկաւ, ինձի խապար կուտաս, ըսաց թագաւորը, գընըց օսկի թախտին նստաւ, մօրուացը հետ կը խաղար։ Օսկի թախտի բոլորը ալմաս քար զարկմուն էր։

Թագաւորը մտածեց.—էս ինգուր կնիկ է, ո իմ աղջիկը տէր ուզէ։ Կնիկը առաւօտը էլաւ, փէշերը զարկեց գօտին, կարմիր մոճաքնին էալ հագաւ. ընկաւ ճանփայ։ Հասաւ, գլօխ տուեց սուլթանին։ Սուլթանը թագաւորին խապար տուեց, թագաւորը էկաւ նեռս.

օսկի սաճեալիան դրին, նստաւ վրան. դայեկն էալ արդաքէ սաճեալիեն նստաւ. Թագաւորը հանեց էան ժամանակի տաս օսկի տուեց։ —Դու մեր դայեկն իս, ամա, դընը բանիդ. «Վնիկ դամուն խելքը պակաս՝ մազը երկան»։ Մի տղայ, մի չուք եղ ունիս. տար ըս օսկին էալ, տա եղ. ես քու տղան կը կարդիմ ուրիշ աղջկայ հետ։

Պառաւը ընկաւ ճանփայ, էկաւ տունը. տղան էալ լծոցնը էկաւ։

—Մէարիկ. Թագաւորը ինչ ըսըց. ինչ պատասխան բերիր։

—Թագաւորը տաս օսկի տուեց, ըսըց՝ «Քոզ եղ տունէ, ես ուրիշ աղջի կը գննամ, կը կարդիմ»։

Տղան պառկաւ, մտաւ քունը. ուխտաւ ս Սուրբ Գէորգ մզրախը ձեռքը կը կայնի.—առաւօտը կինէ կերթա՝ Թագաւորինինէ աղջիկը տի ուզես։

Պառաւը էան լման դընըց Թագաւորին սարայը. սուլթանը կինէ խապար տուեց Լալային Թէ դայեկը կինէ էկեր է. Թագաւորը կինէ ներսաւաւ, ըսըց.—ափարա մի տուաք, խաղ ձգեցաք, քառասուն փարա տաք՝ խաղէն չելլըր։

—Պառմալ, ըսըց Թագաւորը. կերթա քու դուան տէ իմ Ֆեմեր Ղափուս ծառ կը տնկիս, երկու բարաւն էալ՝ մի ծառ ընդին ուրիշ չեօիս, մի ծառ ըսդին ուրիշ չեօիս՝ ամէնկը դիմաց դէմ, էնանկ կը տնկես օ, ասլև օլաք դետինը չըլնի. աստըղկան մի պար ասլև չպտի էլնի. էտ մէկ իմ սարայէն խալտրըմ կը չինիս մինչև քու դուռը, մի սրա օսկի, մի սրա արդաք. էղաւ երկուք։—Մի տուն էալ կը չինիս իմ սարային վրայ երկու խար բարս, մի սրա արդաք։ Էղաւ իրիք։—Բառաւն խաբար ձի. պիրուն հրեղէն տի ըլլի, ծովու միջուն, բայ գլօխ էալ մի օսկի. էղաւ չորս։—Հարսնիքը կը բռնիս, տղադ էալ կըլլնի առջևնին, կառնըս, կը բերես հոսի. էղաւ հինգ։

—Ինոք չկատարիս՝ գլօխդ կը վնիմ։

Խեղճ պառաւը նեղութեան մէջ՝ էկաւ հաստաւ տուն։

—Ի՞նչ ըսըց Թագաւորը. հարցուց տղան։—Ըսանկ ըսանկ։

Տղան պառկաւ, Սուրբ Գէորգ էկաւ.—Էլիր ըսըց, ձին հեծիր, եվել Քրիստոսի անունը կուտաս, սօրա ինձիս կը կանչես. չմոռանաս, ըսըց։

Էլան ընկան օսկի խալտրումին վրայ, ժանկուռ ժուռկուռ գընին հասան սարայը. Թագաւորը հարսնիք բռնեց եօթ օր եօթ գիշեր։

Թագաւորը ըսըց.—Ջաբի տղայ չունէի, Աստուած ինձիս վերըստէն տուեց էաս տղան։

Գնին ժամը. ուրիշ օր կեցաւ Ֆալատուն տունը, առին գընին Թագաւորի տունը, իրիք օր մընըց հոնի. իրիք աւուր էան փեսայ մանդիլը առին Թագաւորի փեսան, ասզով սեօնպէրով ընկան էան-

վայ։ Քապապը Թուրն էր բռնէր գլօխը, ուր հատ ծառը առած կէրթէն. մի տավուլ առանջ է. մի սազ էտանց է. չորս հոգի չուլախ կողմը, էրկուքը կը խաղան, էրկուքը փարա կը կպցնեն էդ խաղողնուն ճակատը։

Չորս հոգին էլ աջուկ բարաւը կը խաղան. խաղալէն կէրթէն, կը հասնէն աղբիրը. աղբիրն որ հասան, Քապապը Թուրը կը քաշէ, կուտայ վեսին չըլպախ (մերկ) Թուրը, պատճնքը քապապուն ձեռքը։

Քապապը կըսը.—«Թագաւոր, Թուրդ ջրին զարկ, տեսնըմ կը կըլրէ։» Թագաւորը ջուրը իրէք հետ կը կըլրէ. աղբէարը խոշը կը պառկեցընէ աղբրին քով։ Քապապը կըսը. «Թուրդ արեցիր, մորթէ, տեսնըմ կրնը՞ս մորթեր»։

—Ասոր պայծառ, ըսըց քապապ։

Թագաւորը մորթեց դոշը, Թուրը զարկեց ջրին մէջ, վլացուաւ. քապապը առաւ, զարկեց պատճնքին մէջ, դոշը վեսայ մանդիկը քապապու տունը տարին. հաթան էալ վեսի գլխուն վրան մայրեցին, ճաղլեցին. դրցին քապապու տունը. ուր օր ճէչ դուրս չէլաւ։

Էդոր քապապը լալան էր. բերըց սարայը, տարաւ աղջկայ օդան. մէյտէյուան։

Սուրը Դէորդ բաած էր.—լաթերդ հան, Քրիստոսի, իրան անունը տուր։ Ծղան չըսըց, մառացաւ, պարկաւ Դշխուհի Հեղինայի քովն. առաւօտնը էլաւ օ ղան ինք իր տունն է, Թագաւորի էրած նոր լաթերն էալ վրան է, ճէ խալեըրըմ կայ, ճէ ձի կայ, ճէ բան կայ, էան էրկու հոն է։ Խառնեց առանջը, գրնըց արաը, մէկը կը պառկի, մէկը կը կայնի։

—Քօռացաւ աչքս, միտքս դընըց, մառցայ Սուրը Դէորդ։
Ծղան չատ նեղուէցան մէջ մընըց, ասկա ավարտ Դիքոն։
—Մէարկէ, էաս լաթերս պէյէ, առնիմ ծախեմ։
Մէարը դրըց տորպարկին մէջ, կախեց ցիցնի վէար։

Դշխուհի Հեղինայ իրէք ամսաւան պատկառած էր, պապը վաղճանաւ. ինք նստաւ տեղը. էլաւ չատ զօր Թագաւոր, պաշտպանեց իրան օսկի սիրճի եէիմիշ (դրամ բանեցընել) էնիլը. էնանկ հզօր Թագաւոր էղաւ օ, ուրքատանները զեճկին (հարուստ) էղան, չատ աշխարքներ լուսաւորուան. դէալը կուզար, գառին հետ կարծուէր. արջը կուգար, ընջղկան (արջառին) ու դոմշուն հետ կարծուէր, Թըռչուններըը մարդու վրայ կէջնային, չատ սէր ունէր, մարդ չէր կրնըր Թռչուն պինէր, խաղաղ էր. ժամը էրթած ժամանակ ինչ օ Թռչուն կար, կէլըր թամաւա. կէաը աջուկ կողմը. կէաը չոլախ կողմը. աշխարքի արեցրէու բարաւէն արեպատը էսոր անունը էլաւ. չատ լաւ Թագաւոր է։

Տարին թաւ, բերեց տղայ մի. տղան գիշեր ցերեկ կուլար. ձէանը չէր կըշրեր՝ ծարը կըշրուաւ, մարդ ձգեց էրկրոց էրկիր.—վէյ ո էսոր պատը դննայ, Թագաւորութինս էնոր լայեխ է։

Տղին աչուկ թեւին վրայ նշան ունէր. վէյ ինչ գիտէր թէ նշան կայ թեւին վրայ։

Դշխուհ Հեղիայի ճարը կըշրած, տղան առաւ, ընկաւ ճանփայ, Մամա—Խաթուն, էփրատ գետին վրայ, գարնայ ճատաղան էր, ջուրը ծով էր կըշրեր, չկրցաւ անցնիր էր. ջրին ճառը էջաւ. բերց էրգիւրուման վարպետ. պատճառից ըսաեղ կարմունջ չինել տալը։ [1])

Էտ էրկրի մարդը, վէյ ո լանց, էկաւ, բանաւ. վէյ ո ախ բանէր, տղան կուտար էնոր գիրկը, հայի թէ ձէանը կը կըշրէ։ Գալողը ախ դար էսոր քով, գրէր, տղան ախ տար գիրկը։

Կարմունջը չինեց, թեմիլ ըրըց. ջրին քով վանք մի չինեց։

Չկրցաւ գտեր էր նշանածը, դեվէտատը բարձաւ օսկին, ընկաւ ճանփայ, գընդց հասաւ Աստանայ.—Աստանու իլմաղը՝ գարուն էր, չատցիր էր, ծով էր կըշրեր. ես՝ կարմունջ կայ, ես՝ կեմ։ Մընդց ջրի ըսդին, Աստանայ էալ ընդին։

Դշխուհին կանչեց վարպետնուն.—Էկէք, անցացէք, ձիզի օսկի կուտամ։

—Չէք կրնըր, ասա՛, քանի օրէն ջուրը կէջնայ։

—Թափեցէք ջրին մէջ օսկին, կանցնինք վրան։

Փլեցին քառասուն տեվէ, վարպետնին ըսին.

—Մի փլեր, մեք կաւնիք, կարմունջ կը չինիք։

Օսկին տուեց վարպետնուն, պատճառին կարմունջ չինելը, Դշխուն Հեղինայ չատրը զարկեց, նստաւ։ Էրկրոց էրկիր մարդ չմընըց, ըսըց թէ—կարմունջ կը չինուի, էրթըք մեք էալ բանիք։

Գիքոն ըսըց.—Մէնք, լաթերը տուր, տանիմ ծախիմ. բանիմ, գամ։

Դշխուն Հեղիայի տղան էղած է չորս տարուան, հացը կուտէ. ինչ ո տան, կուտէ. տանա ձէանը չկրցրեր, կուլայ։ Շատ մարդիկ ըսին.—«էսաս օր լաւ մարդ է. էսոր էրախան ինչու էսանկ ախ ըլլի»

Գիքոն էլաւ, իրան նոր վէտուխան լաթերը տորպակը դրըց, ընկաւ ճանփայ. չատ գընդց. քիչ գընդց, Աստանու կարմունջին վրայ հասաւ, տեսաւ ո ամէն էրկրէ մարդ էկեր՝ կը բանի։

Գընդց ո գրուիր՝ դուռը կայնելուն իմի՝ տղան ներսը ձէանը կըշրեց, Դշխուն Հեղինէ զարմանք մընըց. դուռը բացեց, տե-

---

1.) Մի այլ նիւթի մէջ լսած եմ Զօպաճ Հեօփրիսի (Վաղարշապատցի) կամուրջը շինել տուած է։

սաւ օ քսանը հինդ տարուայ տղայ մի կայներ՝ աչխըքի էրեսը չդտնուիր. լեաթ չունի, տկլոզ է, ըսըց.

—Իաս չաղան (երախայն) օ դրկեցիր, ձէանը օ կըլրեցիր նէ, խալխուն հինդ ղուրուշ կուտամ, քիզի քսան ղուրուշ կուտամ։

Գիքոն ձեռքը նետեց, զաղան դրկեց։ Չաղան պաճլայնը պե-խերը օլըրիլը, բռնիլը, հետը դրուցիլը, խնդալը։

Դշխուն Հեղինէ ըսըց.—Էաս իմ նչանածս տի ըլլի։

—Գիքո՛, տա՛ր չաղան իաղցուր, չաւրէն չղտէ հեռանաս։ Նա-բախ տուեց, հոնի կը պատկէր։

Չաղան մօրը քով չէր կենար, կէրթր Գիքոյին քով, կըսէր, կը ղրուցէր, կը խնդար. քովն էալ կը պատկէր։

Վեց աւուր էտի էնանկ արդև մի առաւ օ սաղ Ատանու էր-կիրը սել էլաւ։ Տղան եաթաղը նետեց չաւրին մէջ. իրիկուայ ժա-մանակն էր, ըսըց.—Նա կէրթամ, Դշխուն։

—Հոս տի պատկիս, քիզի արդևին առաջ չեմ թողեր։

Մուրթը էկաւ վրայ, տղան առաւ չաղրին մէջ, մոմը փակաց, մի շամատաճ տղին առանի՝ մի շամատաճ իրան առանի։

Իրան տղան խօսաց։—Ձրադ մի իմ առանի, ձրադ մի քու ա-ռանի. հրպա էաս մարդուն առանի չկայ։

—Էրկու հատ էր, էալ չկայ. պոլ է (բաւէ)։

Տղան շամատաճը դրեց Գիքոյին առանի։

—Ինչո՞ւ շամատաճը դրիր էնոր առանի, էկոր իմինիս առանի, էադ մարդը ինչ չատ կը հոգաս։—Իմ պապս է։

—Ո՞նչ իմաց կըլլիս օ քու պապդ է ըդի։

—Իմ էարինս չատ կեռայ, սիրաս չատ կուզէ էադ մարդուն։

Առաւօտը էլան, Գիքոյին գեղացի մի կար, էկաւ փառան ա-ռաւ, ըսըց Գիքոյին.—Տուն կէրթամ. չես իդար. եա՛ էկոյ. եա՛ փառա տուր, տանիմ տուն՝ մօրդ։

Դշխուն տեսաւ օ իրան գեղացին է, էկեր իրար հետ խոր-հուրդ կենեն տուն էրթալու։

Գիքոն մտաւ չաղրը, կայնաւ սուլթանին դէմ։

—Խնդրուիմ քինէն, փառաս տաս, էրթամ. էտև չեմ կրնըր էրթր։

—Օրականդ քսան ղուրուշ է, քառասուն թող ըլլի, քովս կե-ցիր։—Չէ, չեմ կենար։

Գօսեն կըսայ.—Տօ լմալ կօվ, էտի հօրտիկ ա. հայ, մըսի կօվ, խըլդ կըծիծղան քու վրէն. թէ քզի միտք կայ ծախէլու՝ յեռաուն խուռուռ կիտամ։

—Ախպէր, դը՛ դէն դնա. չը գինամ՝ դմռ իս ծուռ, չէ՝ ես իմ ծուռ՝ իմ վրէն կը ծիծղաս. ըսաց ու քէլեց։

—Հա՛, հա՛, ըսաց fօսէն, չուրի դու չը տանիս քաղաք, չաւտընաս թէ էտի հօրտիկ ա։

---

*) Ասած է Գերոբ (Գիսակ) Նալպանճեանց. զրի առած եմ ասողի օգնութեամբ. նաեւ պ. Գ. Գաբրիէլեան ըստ կարելոյն ուղղասած է բնական ճնչմամբ վերափոխել, որով Ալաշկերտի բարբառին ճշգրիտ ճնչման մի նմանը էր։

Էտ տղէն էր փչում լէ դէն գնաց չը գնաց՝ էն մէկել fouհն յէլաւ յառէճ ու ինչօր էն յառճինին հարծուց։

Տղէն յանկառճ չէրեց. fouհն էլման դառծաւ, ըսեց.

—Տղա. ուրիշ մարդու մինայ էտ հօրտիկ. ինչ խրեթր օր խրլդ կիտաս, ես ընտոնց վրէն տաս խուռուռ լէ յէվէլի կիտամ. կըսիմ յանկառճ էրա ընծի, խեղճ իս. ես քու ախկըտուռէնի յապով կըսիմ։

Էլման էտ տղի խնք չը մտաւ (չհամօզուեցաւ). յինք ուրին միաք էրեց ու քիչ մնաց օր ծուէր.—Է՞ Աստուած. կէղնի՞ օր էտի հօրտիկ էր, իմ պապ խապեց ընծի՝ ըսեց «կօվ ա». ի՞նչ օր էղնի, ե լէ կը տանիմ, իսօ էտ քաղկցիք յըմէն անաստուած չին, օր խապին ընծի. թէ մէկ լէ ըռւաս էկաւ, ըսեց, «հօրտիկ ա». ուրանք՝ ուրանց Աստուած. կիտամ, թըղ էրտայ։

Փչում լէ գնաց՝ քաղկին մօտէծաւ. իտա հաղս էն մէկել fouհն էլաւ յառէճ. ինչ օր յառճի էրկուսն ըսած էն՝ էտ լէ բան մի յէվէլի վրէն դրեց ու ըսեց.

—Ախպէր ջան. ախըր մինք քրիստոնայ ինք, մէկ աւազանի ծնունդք, դու յօրի յմայ կէնիս. բիր տու էտ հօրտիկ, ես յըմայ մարդ չիմ. ուրիշներու վրէն կրնամ օր տըսնուհինդ խուռուռ լէ յէվէլի տամ։

Ախկատ տղէն տէսաւ օր իտաքան տեղ էկեր ա՝ յըմէն լէ կըսէն «հօրտիկ ա». հարի մնայ էրկու հօկու ըռւաս գիկամ քառասուն խուռուռէից յէվէլ չի տաս, էտ մարդ հինդ խուռուռ լէ յէվէլ կիտայ։

—Ախպէր, դու տուր փարէն. ըսեց. ես իմ հօրտիկ կիտամ քզի։

Տղէն էր, առաւ փարէն, ուրախծաւ, գնաց դեղ. ճհռսօտաւ վըր ուր պապուն ու ըսեց.

—Ապօ, Աստուած քու տուն աւիրայ. տօ դու ըպա հօրտըկան կըսէր՝ «կօվ ա». վիր տարայ՝ ըսին «հօրտիկ ա». ե լէ տուէծի 45 խուռուռէի. ուտայ ուրանց պօնա։

—Քօռնաս դու, էշ ախմախ, ըսեց պապ. էտ վիրն իս տըվէ, խապած ս քզի։

—Ըսկի ապօ, համպու վրէն իրնք հօկի կայնուկ էն, չատ աղէկ մարդ կէրէւէն. ընտոնց տուի։

—Օհօ, դիցայ, լաօ, դիցայ. ընտոք fouհէն ին. դու սուս կէծի, բան չկայ, թէ քու պապ ընտրցնէ ճայիմ (վրէժ) առնու, առաւ. թը չառաւ, թըղ էրտան, ընտոնք լէ պարզէնան։

Խեղճ ապօն՝ յըմէն հնարք լէ գինէր, հրմա ֆուխարի (խեղճ) մօտ փարա չըկէր. ուրիշներ լէ չիտէն. չարնաչար յէլաւ, գնաց ուր դըրկէցի մօտ, ըսեց.

—Ասսու սիրուն էղնի, իրեք օսկի տուր ընծի, իմ էրկու յաճկ աուն լէ Թըղ քղի էղնի։

Ւրկեցն էր իրեք օսկին տուեց, էտ մարդ լէ փարհն առաւ, գնաց տուն. վէրծուց ուր էր, տարաւ քաղաքն օր ծախայ։

Ւրի էր մանծէ օր մօտէնէր fօսիքներուն՝ չուտ մէ չուտ օսկիք կոխեց իշու վոռ. յեր հասաւ յառճի fօսի մօտ՝ սուր փէտօվ մի դրտեց իշուն. մէկ օսկին Թռաւ, պատաւ ցած. չուտ մի վէրուց, պրեց ծոց։

Fօսհն օր էտ բան տէսաւ, չատ ուրախծաւ ու ըսեց.

—Ախպէր, քու էշ կը ծախիս, ես պտի առնիմ։

Ասօն լէ ըսեց.—Էտ էշ քու հօթ պատ չը կընայ առնի, իմ էշ անգին աւ։

Գնաց մէկիկ fօսի մօտ, էլման իշուն դրտեց. էլման օսկի մի պատաւ՝ վէրուց դրեց ջեպ։

Խօսք չէրկնցունք, իմալ օր յառճի fօսին ըսեց, էն յըմալ լէ ըսեց մէկիկ էրկու fօսին։

Fօսհէ աէսան օր, օղօրտմա էտոր էշ օսկի կը Թրկայ. fօմաճ յիրարու վրէն, ըսին գեղածուն.

—Քու էշ պտի առնինք։

—Քու ինչ խէլկի տէր իք. դու կընաք ընտոր գին տաք, Թէ տամ լէ ձգի քսան ու չորս արնաքուայ կիտամ։

Գէղածին ուր էշ ծախեց ուր Թ հազար խուռուճի. տրվըցուց ընտոնց Թէ ինչ չհօիs պտի պայնի օր օսկի Թրկայ։

Էն մէկ fօսհն յառճի օր էշ տարաւ, գէղածու ըսածի պէս պայեց. քսան ու չորս արնաքն օր բմաւ, հարամ էղնի, բօկլից սավայի օսկի չտեսաւ։ Fօսհն խէլածի էր. էտ բան աշկեարայ չէրեց ուր ընկէրտոց, օր ընտոր լէ ուրին հաւսրին։

Էն մէկիկ fօսիք լէ յառճինի պէս էրին. տէսան օր Թրկից խայրի բան չկայ.

—Հայ հօ, ըսին, էտ հայ մըզի խապեց, մեր փարհք լէ տարաւ։

Գէղածին էր. տուն օր գնաց խէլք խէլկի տուեց, գինէր օր խօլայի հալով fօսհինէրու ձեռնէն չը պրծնի. դուռտրմիշ էղաւ, մէկ հնարք մի գտաւ։

Ուր գէղածոց քամպի էրեց, հինգ օսկի տուեց, էրկու լապզտրակ բէրել տուեց. Է չկէր փարայ, «fօռ օլսուն հօխսուլլին» (կուրանայ չքաւորութիւնը). մէկ ձեռ զարկէր մէկ ջեպ օսկի կը հանէր, մէկիկ ջեպ զարկէր արծաթ կը հանէր. հքար էր Թալէ, Թէ՞ն էր ցաւծէր։

Լապզտրկներն օր առաւ, յէն գախ քամպի էրեց ուր կենկան.

—Կնիկ, ես յարա կէրամ. իտա լապդարկներուց մէկ հետսի կը տանիմ, մէկիլ լէ դու պայա քու մօտ. ես գինամ, fօսեֆ պըտի դան, ընծի հարծուն. յերօր հարծուցին, ընտոց կը ճամպիս յարա, իմ մօտ. դու լէ չը մօռնաս՝ քանի չհօիս զատ կղինիս՝ կը ճագրիս, հալի մենք յիդանք. ես Էտուդ օլին մի պտի խաղամ fօսեֆներու գլխուն, բալիմ յըմալով խասպիմ, լապդարակ տամ իշու վարի տեղ:

Ալօտրան նոր կը բածուէր, fօսեֆ յէլան, վռազով ու հանկարտուր գածին, տուն աւիրօղ ղեղածի Ցարօյի տուն հարծուցին:

—Տուն աւիրօղ Ցարօն գմրա գացէ:

—Ջահնամն ա, ըսեց կնիկ. հանտա յարա վար կէնայ:

Fօսեֆն որ յիմցան տուն աւիրօղ Ցարօյի տեղ, թէ էրկու յոտ ունէն՝ տըսուէրկու լէ ճարէծին, ու էն սրնացին հասան ուր մօտ:

Քիչ էր մանծէ օր պտի սպանէն Ցարօյին. Ցարօն դառաւ ու ըսեց.

—Ախպէր, ընծի յընճի կապանիք, փարհն չուղիք, հանտայ փչու մի նստէք. յարա յը խլրսիմ, փարհն տուն ա. էրտանք տուն, բրտուճ մի հայ ուտինք, առէք ձեր փարհն, գածէք. սաղուտհն էղնի. ես ձեր փարհն ուտօղ չիմ:

Ցարօն էր հըտ գահուն լապդարակ թէդան միճէն հանեց. հըլամունսի տուն պտի ճամպայ, օր բամպայ էնայ կնկան՝ հայ ու դատ էնայ:

Լապդարակն էր, Ցարօյի ձեռնէն պրծնէլուն պէս՝ «ղոր իս քղի սարեր էկայ». փախաւ պրծաւ. fօսեֆ լէ աւտրծան թէ օղօրտմա լապդարակ տուն գնաց:

—Դէ ախպրտանք, էլման դառծաւ Ցարօն. ղորպան իմ ձըգի, փչումի հաֆանտինք (հանգստանալ, չունչ քաշել), էլման կէրտանք տուն, ես ձեր փարհն կիտամ. ըսկի քալաճ մը քաշէք. յըմալ ինաճ (հաւատացէք) էրէք՝ օր ես էն ձեր ըսած մարդկոց մօտէն չիմ:

Ցիրկուն օր էղաւ, Ցարօն առաւ ուր ախպրտանքն ու գնաց տուն. չէմիք չէնկէլու պէս բօռաց վըր կնկան ու ըսեց.

—Դէ կնիկ, չուտ էրա փչու մի հայ բիր, ուտինք ու էտ մարտոց փարհն տանք, թըղ հէռէնան:

Կնիկն էր, քանի չալապ գատ բէրեց, էտոնք օր տէսան, չիւարան, մատներ ուբանց խածէծին. միա ու մտավայ էրէծին թէ իմալ էտ լապդարակ Ցարօյի խօսքեր հասկծաւ ու էկաւ կնկան քամպի էրեց. նրմա ընտոնք խապար չունէն օր լապդարակ մ'էլ կնկայ մօտն էր պահուկ:

Տուն աւիրօղ Ցարօն էր, յըմէն խնկը ուր ծոց դրուկ, տէսաւ fօսեֆներու յէրթաս, յիմցաւ օր էտոնք լապդարկի համար միտք կէնէին. դառծաւ ու ըսեց էտոնց.

—Ախպրայնէք, հայ կէրէք. հէրք ա միա ու մտալա էնիք. հա մկայ ձեր փարէն կիտամ։

Փօսկէն էն, ուրանց հայ կէրան, չը կէրան միտք կէնէն. տուն՝ աւիրօղ Յարօն բօռաց.

—Կնիկ, չուտ բալնիք բէր. էտոնց փարիք իտամ. Թըղ էրտան։

Կնիկ փչու մի յանկան բէրից բալնիք. Յարօն էր մախտուս ճիռսոտաւ, փէտ վէրուց՝ պտի Ջարտէր կնկան՝ օր foսkf չէղնէն։

—Տօ հայ, դու Ասսու յէրսէն իս Թափէ, ըսին foսkf. փարէն քըղի հալալ էղնի, մենք լապզտրակ պտի գնինք։

Յարօն գուա Թէ լաւէն չէ լապզտրակ տալու, խասու կըսայ.

—Ես չիտամ, ինչօր տուի, ինչ խեր տէտայ։

Փօսկ՝ ուրանք չատ փարատպաշտ մարդիկ էն. հօկի ուրանց ու մէկ փարէն պիս մ'էր. էտոր համար յիրարու ըսին Թէ.—Իտա լապզտրակ լէ առնինք՝ բալկի մի էտոր մէչ աչխատինք (չահել). մեր զարարն հանինք։

Ի՞նչքան փարա տուած էն իչուն, էնքան լէ տուին՝ լապզտրակն առան ու գածին. յերօր քաղկին մօտէծան՝ յուղէծին գեղած ու լապզտրակ ջուպէն. հանէծին պայուկ ուղէն ու Թօրկէծին օր էրտա ուրանց կնկտոց բանպի էնայ՝ հայ ու զատ էպին, ճազրին։

Ճէպօր գածին ուրանց տներ, ճարամ ու ռաճ էղնի. ճհա հայ ին պատրաստած, ճհա զատ. Թալէծին կնկտոց դէտին ու ծէծէծին։

Կնկտիք յէրտում, պատռտում կէրան Թէ—պլա, մարդ չէկէ. մըղի բան բամպի չէրիր ատ։

Փօսկ ծուռն, խէլկեր ուրանց Թուռծին. էլման յէլան, գածին տուն աւիրօղ Յարօյի տուն։

Տուն աւիրօղ Յարօն էլման յատճվնէ ուր բապտիր ուէսէրէր. բէրէր էր փկլուճ մի՝ մէջն արուն լցեր էր ու ճազրէր էր. յետև գարծեր էր, ըսեր էր ուր կնկան.

—Կնիկ, ես գինամ, էլման պտի դան էտ foսkf. իտա փկլուճ կապայ բօկիտի տակ, ես կըսիմ, կը ճհռսօտիմ, Թէ էտոնց փարէն բիր, դու յանկառ մ'էնէի. էտ յըմալ քէնիմ անկամ կըսիմ. դու քզի յօն մը' դնի. յընգալ կը ատսնիմ օր բօշ ա. գէլնիմ հըլամունսի իտա սուր դանկով քզի կը մօրտիմ, հրմա չը վախէնաս. փկլուճ կը կըտրիմ. դու լէ էն վախս քզի Թալ մէռուկ։

Փօսկ դուռ. բածին-չը բածին, ներս մտան-չմտան, Յարօն խասի հաւատ պնտեց.

—Կնիկ, դը չուտ, էտ մարտկոց փարէն բիր, էղանք ամօտօվ. հրմա օր յանկծուծիր, քու սպանել հախ կէնիմ։

Կնիկ յանկառ չէրեց, Յարօն էլման բօռաց.

—Շան ախճիկ, չէ կըսիմ փարէն բիր, է։

—Խյամաջին Քըղ բէբուի. բալնիք իմ մօտ չէ։

—Հալա՛, հալա՛, ես իմալ էնիմ իտա կնկայ հետ. էլ ըսիմ, անբախամ. դըռ դու կայնիր իս։

—Ջայնըմին ըսա, ինչ կայ. ախըր կըսիմ բալնիս իմ մօտ չէ. ախճիկ տարեր ա՝ կործուածեր ա։

—Կնիկ, դու յօրին չըմալ կէնիս. քու արունք տուր իս քու յահք. կէնիս օր քզի սպանիմ, չան ու գիլու վայ էնիմ։

—Սպանիս, հաղմ լէ ըսա. սպանել չըմալ խօլա՞յ ա, ընծի սպանիս։

Ցէտի խօսկերն օր լսեց, Ցարօն սուտմառ կասուլու. յահկեր Քուռ դակատ. կշտէն քայէց եաճ բուճաղին, հատաւ կնկայ ծամեր բռնեց, զարկեց գէտին. եաճ բուճաղին դրեց վզին՝ քաշեց, մէկ լէ ախանիս օր արուն տան մէչ գօլաւ, չորս դիեն ծաւօլեց։

Քօսէին օր էտ բան տէսան, յախտս մտաբներ ուրանց հօր տէղօվ ճղաւ. Քէ «մենք էղանք սրբընկոէր»

Շիւարան. մկայ չը կունան օր դուռ գտնին, վախանին. հալալ էղնի Ցարօյին սրբընկոիրուտեն. չուտ մը դառծաւ քօսքընելու վրէն՝ օր դուռ կօրծուծած չը կունէն գտնէն։

—Հա՛, ըսեց. ձեր սիրտ հրռհատա՛ւ, մարդ մը լէ տուվծիք սպանել. դո՛ր պտի վախանիք օր իմ ձեռնէն պրծնիք։

Ցարօյի լիզուն կըսէր, հրմա սիրտ չըսէր. էն գուշէր մինակ՝ օր քօսէք հէռէնան։

Քօսէք չուրի դուռ գտան՝ «հօկի ուրանց էղաւ կօրէկի մը հատ». սակի մարտուտէնից յընկան.—Քրիս յըմալ վատս էզնի, ըսէծին, օր յուծկայ ու դիեն. քանի սրբընկոէր Ցարօյի ձէն իտա էրկիր դիկայ, էլ յոտ մըզի իտա էրկիր պտի չը Քալինք ու չիկանք։

Գտծին ու հէռէծան. հրմա գինա՞ս Քէ ինչ էրկրնէր յէլան դուս. ուրանց գինալօվ հըլատունսի էղած էն սրբընկոէր. Ֆուխարէ «Փողվէծին գալօվ, չէրպօվ տուին դուս». «անհ անհտա խապմազ». (զրկանքը զրկողին չի մնար) կըսայ Քուրք. «չինք անիծուկ ա, հրմա ուր խօսքն օրչնուկ»

Ղառնանք սրբընկոէր Ցարօյին։ Կնիկ, սատանէն էր մտէ չինք, սաղ, սալատաս յէլաւ նստաւ, նոր չիրատաւ հետ էեֆ էրին. կէրան, խմէծին. ուրանց կտաւուկ չօրեր Քաժածուծին. էլ չըմալ էղաւ օր սրբընկոէր Ցարօյի էրկի փէռեր հրա գէտնին քաշ կէրտէր։ «Մուռ հայ, անօտու փորն ա»։

Էտնք էտ էեֆի մէջ Քըղ մնան. քօսէ լէ մըչ Աստու կրակին։

25

ՋԱԽՋՊԱՆ ԴԻԼԱՆ

(Ալաօկերթի բարբառով *)

Կ՚ըղնի չէղնի, մէկ հալխլոր մի կէղնի, էտու մէկ տղէմ ի կէղնի. ուր մէռնէլու օր կը կանճայ աղին ու կ՚ըսայ.

—Տղա, լաճ, ես օր մէռնիմ, իմ հօկու հացն օր կ՚իտաս, մեր գեղ հօր ջաղաճ կայ, կը տանիս ալուր էն վէց ջաղաճ կաղաս, էն մէկէլ—Վիլանի ջաղաճ, չէղնի-չէղնի օր էրտաս։

Տղէն ա, պատն օր կը մէռնի, կէրտայ էն վէց ջաղաճ դօր չէղնի. չալնայալը կէրտայ Վիլանի ջաղաճ, կ՚ըսայ.

—Վիլան, առ իմ չորս կոտ ցօրեն, աղցի։

—Շատ աղէկ, կ՚ըսայ Վիլան. ընծի լէ չորս կօտ կայ. բէր, իրարու հետ կաղանք. յետու կը բաժնինք։

Տղէն լէ հա. կ՚ըսայ. կաղան կը խըլըրին։

—Տղա, կ՚ըսայ Վիլան. հասին պուռ քու հօր հօկուն հաց կիտաս. սրի, էնինք չըմէն կ՚ըսճ. տայ, բաժնաս։

Տղէն կատնայ, կ՚ըսայ-Թէրս էղնի։

Կէնին կ՚ըսճ, կը խըլխին, Վիլան կ՚ըսայ.

—Տղա, սրի սուտ ըսինք. որն օր չատ սուտ ըսեց, մէկիկ կ՚ըսճնէրն ու 50 վարայ լէ տայ ընատր։

—Թէրս էղնի՝ կ՚ըսայ տղէն։

—Մըզի ճետ մի կար, կ՚ըսայ Վիլան. էն չատճի տարին մեր գեղ Թանկուտին էղաւ, յէլանք մենք լէ եսիր տնուտ գետ էնք, մեր տամուտն պաշար, էղներ, դմշտաններ, կնիկ, մարդ, ճիժ, ջուլ ու փալաս չըմէն բատծանք էտ ճիտու վրէն ու գատծինք Թաղդատ. էն տեղ ցորեն հոդի պէտ էր, մատծինք չօն՝ հարի յէժնուտեն չըճկաւ մեր էրկիր. էլման բատծանք էտ ճիտու վրէն ցորեն ու մեր գետատծիքն ու էկանք։ Դէ տղա, տուտ ատնիս խարնէ մեծ, լատ. Թէ չունիս, տուր իմ կ՚ըսճնէրն ու 50 փարէն, գնատ

*) Պատմած է Լեւոն Տէր-Միքայեանն։

Դօr էկաւ տղին։

—Դիլան, ըսեց տղէն. իմ օղօրմած հօկի պապն օր մեռաւ, ուր մեռնելուց տարի մի յաւէտ տարաւ ճանկ մի կօրեկ ցաննց. էդաս օր կօրեկն հասաւ, գածինք քաղէծինք. էղաւ չորս, հինգ խուռճ. բէրինք կամեր լծէծինք ու ծէծէծինք. էրնեծինք, հանէծինք. էդաւ Բօսուտաղայ (Սուկաւէտ) տարի տէս չնդճ մի. սել չը կռծանք բէրևնք օր հօրէնք. նրմա լծինք Բօսուտաղայ մօտի հօրէրու մէչ. դու մ'ըսի, հօրէլու վախս բհրաւ մեր վառկընէլուց վառեկ մի գիկայ, կը մանի էտ հօրէրու մէչ, չուրի գարուն մէկ կօրեկ կուտայ՝ մէկ հաւկիթ կածայ. կօրեկն օր յըմէն կը գառնայ հաւկիթ, իտա հաղս կը նստի դրուտան (թուխս), յըմէն կէղնի վառեկ ու ճետ Գարուն գածինք, հօրեր բտծէծինք. բանանք օր ինչ բանանք. յըմէն էղած ճետ ու վառեկ. էլ չը կռծանք յիրարուց ջօկենք. Աստու հրամանկօվ մեծ քամի մի կայնաւ. զարկեց ճիտուանք դէմ հիւսիս տարաւ, վառկներ լէ դէմ հարաւ։ Ինչ ասաւ ունիս, ըսի. չունիս տուր իմ կլօճներ ու յիտասուն փարեն. ես կէրտամ։

—Ա՛ռ քու կլօճներ ու դնա, քու յիտասուն փարեն լէ կիտամ, ըսեց Դիլան։

Տղէն առաւ կլօճներ, գնաց. մէկիկ որ չուտ էկաւ ուր փարին։

Դիլան օր տղին տէսաւ՝ կծկաւ. էտ տնաւրի խասխաս լէ յըմալ էր օր՝ թէ մէկի մը փարայ տէր, էն սրհասաւն կը մեռնէր։

—Գնա, ըսեց տղին. լուսուն արի տամ։

Էտ յըմալօվ քշեց մէկ ամիս։ Դիլան տէսաւ օր տղի ձէռնէն աղատուէլու հնարք չկայ, կը կանճայ ուր կինկան կըտայ.

—Կնիկ, տղէն օրտայ էկաւ, ընծի հարծուց, դու լածի. ըսա՝ «Դիլան մէռեր ա»։

Տղէն ա. գիկայ կը տէսնի օր հանտա Դիլան յէրկնծէ գէտնի վրէն՝ տուրք ու տալսպն ա, կըտայ.

—Դիլան, իմ յիտասուն փարեն տուր, նոր մեռի։

Տղէն կը տէսնի օր Դիլան փարայ տալու ըսկի մարամ չունի, խօրտիկ մի կը վաճայ թունտիր, բարօտ մի ջուր կէռծու. Դիլանի յօտնէն կը բռնայ ու կը մտու եռման ջրի մէջ, կըտայ.

—Դիլան իմ յիտասուն փարեն տուր, նոր մեռի։

Դիլան ուրիշ տուտ մէռել կը թալայ, տղէն լէ կաւտնայ. կը ճանպին տէրտրոջ յէտև. տէրտէր գիկայ, Դիլանին կը տանին հօրին. նրմա դէրէզման ճօլկի (խրճիթի) պէս կը բռնին օր՝ Դիլանին բան չէղնի, ճրաք մը լէ կը դնին մօտ։

Կը մնայ չուրի յիրկուն. տղէն կէրտայ տէրտրոջ կըտայ.

—Տէրտէր, իգին տուր, էրտամ Դիլանին պայիմ. Դիլան իմ դօստն ա։

—Դը դնա, օրհնած. դու պածեր իս, ես չը թօրկեը իմ, կըսայ տէրտէր։

Տղէն կէրսայ Դիլանի գէրէզմնի վրէն կը չօքի, ծակ մի կը բանայ ու կըսայ.—Դիլան իմ յիտսուն փարէն տուր։

Դիլան ձէն չը հանայ. տղէն մէկ լէ կը տէսնի օր հանտա իրեք հատ քուրթ, խուռնի մի օսկի դողծած՝ նատած գէրէզմնէրու մէջ իրար վրայ կը բաժնեին։ Տղէն կըսայ.

—Դիտի, Դիլան, ես կը տասլիմ. դու պատըճկած չէլի, առ ճրակէն ու յընկի քրտէրու յէտեւ։ Դիլան էր. իմալ օր դուս յէլաւ, քրտեր օսկիկ թորկին ու փախան։

Դիլան կառնի փարէն դիկայ. կը նատին յիրարու վրէն կը բաժնեին. օր կը խլըսին՝ տղէն կըսայ.

—Դիլան, իմ յիտսուն փարէն տուր։

—Տուր օսկի մի, խուրտիմ, քու փարէն տամ։

Տղէն հարըրնոց օսկի մի կառնի օսկիքնէրու միճէն, կիտայ. Դիլան յիտսուն խուռուռը կը վէրու ուրին ու կըսայ.

—Ա՛ռ քու յիտսուն փարէն։

Նա յըմալով Դիլան տղի ձեռնէն կազատի. հրմա Դիլան էլման տղին կը խաբայ. հարիր խուռուռի տեղ յիտսուն խուռուռը կիտայ ու յիտսուն փարա. օրիա հարիր խուռուռը բամամ տէր ու յիտսուն փարէն լէ՝ էն սրինա կը մէռնէր. սուտ կէղնէր օղորտ։

26

ՏԻՐՏԷՐ ՈՒ ԱՃԱՄ ԱՂՔԷՐ

(Ալաեկերտի բարբառով)

«Դուկյեն խյրմիա չը մնայ»։

Ժամանակով մէկ տէրտէր մ՝ ու ածամ մի յիրարու կեզնին աղքէր. էն յըմալ սիրով կէղնին օր՝ խրլոյ պատուտեննէ Շահին կը գանգտին, կըսին,

—Ցլաց ածամ հայեցիր ա, տէրտրոջ հետ կէրտայ ժամն ու պիկայ։

Շահն ա՝ ամր կէնայ, կըսայ.

—Գացէք էն աեմուն բռնէք, բասլիմ էրէք յրմալ զալրմ մարդու մ' օր, լծայ ուր էզան հետ, բանցու չուրի օրն ի մեռնելուն։

Գացին աեամ բռնեցին, տուան պըտրտան աշխարհ, ևօթ մամլահեաբից սաւրկուն մի գոան, բասլիմ էրին ընտրն ու դաւձան։

Էդ բաՅր մարդն էր, յըմնօր աեմուն կը լծէը ուր էզան հետ չարաչար կը բանցուցէր։

Տէրտէր յիմցաւ օր ուր աեամ աղբօր սաւրկաւն էն էլած, չէլաւ, ուրին հար ինչ վարեաբ կար ծախեց, ըսեց—էրտամ, հասնիմ իմ աղբօր հաւարին։

Շատ ու քիչ օլորաւ, Աստուած գինայ. հարց ու փորձով գաւ ուր աեամ աղբօր. հար ինչ խոսա էկաւ էն բաՅր մարդուն, չը կրցաւ ուր աղբօր պըրծուցէր. չարնաչար փօռ ու փօշման լաց ու դառձաւ։ Աեամն ըսեց.

—Տէրտէր, մի լա. դնա, Աստուած օղորմած ա. «դուզիեն խոլմլա չը մնայ»։

Տէրտէր դնաց. տալի մ' էրկուս մէջ յրնցաւ, էլման ուր աեամ աղբէր յրնկաւ միաք, ըսեց.

—էրտամ, տէանէիմ, իմ աեամ աղբէր սաՙղ ա՝ թէ մեռէ։

Տէրտէր էկաւ, տեսաւ օր՝ էն բաՅր մարդն օր ուր սղբօր կը լծէր հետ ուր էզան, մեռեր ա. ուր աեամ աղբէր լէ գանգըցէ. գոլվարթողցէ.

—Օրչնալի Աստուած. ըսեց. չէ քզի տէսայ օր էն գալրմի ձեռնէն խըլըսար ու իսա վատքին տիրացար, թըրև իսա չապիկ լէ վրէս չէղնի։

—Գնա, տէրտէր ջա՛ն, ըսեց աեամ աղբէր. «դուզիեն խոլմլա չը մնայ»։

Բերին տէրտրոջ հետ բօլ փաւաւ ու հաւր ու մաւր գրին, չէլաւ գնաց։

Մէկ ժամանակ մ'էչ մէջ յրնցաւ, տէրտէր սաղըդ էրաց օր Շահ մեռեր ա, ուր աեամ աղբօր բերած՝ դրած չահ. ըսեց.

—Կանի, էրտամ, տէանիմ էտի մեծըցեր ա, իմ յերես կկըկայ Քը չէ՝ չէ։

Ցէլաւ էկաւ էլմի ուր աղբօր էրկիր. ըսեց.

—Խոլմլա չէղնի. ես պէտք ա արզուհալ մի գրիմ օր յէննիմ Շահի յերես։

Տէրտէր արզուհալ մի գրեց. աուաւ ձեռն ու դողդողալին մտաւ Շահի դիվան. գրա դաւռ չը բացեր էր, Շահ տէրտրոջ ճանչցաւ, Քուաւ թախտից յինջաւ, գաղաւ յառէջ, փաթթուաւ տէրտրոջ վիզն ու ըսեց.

—Տէրտէր, դու լէ մակեար արզուհալով գիկաս իմ մօտ։

—Իմալ էնէնք, ըսեց տէրտէր. ես կը վախէնէնք, դինէնք ընծի տիրուտեն պտի չէնէր։

—Ըրմնուն չէնէնք, տօ քոլի լէ, տէրտէր ջան. ես էաքան բէ-բա՛խս իմ յօրի։

—Հեռի քինէ, ըսեց տէրտէր։

Շահ քաշեց տէրտրոջ թևէն, բերեց դրեց վրը ուր բախտին. foւաճ չահի կնիկն ու ճժեր, խնամացան վրը տէրտրոջ. էլ չը թողէն օր տէրտրոջ յատ առնէր գետին։ Թամամ հինգ ամիս տէրտէր պա-հեցին մըտ ուրանցէրթլու օր, Շահն ըսեց.

—Տէրտէր, դինաս ես յրմնօր Շահ չը մնամ. քզի անխրկանելիք մալ պտի տամ, օր քէնի քու սրլսրլէն սաղ ա. ուսայ չը խլըսի։

Ասճա բերեց մէկ հարիր դեվե մի յեխ տուեց. դեվեհաներու վրէն բառնաս ալուր, գմրուր, fառուպար, բոստպուն բերեց խաս-խաս չորեր, չուխեf, խնամուզներ, խուրճիք, ալ ու խուտաբ. տօ ես ինչ գինամ, քուլու քուլու բաներ. բառնան ու տուեց տէր-տրոջ յատէջ. յինքն լէ հեծաս, ուր ձիաւորտաներով տարաս տէրտրոջ ճամբու դրեց։ Գոկուելու վախս, տէրտէր ըսեց.

—Փառք ու շուէր իմ Աստրծու տնէն. չէ օր քզի խաս բանձ-լուտնի մէջ տեսայ. ինչ գուզայ թրլս էղնի։

—Գնա, տէրտէր, ըսեց Շահ. «դուզնեն խոլմայ չը մնայ»։

Տէրտէր բօշ էկաս, բեռներով գառծաս։ Գնաց. մէկ ժամանակ մի մնաց, տէրտէր ըսեց—էրտամ տեսնիմ, ինչ էղաս իմ Շահ տղրէր։

Տէրտէր յէլաս, էկաս օր ուր Շահ տղրէր՝ հազար ափսոս օր մեռեր էր. վրը դխուն զարկեց, վրը ուր չսէերուն ափեց, լաց ու դրուաց. դնաց Շահի գերեզմնի վրէն կանաս. օրշնեց, պրծաս. յըն-ցաս մէկել կուշտ. տեսաս օր քաթի վրէն գլուխ էր—«դուզնեն խոլմ-լայ չը մնայ»։

—Քու տուն չակօլի, ըսեց տէրտէր. մեռէ, պրծէ, գըռ կըսայ —«դուզնեն խոլմայ չը մնայ». ախր էլ ինչ կայ օր. ինչ պտի էղնի։

Տէրտէր ախ ու վախ էնէլին դառնաս ուր երկիր։ Մէկ ժաման-նակ մի մնաց. տէրտէր ըսեց էլման.

—Էրթամ իմ ախպօր պերեզման օրշնիմ ու դամ։

Ցէլաս, էկաս. տեսաս օր ինչ տեսնի.—գերեզման քանդած. Նա տեղ, նա քար, նա բան, նա նալ, fամբխացուցած՝ մէկ հալ էրած աւիրկայ.

—Հեյվա՛խ, ըսեց տէրտէր, օղորքմա օր էս մարդ չկամասուն էր, օր դալիմա կըսէր—«դուզնեն խոլմայ չը մնայ». մակեա՛ր, գե-րեզմնի մէջ լէ գաստար չըն քարկի . . . ։

Տէրտէր մալուլ ու չիւսրուկ, դարձաս ուր մամլահեաթ ու էլ էնէր օր գնաց։

27

ՓԸՇԿՕ-ՆԸՌՆՕ

(Ալաօկերթի բարբառով) *

Ա՛էկ մալլու մի իրնք տղայ կէղնի՝ էտ մարդն ա՝ օր մի գեղի իշխանները կը խանչայ ուր տուն, կըսայ.—Գինա՛ք, ըռէտնե՛ր, ձգի խանչէր իմ օր՝ իմ սաղիբաճ իմ մալ բաժնի՛ք վըր իմ տղէկներուն, չընչի օր իմ մալ չատ ա, չէղնի չէտի սօղին իմ տղէկները չիրար դաւսամահիրում 1) հանին։—Շատ տղէկ. ըսին իշխաններ. դը, բիր, տէսնինք, ինչ ա քու մալ, մենք լէ հալալու-տենով բաժնինք։

Գացին բերնցին օր՝ մէկ կատու, մէկ լոզ ու վաթսուն փարայ աւ —Դի՛, ըսեց տղէկներու պապ. մանչիս, չալամաթ, փայ էրէք, իմալ օր մըճասըպ կը տէսնի՛ք։

Մանչիս փայ էրաց։ Կատուն՝ տուաց չոզ՝ տղին. լոզ՝ միչնակ տղին, վաթսուն փարէն լէ պղտիկին։ Ցառէչ պղտիկ տղէն առաւ վաթսուն փարէն ու դնաց. ճամպու հետ չինք ուրին մոմատաց ու ըսեց։—Մչու դալտ խարճ ու խարաճ դուզին. դիղսիդ՛ք նեղուտենի մէչ ին, կը տանիմ իմ փարէն կիտամ, չէժան գնով կաբրտ կառնիմ։

Տզէն էր՝ էտ մարախով կը քէլէր ու կէրտէր. գիչեր էր, հաւաւ Կեղաս-Ըռաչու (Սև բերդ) ձոր. քուն զօռաց վրէն, դարձաւ ըսեց քնուն.—Փա՛ւն. արի՛ ընծնէ վա՛զ կէցի, իտա խրտըր փարայ կայ մօտաի, գիկան, ընծի կըսպանին, փարէն կը տանին։ Էրկաց ու չերկաց, քնաւ հետ չեղաւ. չարճաչար հանեց քսան փարայ թալեց քնուն.—քուն, ընծնէ վազ կէցի. ըսեց ու քնչնաց։ Գնաց ճամբուհետ. իչկեց օր հանուտայ fon մուկ մի՝ նրմա հող կը փորայ ու կիտայ վըր ուր պլտուն։

---

1) Ըստ բառիս օրինաց երբ պայը ազգ եղած միջոցին ուղիներէն մին մեռնի, մեռնողի ողջ բաժին չէր հասներ. վասն զի հայրէ զկուաճ էին։

—Ջանըմ մուկ, ըսեց քու նեղուտեն ինչ ա. դու իսա հող յօրի կիտաս քու դլխուն. ան իսա քսան փարեն քոլ, պրծի էդ նեղուտենից։

Քսան փարա լէ մկան թալեց ու չընցաւ։

Փչում անդ դնաց, տեսաւ օր հանատայ քօմ մի դղէզ լցուած ա մըչ Թրքին, ներսա կը կլորին ու կը տանին։

Հալա՜ հալա՜, ած դղէզներ, ձղի՛ ինչ ա ձեռ տուէ. չընչի՛ խաբմա ձեր ձեռ ու յոտ կը Թրքոտիք. քեզ ու մուրթ ձղի կը լաւօտիք. աւ՛ք իսա քսան փարեն, էտ նեղուտենից պրծէք։ Քսան փարայ լէ Տոնից Թալեց ու դնաց։

Ցղի փարեն խլլսաւ, գնաց գնաց հասաւ Աւզաղլուր. էտ գեղի ըռէսլ տաւն էղաւ չըպուխչի։ Դէղի մէչ մէկ փաբէ մի կար. էտոր աղջիկ ըսկի չը ըրուցէր. ամն օր աէր ըրուցք՝ ընտոր պտի աէր փաբէն ուր աղջիկ։

Էղաւ օր՝ օր մի գեղի իչխան մանլիսներ Ֆօման օր էրտան, աղջկան տան ըրուցք։

Տղէն ուր աղին ըսեց.—Աղա. ես լէ գիկամ ձեր հետ։

—Տղա, լաօ, ըսեց աղէն. դու իայըմչա կղտոտ, ժպռոտ, ժանկռտոտ դմր գիկաս, մենք օր սրճաքոլ, Ֆօսբկոլ, ճալա ճալոլ ինք, մեր հետ չը ըրուցայ, քու հետ պտի ըրուցայ։

—Բան չէղնի, ըսին ըռէսներ, թըխ գայ էնտեղ, մղի խզմաք կէնայ։

Տղէն էր, չէլաւ էտոնց հետ գնաց փաբի տուն. չինք մնաց ձար կայնուվ, ըռէսներ լէ չէլան վէրին գին խուռմիօ էղան։

Ինչ էրվ-չէրին, չաբա մռմուն չեղաւ. աղջիկ չը ըրուցեց։ Ըռէսներ չէլան օր էրտէն, տղէն ըսեց.

—Ձղնէ բռնա կէնիմ օր նատիք, բան մը լէ ես պտի ըսիմ։

Ըռէսներ նատան. տղէն ուր պապու դօլվբի խսեն ու ուր գըլխու աուվալ մէկ մէկ խըսայ էրեց աղջկայ յառէջ։ Աղջիկ ճակատան ըրուցեց ու ըսեց տղին.

—Ատուած քու տուն աւիրա ու քու պապու դօլվբին. էտ էր կը պարվէնցուցէր։

Տղէն ջաղամաքի մէջ բօռաց ու ըսեց.—Շրնատ մացէք. աղջիկ ըրուցեց։

Ջուապ գնաց փաբին, փաբէն ամ էրեց օր՝ աղջիկ տան տղին։

Բերին աղջիկն ու տղէն պատկին. դրին յօդի մի մէջ։

Մէկ սատանայ մօտ մի ծռուկ էր վըր էդ աղջկան. էկաւ տղին ըսեց.

—Տղայ, լաօ, հան քզի հինգ բիսա փարա, մ'էրթայ մըտ աղջիկ։

Տղէն էր՝ խանմիս էղաւ մօլին, չգնաց. քաշից ջօք մի վըր գլխուն, ջակ տեղ մի պարկաւ։

Մօլէն էդ յրմալ փաբաւ տալով իրեք օր վըր յիրար տղին խաբեց։ Իրեք օրն օր բրմաւ՝ աղջկայ մամ խոճչով-բոխչով էկաւ աղջկայ տեսուտեն. ներս օր մտաւ, տեսաւ օր աղջկայ նիաթ կախ. լացէ, սրոլուէ, յայքերն ուռէ. ըսեց.

—Ցօ լաօ, դու յընչի իս խրմլա էղէ, ինչ օր դերեզմնեկրուց քաշին։

—Թաճւ, նանէ, Աստուած քու տուն ակօլայ, ըսեց աղջիկ. իաա տղին օր տուեր լք ընծի, ծուռ, բլէլի մէկն ա. ընծի կը թորկայ, կէրաայ պատի տակ fon հաւու պէս կը կուճուրուի։

—Օր յրմալ ա, ըսեց մամ, քու պապուն կըսիմ, թըխ տղին կորցու. քզի լէ կիտանք մօլին. մօլի սիրտ համին կպէրայ քզի։

Տղէն էր, դուան յէտև կանուկ, էտոնց խրսհն յանկաճ կէնէր։

—Ցօ, ըլա մօլէն ընծի դուպարաՀ ա էրէ. ըսեց ու վախաւ մըջ գնդին տուփաւ։

Լուսուն յէլան, տղին դաշին, չը դտան. ճամբին մօլի յէտև, մօլէն ուրիննելէն էկաւ. բերին մօլէն ու աղջիկ պսակեցին։

Էդ բան հաւաւ գղէզի յանկաճ։ Դղէզն էր, չուտ մի թռաւ, գնաց fon մկան ու քնու մօտ, ըսեց.—Ախպէր, էտ տղէն մզի էտքան աղեկուտեն էրեց, մզի նեղուտենից պրծուց. արէք, էրտանք ընտոր հաւարին, բալի մօլի գլօխ օղիաբ մի հանինք։

Մուկն ըսեց.—Իմ ձեռնէն ինչ դիկաՀ, ես ինչ կրնամ էնիմ մօլին։

—Դղէզ, գիտի դղէզ, բալի դու բան մի էնիս։

—Ախպէր, իմ ձեռնէն լէ էնքան բան չէնի։

—Օր յրմալա քուն, գիտի քուն, էլման դու բան մի էնիս։

—Ախպէր, ըսեց քուն, իմ ձեռնէն էնքան բան գէնի օր, ծանոր քուն մի թափիմ վըր մօլին օր՝ իրեք օր ու իրեք գիշեր տեղէն չը խլվըլայ։

Խօսք ուրանց էրին մէկ ու վազան մօլի բոլոր։

Աֆեանցրմ՝ քուն թափաւ վըր մօլին, մօլէն հըտ գահուն չըրպայ գետին. էղաւ չոր փէտ։ Մուկն ըսեց.

—Նոր էկաւ իմ տեղն օր մանիմ մօլի փոր։

Մուկն էր, սլվլայ մտաւ մօլի փոր։ Դղէզն էննդուց ըսեց.

—Ահան, իմ տեղ լէ նոր էկաւ։

Մուկ մօլի փորից դուս կիտէր, գղէզ լէ նըմա կը կլորէր ու կը թափէր վըր տախտին։ Ցէլաւ աղջիկ, աւել առաւ ձեռ. իրեք օր վըր յիրարու աւլեց. էն կաւլէր ու ընտոր կը լլնէն, էլ Աստուած նչանց չիտայ, հոտու աղջիկ գիժռաւ, դէղնաւ, խելրթփաւ։ Իրեք

օրն օր բաւ, աղջկայ մամ առաւ բարկէնկա. էլման էկաւ աղջկայ տեսուանն։ Դուռն օր բացեց, էլ Աստուած յետ ու հետուն էնայ. մեկ դէշ հատ մի զարկեց մամու քիթն։

—Աղջի, լաւ, էդ ինչ հոտ ա. ըսեց մամն։

—Աստուած քու պապու տուն ակոլայ, ըսեց աղջիկ. էն աղէն յիստակ էր, սէրսուլի էր, իտա կարանծ պատանք մօլէն էկէ չէկէ, վիլյուկ չընկէ գետին. բան մի փորուց կիտան դուս, դղէղներ լէ հրմայ փանճարից ու դունէն ու կը դզվզան ու գիկան. ես մեկ կաւլիմ, հազար ու մեկ կը լցուին։

Մամն էր, քչտասնտուաւ, վազաւ իրկայ մօտ. իրկէն էկաւ. բունին մօլի յոտնէն, քաչին թալին մրջ չեռմին։ Նոր գաչէն, տղին գատն. րէրին էլման աղջիկ պատկին վրը տղին։

Մէկել պղրէր լէ, լոզ պլուվեց մրջ թաղքին, կախեց կչտէն ու գնաց. գնաց մրջ դաւըռցոց յէլաւ դուս։ Դաւըռցիք ձեռով փէտ կը ճղրտէն, ըսեց.

—Ցօրի՛ ձեռով վէտ կը կարտէք, հանաք չունիք։

—Հանա՞ր ինչ ա ըսին։

Տղէն հանեց լոզ. յընկաւ փէտերու մէջ, մանտրեց, թափեց վրը յիրար։

Էդ բան օր տեսան գեղացիք, վազան մրջ գեղին. ձէն տուին յիրարու.

—Տօ ճրլա արէք, տեսէք լոզ պղրէր ինչ մարիֆաթով ա։

Գեղացիք թափան էկան. fօման լոզի տիրոջ գլխուն, լաւերով դաւերով՝ հարիր օսկի տուին՝ լոզ գնեցին։ Լոզ տարան դօռով գեղի մէջ վէտ կը կառուտէն։ Օրմ լէ դօր յընկաւ Կեաւխօյի (ըւէս) տղին։ Կեաւխօյի տղէն յառջի դրուց զարկելուն, զարկեց ուր ձեռաց բիլակ տալաւ. արուն յէլաւ ծաւոլեց Կեաւխօյի տղին, էտի էտ տեղէն բօռաց.—Հրլա արէք, լոզ պղրէր ծռաւ, գիմ ձեռ կերաւ։

Գեղացիք վազան էկան, լոզ տուին խուրդուջունի յառջէ, զարկին ու զարկին հոգի ուրանց չը հրռհաթաւ, իտհաղս բերբին fաճիր փէտեր լցին վրէն ու վառին. բալանքոց յէլաւ վեր, ալաճ չորս քառաճ բռնեց։ Էտրով լէ չը մնաց, բացին օր իչկէն՝ տեսան օր լոզ կարմրէ էղէ կրակի կտոր։

—Օհօ, ըսեցին. գիտի յէլէք վախնինք, օր էտի նոր ա կարմրէ. հրմա յէլաւ մզի հետ ու լուտ կուտայ։

Ժողաւան գաւառապետներ, ըսին։—Չէ, էդ յընկայ չէղնի, բերէք թալինք մեր Կեաւխօյի մարագ, օր չը կրնայ դուս յէլնի։ Կեաւխօյի մարագ, լիք պատրգման խոտ էր լցուկ. ապա՛, լոզն օր թալեցին մէջ, բալանքոց յընկաւ մրջ մարդին, մարագ լէ խոտի հետ

կալաւ ու վառաւ։ Գեղացիք տեսան օր չսբա չկայ, գնդով բարձան ու դէ գիտի փախի։ Լոզ աղրօր յէրսէն գնդն էդաւ խարտապա, դրա ճըլա մկայ մկայ խարտապայ ա։

Մէկնել աղբէր լէ առաւ ուր կատուն, գնայ, մէկ էրկիր մի յէլաւ դուս, օր ըսկի կատու չը տեսած էն։ Սր մի մէկ տուն մի խօճախ էղան յինքն ու ուր կատուն։ Խօճախ տէր հայ ըլլուց. տղէն տեսաւ օր հօթ ուղի չեհիլ քաշին փէտեր կայնան ուր դլխու վէրև. չաշաւ մնայ. հալցուց.

—Ձեբօր ընծի կսալանէք, էլ յօրի խտա հայ տուէցիք։

—Ախպէր, ըսեցին. խօ քու համար չէ. մէկ ջանավար մի կայ, դիկայ հայ կը վախցու, ընտոր կը քշինք։

Փշուա լէ մնաց չը մնաց, ճրմա էն դևն ու էն դևն պատի ծինեբուց միներ թափան ու էկան. ամէկ քրց կատու մի։ Տղէն գողաւ թեռան միջէն կատուին թողեց. աՖսեցրա, կատուն ձրւձրւուն էցկեց մինեբու մէջ. էն էն դևն լարեց, էն էն դևն խեղաեց, որ փախաւ, սուս ու քուխ էղաւ։ Գեղացիք fօման վրը տղի դլխուն.—Էդ ջանավրի անուն ինչ ա, ըսին։

—Փշկօ-Նբռնօյ ա, ըսեց տղէն։

—Ծօ, ոլլա մեր անծի չապկը լէ էղնի, պտի ծախինք, առնինք Փշկօ-Նբռնօն. ըսին գեղացիք, ու fօմեցին մըջ յիրարու էրկու հարբիր օսկի, տուին, կատուն առան։

Փոխատէփխա օրական մէկ տուն կըտանէն կատուն. էլ ազար, էլ խրամ, ամօ ես ինչ դինամ էլ օչխար մորթել, կատուի պատիւ էղեր էր Շահի պատիւ։ Օրմ լէ դօր յընկաւ մէկ աղքատ պառաւ մի. պառաւ ճետ մի ունեբ. էն լէ մորթեց կատուի յապով. էփեց, կարմրցուց, բրտուճ մի տուեց ուր թոռու ձեռ, յինք լէ գնաց դուս ջրի է՛, պառվու թոռ ճիժ, ձեռ դրեբ էր վրը մսին. կատուն անօթի, մէկ քէնիմ անդամ զբւբռնեց յբրէխի բոլոր, առատօրնց, ձանկ թալեց, մսի կտոր վախցուց. յէրէխէն ահու վրժվրժուն մի դրեց. տրնյբվայ ձեռնեբր քսեց քիթ ու մռութ, լաւտուեց դինք մէկ հաղ։ Գեճատնգեճ պառաւ դուռ բացեց, տեսաւ օր յէրէխէն տրընյվայ գետնի վրէն կը թապլտի ու կը վրժայ. կատուն լէ պոչ անկէ, կը նըռնբռայ ու յէրէխի բոլոր կը զբվբռնայ։ Պառաւ հըտ գահուն կուժ թալեց ու վախաւ. հաւար տարաւ մըջ գեղին.—Արէք, հա արէք. Փշկօ-նբռնօն ծուեր ա։

Գեղացիք ալ բրվրնճով, որ թրով վապան էկան ու պառուու յերդբկէն ճահա էրեցին խուրդուտուն. յետև դուռ ու յերդիկ կալուցին ու գացին՝ օր չէղնի կատուն վախնի։

Մնաց մէկ ժամանակ մի. էկան, դուռ բացին, տեսան օր ցրտու կատուն մտէ մըջ թունտրան։

—Է՛, որ բըռնայ, որ չը բռնայ, պտի Կեաւխօն բռնայ. կըսին գևղացիք։

Կեաւխօն ա, ապէն կը փըռայ վըր թռնտրան, գինք կը թալայ վրէն, կը պլուայ, կը բռնայ կատուն.— Գիտի, իմ ձին բերէք կըսայ։ Կը հեծնի ուր ձին, կատուն կառնի յառէջ. ձիաւորտանք կընկնին յետ. կէրտան հարի Մուրատ գետի կարմնճի վրէն։ Էդ տեղ Կեաւխօն կէնայ օր ապէն թռթռայ, կատուն թալայ մըջ ջրին. իմալ օր յըմալ կէնայ, իօճա կատու, դու կատու էղնիս, էլ չընկնի մըջ ջրին, ըպա՛. ճանկեր կը թալայ, կը կախուի ձիու քթէն։ Ձին կը փըռփըռայ ու կը թռվըռվայ դէս ու դէն. մէկ լէ բիրտաև ինքն ու Կեաւխօն ու կատուն առնա մըջ ջրին։ Ձիաւորտան տէտան օր Կեաւխօն սըկաւ ջրի տակ. հըմա ձին լողալին դուս յէլաւ՝ կատուն լէ թամքի օրեհն նատուկ. ձին չիտկուաւ դէմի դեզ, դէ գիտի փախի, կատուն լէ վրէն։ Ձիաւորտան փախան, պղպուն էցկին խազհն (գաւառ).—Գիտի՛ փախէք օր Փշկօ-Նըռնօն՝ յաւալ պայեա էր, մկայ էղէ ձիաւոր. գիտի՛ հա գիտի՛, փախէք օր պրծնիք։ Ափսեցրմ, ձեղեն չընկաւ աչխարհ. գևղացիք բառձան ու փախան։ Փշկօ-Նըռնօն հօթ գեղ աւրըեց, յէլաւ ծառի գլօխ նստաւ. ջուապ գնաց Բօտան ու Շէրվան—Թէ՝ գիտի ինչ կէնիք օր Փշկօ-Նըռնօն յէլէ ծառի գլօխ դուրբի կիչկայ, քէնի յաչք կը կտրայ պտի աւիրայ, դը փախէք օր պրծնիք։ Աղա՛, էն խազհն լէ սընովի բառձան ու փախան։ Փշկօ-Նըռնօյի յէրկէն չմտ տնիր համբխան։

28

ԱՐԱՐ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ (ԴՈՒՆԵԱ ԳԻՆՋԱԼԻ)

(Խլաթայ բարբառով)

Մէկ քաղքիմ՝ մէջ ղուֆարիմ՝ կէր, էդ ղուֆարէն մչտակաև կերթէր, մեօր մէջէն վէտ կը բերէր շալկով, կը տանէր մեյտան, կը ծախէր մէկ ղուրուշ փարի. խաց կառնէր, կը բերէր, ինքն ու ուր կնիկ կուտին։ Մէկ ամիսմ՝ էրկուս էդ բեազլրկին

գնաց, էկաւ. աւուր մէկին գնաց շալաֆ մ'էլ պոի բերէր, էկաւ, մեօի մէջ տեսաւ որ, ծառի գլխուց խաւրմ թռաւ, ասեց.—Աճ՛ապ, էդ խաւքու տեղ բանմ էդի, չեղի. մէկ էլիմ, տեսիմ. բան կայ նե, թի չկայ։ Էլաւ. տեսաւ որ, մէ խատ ձում կէր էնտեղ. տուաւ էն ձուն, էկաւ. վերցուց էլման ուր շալաֆ վէտ, բերեց մէյտաճ, ծախեց. էս դրուն ձուն տուաւ ձեռաց մէջ.—Վալլահ, չեմ ուտեր, էսա էլ պոի ծախեմ, ասաց. տանքու բիմին եահուդիմ էն տեղացէն էլաւ, էղաւ էդա ձուին մուօտարի։

Դուշարաւ, ասաց եահուդին, ինչ ա էդա քո ձուի գին։

—Ինչ որ կածի, էն տուր. ասաց դուշարեն։

—Տամ քեզ չորս խարիր դուրուշ։

—Չեմ գիտեր, եահուդի, ասաց դուշարեն. վըր ընծի կու ծըծդաս, դուշարաւ եմ գնուց. աժող դին տուր։

—Տամ քեզի լինդ խարիր դուրուշ։—Թան տուր, ասաց.

Թանեց եահուդին փարեն տուեց։ Եահուդին տաւ ձուն, դէնա վախաւ- դուշարեն փարեն մէկ դեխ առաւ, վախաւ։

Խլուաւն դուշարեն մէկ էլ էլաւ, գնաց մեօեն. տաւ շալաֆ վէտ ու մէկ ձու, էլման էկաւ։ Բերեց մէյտաճ, էլման տուեց եահուդուն, տուեց խազար դուրուշ տաւ. տաւ էկաւ, փարեն տուեց կնկան։ Կնիկն ասաց.

—Մարդ. լինդ խարիր դուրուշ էրէկ բերեցիր, խազար դուրուշ էլ էսօր բերեցիր, էսոնք ո՞ւստա ին.

—Կնիկ, ասաց մարդն. կէրթամ մեօեն, ծառի գլխուն խաւրմ կայ։ խաւք կու թռնի, ձուն կը բերեմ, մէյտաճ կը ծախեմ։

Կնիկն ասաց.—Կէրթաս ձուն կը բերես, խաւք կը թռի, կէրթա. քո չաճ քեզի ցաւ չտանր. էլիր գնա, զէն խաւքն էլ բունա, բեր։

Մարդն դիշերանց էլաւ, գնաց. խասաւ մեօեն, յուշիկմ բանձըրցաւ էն ծառի գլօխ, տեսաւ որ խաւք քնուկ էր, տաւ գլխաւքն, մէկ խատ էլ ձու ածըցեր էր, գնուն ու էկաւ.

Էդ բեազալրբին. էդ խաւքն էլ օր մէ խատ ձու կածէր. էդ դուշարեն էլ օրական ձուն կը տանէր. էդ եահուդուն, կը ծախէր, օր աւուր էվէլի գնալ։

Դուշարեն չատ անթիւ ուրին փարա ժողուեց. էս դրուն բերեց ուր խին տներ բլուց. ուրին թաժա տներ չինեց։ Էդոր մէջն իրեք չորս տարի ընցաւ, էրկու խատ աղայ էղաւ էդ մարդուն։ Տղէկներ որ քչում մեծըցան, մէկ օր մարդն ասաց կնկան.

—Կնիկ, տղէկներն էլ, խաւքն էլ քեզի բասլիմ, ես կէրթամ էյրուսաղէմ։

—Ապա էդա խաւքու անուն ձիկ չասեցիր ինչ ա, ասաց կնիկն։

—Կնիկ, էդ խաւքու անուն խաւիզ ա, խաւիզ ասած՝ չատ պին

ունի։ Չէղնի չեղնի, իմ խաւքուն ձեռ տաս. մուղաք կեցիր, չուրմ դամ. ձուերն էլ էլման կը ծախես եահուդուն, փարհն կառնես։

Էն տեղացին մարդ բարձեց ու գնաց։ Էն մէկիկ օր որ եահուդին էկաւ, ձուն պտի առնէր, Ենգախ կնկայ սերտն ընկաւ էդ եահուդին։ Կնիկն ասաց.

—Ընձի կառնես, ձուն կուտամ. չես առնէ, չեմ խաբր։

—Որ դու խաւքն մորթես, Ենոր մինն ես ուտեմ, կառնեմ, ասաց եահուդին։

Կնիկ խօսք էտուր. եահուդին որ ձուն առաւ, գնաց. կնիկ էլաւ ղևսաք մորթեց. գլօխն էլ, ջիկեարն էլ, ջանդակն էլ դրեց պատուխան։ Մնաց որ տղէկներ դուս էկան, ասին.—Մարէ, մենք անօթի ենք։—Լաօ, իրեք խատ մինս եմ դրէ պատուխան, էն ջոջ մի առէք, էն պղտկներ առէք, կերէք։

Տղէկներ գացին դրէս պատուխան. գլօխը ջոջ տղէն կերաւ, ջիկեարն էլ պզտի տղէն կերաւ ու էլան, սրախի մէջ կայնան։ Իրիկուն եահուդին էկաւ, կնիկ դուռ դրեց տղէկներու վրէն. սարաւ խաւքու մինս, դրեց եահուդու առջև. եահուդին որ ջանդակ մինակ տեսաւ, խարցուց.—Ո՞ւր ա էօր գլօխն ու ջիկեար։

Տղէկներ սրախ կայնած էն ականջ կինէն, կնիկն ասաց.

—Տղէկներն են կերած։

—Որ էմալ ա, ասաց եահուդին։ պտի տղէկներ մորթես, էն ջիկեարն ու գլօխ բերես, ուտեմ, Ենոր քեզի կառնեմ. ես խաւք տուի մորթել գլօխն յապով, ջիկեարն յապով։

Կնիկն ասաց.—Թող էղի, կը մորթեմ։ Ենգախ տղէկներ էդ խրսեն լսեցին, էլան դուս, ջոջն ասեց պզտկին.

—Մեր մէր մեզի պտի մորթայ. իրիկուն որ կը քնենք, էն գախ կասես. «Ես կը պողեմ, մենակ կը վախենամ, դու էլ արի խրտ ընձի» որ կելնենք դուռ. թռրկենք, էրթանք։

Մացին չուրմ իրիկուն, պտի քնին. պզտի աղբէրն ասաց.

—Մարէ, ես պտի պողեմ, մինակ կը վախենամ. չեմ կանայ էրթայ։ Մեր ջոջ աղին ասաց.—Դու էլի, գնա խեա։

Էրկու աղբէրն էլ որ դուս էլան, բռնեցին մէկ ճամբախ ու գացին։ Մէկ խելի տեղ որ գացին. պզտի աղբէր ճամբուց դուս էլաւ պողելու, ջոջն ասաց.

—Ես յուշիկ-յուշիկ կէրթամ, արի, ձիկ խասի։

Էդ տեղացին ճամբախն էդաւ էրկու ճամբախ, աղբրատանք իրար կորուսին. էլ չը կարցան գիրար գտած լին. մէկ աղբէր մէկ ճամբուով գնաց, մէկ աղբէր մէկել ճամբուով գիշեր տուց վրէներ, էդոնք ճամփուց դուս էլան. ամէկ ուր տեղ-քարիմ տակ պարկան։

Պզտիկ աղբէր թրիս էն տեղ պարկուկ մնայ. մենք դառնանք վըր ջոջ աղբօր։

Ջոջ աղբէրն էր, խըլըսուն լուսն որ բացուաւ, էլաւ, ընկաւ ճամբախն ու դնաց։ Շատ ու քիչ դնաց, Աստուած գիտայ, դնաց, խաաւ մէկ քաղքիմ, տեսաւ որ էդ քաղքի թագաւոր մեռեր ա. դաւլաթ-դուշի ին թորկեր ին։ Տղէն էլ դնաց, մօտեցաւ. դաւլաթ-դուշին թորկելու բիմին՝ էկաւ, նստաւ տղի գլխու վերէն։ Էդ քաղքի մախլուխն ասեցին.

—Ջանըմ, էդա պարիպ տղէն ինչ ա որ, գայ մեր քաղքի մէջ թագաւոր էղնի։

Տփեցին, մէեցին դուս։ Դաւլաթ-դուշին գինա մէկ էլ թորկեցին. գինա պտօտեց, դնաց քաղքից դուս, տղի գլխուն նստաւ։ Իրեք խատ թորկեցին, իրեք խատ էլ էկաւ, նստաւ տղի գլխու վերէն։ Բերեցին, տղէն էրին թագաւոր։

Դառնանք վըր տղէկներու խօր վերէն։

Խէրն էրուսաղէմայ էկաւ տուն, տեսաւ որ խաւքն ու տղէկներ չկան. կնկայ ըսըդաւ, առաւ ճամբախմ աւէջ. ու թորկեց, գնաց։ Գնաց մէկ քաղքիմ մէջ. մէկ թագաւորիմ՝ էզաւ սայիս։

Դառնանք վըր պզտիկ աղբօրն։ Պզտիկ աղբէրն էլ իմցաւ որ լուս բացուեր էր. «հէյ վախ, ասեց. էլ աղբէրս չեմ կանայ գտնէր». անճար, անօթի, ծարաւ էլաւ, թորկեց ու գնաց։ Շատ ու քիչ դնաց Աստուած գիտայ. գնաց մէկ քաղքիմ բուսաք էկաւ, մէյեցի մէջ տեսաւ որ դասապչին օխչար կը մորթէր, չատ կանաւ, ասքեց. դասապչին խարցուց.—Տղա, մչակ կեղիս։ Ասաց.—Կեղիմ։

Դասապչին վերցեց տղին, տարաւ ուր դուխան. ամիս մէկ մանիքեա հախ կտրեց։ Էն գիչեր տղէն քնաւ դուխի մէջ. դասապչին գնաց տուն։

Խըլըսուն դասապչին չուտ էկաւ, տեսաւ որ տղէն քնուց էլէ վեր, չորս-խինգ օխչար մորթէ, խատրկէ, կախէ էն տեղացէն։ Դասապչին չատ ուրախացաւ, ասաց. «էսա կտրիճ տղայ եա, կը պախեմ քովս»։

Մնաց չուրմ իրիկուն. դասապչին քան խատ օխչար առաւ, բերեց, էրաց դուխի մէջ. ու դուռ փակեց վըր տղին, թորկեց, գնաց։ Տղէն էլաւ, ճրագ կպուց. մէկ խատ օխչար բերեց մորթեց, քրթեց, սերսփեց, կախեց պատէն, էկաւ էչում պարկաւ. չիտկաւ, տեսաւ որ բարձի տակ բիսիկիմ փարա դրուկ էր. ուրախացաւ, վերցեց էդ գլխերաւան մէջ, էդ քան օխչարն էլ մորթեց, քրթեց, կախեց պատից։ Ամէկ օխչար քրթելուն որ կը պարկէր, մէկ բիսիկ փարա կը վերցէր ուր բարձի տակէն։ Տղէն էդ փարէք որ տեսաւ, ինք ու ինք ասաց. «խըլըսուն էլ դասապչու կուշտ չըմ կանիր»։

Խըլըսուն դաստայչին որ էկաւ. էն խսար եալվար ընկաւ, տղէն չը կայնաւ. թողնկց, գնաց։ Գնաց էդ քաղքի միջի մեյտան, տեսաւ որ մարդու մի մէկ՝ օխչար կը ծախէր։ Առաւ էն օխչար, մոքթեց ու քրթեց, տարաւ քաղքի դարկրնի պատէն կախեց։ Էդ տեղ մէկ քսան օր բաւլամիս էրաց, որ էկաւ մին առնելու, տղէն չծախեց ուր միտ Տղէն գիտէր փարէն օխչրից էր, չը գիտէր որ ուր գլխու տկէն կէ-չէր։ Խոլասաւ էդ տեղ էդ ջանդակէն խոտաւ. քաղքի մարդիկ գացին դանգատ էդ նեխուկ մսի խամար. նոր էկան մեծաւորներ, էդ ջանդակ թալին չներու առէջ. տղին էլ քաղքից մլեցին դուս, գնաց։

Տղէն չատ ու քիչ գնաց, Աստուած գիտայ, խասաւ մէկ քաղքիմ մէջ. գնաց ճանկմ օսկի տուեց պատաւուն, խօճախ էղաւ. Էդ պատաւու տան մէջ մէկ տաս-քսան օր մնաց։ Տղէն օրմ դուբճերու մէջ կը պոտէր. խապար առաւ որ էդ տեղ Դուննա-գիւզալի կայ. ասեց—Էրթամ, բամատա էնիմ։

Գնաց Դուննա-գիւզալու փանճարի տակ կայնաւ. էդ տեղ տեսաւ որ սանտմ էէր, մէկ խատ մարդ էլ էդ սանտի կուշտ կայնուկ էր. տղէն խարցուց էդ մարդու մօտէն թի.—Էսա ինչ սանտ աւ

Մարդն ասեց.—Որն օր էսա սանտն իլին օսկի լցայ, կէրթայ Դուննա-գիւզալու կուշտ, կը նստի. կուտայ, կը խմայ, կը պարկի։

Տղէն էդ խօսքն որ լսաւ, դարձաւ գնաց. փարէն առաւ, էկաւ. սանտ իլին օսկի լցեց, գլխուաւ խապար խասաւ Դուննա-գիւզալուն. -Քի էս թաւուր տղէմ, սանտ իլին օսկի լցեց։

Դուննա-գիւզալին ասաց.—Էս խսիսար թագաւորի տղայ, վազիրի տղայ, չը կարցան էսա սանտ լցած ին. էդ ինչ տղայ էաս որ, էսա սանտ լցեց։

Խանչեցին, տղին առան, էկան Դուննա-գիւզալու կուշտ։

Դուննա-գիւզալին խարցուց.—Էս խսիսար փարէն քեզ ո՞ւտա աւ

Տղէն ասաց.—Ես իսաւիղու խաւքու չիկէար եմ կերթր եմ։

Դուննա-գիւզալին ասաց.—Տղա՛. ես քեզի, դու ընձի։

Նոր նատան էճի ուրախութեն արեցին Դուննա-գիւզալին խանչեց աղչկներուն, գողտուկ ասաց.—Բերէք ընձի ձօթ տարուան գինին։

Գինին բերեցին, չատ խմցուցին, տղի խելք վերևէն գնաց. նոր էլան, տղին ձեմի պէս տարան ու բերին, չիկէար բերնէն էկաւ, ընկաւ. տղէն թալեցին գուս։

Լուսցաւ. տղէն մէկել օյանմիս էղաւ որ, փողնի մէջ պարկուկ ա, չիտկաւ. տեսաւ որ փարա չկայ գլխու տակ.—Վալլաճ, ասաց. ջիկէար առած ա։

Տղէն էդ տեղաց էն քաղքէն գուս էլաւ ու գնաց. խասաւ ծովում քնար, մտաւ գեամին, էլաւ մէկ սոճմ՝ գուս։ Գնաց պտոտեց,

տեսաւ որ էդ տեղ մեծ կէր, մտաւ մըջ մեջին. այքանց որ ծառէն Քուռմ կախուկ էր, առաւ էդ Քուռ, կերաւ, ուտելու բիմին տղին էրկու խատ կոտոշ բուսան.—Էդ ինչ պատիճ էր, պատց տղէն, մէկ այքանց որ ուրիշ ծառէմ էլ խնձոր կախուկ էր. առաւ խնձորմ' կերաւ, կոտոշներ կուրիսան։—Էսա տղէկ էղաւ. պատց տղէն. ու քաղցց մէկ խատ Քուռ, մէկ խատ էլ խնձոր, էկաւ, էլման մտաւ գետմա մէջ. դարձաւ, էկաւ Դուննա-գիւզալու քաղաք։ Խնձոր դրեց ջեպ. Քուռ առաւ ձեռ ու ըսեց.—Քուռ կու ծախիմ-Քուռ, ու պոտատց մըջ քաղքին, էկաւ Դուննա-գիւզալու փանճառի տակ։ Դուննա-գիւզալին որ լսեց, պատց.

—Աղջի, դացէք, էն Քուռ բերէք, ես ուտեմ։

Աղջիկներ էկան, տղից գնեցին Քուռ, առան դացին։ Քուռ որ կերաւ Դուննա-գիւզալին, էրկու խատ կոտոշ բուսաւ վըր գլխուն. առաւ մէկ էն պատ, մէկ էն պատ։ Տղէն էլ փախաւ, գնաց։

Դուննա-գիւզալին ինչ խեստ փսրաւ որ ժողուվ էր, յէն խրճեց, չը կարցաւ ուրին ծար մի էրկր ի։

Մէկ վախտ մնաց. տղէն գնաց փողջնեբուց Քուռէ ժողուեց, մէկ խատ դիլքմ չինեց. էկաւ Դուննա-գիւզալու փանճառի տըկով ընցաւ, ըսեց.—Հեէի՛մ խմ, հեէի՛մ։

Դուննա-գիւզալին որ լսեց. աղջիկներ ծամբեկց, տղին առան, դացին ներաւ Տղէն դիրք չրջեց դէն. չրջմըջեց դէն, կիսեց, խնձորից կատրմ, տուեց Դուննա-գիւզալուն, կերաւ. ուտելու բիմին կոտշներ պատից դուս էլան. էկան, մօտեցան։ Տղէն ասաց.

—Դուննա-գիւզալի, իմ դիրք կասայ. գդու մէկ էքռւմ տալիմ տուն աւիրեր ես. չուրմ էնոր չիկեաւ չիտաս, կոտշներ չըն կարծիս։

—Խա, ասաց Դուննա-գիւզալին. ես մէկ տալիմ տուն աւիրեր կմ, էնոր մեղաց տակ ընկեր եմ։

Նոր տղէն բերեց, եօթ տարուան դինէ խմցուց Դուննա-գիւզալուն. ձեմի պէս տարաւ, բերեց. չիկեաւ մօտէն առաւ. տպա խնձոր թամամ կերցուց, կոտշներ կուրիսան։ Դուննա-գիւզալին որ կոտշներ պատաւ. տղին ասաց.—Ես քեզի, դօ ընձի. էտեղ նատենք, ուտենք խմենք։

Էլան նատան, կերան, խմեցին. Դուննա-գիւզալին բաւէրատ խրեց, տղի խնձ գլխէն տարաւ. մէկ էլ չիկեաւ մօտէն առաւ ու տղին Քալեց դուս։

Լուսցաւ. տղէն էլաւ որ չիկեար չկայ, պատց.

—Վախ, վախ, Դուննա-գիւզալին գիննա ընձի խաբեց։

Տղէն էլաւ փօռ-փոռման տուեց ճամբաս առէջն ու գնաց։ Գնաց ճամբու վերէն. տեսաւ որ իրիք աղրիր իրար իրա հետ կռնին, խարցաւ Թէ.—Եղ ինչ կռիւ կէնիք։

Էն մէկ տղէր վերցնեց, ասաց.—Աղբէր, մեր խօր մալից իրեք բան խաւաս մեղի. մատնիքմ, չպուխմ ու քօլօզմ. մկա խըտ իրար չընք բաւիշի. էն կասայ ինձի, էս կասեմ ինձի, դու տղէկ խանդիսար. աքե, մեր մալ կիսայ։

Տղէն խարցուց Խի.—Ձեր մայեր ինչ խուսնար ունին։

Էնոնք էլ ասացին,—Էսա մատնիք որ օլրես, էրկու արաս կէլին միջէն. որ ասես, աւիրէք, կաւիրեն. որ ասես, չինէք, կը չինեն։ Էսա չպուխն էլ որ պանիս դետին, ասես.—Էսա քաղաք վերցուր, տար Ֆլաճ ատէն, էն սեարուն կը տանայ։ Քօլօզին էլ էն խուսնար կայ որ, որ դնայ գլօխ, կեզի աներևուիք։

Էդ որ խասկըցաւ տղէն, իրեք խատ քար առաւ ձեռք. Թալեց, ասեց.—Էսա քարեր Թալեցի, որն որ առէջ առաւ, էկաւ, մատնիք կուտամ, էնոր յետև՝ չպուխ, յետու յետ էկողին էլ քօլօզ կուտամ։

Տղէն քարեր որ Թալեց, էնոնք վազան յետև, ինք քօլօզ դրեց գլօխ, սրտ էղաւ։ Աղբրատնք փօռ-փօշման։ Թողին գացին։

Տղէն առաւ էդա բաներ, էկաւ, դնաց Դունեա-գիւզալու քաղքի մէջ, էնոր սարի մօտ կայնաւ. չպուխ պանեց գետին, ասեց.

—Զըպա՛խ, քեզնէ կուզեմ էսա սարին, Դունեա-Գիւզալին էլ խատ, էն ծովու ատի մէջ խաննատ։

Ասել Իմի՝ սարին, Դունեա-գիւզալին էլ խատ, էն ատի մէջ դրուաւ։ Դունեա-գիւզալին մէկ էլ աչքեր բացաւ, տեսաւ որ ատի մէջ նատուկ ատ։

Տղէն քօլօզ խաննեց գլխուց, ասաց.—Դունեա-գիւզալի, քո մարդ ճանչցաք։

—Իմ, ասաց Դունեա-գիւզալին. ըսդով էն դեն խօսք կուտանք, էղինք իրար։

Խօսք ու խրատ տուին, իրարու խատ էրդուորան։

Մէկ քանիմ օր ընցաւ, Դունեա-գիւզալին սատանութենով խաբեց, տղից մատնիքը, քօլօզն ու չպուխ առաւ։ Չպուխ զարկեց գետին, ասաց.

—Զըպուխ, քեզնէ կուզեմ որ, էսա սարին գիներ ուր տեղ նատի. տղէն մնայ էսա տեղ։

Սարին՝ Դունեա-գիւզալին էլ խատ, վերցուաւ, բախրար գլուաւ ուր տեղ։

Տղէն մէկ էլ աչքեր բացեց որ, մինակ ա մացի։ Էկաւ, պատահեց մեր ատին, տեսաւ որ մէկ խատ հմիշտ ծառից կախուկ էր, փրծուց. կերաւ. ուտելու հետին՝ էղաւ խէռոզաց մէկ էյմ. էն ուղացէն իննօրմ էլ փրծուց կերաւ, էլման էղաւ իսան։

Տղէն առաւ գետ հմիշն ու իննօրն, նատաւ գետին, ընցաւ էն հաճ ու դէմ էրեց Դունեա-գիւզալին ու էկաւ։ Մտաւ քաղքի մէջ

էլման հիւճն առաւ ձեռ. ու գնաց Դուննա-գիւղալու փանճառի տկով ընցաւ, ասաց.—Էմիւճ կը ծախնմ, հի՛ւճ:

Դուննա-գիւղալին ճամբեցաւ աղջկներուն. առան հիւճն, էկան Դուննա-գիւղալին որ կերթաւ, էղաւ մէկ խատ էշմ Աղջկներ ափեցին Դուննա-գիւղալուն, մէջին դուռ Տղէն դուռ կայնուկ էր, առաւ գէշն ու գնաց Գնաց տեսաւ որ խալիւռըմ շալկով խող կու կըրէ, ասաց.—Պապէ, ընչէ շալկով խող կը կրես, արի էսա էշ կուտամ քեզի. ճրմա՝ ոչ խլաւցուցես, ոչ խատուցես. ամէկ կուշտ էրկու տեղով եարաւ բանաս:

Պապէն էշ առաւ, գնաց, տղի ասածի պէս արաց. խող կրկուց որ պրծաւ, էշ թողկեց:

Էդ քաղքի մէջ էլ սովորութէն կէր, Թագաւորի սարի մօտէն զրճիլ կախուկ էր. ինչ մարդ գանգատ էրթէր, կէրթէր զճելի մօտ կու կանէր, ձեռ տէր զճիլ, զճըլի մօտէն ձէմ կէլէր. կըրոնին, կու տանին, կու խանին Թագաւորի էրես:

Էդ էշն էլ պտօտալէն գնաց, քամակ տուէց էդ զրճիլին. ձէն էլաւ զրճելից:

Էն գախ Թագաւոր խանչէց, ասաց.—Տեսէք, էդ ինչ գանգրատուր աւ:

Էկան տեսան, որ էշմ աւ Գացին ասին Թի.—Թագաւոր ապրած, էրկու տեղով եարալի, զապուն էշմ՛ աւ:

Թագաւոր ասաց.—Խարցուցէք, տեսէք, էդ իչուն որն ա բանցուցէ:

Թալալ տուին խանչէլ. խալիւռըն գտան, առան էկան Թագաւոր խարցուց.—Խալիւռ. դու Աստուց կը վախեցար, էսա իչու դլօխ ինչ ես էրեր ես:

—Թագաւոր ապրած, ասաց խալիւռը, տղի մէկ էդ էշ տուէց ընձի, Աստ տուր թալեց, ասաց. «ոչ խատուցես, էրկու կուշտն էլ եարաւ բացեար:

—Դու էն տղէն կը ճանչընաս. խարցուց Թագաւոր. գնա, բէր:

Խալիւռը գնաց, տղին գտաւ, առաւ էկաւ Տղէն Թագաւորի առէջ ճախլ էրաց, ինչ որ ուր դլուն էկեր էր էն տեղ Թագաւոր իմցաւ որ էտի ուր աղբէրն ա. իչէրն էլ որ էղեր էր սեյիս. էն էլ իմցաւ որ տղէկներ ուրն են:

Նոր առան էկան զէշ. տղէն խնձոր կերցուց, էրաց էլման Դուննա-գիւղալի Թագաւոր բերեց Դուննա-գիւղալուն պատկեց վըր աղբօր. խէրն էլ սայիսութենից խանեց, բերեց ուր կուշտ, ժողուան վըր իրար. եօթն օր, եօթ գիշեր, եօթ ցերեկ, դուռ զանին. խարտնիս էրին. էնոնք խատան ուրանց սրտի մուրազին, դուք էլ խատնիք ձեր մուրազին:

29

ՈՒՍՏԱ ՄՈՒՐԱՏ

(Խոպան բարբառով)

Մէկ պառաւմ՝ յինքն էր մէջ աչխարքին՝ մէկ տղայ. էդ տղէն էլա՝ պիչերուայ մէկին բուդա խմեց մէկ թաղաւորի աղջկայ խետ. խըլուսուն որ զարթաւ, ասաց.—Մարէ, հա էսա տունը քեզի, ես բարկը դուսեա կէղիմ ու կէրթամ.

—Ծղա, ասաց մէր. վերև Աստուած, ներքև իմ ումուս դու ես. դո՛ր կերթաս

Մէրն լալով ասայ ու տղէն ինք դուս ընկաւ, էլ չը կայնաւ։

Շատ գնաց, քիչ գնաց. Աստուած գիտայ, խանդիպաւ մէկ քաղքիմ մէջ. էդ էն քաղաքն էր, ինչ որ էդ տղէն էն աղջկէ բուդեն խմեր էր։ Ծղէն էր, էդ քաղքի մէջ պտօտեց ու գնաց էկաւ. ինչ արեց, չը կարցաւ էդ աղջիկ դուռ էր։ Կիրակի օրմ. տղէն մէկ շուշաբանց սարի մ' տկով որ կընցեր, աղջիկ փանճարէն նստեր էր, տեսնելու հիմին տղին ճանչցաւ, իր սրտի մէջն ասաց.—Ողլա էսա էն տղէն ա, ինչ որ ընձի բուդա ես տուե. խանչեց վերևուց,—Ծղա, տղա, մէկ էհայ ալքաւ

Ծղէն մէկ ալքեց. տղէն էլ ալքելու հիմին ճանչցաւ։ Աղջիկ էն տեղ մաշուղ էղաւ, տղին ալքեց, տղէն մաշուղ էղաւ, աղջկան ալքեց։ Աղջիկն խարցուց.—Ծղա, ուղիղն ասա. տեղ ունիս գիչերուան քնելու—Չէ, ասայ։

—Որ էմալ ա, գնա էսա դիմացի յօդէն, դուռ դմր.

Ծղէն գնաց, դըռան զանեց. մարդմ էլաւ դուս, աղջիկն ասաց.

—Էգա տղէն ներս մտ, մուղաթ կեցիր։

Էդ մարդն աուաւ տղէն, մտաւ ներաւ Թագաւորի աղջիկ ինչ կերակուր որ կուտէր, էդ կերակուրից տղին ճամբեցաւ։ Գաւառն օր տղէն էդ տեղ մնաց։ Էդ քաղաքն աւուր մէջ ուրիչ Թագաւորիմ տղայ էկաւ էդ Թագաւորի աղջկէն ուղելու. դու մի ասա աղջկայ մէր ձե-

ուց տկով ջուապ էր համբխեր էր էդ թագաւորի տղին. էկեր էր։ Խանչեց թագաւոր աղջկան քի.—Աբի, էսա տղէն առ։

—Չեմ առնիր, ասաց աղջիկ. ճար ոն բերես, չեմ առներ։

—Ըպա ոն կառնիս, անզգամ. ասաց թագաւոր խերսաս-խերսաս։

—Իմ առած տղէն կօ էսա յօդի մէջն ա, ասաց աղջիկ։

Թագաւոր ասաց. գայինն, տղէն առան, էկան։

Էդ տղէն որ բերեցին թագաւորի յառէջ, թագաւորն այլկէն ասաց.—Աղջի էտի թմրկ։

—Իմն օր կայ էսա տղէն ա, իմն օր չկայ, էսա տղէն ա։

Էդ տեղէն տղէն դուս մլեցին. մէկ քառասուն օր, քառասուն գիշեր էդ քաղքի մէջ կնիկ չմնաց, մարդ չը մնաց, էդ աղջկան քարոզեցին, մուհուճ չեղաւ թագաւորի սուլթանն ասաց.—Խանչէք ձձոսմ խէծնող պառաւ, Քըխ գայ։

Պառաւ խանչին, բերեցին թագաւորի կնկայ յառէջ. կնիկն ասաց.—Պառաւ, կուզեմ քեղնէ էսա բան չինես. խօսքմ դուս խասկեցուցես իմ աղջկէն։

—Սուլթանճ խաճմ, ասաց պառաւ. ես ինչ խօսք խասկեցուցեմ քո աղջկէն, քո աղջիկ սէր ու սավետա ես կապէ. էլ կելի որ տղից չոկուի։

Գլօխ չը ցաւցուցեմ. պառաւն էլ չը կարաց աղջկէն խօսքմ խասկեցուցեր էր. չարհն կտրաւ, էլաւ դնաց թագաւորի մօտ, ասաց.

—Թմպաւոր ապրած, դուս ինչի ես մտեր բեռան տակ. տղէմ ա, մօտէն բան մ' ուզայ. ճամբխայ, զատանց տեղ, էրթայ, կորուսի, չիգայ, քո աղջիկն էլ ուսուս կը կորայ. կաւնի մէկ ուրիշմ, կը պրծի։

—Ես ինչ ուզեմ, պառաւ, որ տղէն էրթայ, կորուսի, չիգայ։

—Ինքուճ աչքրքի վերջ՝ ասաց պառաւ, խօսող մարմառ քար կայ, էն քար կու գլուցայ, ինչ խօսար մարդ որ գացէ էն քարի չէտև՝ սաղ չը դարձեր ա, ճամբխա, բայէի էրթայ, կորուսի։

Թագաւոր խանչեց տղին, ասաց.—Գնա, աչքրքի վերջ, խօսող մարմառ քար կայ, էն քարերուց բեր, ճօճ ու սարհ մ' չինես. նոր աղջիկ կուտամ քեզի։

Տղէն դուս էլաւ. գնաց աղջկէ յօդի պատի տակ նստաւ, էլաց. աղջիկ գլօխ ի ճանճարից խանչեց, ասաց.

—Տղա, ինչի նստեր էս, կուլաս։

—Թագաւոր մարմառ քար կուզայ. ես էրթամ, յոնսա բերեմ։

—Մի լար, ասաց աղջիկ. յէլի, գնա քո յօդէն, Աստուած, ազրամած ա։

Ասելու բիմին տղէն էլաւ, գնաց, մտաւ յօդի մէջ։ Տղէն քնաւ. գիշերուան մէջ էրազ էկաւ տղին, ասաց. «Սօթին օր ճամբախ կէրթաս, ւօթին օր որ կը բմի, սիվտակ մուրուս խալիւորիմ՝ կը խանդիպնես. էնի ճամբուս վրէն նստուկ ա, էնի քեզ կասայ իմալ էրթաս՝ իմալ չէրթաս»։

Տղէն իմցաւ որ էրազ էր. դարձաւ էլման պարկաւ, քնաւ։ Բարի լուսն որ բացուաւ վըր ճաղատաթին, տղէն էլաւ, ընկաւ ճամբախ։ Սօթն օր որ բմաւ, դնաց դէմ էդաւ էն խալիւորուն.—Բարի լուս, ասաց. պապէ։

Ասու բարին, տղա, դո՞ր կէրթաս։

—Թագաւոր դրեր ա վըր ընձիկ, խօսող մարմաւ քար կուզայ, ես իմալ էրթամ, իմալ բերեմ. բայէիմ ճամբախ դնե խանեմ, պապէ ջան։

Սբոր էմալ ա, տղա, լաօ՛, կէրթաս ծովս պուռկ ջոջ քարմ՛ կայ, էն քարի տակ խրեղէն ձիու գեամ կայ. էն գեամ կը խանես. կը զանես ծովս մէջ, խրեղէն ձիմ՝ կէլի, կը խէծիս՝ էն քարի տակ մէկ խաս էլ սանտր կայ, մէկ յէսան, մէկ խաս էլ արծլի։ Ցէսան թալիս, վեհին կեղի ասաս քար որ չէյբան մէջ չը կանայ պատուեր. արծլին թալիս՝ դուբան կը կտրի ծով. էն սանտր որ թալիս, կեղի ասասայ փուչ. էն քո յետև ընկնող քեզի չը կանայ խաւիր էլ։ Էմ կէրթաս, մարմաւ քարի վրէն կը կայնիս. մէկ կտոր կտրելու բիմին, քարեր ուրանց ուրանց կը կտրուին ու կընկին քո յետևէ, չում թագաւորի սարէն. հրմա՝ տղա, լաօ, չը վախենաս, էն տեղ քո յետևէն կը բռնան Քի ահմ հմյ, մարմաւ քար տարաւ խողոցինը չեղի յետևանց աչքիս, օր աչքելու բիմին կեղիս քար, չեղի աչքիս։ Էն տեղացէն քար որ առաւ, էկար. կէրթաս էլման էն ջոջ քարի քով, գեամ ձիու գլխուց կը խանես, խրեղէն ձին կէրթայ ծովս մէջ, գեամ կը խորնս քարի տակ, կէրթաս քո բանին։

Խալիւորն օր տղին բարիճ էրաց, տղէն առաւ ճամբախն ու գնաց։ Գնաց խաւաս էն քարի կուշտ. գեամ քարի տակէն խանաց. զարկաց ծովս մէջ, խրեղէն ձի մ՝ էլաւ դուս. էկաւ էդ քարի մօտ կայնաւ, առաւ գլէսան, առաւ զարծլին, առաւ սանտր, խէծաւ ձին ու դէմ էրաց մարմաւ քարն ու էկաւ։ Շատ գնաց, քիչ գնաց Ասուած գիտայ. խասաւ էն մարմաւ քարի քով կայնաւ. զարկաց, կտորմ քար կտրաց խրեց չախմախքարմ. դրեց ծոցն ու դանաց ձիու բերան, դաբձուաւ հարեր ուրանց ուրանց կտրուան ու ընկան տղի յետևանց։ Սարեր, քարեր, դաշտեր լառաջին, խէծքին—հմյ խաղաձին մարմաւ քար տարմ ու տարմ. ասել բիմի. էդ քարի տէր յառաւաւ էկեր, խէծաւ ձիուն, ջին էրաց չդուխ, առաւ ձին ու ընկաւ տղի յետև։ Տղէն յէսան թալեց յետևանց, էդ կայնէն դաշտն

կտրաւ սար ու ձոր ու քար: Պառաւ սար ու ձոր ընցաւ.—Տղա, ասաց. իմ ձեռէն դո՛ր պրծիս:

Տղէն թակից սանուր, թակելու իմիկ՝ էղաւ տատաչ ու փուչ: Պառաւ էլման պրծնելանց էր, տղէն թակից զարծլին. դուրան կտրաւ ծով, պառաւ խէծաւ ձեռա, տուկց վըր ծովու վերէն. խասաւ ծովու կէս, պառաւ էդ տեղ պատռաւ:

Տղէն դարձաւ, էկաւ էն քարի տեղ, ինչոր գեամ ակէն խաներ էր. գեամ ձիու գլխուց խաներց, ձին գնաց ծովու մէջ. գեամ խորեց քարի տակ ու առաւ քարն էկաւ:

Տղէն բերեց քար, դրեց Թագաւորի սարի յառէջ. քարերու կտորտանք գըռ. ընկուզ ճանըմխա կուգէն, էկան Թագաւորի սարի կուշտ իրար վրայ գխիրուան:

Թագաւոր խանչեց սհոճի պառաւուն, ասաց,

—Պառա՛ւ, տղէն էկաւ, իմալ էննէք:

—Իմալ պրծի էնես, ասաց պառաւ, ճամբխա անմահական խընձորի, էրթայ էլ չիգայ:

Թագաւոր խանչեց տղին, ասաց.

—Տղա, անմահական խնձոր պրծիս, ջուր չը բերես, աղջիկ չեմ իտար:

Տղէն գհնայ դուս էլաւ, գնաց, աղջկայ յօդի պատի տակ նըստաւ, էլաց:

Աղջիկ գհնայ սիրտ տուկց տղին. տղէն գնաց պարկաւ Քնաւ. էրզի մէջ տղի էկան, ասեցին.—Լուսուն կը խանչես քո Աստուած. կէլիս կէրթաս. Խարշու ձոր կայ. էն ձորու մէջ քարմ կայ. էն քարի մօտ մուղարհ մ' կայ, սահսան ոտ ճարտիկան կիզիս ցածը, էն տեղացէն կը բռնաս. բռնալու իմիկն մէկ գազանմ կուգայ, չը վախենաս, գազան քեզի բան չի ասայ, քեզի կը խասուցէ անմահական խնձորին, կառնես, կուգաս:

Տղէն խընդուն որ լուացաւ, ընկաւ ճամբխա ու գնացէ Շատ ու քիչ գնաց, Աստուած գիտայ. գնաց էդ խարշու ձորու մօտ, էն ջոջ քարի կուշտ կայնաւ. տեսաւ որ մուղարհ գոռ. դազիկ էր. տղէն խանչեց Աստուած. ու մտաւ էգ մուղարհ մէջ. էդ սահսան ոտ թարտանեհն իշաւ. իջնելու իմիհն ետ գլխէն գազան էլաւ առէջ.

—Հա՛ ասաց, խե՛ր ա. տղա, գո՛ւ էս տեղրանք:

—Հեր ու ծաւ խաոռան իրար, ասաց տղէն. իմ Թագաւոր Ձիկ ճամբխար ա, մէկ խաո անմահական խնձոր կուգայ:

—Հա՛յ քու ճամբխողի ախքեր ֆօռնայ, ասաց գազան. դո՛ւ էսա բնաբա իկիր տղէն, գու իմալ ընկար էս վէրքեր, ես պրծիս, ես չը պրծիս. գնրի լաօ՛, գնրի վըր գլխուս, տեսանէնք վըր քո բախտին:

Գազան որ տղին առաւ վըր դլխուն, բօսաց կարմիր խօչուն։ Կարմիր խօչ մէկ սնաքուան մի ճամբան դառաննց բօսաց.

—Ի՞նչ ա. բանց, աղատող գազան։

—Կարմիր խոչ, մուխամ պախա քեզի. էսա տղէն կը թալէի քամկիդ, դու էլ խասուցա սև խօչու քամկին։ Ասաց ու թալեց։

Տղէն ընկաւ կարմիր խօչու քամկի վերէն, կարմիր խօչ թալեց սև խօչու քամկին, տղէն ընկաւ մուխ աշխարհ.—Աչքերդ խփա, ասաց սև խօչ։ Տղէն աչքեր խփուց։ Սև խօչն էլ թալեց սիվտակ խօչուն. տղէն ընկաւ լուս աշխարհ։ Սիվտակ խօչ խարցուց տղից.

—Տղա, դոր կերթաս։

—Հայ քու ճամբխողի աչքեր fonնայ։ Տղա լաօ, քեզի մուխամ պախա, որ քեզի չատ դառանց կը թալեմ. ճամբխաւ վերէն ջոջ ձորմ կայ, իլին ջուր ա, թի էս եաճ ընկաը, զաթի կը կուրխախս, թի էն եաճ ընկաը, կընկնիս լուս աշխարհ. կերթաս քօ անմահական խնձոր կառնես, կը դառնաս. որ դարձար, էկար. էն տեղ ջոջ քարմ կայ, կուդաս էն քարի կուշտ, կը կայնես. ազնահուրի խաւք յմէն ժամ էն քարի վերէն նստած ա, որ խաւքուն տեսար, դլօխ կիջուցես. կը խնդրուիս քովէն, էն քեզի կը խասուցայ իմ քամկին։ Ասաց ու թալեց սիվտակ խօչ. տղէն գնաց ընկաւ ձորով էն տեղ—լուս աշխարհ։ Տղի աչքեր սր բացուաւ, պոօտաւ. գնաց, մէկ խատ անմահական խնձոր քաղից ու դարձաւ, էկաւ էն ջոջ քարի կուշտ, Ազնահուրի խաւք դայիկ էր. տղէն գլօխ իջուցեց, խաւքն ասաց.

—Խոդածին, խաւք ուր թևով, օձն ուր պօրտով, էսա տեղրանք չը կանէր գէր, դու իմալ էկար։

Տղէն ասաց.—Սապիպի տուն Առտուած աւիրա, որ ընձիկ ընկերցուցեր ա դայիկ, քեզնէ կը խնդրեմ, ազնահուր խաւք, որ ձիկ խասուցես սիվտակ խօչու քամկին։

Ազնահուրի խաւք տղէն առաւ վըր թևերուն, բերեց, դրեց սիվտակ խօչու քամկին. սիվտակ խօչ թալեց սև խօչուն, սև խօչ թալեց կարմիր խօչուն, կարմիր խօչ թալեց գազանի գլխուն, գազան էլ տղին խասուց սահաձ ոտ թառաճճին։ Տղէն դուս էկաւ էդ տեղէն ու էկաւ խասաւ թագաւորի սարէն, տարաւ անմահական խնձոր, դրեց թագաւորի յառէջ։

Թագաւոր որ տեսաւ, զարմացք մնաց, ասաց, խանչէք չիգայ պառաւնն։

Պառաւ գտան, բերեցին. թագաւորն ասաց.

—Պառաւ, քու տուն քանդուի. տղէն էլման էկաւ։

—Բան չկայ, ասաց պառաւ. ուսքա Մուրատ էսա ուզ խարիր տարի մեռեր ա. դրէս էրթայ ուսքա Մուրատին գտի, բերայ որ քու fօcf ու սարէք չինայ, նոր քո աղջիկ տուր։

Թագաւոր խանչեց տղին, ասաց.—Տղա. քեզնէ կուզեմ ուսքա Մուրատ բերես, որ էսա fooք ու սարէք չինայ, նոր աղջիկ տամ քեզի։

Տղէն էլման էլաւ, գնաց. աղջկէ փանճարի տակ էլայ, աղջիկ գլօխ փանճարից խանեց դուս. սիրտ էտուր տղին, տղէն գնաց էլման պարկաւ։ Գնաւ. էրդի մէջ էկան, ասեցին. «Տղա, ուսքա Մուրատ էնու գերեզման Ջանճլու սարի գլօխ. քառասուն գերեզմաներու մէջ խորուկ ա, էնոր վրեւու քար կարմիր քար մ' ա. էն քար որ շրջեցիր. էնոր դօշի վրէն ուրիչ քար մ' էլ կայ, էն քարի վերէն գրուկ ա. էնոր խաճքրներ թի որ տեղ խորուկ ա. վորես, զէն քար կը խանես. էն գերեզմէն վրէն կայնաւ. կարմիր քար չրջեց մէկ հաճ. վորից, զէն քար խանեց, սիվտակ գրեր բլուց. ուսքա Մուրատ աչքեր ճմռելին էլաւ, նստաւ.

—Հէյվախ ասայ. էս ինչ խնտար քներ եմ ես. տղա, ընչի էտա քնից խանեցիր ձի։

—Իմ թագաւոր ճամբէխ քո յետև, որ գաս, fooք ու սարէք չինես. ասաց.

Ուսքա Մուրատ քարի վերևի գլխ կարդաց, էլաւ առաւ գաղէն, գնաց վրը խաճքներուն, կայնաւ Փորից, խաճքներ խանեց, խարխը տարուան խաճքներ ինչօր մէկ աւուր խորուկ էղնէն. ուրագ գարկեց դուր մէջկապ. տղէն էլ խաճքներ թալեց դուր քամակ ու ընկան ճամբէխ. էկան թագաւորի սարէն, էլան դուս։ Թագաւոր խանչեց պառաւուն, ասաց.

—Պառաւ, իմալ էնինք, տղէն ուսքա Մուրատն ու ուր խաճքրներն էլ առաւ էկաւ։

—Տեղ մ' էլ ճամբխա, ասաց պառաւ. քի էնի էկաւ, ինչ կուզես, ասաւ Արաքատան՝ որ չոգու մարդ կը խայի. էն տեղ քառասուն դեվա կայ, քառասուն դեվի կուշտ էլ քառասուն դունով նեղս մէկ աղջիկ կայ. ճամբխա գըխ էն աղջիկ, առնի, գայ քեզի, հրմա դիտեմ, էրթալու բիմին ոտով գլխով կը կորսուի։

Թագաւոր խանչեց տղին ու ասաց.—Տղա, կուզեմ քեզնէ, Արաքըատուն քառասուն դեվի կուշտ աղջիկմ կայ, բերես ընձի. նոր իմ աղջիկ խալալ կենեմ քեզի։

Տղէն դուս էլաւ, ուրան ուրան մէջից, ասաց. «էս գախուն ընձի օր ազատող կայ, խրեղէն ձին առ. դէմ էրաց, գնաց. դէմէս-

դէմ էն քարի մօտ կայնաւ էն տէղացէն գետամ քարի տակէն խանեց, դարկեց ծովու մէջ. խրեղէն ձին էլաւ դուս. տղէն իլաց։

—Տղայ, եա՛. ինչի կուլաս, ասաց ձին։

—Արաբատան չոգ ու կրակ. ես ճամբան չեմ ճանչնայ.

—Ցէլի, խէծիր իմ քամակ, մկան քեզ կը խաւսցեմ.

Տղէն էլաւ խէծաւ, ձին ասաց.

—Տղա, թի սևով էրթամ վըր իմ քամկին կիբէցես, չոգ ա. ջրի մէջով կը տանեմ որ խավ էղի. նրմա քեզի մուրհամ բռնա. աչքերդ էլ դաղիմ խփու, որ չը վախենաս։

Տղէն աչքեր խփուց. խրեղէն ձին խաւալամիջ էղաւ. ծովերն յմէն ընցաւ, մէկ աչք խփոցի խասուց տղին քաւսուն դևվի բեաւօցի մէջ, իջուց։ Տղէն ձին թորկեց էն տեղ, գնաց դևվերու սարի բոլոր պուռտաւ, տեսաւ որ դուներ բաց էր, մտաւ ներս. աչքնց որ ըռեզով դևվիք յօդի մէջ քնուկ էն. յեաւսուն և ին դևվէն էլ չէնքեց, ընցաւ, դնաց մտաւ աղջկէ յօդի մէջ, տեսաւ որ մէկ դևվեն էլ գլօխ դրեր աղջկէ չօքի վրէն, քներ աւ Աղջիկ տղին որ տեսաւ, մազեր փուչ փուչ կայնաւ, խարցուց.

—Տղա, օձն ուր պօրտով, խաւքն ուր թևով, էսա տեղրանք չէր կանայ գայ՝ դու իմալ էկար, քաչուէր, քեանի չուտ ա. էսոնք էսա քաւսուն օր քնած ա. մացեր ա մէկ սհար որ յիմնան, քո ջոջ կտոր քո անկանջ կը թորկեն.

—Աղջի, ասաց տղէն. ես քե յաղով եմ էկեր, իմ աչք դիպաւ քո յերես. դալհաններու ախն իմ սրտէն էլաւ. էտա քո ջամալ, քիթ ու բերան, էտա քու աչքերն ու ընքներ, քու խալխալ ծծեր ընձիկ վառեց ու իրիցեց. կուզեն մկա էլ թող էլնեն, ձիկ սպանենն։

—Ինչուէր, խէրիք ա ամբող ղամբող ղրուցես, ասաց աղջիկ։

—Աղջի, ընչի էմալ կէնես. դու խողածին, ես խողածին, ի սէր Աստուն էղնի, ձիկ թալեր եմ քու pon, ճարմ դու դարր։

—Ես ինչ ճար էնեմ, մնաց կէս սհար որ դևվիք յիմնան։

Տղէն չատ էլաց էդ տեղ։ Օր էլաց, էդ աղջկայ սրտի մէջ բռամ ընկաւ.

—Տղա, ասաց. մնաց տասուերկու դախա որ յիմնան. էսա դավի մուրտի տակ մէկ բալնիամ կայ, կանամա նէ չուտով խարձկես։

Տղէն վազաւ, խարձկեց. աղջիկն ասաց.

—Էսա իմ քամկի յետև դուռմ կայ, բաց, մոխ էսա յօդի մէջ. մկայ էսոնք քնուց կէլին վեր, որ յէլան վեր, էն յաւջի քնողն յաւալ կէլի, կէրթայ. էն որ դնաց. վաղն էլ էն մէկնել կէրթայ, յմալ տրով օրական մէկ, չուրմ քաւսուն օր բմի. յետքն օր էկաւ՝ մէկ օր կը մնան, էն մէկնել օր էլման բօմով կը դառնան, կգան. մկայ դու քաւսուն օր պտի մնաս էդ յօդի մէջ։

Տղէն դուռ փակեց, մտաւ ներ. դավիք քառասուն էլ պլօխ վերցին վեր, էլան նստան։ Խայ ուզեցին, աղջիկ խայ բերեց, կերան. էն յառջի դավեն էլաւ, դնաց։ Քառասուն օր լմաւ. քառասուն էլ դացին։ Աղջիկ խանչեց տղին, ասաց. —Դավիք գացին, արէ դուս։

Տղէն էկաւ, աղջիկն ասաց.

—Դու կանմա ձի տանես. որ էկեր ես տանելու, կօ հա խրլըսուն դավիք կուգան։

—Աղջի. ես ունիմ խրեղէն ձի, կօ հա դաչտ կարծայ. որ քառասուն օրուան ճամբաս մ՝ օր կու կտրայ. քեզ կառնեմ քամկիս, աչք բանալ խփուցելուն կը խասուցեմ տեղ։

—Նբոր էմալ ա, դնա, խրեղէն ձին բեր։

Տղէն դնաց, ձին առաւ էկաւ. աղջիկ բացեց դավեսնելու յօդէք, խաս խաս ապրնքներ, անդին քարեր, էրկեն բուռ, թալեն վրը խրեղէն ձիուն, էլան ջնջանց խէծան ու քշեցին։ Մէկ աչք թարթոցի թագաւորի fեաւեցի մէջ խասան։ Էդ տեղ ձիուց իջան։ Ձին տղին ասաց.—Ձիկ տալ իմ տեղ, նոր դարձէ. արէք, գացէք։

Տղէն խէծաւ, ձին տարաւ ծովու ալուկ. գեամ խաննց բերնէն, ձին մէկէլ ասաց.

—Տղա. քաչա էրկու խատ մազ իմ պօչէն. ինչ ժամանակին որ նեղ կընկիս, էսա մազեր կուտաս կրակ, ես քեզ կը խասիմ։

Տղէն քաչեց էրկու խատ մազ պոչէն, ձին մտաւ մըջ ծովուն. ինք էլ գեամ խորեց քարի տակ ու դարձաւ, էկաւ. առաւ աղջիկ, խասցուց թագաւորի սարէն։ Թագաւոր որ տեսաւ աղջկէն. խէք գլխուց գնաց, ուչքաթափ էղաւ, ասաց.

—Տղա, նոր քո բերած ընձի խալալ, իմ աղջիկն էլ քե, դը գնա, քո պատրաստութեն տես։

Զուրմ տղէն էկաւ, ուսքա Մուրատ խօսող մարմառ քարերուց fօsf ու սարէն չիններ՝ պրծեր էր։ Խանչեց ուսքա Մուրատ տղին։

—Տղա, լա՛օ, ձիկ իրեք օր ա մացեր. ես կը մեռիմ, թի ձի չտեսով խասուցիր իմ տեղ, կաղատուիս. որ չը խասուցիր, դու էլ խրտ ընձիկ կը մեռիս։

Սերճի պատաւ էդ խսկն լսեց, գնաց, ձեռմ խէծաւ, օձն էրաց չպուխ. գնաց Ջանճրլու սարի տակ. էն Կայլն գուրան, սեյր էրաց, էրաց ծով։ Տղէն ուսքա Մուրատն առաւ, գնաց էդ տեղ. ծով որ տեսաւ, զարմացաւ, ասաց.—Կայ ու չկայ, սերճի պատաւն ա՝ արէ, էդ տեղ ծով չկէր։ Թօրվեր որ գնաց, ճամբուն չը կարցաւ գաեր էր. ուսքա Մուրատի մեռնելու վաղն էլ մացեր էր մէկ սհաք որ պտի մեռնէր, տղէն էլ խատ. խանչեց տղին, ասաց.—Մէկ ճար արա, ձի չտես խասուր իմ տեղ։

Էն տեղացէն տղի միտքն ընկաւ խրեղէն ձին, որ մազ էր քաշէր էր. մաղն ի կրակ տուեց, խրեղէն ձին էն սնաթին խասաւ, առաւ ուսքա Մուրատին քամակ, խաճրնելն էլ խաւ. տղէն էլ էլաւ, խէծաւ.

—Աչքերնեդդ խփուցէք, ասաց ձին. բացէք.—Խասուց դէմ, ուսքա Մուրատ մտաւ ուր տասնի մէջ. մտնել բիմին մեռաւ. Տղէն խող տուեց վերէն. քար կործեց վըր դօբին. խաճրքներ ուր տեղ խորեց, խէծաւ խրեղէն ձին. ընցաւ ծով, էկաւ էս տեղաց չոր, ինջաւ, պադից խրեղէն ձիու ճակատ, ձին դէն գնաց. տղէն էկաւ դրխ թագաւորի սարէն։

Հասնելու բիմին, գնաց թագաւորի մօտ, ասաց.

—Թագաւոր ապրած, քեզնէ խնդիր կենեմ որ սերճի պառաւ բասլիմ էնես ձիկ։

Թագաւոր ամէ էրաց, պառաւ բասլիմ էրին տղին։

Տղէն կատղուկ ձիմ գտաւ, պառուս ծամեր կապեց ձիու պոչ. չորս խատ չըպուխ զանեց ձիու քամկին.

—Իրիկուն ասաց, քեզնէ կուզեմ որ պառուս ծամեր մինակ խատդ բերես։

Կատղուկ ձին պառուս օսկուներ սըղկըտուեց, հարցահուրտէք լցեց փոր, փնչփնչալէն պառուս ծամեր պոչէն կախ, դարձաւ էկաւ։

Նոր տղէն չէլաւ, ուր խարսնիսն էրաց. քառասուն օր քառասուն գիշեր դումբ ու զուռնա զանին, բեֆ ու ուրախութեն արեցին։

Ուսքա Մուրատի չինած սարէն էլ, թագաւոր բասլիմ էրաց տղին։

Էնոնք խասան ուրանց մուրազին, չաղամաքն էլ խասնի ուր մուրազին։

30

ՀԱՃԻ ՍԱՅԱԹ

(Խլաթայ բարբառով *)

Հաճի Սայաթ մէկ տղայ, մէկ աղջիկ ու ուր կ'ունէր։

Մէկ օր Սայաթ կ'ելնի, կ'երթայ պազար, կը տեսնի մէկ պստիկ տղայ. կ'ո թալուկ էր էն տեղ. կը վերցնէ, կ'ո տուն կը բերէ, կ'ըսայ։

—Կո, կնիկ, մէկ տղայ իմ գտեր, բերեր իմ. մեզի մէկ տղա կ'էր, էղաւ էրկու։

Էս տղի անուն դրինցին Թափտուխ (գտուկ)։

Տիրեցին էդ տղան, էղաւ տաս տարեկան. մէկ օր ասաց Սայաթ։—Կնիկ, էս տղան ու աղջիկ մնան տուն, ես, դուն ու մեր ճալալ տղէն էրթանք հաճ։

Աղջիկ ասաց.—Ընչի՞ գիս ու Թափտուխն էլ չէք տանի խըտ ձեզի։

Խէրն վերուց, ասաց.—Լաօ՛, մենք էրթանք. էն մէկել դրուն ձեզի կու տանինք, մկայ էս տան ըմեն բանին մուղաթ էղէք, չուր մենք դանք։

Էն տեղ էգոնք էրթալ էղին. մենք գառնանք աղջկէ ու Թափտուղի վերբէն. էնպէս գիրար կու պախին, կը չախին, էփ ու թուխ կ'էնին, կուտեն։

---

*) Սոյն հէքիաթը պատմողն է Խլաթեցի Մելիոն Մելիք Մուրադեան (Ջրիկ գիւղացի)։ Սա մնացած է Գօլիս եւ 18 տարի Վաղարշապատ։ Այս հեքիաթը բոլորովին նմանութիւն է Կ. Գօլիս տպուած «Ակիտ Եղբայր» անուն հէքիաթին, պատ մի եւս կարծեցի թէ սա համառօտութիւն լինի սոյն հէքիաթին. բայց վերջերս բուրբ բարբառով երգերն գիս վստահացուցին որ բուն իսկ ժողովրդական կը լինի։ Արդէն լսած եմ ի Վաղարշապատ Ալիխան անունով։ Նաեւ շատ տեղեր կը պատմուի։

Մէկ օր էլ Թափտուխ էլաւ, գնաց չուկէն. ինչ որ պիտէր ուբանց, ժողուեց, առաւ, էկաւ, ճամբխու մէջ տեղ կայնաւ, տեսաւ որ մէ պառաւ, ասաց.—Դու Հաճի Սայաթի աղջկայ խետ իմալ էք, գիրկ ու ծոց կէնէք։

—Խափանի պառաւ, չէ էնի իմ քիւրն ա։

—Էնի քիւ քիւրը չէ, քեզի գտած ա, պէտք է զէնոր տուխ։

Թափտուխ ասաց։—Փա՛, նալլաք սատանին էղի, էս պառաւ սատանայ ա, ինչ ա Թող էտուր, էկաւ տուն։

Էն մէկել լուտուն ա, պառաւ էլման էկաւ առէջ, էլման զէն խօսք ասաց, էլման տղէն ականջ չէրաց։ Էկաւ տուն, աղջկէն բան չասաց։

Էլաւ էն խլուտուն գնաց, պառաւ էլման էլաւ առէջ, զէն խօսք ասաց։

Տղէն մէ խետ յետ դարձաւ, էկաւ։

Աղջիկ ասաց։—Աղբէր, յորէն չոտ դարձար, էկար էս օր։

Ասաց։—Դէ՛, խափանէր, դիւ ինչի ձի աղբէր կասես, դիւ իմ քիւր չես, դիւ դէր, ես դէր, ախր ձի գտած ա, յորէն իմ անուն Թափտուխ դրած ա, ես քե պտի առնիմ։

Աղջիկ ինչ արաց-չարաց, չկարցաւ պրծեր էր, ասաց.

—Դիւ ու քեօ Աստուած, համբերէ. էրթամ լուացուիմ, իգամ։

Աղջիկ էլաւ դիւս, որ էլներ տանիս. տղէն ձեռ թալեց, զփեօ, բռնեց։—Դո՛ր կերթաս, աղջի. ասաց։

Աղջիկն ա. Թափտուղի գլխի գագտան վրայ էգարկ իպրուխը. դլօխ կոտրաւ, արուն թափաւ։

Որ արուն տեսաւ, ցաւաց աղջիկ։

—Վա՛խ իմ աղբէր, վա՛խ իմ աղբէր, ասաց. վրէն խեղճցաւ, գլուխ կապեց։

Տարին թմաւ, էդ օր օրն է, օր Հաճի Սայաթ պտի իգեայ։ Թափտուխ գլուխ կոտուուկ գնաց առէջ. Հաջի Սայաթ ընկաւ Թափտուխի վիզնիվեր, ասաց։—Էդ ինչ հալ ա, ինչ ա էղեր։

Ասաց։—Նէ՛ դիւ էղիք, նէ՛ ձեր աղջիկ, գացեր էք, չուր մկայ իմ հալ էս ա էղեր, ըմեն օր մարդ կը քերայ ուր մօտ. էս օր լէ զարկեցին, իմ գլուխ էրին պրիճսար, Թորկին, գեացին։

Հաճի Սայաթ ասաց ուր տղին։—Գնա, էն աղջիկ վերու, տաք իրուրակ, սալանէ, արի, որ գեամ ի տուն, չտանամ։

Տղէն գնաց տուն, աղջիկն օր տեսաւ ուր աղբէր, ասաց։

—Աղբէր, ուր ա իմ խէր, իմ մէր։

Ասաց։—Էդին դիէն գիւգեան. էլի, էրթանք առէջ։

Աղջիկէն կը խափայ. առաւ զաղջիկ, գնաց բուրակին մէջ։

Աղջիկ ձիուց իջաւ, թուր քաշեց, էպարկ, էցդից դեսին, ասաց.

—Զուր էրթամ տուն, կը մնանի։

Դարձաւ, էկաւ, խասաւ տուն, խէրն ասաց.—Ի՞նչ էրեցիր։

—Սպանեցի, թալեցի բուրակի մէջ, էկայ։

—Աղէկ էրեցիր էն անզգամին։

Էնոնք Թըլ տուն մնան, աղջիկն էլ քիչ մը սաղցաւ, մնաց բուրակի մէջ։

Դառնանք Իրանայ դէխ.-Իրանայ դիէն Խոյա Ալիխան. ուր վաղիքն էլ խաւ՝ ման կուգային, ընկած էին բրակներու մէջ ալ ու դուս (Թուչնորսութիւն) կէնէին։

Վաղիրը վէրու էծը լարեց, էտաէն դնաց, մնաց Ալիխան դաշի կայնուկ, ուրին ուրին ասաց.

—Իգա տէղ պատահիմ, չուր վաղիր իգէայ։

Պատահցաւ, տեսաւ էն իօրտ աղջկէն։

Վաղիր էկաւ, Ալիխան ասաց.

—Դիւ ճէջիր (որս) բերեցիր, իմ ճէջիր էտա տէղ դտայ։

Ալիխան դաղջիկ վերուց, առաւ էկաւ, բրին սաղցուց. ինչ օլօտուղվն իմցաւ։ Տիրեց էդ աղջկէն, էրաց ուր կնիկ.

Մէկ տարի աղջիկ ճժով մնաց. վաղեն էկաւ, պարկաւ, էրկու տղայ էբեր։

Տաս տարի տիրեցին էդ տղէկներուն, չոջցան. մէկ օր կնիկ ուր իրկան ասաց.—Տաս տարի ձիկ բերերես, ես էլ խէր ունիմ, մէր ունիմ, աղբէր ունիմ. ինչ կէղնի, ձիկ տանիս, տեսնիմ։

Ալիխան ասաց.—Ես չիմ իգէայ խըտ քեզի, քաղաք կը մնայ անուէր. մարդ կը դնիմ խըտ քեզի, գնա։

Վաղիրը ուր խօտուցով դրեց կնկայ խետ, ճամբեց, չուրի յիլկուն դէտցին, իջան պրակի մէջ։

Վաղիր ուր ասկրին իզին էտուր, ասաց.

—Տարէք, ձիանք կուչտ ուտեն. արծան։

Վաղիրը էկաւ խաճուսի կուչտ. նստաւ, ձեռ թալեց վզուլ։

Խանումէ ասաց.—Էդ ինչ բան ա, դիւ կենես, չէ քիւ աղջէն դրեր ա խըտ ձի, որ հաւատարիմ էղիս. էսպէս բան չէղի որ դիւ կէնես։

Ասաց.—Պտի էղի, կէղի, թէ չէ, կելլիմ քիւ մէկ տղէն կսպանեմ։—Էրկու տղէն էլա սպանես, չեղեր ա ու չեղեր։

Վաղիր էլաւ էն մէկ տղին սպաննեց. մնաց մէկը։

Ասաց.—Զի ձեռ կու տաս, տու, չէ, մէկել տղէն լէ կսպանեմ։

Ձեռ չէտուր, վաղիր էն մէկ տղէն էլ սպաննեց, էկաւ էլան.

—Կնիկ, ասաց. ձեռ պտի տաս։

—Դիւ քեզ Աստուած, ասաց կնիկ, տուր իմ չարչաւ, երթամ վրը իմ տղոց լամ, իզեամ քեզ կուշտ։

Վաղիրը պարան կապեց ոտը, ծէրը բռնեց. աղջիկ դնաց. փէտ տնկեց. պարան կապեց փէտին, մտաւ ի ըրակ, կուրիսաւ։

Վաղիր տեսաւ ևի՛ խանում կայ, ևի բան, հաւար կէձգայ. չոխերուն կը զարկայ, քանի տեղով բրինդար կենէ, կասայ։

—Դողիր էկան, ձի զարկին, եարալու էրեցին. էրկու տղին էլ սպանեցին. խաճումն էլ տարան։ Ղօշուցին էլ կասայ.—յորին անգ-ցաք, չէկաք։

Վաղիրը ուր ղօշուճով կը դառնայ Ալիխանի մօտ, կասայ։

—Ես մնակ էմ մացէ, դողերը բռնեցին վրէս. տղէկներ սպա-նեցին. ձի բրինդար էրին, խաճումին էլ տարան։

Ալիխան առեց ուր վաղիրը. էլաւ, դաւրիս ղլըղըճա (ձևով) ընկաւ աչխրներ, պտոտեցին։

Աղջիկը էկաւ ուր խօր խովիւու մօտ, խովիւ վերուց, ասաց.

—Դիւ ձիկ չես առներ։

Կասայ։—Խովիւ աղբէր, յիտնէ ձեռ վերուցես, իմ դարs չատ ի, քընէ ճիւի կեննեմ (չատ կը խնդրեմ)

—Որ էդմալ ասիր, դիւ իմ քիւրն էս.

—Քընէ ճիւի կէննեմ, ձեռք մի չոր պտի տաս, օր խազ-նիմ։

Կը խանայ ուր չորեր կուտայ աղջկէն. աղջկէ չորեր կառնէ, Աղջիկ ուր չորեր փոխեց. էկաւ խօր քաղաք-Բաղէշ, գնաց աղբրի վրէն, թուղթ կպուց. նստաւ, խաց կերաւ, իշկեց օր Թափ-տուխ էկաւ օր ձիանք ջրայ, աղջկէ ասաց։

—Բաչա՛լ, էս մէկ ձին բռնայ, էն մէկ ձին ջրեմ։

Բաչալ բռնեց, ջրեցին ձիանք. Թափտուխ ասաց.

—Մչակ չես էղի, քեզի բռնիմ։

—Կէղնիմ, յորի՛ չէղնիմ, իմ զանահաք (արհեստ) ինչ աս։

—Էրթանք մեր տուն, իմ խէր պարբէի քեզ նախ։

Էլան դեացին տուն։ Հաճի Սայաթ ասաց.

—Քեզ նախ ինչ ա, ինչ կեառնաս էնիս։

—Ձի կը պախիմ, դազարած կէղիմ. խզմաք կենիմ. ինչ ասես կէնիմ։

Աղջիկ մէկ ամիս մնաց էդ տեղ, չատ լաւ խաւանան էդօր։

Սրմ լէ Բաչլուն ճանքեցին չուկէն բան բերելու։ Բաչլիկ գնաց չուկէն, տեսաւ.ինչ տեսնի, Ալիխան, ուր վաղիր։

Ալիխան էկաւ, աղբրի վերէն, լուացուաւ. թուղթ կարդաց, գրուկ էր.

—Ա՛յ պազբեխաներ, դուք որ կգաք,
Ա՛յ խօճաներ դուք որ կերթաք.
Այս գիրը Ալիխանին հասուցէք,
Եթէ սեղծող Աստուած կը սիրէք,
Այս գիրն Ալիխանին հասուցէք.
Հառաչանքներս նորա յայտնեցէք։

Բաչլի աչք կընկնի դարվիշներուն, դարվիշներն նստան. մարսա դուրմիս էրած էն (սաղ ածելով էրդ ասկ). ամէն քամաստա կենէին. բաչալն էլ ա, ապսպրած բանը մոռցաւ, նստաւ դարվիշներու քամաստա.

Թափտուխ գնաց բաչլու էտև, էկաւ տեսաւ նստած ա, էրկու չափալեխ էզարկ, ասաց։—Շան որդի, ինչ նստած՝ քամաստա կենիս, մենք քյլի բանի հնք համբեր։

Գնացին տուն. Հաճի Սայաթ խարցուց.—Ցորին անգրցար, տղա։

—Դարվիշներ խաղ կասէին, Թափտուխ էկաւ, ձիկ զարկեց։
Փշում կուտաւ խետ Թափտուխի Հաճի Սայաթ։
Բաչալ Հաճի Սայաթին նիւի էրաց.

—Աղա, ասաց. քոնէ նիւի կենեմ, իզիս տաս։ Օր էն էրկու դարվիշ բերեմ տուն, մեկի ոօճախ։

—Հայտէ, իզիս ա քեզի, ինչ կենիս, էրէ։

—Ինչ օր կենեմ, էս օր պտի չխօսանք իմ վրէն։

Բաչալ գնաց, դարվիշներ ոօճախ բերեց։

Ալիխան ասաց.—Բաչալ, դիւ ինչ ես, քեօ տուն ինչ էղի։

—Աստուած ինչ օ խսմաթ էրեր ա, կուտիք։

Էլան, դեացին, նստան, կերան, խմեցին, էլան պտի էրթէին։

—Զեզի իզիս չկայ, ասաց բաչալ. էս օր գիշեր պտի մնաք դաս. պտի խօսինք էս տեղ, լուսուն Աստուած ձեր բան յաջողայ։

Թափտուխ ասաց.—Ինչի կեդիս պատճառ։

Որ ասաց. էրկու սիլլա էտուր Թափտուխին.

—Էս օր բաչլուն իզիս ա, ասաց Հաճի Սայաթ, ինչ կէնէ, կէննէ։

Բաչալ գնաց, դոներ փակեց. բանլիսաներ էրեր, ուր ճեպ էղեր, ասաց.—Էս օր իզիս իմն ա, ինչ որ կէնիմ, կէնիմ, դարվիշ բաբաներ, ինչ օ ձեր գլխուն էկեր ա, ասէք, ասաց բաչալ։

Ամեն էրկէն գիշեր էր, ամեկը ուր գլխու էկած ասաց։

Բաչալ ասաց.—Նօբաթ իմն ա, քանի խօսք էլ ես պտի ասեմ։

Ասին.—Ասա։

Ասաց.—Մէկ ժամանակով Բաղդու քաղաք Հաճի Սայաթ էղեր ա, էնուր էլ մէկ կնիկ, մէկ տղայ, մէկ աղջիկ էղեր ա, դացեր ա մեյսաճ

մէկ տղայ էլաւ գտեր, բերեր ա, անուն դրեր ա Թափտուխ (Թափտուխ էլա ուր մաքին մէջ կը մէղայ, Թափտուխ որ կայ, ես իմ)։ Հաճի Սայաթ էլաւ, տաս, տանըխինգ տարի տիրեց էդ տղին. մէկ օր էլ էլաւ, գնաց հաճ,Թափտուխն ու էդ աղջիկ թորկեց տուն (Հաճի Սայաթ էլա կը մեղէ, ես իմ Հաճի Սայաթը)։ Թափտուխ ուր չար մաքով զօռ էտուր աղջկէն, աղջիկ ինչ իլաճ էրաց, չկեարցաւ պրծնէր. իբրուղը զարկեց դլխուն, էղաւ բրինտար։ Գաչալ ասաց. Աղէկ ականջ արէք։

Էլման ասաց.—Աղջիկ Թափտուխի վերէն ցաւաց, իջաւ, բրինը կապեց, ասաց. տաղբեր, իմ խոդին էլեր քե համար, էլի իմ աղբէրն էս, բան չկայ։

(Թափտուխ ոռ վզվզուն աւաւ, բանըիս կուզէ որ դիւս էրթայ. վախնի)։ Տարին բաւ, Հաճի Սայաթ էկաւ, Թափտուխ գնաց Հաճի Սայաթի առէջ. ասաց էսպէս, էսպէս։ Հաճի Սայաթ կողորկէ ուր տղէն, կանչի, կը տանի զաղջիկ ի բուրակ, կսպանայ. աղջիկ չմոռնիր։ Իրանա տեխէն Ալիխան ու վազիր ճէջիր կիգան էն սար. աղջկան վերուցին, տարան, Ալիխան արաւ ուր կնիկ. տարիմ' մացին. էրկու տղայ էղաւ, աղջիկ մէկ օր իզին ուզեց օր էրթայ ուր իսը' վազիրը խօստանով էդիր խետ որ գնայ. գացին, չուր յերկուն մէջ բուրակին մացին։ Վազիր իզին էտուր ձիաւորներուն. ձիանք առան, գացին։ Վազիրի միտք վոխուեր էր ախր, ձեռ թալեց աղջիկէն, աղջիկ ձեռ չէտուր (Վազիրի էտի օրուզ ցօխուզ թալեց)։ —Գաչալ. տուր բանիս, էրթամ, իգամ, ասաց վազիր։

—Մնաց էրկու խապար. կասեմ, կո կերթաս։

Էլմ ասաց.—Վազիր տղէկներ սպանեց, աղջիկ մի հնար գտաւ, վախաւ։ Վազիր բրակի մէջ հաւաբ կը կանչայ, տղէկներ պատանեցին, կնիկ լէ տարան։

Գաչալ ուր Գաչլու չորեր խանեց։—Իշկէք, ասաց. մկայ ես էն աղջիկնիմ. էս էլ իմ խէրնի-Հաճի Սայաթ, էս էլ իմ մարդնի-Ալիխան. էս էլ քեօ Թափտուխ, էս էլ քեօ վազիր,

Զաճախ, չօմլեխ, կեաւչի, բեասա. դուք Թափտուխի, վազիրի գլուխ կոտրաւ, Աստուած լուս էրաց։

31

ՍԻՆԱՄ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԳԻԼ

Խլաթայ բարբառով *

Թագաւոր մ' կ'ելլի, խոտ մէկ լալէ մ'. գելին կէրթան, կը պատահեն. էդա թագաւոր լէ ըսկի ավլաս ու բալաս չունէր։ Կէրթան մէկ դաւրեշի մ' ըդաս կիւգեան։ Դաւրեշ կասա.

—Թագեաւոր ապրած. ես գիտեմ, դու ինչի չուռ կիւգեաս.-ողէ մ' ապօվ չուռ կիւգեաս, արի՛ քե մի խնձոր կուտամ, կէս դու կեր, կէս սուլթան (թագուհի) թ'ուտայ. Աստուած քե էրկու տղայ կուտայ. մէկ տղէն լէ, խալ էրա օր տաս ձի։

Թագեաւոր խալ էրաց, էլաւ գնաց ուր տուն. ինչ որ կէս ինք կերաւ, կէսն էտուր Սուլթանին։ Ին ամիս, ին դան, ին դաղըգայ մնաց, թագեաւորի կնիկ պարկեաւ, էրեր ջուխթ մ' տղայ։ Տղէք ջօջցան, էղան տաս տարեկան։ Աւուր մէկ դաւրեշն էկաւ, տեսաւ օր էրկու տղէն հոլ կը խաղին, ասաց.

—Կայ ու չկայ, էսոնք իմ խնձորի տղէկներն էն։

Կանչեց ղէն էրկու տղին, պատիկն չեկաւ. ջոջն էրեր, ասաց.

—Արի, էրթանք, քես խօր տուն տուր ձի չանց։

Տղէն ընկեաւ առջև, տարաւ. ասաց—էսա իմ խօր տուն աւ։

Դաւրեշ մտաւ ինե, տղի խօր տուն սալամլըղ կապճին առէջ. ասաց.

—Թագեաւոր ապրած կենայ, դու քես խօսաց տէրն էս։

Ասաց—խմ, ես իմ խօսաց տէրն եմ։ Բերեց դերկու տղէն կայնեցուց դաւրեշի առէջ. ասաց—որ մէկ կը վերուս, վերջաւ։

Դաւրեշ ասաց.—Պատիկ կը վերնամ. պատիկ չը գնաց. ջոջին

*) Պատմած է Խլաթայ Տափավանիք գիւղացի Պօղոս։ Սոյն նեհեաթը շատ ընդարձակ եւ աւելի լաւ կը պատմէ Վաղարշապատցի Առաքել Դրիմեան։

ասաց. ջոջ էլաւ ընկեաւ դաւրեօի էտև, դնաց ձամբեսու կիսուն ծարուըցան. տղէն իշկեց օր սարի տակէն ծուխ մ' կերևայ, ասաց.

—Դաւրեօ բաբա. էրթանք էդա տեղ ջուր մ' խմինք, ընցինք։

—Ես չըմ դնայ, ասաց դաւրեօ. դու գնա խմէ, արէ։

Տղէն գնաց օր ջուր խմեր. կնիկ մ' էլաւ առէջ, ասաց.

—Ի՛նչ կը պատահիս, անխելք տղա, էսա դաւրեօի խետ, մուխաք կեցի, քե կսպանայ, դքու ջանեակ լէ խառնայ էնա ջանեկներուն. ինք ջանեկէ բերդ մ' ա չինէ, դլխուց բաւաց։ Քե բամբախ կուտամ, չուրի ճարի առէջ դու կընկնիս առէջ. սարին մօտըցար, կեասես էնոր—դու ընկիր առէջ. էն օր չեմն ընցաւ, դու դմկկա ինէ, վերին դիէն սաթրիճ մի կայ, կընկէ վրին, կսպանայ։

Տղէն էլաւ գնաց, կնիկ իմալ ասեր էր, էնպէս էղաւ։ Գրեան չեմին որ մօտըցան, դդաւրեօ դմկկեց ինև, սաթրին ընկեաւ, վիզ կտրեց։ Դաւրեօի ջանեակ վերուց, դրեց ի բերդ, գլօխ դրեց ի բաւաց։ Տղէն մտաւ ի մըջ բաւնին. դուր ձին թռկկեց, մէկ բաժա ձի մ' վերուց. ճեաեր լէ վոխեց ու էլաւ դուր ձին խեծաւ. ընկեաւ ճամբաներ։ Գնաց, ճամբեսու կէսն ընցաւ, խազալ մի վախաւ առջևէն. լարեց, գնաց, մտաւ տիրու տուն։ Տղէն գնաց տիրոջ դուռ իջաւ։

—Ջիմ խազալ բերէք, տուէք։

Տան տէրն էլաւ դուս, ասաց.—ձի խազալ չկայ. ձի աղջկիկ մի կայ, արէ, տամ քե։

Բերեց դաղջիկ էտուր տղին։ Մէկ չաբաթ մի մնաց. աւուր մէկ կնիկ էլաւ, ջուր էլեց, տղէն լուացուաւ, մէկ էլ իշկեց օր ծուխ մի կերևի, ասաց.—Կնիկ, էս ինչ ծուխ ա կերևի։

Կնիկն ասաց.—Մարդ Աստըծուն, ինչ լախ ունիս ծխէն. զէն ծուխ հանող ջաեի պատաւ մ'ա. մարդու զիաե կենայ։

Ձեղի, ասաց, ես պտի էրթամ, զէն ծուխ տեսեմ։

Էլաւ գնաց դրեա ծուխ. ջաեու պատաւն էկաւ առէջ.

—Վուի՛ թագեաւորի տղա. դլխուդ, արևուդ մեռնիմ, ձի տղայ չկայ, արէ, էղի ձի տղայ։

Էդա ջաեու պատաւ լէ, դուր բաղչի մէջ, ջոջ խոր մի փորեր էր. մեծ ծաղիկ մի դրեր էր ի բերան. դեալացողին կը խաբէր, կը մօտըցնէր խորուն, կը դմկկէր իցած։

Տղէն մէկ չաբաթ մի մնաց պատուու. մօտ։ Շաբթէ մի ուորա պատաւն ասաց.

—Տղա, որդիս, էրթանք իմ բաղչի մէջ չիչրկներ (ծաղիկ) խոնդնատայ։

Մէկ խել մի մըջ բաղչին զտղէն պատուցուց, ուորա տարաւ ջոջ ծաղկի մօտ. տղէն խրտ կգելուն դմկկեց, ընկեաւ խոր։

Մնաց պատիկ աղբէր։

Էդա պատիկ աղբէրն էր, էլաւ ասաց ուր խօր։

—Ախծ, ես պտի էրթամ դրկի իմ աղբէր։

Էլաւ էկաւ ճամբեաւ կէս, ծալուբրցաւ. ծուխ մի էրևաց, ասաց.

—Էն տեղէն ծուխ դէրի, էսայ շեմլիկ ա, էրթամ մէկ ջուր մի խմեմ։

Գնաց ջուր խմելու, կնիկ գիտցաւ թէ էն ջոջ աղբէրն էր, ընչի օր էրկուս մէկ խնձորից էն, բակի իլարուց չըն ջոկնուե, խարցուց—Գլխուդ, արևուդ մեռնիմ, Թագաւորի տղա. դու իմալ պրծար էն զալըմ դաւրեօից Ասաց.—Աստուած պրծուց։

Տղէն խըտ գնախուն իմցաւ, օր ուր աղբէր էդա ճամբումն ա գնացեր։ Առաւ աղբօր ճամբան ու գնաց. գնաց մէկ սարի մի ըռւասս էկաւ. մոտա ինա, իշկնց օր աղբօր ձին գա. իշկնց օր թա աղբօր ճահճերն էլ դա։ Ինք լէ էլաւ զուր ճահճ ու ձին Թորկնց էդա տեղ. Քաժա ձեռ մ' էլ ճահճ խագաւ. աղբօր ճամբախ էտուր ուր առէջ։

Գնաց, չատ ու քիչ Աստուած գիտայ, մէկ լէ իշկնց օր խազալ մի առէջէն վախաւ. լարեց դխազալ, տարաւ աըտցուց տուն մի. ինք լէ իջաւ դուռ, ասաց.

—Ցիմ խազալ բերէք, Թէ ձեր տուն կագօլեմ։

Տան տէր էլաւ դուս. դիտցաւ Թէ էդա ջոջ աղբէրն էր, ասաց.

—Տղա, ինչ կուզես. խազալ ժըխօ իմ աղջկին ա. էդէ քեզ կնիկ։

Տղէն էլ ձին չը տուաւ, մըջ ուր մտաց ասաց.

—Օր յըմալ ա, իմ աղբար սլամաթ ա։

Էկաւ, իջաւ ի տուն. բերին իրիկուն եաթաղ էցկին. տղէն Թուր քաշնց, դրեց մըջ ինք ու մըջ աղբրկին։

Լուսմէթ տղէն էլաւ դուս. աղջիկ ջուր տարաւ օր լուացուի. իշկնց օր ձորու մը միջէն ծուխ մը դէլի, հարցուց.

—Աղջի, էն ինչ ծուխ ա կերևի։

—Ջէ դու, ասաց, էս էրկու չաբաթ դնացեր իր էնա տեղ, Աստուած քեզ ջորով պրծուց։

Տղէն ասաց մըջ ուր մտաց—կայ ու չկայ. էն ծուխ խանողն ղիմ աղբէր սլանէ։ Գնաց, գնաց, տեսաւ օր ջաՑու պատաւ մ' էկաւ առէջ։

—Գլխուդ, արևուդ մեռնիմ, Թագաւորի տղա, ես քեզ կը պտոտէնք, աճճախ քէֆլար յիա, արի, էղի ձի տղայ։

Տղէն իջաւ. գընաց, մէկ չաբաթ մի ընցաւ, պատուէն ասաց.

—Տղա, ոլդիս. էլի էրթանք. տես, իմ բաղչի մէջ ինչ անմահատուհնի ծաղիկ կկայ, խոնդնդա։

Էլան գնացին ի բաղչէն, պատաւ բերեց տղէն խորս մօտ. ասաց.—Որդիս, դնա ղէն ջոջ ծաղիկ լէ խոնդնդա։

Տղէն խելացի էր, ասաց.—Դու գնա խոնդնտաս, օր ես լէ սովրիմ, նոր դնամ։

Պառաւն օր կլաս, խոնդնտաց. տղէն ձեռ թալեց զպառուս ծամեր ժողուեց.—Ա՛խ, հմն. իմ աղբէր ասաց։

—Նամա՛ն. ասաց պառաս, Թող օր գրս աղբէրն խանեմ։

Ինչից չուան կապեց. պառաս իջուց ի խոր. խանեց զաղբէր, խոնեց տրսուհրկուս լէ ուրիշ Թագաւորի ալաս, գնոնց ալատ էրաց, գեացին. ինք բերեց էրկու բարտի ծառ, պառուս մէկ ոտ կապեց ծառ մի. խրտ Թորկիլուն, պառաս օսներուց ճրղաս, գըլխուց էլաս դուս Նոր էլաս, առաս գուր աղբէր. գնաց, ուր աղբօր աներոջ տուն իջաս Աներոջ տուն չճանչցան ուրանց փեսէն որ մէկն էր։

Իրիկուն օր էղաս. ջոջ աղբէր գնաց, մրտ աղջիկ պարկաս. նոր ճանչցան ուրանց փեսէն որ մէկն էր։

Բարի լուս բացուաս վըր ձգի, բերին զմէն մէկել աղջիկ չէ տուին պատիկ աղբօր։

Էլան առան զուրանց կընկտիք, ու ընկեան ճամբաս։

Շատ ու քիչ գեացին Աստուած գիտաց. էկան տեղ մի, մուԹ էտուր. չատներ զարկին, առան զուրանց կնկտիք, մտան ի նեռ։

Լուս բացուաս. բացուի վըր խազրնելուն, ջոջ աղբէր էլաս տեսաս օր մեծ վիշապ մի ուր չատրի չորս բարաձ փաԹէ, ու գլօխ դրէ վըր պոչին։ Էլան էրկու աղբէր խօսքեր սրին մէկ, օր զանկն վիշապուն, ապանին։ Վիշապ խժալին ասաց.

—Ի՛յ խողածին, ըսկի իրաւ մի գեաք, ես ձի քան չեմ աներ. Թէ իմ խօսք կատարէք։

Պատիկ աղբօր ասաց.—Դու էլի առ գրօ կնիկ, գնա. ջոջ աղբօր լէ ասաց.

—Դու լէ գելիս, կէցքատս Սինամ Թագաւորի քեաղաք, կը հարցուս, կը փնտռես, կիմնաս Թէ «Գիւլ Սինամա ճա՞ հտքի, Սինամ Գիւլա ճա՞ հտքի» (Գիւլ Սինամին ինչ ըրաս, կամ Սինամ Գիւլին ինչ ըրաս). գէտա էրկու խօսաց պատասխանէն կը բերես ձի, նոր արև, առ գրօ կնիկ, գնա. Աստուած քեօ բան յաջողայ։

Պատիկ աղբէրն էր, առաս գուր կնիկ, գնաց մէկ դէխով. ջոջ աղբօր կնիկ մնաց մըջ չատրին, վիշապի ռմուօին, ինք դէմ էրկ ու գնաց դէպ ա Սինամ Թագաւորի քեաղաք։

Շատ ու քիչ գնաց, Աստուած գիտայ. գնաց մէկ ծովու մ' ըռաս էկաս. իչկեց օր ծառ մի կէր դատ, գնաց ծառի տակ պարկեաս։ Մէկ էլ զայեւին բացեց որ ճրվճրվուն մի կուգայ, Թռաս էլաս վեր, իչկեց օր օձ մ' էկեր ա, օր զարծուի ձագերն ուտայ։

ելաւ գօշ բրդից, լցից գուր մարթալ (վահան) ու դրից ձագերու առէջ. պարկեաւ, քնաւ։

Արծիւ վերուց կուգար, էկաւ իչկից օր մէկ ինսաց օղլի մը պարկէ ծառի տակ. մօտրցաւ օր զխողածին վերցէր, ձագեր էլան առէջ։—Նամա՛ն, ասացին. վերև Աստուած, ներքև էսա խողածին ա մեզի պրծուցէ։

Արծիւ գլխեր բացից, խով էրաց վրը տղին, տղէն խել մը քնաւ, էլաւ։

Արծիւն ասաց.—Խողածին, ուզա՞ օր տամ։

—Բնէնէ կուգամ, ասաց տղէն, օր դես տանիս ի Սինամ թագաւորի քեաղաք։

—Հէյվա՞խ, ասաց արծիւ. էսա իմ խալիւոր վախտին, ձի չատ չաթին ու դժար տեղ կապկիր, տղա, լէ քեօ աղէկուտեն չըմ մոռնայ, քու խօսք պտի էնեմ։ Գնա, առ քեառասուն տիկ դինի, քեառասուն լէ դմակ, բէր, դիր վրը իմ չալկին, ու էլի նստի վրէն. դա կէնիմ, դմակ թալա. դու կենիմ, դինի թալա. քե աչք բանալ խփուցելուն կը հասըցուիմ քեօ մուրազին։

Տղէն էր, դնաց զամէն բասարուվ տեսաւ, էլաւ նստաւ վրը արծուս թևերուն. արծիւ առաւ գտղէն, դէմ իջուց Սինամ թագաւորի քեաղաք։

—Դ'արէք, խողածին, ասաց. չիտնէք մէկ բըբուք քաչա, օր նեղած ընկեար, տուր կրակ, օր ես քե խառնիմ։

Արծիւ թռաւ դէմ ուր ձագեր, տղէն գբբրուք վէրուց. դնաց, Սինամ թագաւորին էղաւ սեղիս։

Սինամ թագաւոր չատ խաղ էրաց էդա տղի մօտէն։ Տղէն օր մ'ասաց.

—Թագաւոր ապրած. դու չիտնէ ես խրտըր խաղ կենես. քինէ ըռեա կենիմ, քեօ գլօխ էկած բաներ ձի յատնես։

—Ա՛յ մարդ, կասայ. չիտնէ վազն արի, օր զիմ խրսկն էրի, պրծայ. քեօ վիզ կը զանիմ, եռասուն և ին սպաններ եմ, քեզ էլ կըսպաննեմ. կնդի քեառասուն։

—Էա, ասաց տղէն. դուն ասա, իմ վիզ էլման զար, խրնց զէնոնք մախսուլ չիմ։

Սինամ թագաւորն ասաց.—Օրերուց օր մը. մէկ դաւրեհ մ' էկաւ, կանանչ վարոց էտուր ձի. ասաց.—զար էղա բօճուն, կնդի կատու։ Ցարկեցի բօճուն, էղաւ կատու։ Իմ կնիկ լէ չատ ջինկեաճա էր (անզգամ, լեզուանի). ես լէ զէդ վարոցով զարկի կնկեան, էղաւ չուն, ընկեաւ աշչու (խոհարարի) խանութներ, չատ զարար տուեց, տեսայ օր չկրի, վարոցով զարկի. էղաւ մէկ ջորիմ։ Շատ հեծայ, չատ չարչրեցի. դժար էկաւ ձի, վարոց զարկի, էլման էղաւ կնիկ։ Սօրա

էզա անամեօթ կնիկ, էլաւ զիմ վարոց դեօղցաւ, դարկեց ձի. էղայ կատու, ընկեայ սօխաններ. էլ իմ դիւտման չը տեսի։ Մարդու մի մէկ զիս տեսաւ. ասաց—վըր իմ արեւուն դեայ, չեսսիս էզա Սինամ թագաւորն աւ էրկու տարի զիս թորկեց կատու. էրկու տարուց սօրա էրայ զիս ջորիմ, խեծաւ Ջորուց պըծաւ, էրաց զիս բեալպ չուն մի, էցկեց մըջ սօխաններուն. էրկու տարի լէ սօխրխաններ պտոտեցի։ Էդոր էտև՝ իմ կնկան—Դիւլ Սինամին մէկ ջաւե (աղախին) մի կէր. ըտոր չատ գժար կիւդեայ ձի. գվարոց դեօղցաւ, բերաւ, դաննեց ձի, էղայ էլման առջուայ մարդ։ Նոր էլայ վարոձով թաժա զարկի զիմ կնկան, էրեցի չուն. սօխրխաններ պտոտաւ. հարի զարկեցին, սպանին։ Դէ, ասաց. արի գքեօ վիզ դանիմ։

—Կեանի, ասայ ոդէն. էրթամ, պօզիմ, դեամ, զիմ վիզ զար։

Տղէն էլաւ դուս, արծըւու բըբուք էտուր կրակ. արծիւ եօթ սարի էտև իմցաւ, խանքակուր խասաւ, զտղէն վերուց, բերեց դրեց էլման ծովու ափ.

—Դը, զնա ասաց. Աստուած քեօ բան յաջողայ։

Տղէն էլաւ, էկաւ մըտ վիշապ, ասաց.

—Դիւլ Սինամ խուրպաճ էրեցի քե, չուտունց ա մեռեր։

Դու մի՛ ասի, էզա վիշապ լէ Դիւլ Սինամի քուրն էր. բաբու կէներ օր Դիւլ Սինամ մեռներ, էրթէր առնէր զՍինամ թագեաւոր։ Էզա ջուապի վըրեն ուրխըցաւ. էլաւ զտղի կնիկ թաղիմ էրեց ուրին ու ինք գնաց մըտ Սինամ թագեաւոր։

Տղէն էր, առաւ զուր կնիկ. գնաց ուր խօր քեաղաք, նոր բերին, պասկեցին. գխաբսնիսն էրին, էնոնք խասան ուրանց սրտի մուրազին. դուք լէ խասնիք ձեր մուրազին։

32

ԴԱՐԴՈՑ ՈՒԵՍ ՄՈՒՐԱՑ

(Ալաթայ բարբառով*)

Ա.ուր մէկ մարդու մ' մէկ կուգայ յօդի մ' կեղնի ղօնախ, կիշկայ էդ օդի պատից տամբուրեմ կախ ա. ախ կէնայ, ու արտըսունք կը լցուի յաչքեր,

Օդի տէր կասայ—է, ղօնախ. յորէն ախ կենես:

Կասայ—Վան ի Ասու էղի, էսի զարկող որն ա, շատ դարտ-լու էմ, էրկու քերան խաղ գանչայ, բաղքի իմ դարտեր ցրուի:

—Ղօնախ, քու դարտեր ինչ ա.

—Իմ դարտեր քուր (խոր) ու դուր (շատ խոռհուռուն) ա.

—Կանի, կասայ, խաց բերեմ, խաց ուտենք. նոր տամբուրի տէր գտիմ, բերեմ, քու դարտեր օ դսա էնես. գանչ:

Խաց բերին, խաց կերան. չուր ղօնախ խաց կերաւ. խաց զղօնախ կերաւ:

—Դէ, ասաց. ղօնախ, քու դարտեր դսա էրայ, ես էմ զարկող:

Ասաց:—Ես Թագաւորիմ' առէջ ասկար ի, Թագաւոր մեզի ժո-ղուես, լցես գեամին, մենք գացինք, կռիւ էրեցինք, բօփ զարկին, մեր գեամին պաբուիը էրեցին, իրենք խոգի մացինք տախտըկիմ կը-տորին. քամին վերուց մեր տախտակ, առաւ գնաց չատ ու քիչ Աս-տուած գիտայ. նա' սար կերևայ, նա' ձոր, միայն Աստուած վերև կերևայ, մէկ էլ տեսայ ձեռ մը ծովէն էլաւ, մէկ ընկեր տարաւ. մացինք էրկուսսի ահով, դողով. դիշեր էտուր վեր մե, էն ձեռ էկաւ, մեր մէկել ընկերնէլա տարաւ: Ասու մարդ, ասաց օդի տիրոջ, ես մացի մէջի, Թէ էն ա ծովու ախն' կը քաշիմ. Թէ էն ա, ձեռաց ախն կը քաշիմ. քիչ մը տեղ էլա գացի, տեսայ էն ձեռ էլաւ. դասաբու-րէն Թալի, ձեռ կորաւ, ընկաւ մէջ ծովուն. չատ գացի, գացի, պատճիմ րուասս էկայ. իշկեցի պատճի գլօխ միատակ. մէկ պայիմ բռնճ կերևայ. ես ընձի ընձի ասի:—Իմ տախտակ պտի կապեմ էսա

*) Ալաթայ Գրսեցի Արեւտաս (Սարիբեխ) ասած է:

ծովափ։ Կապեցի ի ծովափ, առա պայա ռեճ. էլա ի բացաճ, բացնի գլխուց իշկեցի, ինչ փառաւոր քաղաք ա. մտայ ի քաղաք, խաճ դէպզրդի քաղքի մէջ չկայ. իշկի էնոց դիւմներ, մալից մալ, կերակուրից կերակուր, մէկ չկայ ուր մալին գլօխ կայնուկ. չատ պտուտ, մավս մի կելէր, էդ մավս դասճ էրի, գացի, իշկեցի աղջիկ մի, բլոր մի (քաւական թուով) խացի գունդ դրեր, աչք առաւ յիս, փախաւ, ի օճախ, ձեռ քալեցի, օճխէն բերի դուս. ասի.—աղջիկ, արի, դադրուճ գլուցայ, դու յորին փախար։—Ապաթ, ասաց. դու հողածին էս.—Դու գիտցար էս ինչ իս—Ես գիտցայ դու վիշապնէր։—Աղջիկ, խմալ վիշապ։—Ցորի, դու էսա քաղաք չտեսար, մարդ չկեր դիւմներ, էն վիշապ յրմեն կլուց։—Դու խմալ պրծար, ասի։ Ասաց։—Էնոր դախ գիտեմ, էսա գնդրներ էնու յապով կը դնեմ, խրտ գալուն ես փախիմ, մահիմ էսա օճախ , էլ էնու գլօխ չմտի օճախ. դառնայ գէն գնդներ կուտայ, էլմէ քաշուի, էրթայ։—Աղջիկ, ասի. չատ կմշ օ գայ։

—Վախտ ա, յեղնի, ծովու դէն գայ։ Որ ասաց. ես էլա էրկու խաց ժիր ժիր տուի թխել. առայ մզրախ մի, գայի բաճնի տակ, գլսացեր գալկի մզրխի գլօխ, մէկել տեսայ օ վիշապ էլաւ, գլօխ բաճնից իջուց ի քաղքի վերէն, ես մզրախ տուի էդոր բերնի դէմ, բերան էնի տարաւ ի խացեր. մզրախ դիւրթիւ էրի ի բերան. խրտ դիւրթիւ էնելուն՝ վիշապ գլխվրաւ, ճանճուկ ընկաւ մէջ քաղքին, կտոր կտոր էրեցի գվիշապ. դարձայ, գացի աղջիկէ մօտ։—Աղջիկ, ասի, գվիշապ սպանի, գքաղաք ազատեցի։ Ասաց։—Ցաղաք որն ա մացե, մեզի ես էմ։ Ես էլ ասի։—Ասուած ձի որցեղէն ֆհարամ էրեր ա. ես ու դու մնանք էս տեղ։ Ասայ օդի տիրոջ.—Ըռէս, ես գէդ աղջկան առայ, քաղքի մէջ գինեք-օսկի չատ կայ. փառա չատ. Ասուած ձի էրկու տղայ էլա էտուր էդ կնկայ մօտէն։ Օրմը ասի.—Կնիկ, առ մեր ճժեր, էրթանք, տէս էն տախտակ, օ ես իմալ չարչարանքով էկերիմ էսա էրկիր։ Ըռէս, ասայ. առայ գիմ կնիկ ու ճիժ, էկայ ծովափ։—Կնիկ, ասի. արի գիմ տախտակ քաշիմ վրը ծովուն, նստիմ վերէն, իշկա, իմալ էկերիմ։ Ըռէս, ես նստայ վեր տախտրկին, քամին մէկ էլ վերուց գիս վրը ծովուն. քանի իմ աչք կտուեր, իմ կնիկ ու ճիժ ուրանց ծամեր կը փէտին ու չսեվրուն կը տփին. Ես էլա չատ տլրպայ, տլրպայ, չկարցայ մէկելա օլրրի դրէս իմ կնիկ ու ճիժ։ Էկայ, էկայ էրկիր մը վեր էլայ դուս։ Օր յէլայ, քաղքիմ մէջ յրմեն աճուճ-մանուճ մարդիկ կը մնանին, էդոնց զարզանդ պիքուն պիքուճեր գիսի վճեցուց, գիմ ճիւ (յե՞ւ) բռնին. տաբան տուն. ես չըմ խասկընամ էնոնց լիզուն, բէյն մը մնաց. լալ ու գոռուն ընկաւ էնոց մէջուրներ, խարցուցի, Մէրիկ, ինչ ա էդե, յորին կիլաք։ Ասաց.—Էրկնուց խրամանք ա էկեր, 40 մարդ մեր երկրէն պտի էրթան խողածնի էրկիր։ Ասեցի.—ինչ խրամանք աւ—էն ա

ո մեր մարդեր պտի էրթան զանկն էնոց անդրակներ. Ասի՝ դու յորկն կիլաք։ Ասին. մենք էլա կիլանք ո մեր մարդիկաց կիսուկէս չդառնայ էտևանց։ Ասեցի.—Ձեր մարդկաց ինչ կեղի։ Ասին.—Որդի, հիմիսին սև չուն կը զանի. հիմիսին սև կատու կը զանի. հիմիսի սև ճետ կը զանի։ Ես էլա ասի.—Մարթ, երթը կերթան խողածնի խող, ձի էլա ասաւ

Ոչ, ասաց էն մարդ, ձի էլ առան, էկան խըտ ուրանց էտա էրկիր. որ մէկ ջրին ըռւասս էկայ, գախուն 40 էծ կուդար մեր յաւէջ, կը խածնէնք, ջրեր կընցնինք. էնոնք էլ էկան, լցուան ձեր էրկիր. ես էլա էկայ, էղայ քեղի ղօճախ. համ դու կը դարտոնէք, համ ես էլա զաքի դարտոտ իմ։

Մարդ դամբուրէն առաւ տակ. ուր դարտերուն ու ղօճախ դարտերուն էգարկ։

33

ԽԵՂՁ ՈՒ ՁԱԼՄ ԱՂԲԻՐ

(Խլաթայ Բարբառով *)

Երկու ընճիպար աղբէր կեղին, մէկը չատ զալմ, մէկը խեղճ. զալրմը կասայ խեղճին:—Չկանաս քաղ էնիս. դնա սէլի, խայ, ջուր, ար, արի: Խեղճը կերթայ, յանդան կուգայ. ջոզ աղբէր կըտըքի, էսը կը ծեծայ: Էն տեղ ջոզ մրտ մը կեղի, յօն կը դնայ խեղճ աղբօր յառէջ, կասայ.—Նա կերթամ սէլ, մեռնիս, չուրի ես յիգամ, իդա յօն պտի քաղիս:

Աղբէր նատի՝ սխու կուլայ, խըտ լալուն կը տեսի ուր կչտին էրկու խանում կայ,—ծորին կուլաս, ասին էդ խեղջ մարդուն:

—Իմ զալմ աղբէր, ջոզ յօն դրեր ա իմ յառէջ, «չուր ես իգամ, պտի քաղիս», կասայ:

—Դէ, յէլի քաղա՝ ասին:—Ինձր, գնդ մօտիկ ա. ես իմալ քաղիմ:

—Ինձ բերան կոտռիր, ձի քուր չասիր, օ ասիր. յէլի, «եա՛ քուր ու աղբէր» ասա, մանգաղ իմալ. ոն օ խարցուցայ, բան չասես:

Աղբէրն էր, չուշուտ տարաս սէլ, դարձաս, տեսաս յարտ յըմեն էղեր ա խուրձ ու բարդոց, յարտ ակմանց պրծած ա:

—Աղբէր, դու չկանէր խուրձմ կապէր, էսի իմալ էղեր ա:

—Աղբէր, կասայ. քե ինչ, դու բարդոց կրայ:

Արտի կչտին ջոզ արտ մէլ կէր, աղբէր դրեց խեղճ աղբօր վրըէն, ասաց:

—Մեռնիս էն արտ էլա դաւով խըտ յիրարու պտի քաղինք:

—Աղբէր, վասն ի Աստ սիրուն, ես խըտ քե դաւի չունիմ:

—Չէ, կասայ. պտի յէլիս իմ միջաց վրէն:

Կը կզուի. խեղճ աղբէր կը խանայ միջաց վերէն, խուրձ մի էն հանէն կը քաղայ, կը կապայ. խուրձ մի էն հանէն ու կը չտկի. օղնէն կառնի տակ զաղբէր:

*) Խլաթայ Քոսեցի Առեւտաս (Սարիքեխ) ասած է:

Դորխի խեղճ աղբէր կը կզի, էն զալմ կելլէ օդան վերէն։

—Դէ, քաղա, կասայ. տեսիմ ինձի պտի քաղիս։

Խեղճ աղբէր, ուր մտքի մէջ կասայ—«Ես՝ քուր ու աղբէր», զուր մանգաղ կը թալայ։

Զալմ աղբէր իչկեց օ յարտ էղաւ խուրձ ու բարդոց։ Կասայ։

—Աղբէր, քու օդան վերևէն դքու գլուխ կը կտռիմ. էս ճուճար քի յուստ ա։

—Աղբէր, մկայ զիմ խոզին կառնիս. Աստուածն ա կօգնայ։

Օրմէլա խեղճ աղբէր առաւ գնդներ, դնաց արօտ. ճրուց թալեց, գնդներ տարաւ. էնի—«Ես՝ քուր ու աղբէր» էրաց, փէտ թալեց. ճրուց բռնեց, կապեց, տարաւ ճուխմաք։

Հուխմաք ասաց։—Էսի մէքի մարդիմը խմալ ձեր քսանին բռնեց։

—Ինք մեկ էր, օ կռիւ կէննէն քառասուն հոգի կռիւ կենէն։

Հուխմաք խարցուց։—Օղորթ ա, խըտ քի ղրխլա՞ր կայ։—Ես, իմ խէտ փէրի կայ։

Որ ասաց «փերի կայ». Փերիք ժողնուան, տարան էսի ջոջ քարիմ գլխից էցդեցին, մեռաւ։

34

ՕԽԷՑ

(Խլաբայ բարբառով)

Մարդու մի մեկ կէլլի, կերթայ ցախ ժողուելու. կը բերայ ցախ մեկ աղբրի վերէն. հոն կը նեղուենայ, կը նստի, կասայ.—Օխէյ։

Նակաստաճ աղբրի ակնէն մեկ կէլլի, կասայ.—Թայ, ինչ ա։ Կասի.—Աղբէր, ես նեղուեցայ, «օխէյ» էրի։

—Որ էդքմալ ա, կասի. կայնիր դաս, չուր ես գամ։

Մարդ մտաւ, սուճրեմ' էրեր, ասաց.

—Թայ, չասես «սուճրա, սուճրա»։

Թայն առաւ սուճրեն, էկաւ. ճամբեսու խետ, ասաց.—Սուճրա', սուճրա'։

Աստրծու խրամանքով ինչ որ ասես, սուճրի մեջ լցուաւ։ —Փառք Աստրծու, ասաց. ձի լաւ էղաւ, ես մեռայ ցամաք խաց ուտելով։ Առաւ սուճրեն, էրեր տուն, ասաց.—Կնիկ, չասես «սուճրա, սուճրա»։

Մարդն էլաւ, լուսուն գնաց ի պրակ. կնիկ սուճրեն էրեր, ասաց.—Սուճրա Սուճրա. Աստուածուրեն ինչ որ ստեղծեր էր, սուճրի մեջ լցուաւ. նստաւ, կուշտ կերաւ. չուրի էն օր կուշտ չէր կերէր։ Վերուց գսուճրեն, դրեց դէն։ Իրեք ամիս մնաց. մարդ գնաց ինչ կանդար գեղական կէր, տուն գլուխ էրկու մարդ էրեր գիաճաք։

Գեղական լցուան ի տուն, իշկեցին օ թունիր, պուտուկ չկայ, տաշտ խաց չկայ.—Էսա մեզի յորին էրեր, ասեցին։

Մարդ սուճրեն էրեր, փուեց, ասաց.—«Սուճրա սուճրա»։

Իրա ասելուն խազար թուղու եամակ լցուաւ ի մեջ սուճրին։ Աջբրցան (զարմացան) թէ էսա ինչ բան ա. իմ աղբօրն ասեմ. կերան, կշտացան, էլան գնացին։

Մնաց չուրմ տաս տարի։ Ըռէսի տղեն խաբեց կնկեան, չորս խարիր ֆիլա ցորեն էտուր, առաւ գսուճրեն, գնաց։

Իրիկ էկաւ, ասաց.—Ո՞ւր ա սուիրէն։

Ասաց.—Ձորս խարիր ֆիլա ցորէն առայ ըռէսի տղից, տուի։

—Աստուած քո տուն աւիրայ, էդ ինչ էրիր, ասաց մարդ։

Մնաց իրէք տարի, խաց խըլըսաւ. էլման էն առջի ծուղարէն. իմ աղբօրն ասեմ, էլաւ էլման գնաց ի պրակ, փէտ չալկեց, էկաւ, նըստաւ վեր աղբրին, ասաց.—«Օխէշ»։ Օխէշ էկաւ դուս, ասաց.—ինչ ա։

—Աղբէր, ասաց. ես նեղեցայ, «օխէշ» էրի։

Ասաց.—կայնիր դատ, չուր ես գամ։

Գնաց առաւ էշ մի, էրիր, ասաց.—Ա'ռ քեզի, նրմա չասէս. «էշ ա, էշ»։

Մարդն ասաց—ինչ պտի ասեմ «էշ ա, էշ», ձի ցախ կը բերեմ ի պրակէն։ Էրիր, ճամբեխ. ասաց.—«Է'շ ա, էշ»։

Էշ կայնաւ, կօտ մի օսկի ցըռեց։

Առաւ էշ, էրիր տուն. կնիկան ասաց—չասէս, «էշ ա, էշ»։

Խըտ ասելուն կօտ մի օսկի էլ էն տեղ էտուր։

—Կնիկ, ասաց. քու Աստու սիրուն էղնի, չէղի մարդու ասես։ Տաս տարի մնաց, մարդն էղաւ աղա. կնիկ էղաւ խանըմ։

Աւուր մէկ կնիկն ասաց.—Օ, էշ պտի խէծիմ, էրթամ ճամամ։ Իրիկ ինչ էրեց, չարա չէղաւ։ Կնիկ խէծաւ էշ, գնաց ճամամ. մտաւ ի նէրս. ճամամճուն էլ ասաց, օ իշուն մուղեաք կէնայ, նրմա չասի—«էշ ա, էշ»։

Համամճին տարաւ, զէշ կապեց. բերեց խոռոմ մի խոտ դրեց իշու առջի, իշկեց կուշտ ու բոլոր, ասաց.—«Է'շ ա, էշ»։

Էշ կօտ մի օսկի էլ էն տեղ ցըռեց։

Համամճու խելք թռաւ ուրախութենից. վազաւ, գնաց, էշ մի գնեց. բերեց էդ իշու տեղ կապեց, զէդ էշ տարաւ ուր տուն։ Կնիկ ճամամէն էլաւ, էրկու խարիր օսկի էտուր ճամամճուն բաղնըսի փարա, խէծաւ էշ, գնաց ուր տուն. էշ բերեց, կապեց թալէն. ասաց.—«Էշ ա, էշ»։

Տեսաւ օ, հարամ ու ռաշ էղի, ըսկի օսկի չկայ։

Մնաց վեց տարի. մարդն էլման էն անօթի, տկլոզ. էլման չուան թալեց ի թև, գնաց պրակ։ Նալկեց չալաք մի փէտ. էկաւ, նստաւ վըր աղբըրին, ասաց.—«Օխէշ»։

Օխէշ էլաւ դուս, ասաց.—Նստի, չուրի ես գամ։

Գնաց էրիր բիր մի, ասաց.—առ քե, բիր մի, նրմա չասես. «բիր, հա բիր.»

Առաւ զբիրն, էկաւ, ճամբեխուն ասաց.—«Բիր, հա բիր»։

Բիրն առաւ էդոր, զէ, տուր որ կուտաս. էնքան էտուր, որ մարդն էղաւ մեռել, ընկաւ ի գետին, բիրն էլ դադրաւ, ընկաւ խըտ կչտին։

Կեճատաճ կեճ մարդ կոտրտուելով, ջարդրտուելով էլաւ, առաւ զբիր, էկաւ տուն, կնկեան ասաց.—Ջասես, «բիր, հա բիր»։

Լուսուն չուտ մարդ չուան թալեց ի թև, գնաց պրակ։

Կնիկ բիր կախեր էր պատից. էբեր, ասաց.—«Բիր, հա բիր»։

Բիր պրծաւ, ընկաւ վրը կնկեան. տուր ո կուտաս, էմալ մի զարկեց, զինիկ սրընկուայ էլաց։ Կնիկ կխամեռ ընկեաւ, բիրն էլ խետ կչտին։

Մարդ էկաւ, իչկեց. դուռ փակուկ։ Դէս ու դէն դրրկէցնեբուն խարցուց, կնիկ չկայ.—Ջաճըմ, ասաց. իմ կնկեան ինչ էղաւ։ Էկան սողնըկի ծակէն իչկեցին, ո կնիկ մեռուկ, ընկեր ա դաւի։

Նոր դուռ կոտրեցին, մտան ի նէրս. բերին ջուր, լցին վրը կնկեան. պրտ օլրրեցին. կնիկ սադցաւ, էլաւ նստաւ։

Մարդ խարցուց.—Կնիկ, էդ ինչ էղաւ քէ.

—Ա՛յ Աստուած աւիրա քո տուն ու քո բերած բրին, ձի վրայ խալ չթողեց։

Նոր մարդն իմցաւ զուր բրի խուճար. առաւ զբիր, գնաց ըռէսի տուն, ասաց.—«բիր, հա բիր»։ Բիր ընկեաւ ըռէսի տան մէջ, զըմէն էլաց մեռուկ։—Դու էղիս քո Աստուած, ասաց ըռէս. քո բիր բռնա, քո սուճրէն տամ։

Մարդն առաւ զսուճրէն, էկաւ տուն։ Էլման առաւ զբիր, գնաց համամ։ Համամճուն էլ էն բեազալրկին ջարդել տուեց, առաւ զուր էչ, էկաւ ի տուն։

—Դէ՛, ասաց, կնիկ. չէղի էլման ասես «Բիր, հա բիր»։

35

ՕԽԷՑ

(Ռուլաճեայ բարբառով)

Մէկ բազկաց-բաճի մը կեղնի. էդ բազկաց-բաճուն իրէք աղջիկ կեղնի. էտի կը բառնայ զուր բազկաց, օր էրթայ բազկցուտենի. ախջկներ կը թափին բոլոր, կըսին.—ափօ, մղի մէկ մէկ փեօֆեօ բէր։

Ձոջ աղջիկ կըսէ—ընծի Շամայ խուրճի բի։ Միջնակ աղջիկ կըսէ.—Ընծի Հալպու խուրճի բի։ Պզտիկ լէ կըսէ—ափօ, ընծի օխէշ բի։

Բազկաց-բաճին է. դէղնայ կէրթայ զուր մալ լուիա կէնէ. էն դիէն կը դառնայ, կիգայ ուր խաւրճի մէջ, վրը աղբրի մը բազկաց կը դնէ։ Դօր մը կը մնայ, կըսէ.—Հանիմ իմ ախջկներու դիաբէք (նուէր) ճազրիմ. գինամ, կիգան առէջսի. տամ զուրանց, Թրէխ խնամանան։ Իմալ օր կը բանայ գնակուպէն, կիշէ օր Թէ՝ էրկու ախջկայ դիաբէք հանատայ ի մէջ. պզտիկն չկայ.—Վ՛ուշ կըսէ. մոռցեր իմ, իմ պզտիկ ախջկայ օխէշ չըմ բնրեբրի։

Նակատան աղբրի միջէն մէկ սև արապ մը կը թռնայ. առէջ կանի.—Հա, կըսէ. աղա՛ ջան, յօրի՛ վուշ էրիր։

—Ըակի, դիմ աղջկայ օխէշ մոռցեր էնք, վ՛ուշ էրի։

—Օխէշ մըտ մղի կայ. կանի, իմ աղից հարցում ու դամ։

Արապ կը սրկի ի ջրի տակ. բազկաց-բաճին կը մնայ վրը աղբրին նստուկ։ Արապի աղի անուն լէ օխէշ կեղնի. ներս կը մտնայ, բարև կը բռնայ, կանի.—Հա, կըսէ աղէն. յօրի՛ կանար.

—Ըակի, կըսէ. մէկ բազկաց-բաճիմը էկէ, Թալէ վրը մեր աղբրին, օխէշ կուզէ ուր աղջկայ համար։

—Գնա՛, ըսէ. Թրէխ զուր աղջիկ ճամբէխ, իգայ յուտաս։

Արապ Թռաւ, էլաւ դուս, ըսեց.—Բազկաց-բաճի, գնա գքու աղջիկ բի իտա տեղ, ես քարզի եմ. կտրիմ, կարիմ, հագցում, ճամբըցում։

Ծօցկի բազրկան-բաշին բարձաւ. գեղին օր մօտեցաւ՝ աղջըկ-տիք էկան առէջ. խնտացան, փաթթուան պապու վզովն Պապն էր, հաննց գէն էրկու աղջկայ դիաբէք, տուէց. պղտի աղջիկ պաղերընաւ. իչէց քուրըտոց ձեռ.—Լաօ. քղի լէ տեղ կայ. դու քու ճիար յօրի կը կախես. ըսէց պապ։

Բազրկան-բաշին էր, էկաւ դուր բևռներ թափեց, ինչ կէր—չկէր տեղաւորցուց։

Լուսաթի խանչէց զաղջիկ, ըսէց.—Լաօ, կառնես զքու ջա-ուրքք, կէրթաս ի Ֆլան աղբուր, օր հասար վըր աղբըրին, ջուր լսիէ. էրէ—վուչ. արապ մը կը թռնայ, քու առէջ կանի։ Զը վախե-նաս. էնի բարգի է, կը կարէ վըր քու բաժին, կը կարէ, հագի, արի։

Աղջիկ էլաւ, առաւ դուր ջառըքք, խօճչով ու բօղչով. գնաց մըտ արապ։

Հասան վըր աղբրին, աղջիկ ջուր խմէց, էրէց «վուչ.» հըտ գա-հուն արապ թռաւ, առէջ կանաւ.—Հա ըսէց, էկաթ, աղջի, դ'արի վըր իմ ձեռաց, օր զքու բաժ չավլիմ. կարիմ, կարիմ զքու օխէշ։ Աղջիկ թռաւ վըր արապի ձեռաց. արապ. դու արապ էղնիս, ձեռ մը դրէց աղջկայ գլխուն. մէկ օտներու տակ, առաւ ու սկաւ ի ջրի նէրքև։

Աղջիկ իչէց. օր դարկէ մը բացուաւ, արապ առաւ վինք ու մտաւ ի նէրս. տեսաւ օր մէկ բրընցապ ջհնհլ մը էտ տեղ նստուկ է.

Հան, ըսէց. աղջի, քզի օխէշ. զքզի բերի զիմ աղի համար։

Էտ տեղ աղէն ու աղջիկ առան գլբար։

Ջառըեֆ հարի իրկուան նստան. նստան, տեսան օր աղջիկ չիկայ. էլան գացին։ Պապն ու մամ իմցան, տիրին վըր ուրանց չօճե-բուն. էլ ինչ պտի էնէն, բան բանից ընցեր էր։ Լուսաթի աղջկայ մամն էլաւ, խօճչով բօխչով գնաց, վըր աղբրին նստաւ, էրէց «վուչ». Արապ թռաւ առէջ, կանաւ.—Հա, ըսէց. ինչ կուզիս։

—Կուզիմ ըսէց. օր գիս տանիս մըտ իմ աղջիկ։

—Դ'արի վըր իմ ձեռաց։

Արապ առաւ գկնիկ ու մտաւ ի ջրի տակ։ Կնիկ իչէց, օր մէկ թագաւորական որդի մը, հանաչ, առէ զուր աղջիկ, նստեր է։

Էլան աղջիկն ու փեսէն կանան, բերին գկնիկ նստըցուցին մըջ ուրանց։ Շարաթ մ' էրկուս մէջ ընցաւ. կնիկն ըսէց, փեսէն.—Հիւի կէնիմ քզնէ, օր գիմ աղջիկ տաս, տանիմ մէկ ժուկ մը մըտ մդի. ու էլմը բերիմ։

Փեսէն իզին տուէց, մամ առաւ զաղջիկն, օր էրթէր. փեսէն դողտու խանչէց զաղջիկ, թամպա էրէց, ըսէց։

—Տես, կէրթաս քու պապու տուն. չեղնէ մարդու խէչ պար-կիս. գնա, քու օդէն նստի, ես յըմն օր իրկնեց կիդամ։

Մամն էր. էլաւ առաւ զաղջիկ, նստան վըր արապի թևերուն, էլան դուռ Գացին հասան տուն, տնեցիք թափան վրէ ուլանց, խնամացան։ Իրկուն էղաւ, աղջիկ գնաց, մինակ զուր օդին պարկաւ. կէս գիշեր էղաւ—չէղաւ, խըժալին մէկ հաւքօրէնք մի օդի էրդկէն իջաւ ցած։ Աղջիկ էլաւ՝ ճրադ վառաց. իշաց օր ուր իրիկն է։ Իրիկն էր, հանեց զուր զհաւօրքու հալաւ, էղաւ մէկ նուրնիկ հրեղէն մը. նստան, զրուցին, լուսաւ դէմ, իրիկ էլմը հագաւ զուր հաւօրքու հալաւ, թռաւ, գնաց։

Օր մը չէ, երկու չէ, ջոջ քուր սրդի վրայ գնաց, կանաւ վոդան, հարի կէս գիշեր պատնորդ էղաւ. իշաց օր ևակասան խըժալին հաւօրէնք մը երդկէն իջաւ. տեսաւ օր ուր քուր ճրադ զարկնց, վառաց, էդ հաւօրէնք լէ հրա իջնելուն հանեց զուր հաւօրքու հալաւ, էղաւ մէկ տըսնուհիդ տաւնական ջահիկ մը, որ չուտիս, չը խմիս, կանիս թամաշա էնիս. նստան ու բաւլեցին կէր ու խում։

Ջոջ քուր էդ տեղ բախալաւ, ըսաց։

—Դու կանի, էտի իմ պզտի քուրն էղնի, իտա վառքին տիրանայ, ես մնամ խնդճ։—Խօճա լուսմէն էլաւ, գնաց մըտ դարբին. տուաց էրկէթ չանկլներով էրդակալ մը չինել. վրէն յըմէն սանդրքէ ակռայ. բերաց ու դրաց վրը քուրոջ օդի էրդսին։

—Կէս գիշեր եղաւ-չէղաւ, հաւօրէնք էլ մը խժալին էկաւ, օր պինք թալէր օդի էրդսէն, սորռուաւ չանկլներուն, չանկլներ չքուան ըտոր սիրտ ու սրտներ. էտ տեղ թապըլտաւ, թապըլտաւ, աճեախ պինք վրծուց ու գնաց եարալի—փարալի—պատաւ վրը ուր տեղացու։

—Աղջիկն էր, լուսմէն էլաւ, գնաց էրդսի թարաճ, իշկաց օր մէկ էրկէթ ճաղերով էրդակալ մը հանտէ վրը էրդսին. ու արուն գօլ բըռնէ, կանէ։ Տփաց վրը գլխուն. տփաց չորքերուն, առաւ զէրդակալն ու տարաւ, թալաց պապու առէջ։—Ասու զալըմներ, ըսաց. ես ձզի ինչ էնք էրէ, օր դու իտա բան էրացիք իմ գլօխ. ինչ կէղնէր. օր ձեր փեսէն էր, գախտան բիր մի (երբեմն) կիգէր, գիս տեսնէր, էրթէր։

—Էլաւ աղջիկ լալով բօռաց, անիծաց զըտոնց ու ընկաւ ճամբաս, գնաց։ Գնաց վրը աղրբին նստաւ. ջուր մը խմեց, էրաց վրէն. արապ թռաւ էլաւ.

—Հա, ինչ կսիս, խանմ։—Ինչ ըսիմ. գիս տար մըտ իմ իրիկ։

—Կանի, ըսաց, էրթամ հարցուռմ։

—Արաբ սրկաւ ջրի տակ, գնաց աղին հարցուց, աղէն ըսաց.

—Կէրթաս, զէն բէբախս կառնիս վրը քու էրկու ձեռաց. կը փչիս օր էրթայ պատի եօթ ծովու կղզին։

Արապ էլաւ, առաւ զաղջիկ վրը ուր ձեռներուն, փչաց. գնաց էդ զաւալին եօթ ծովու կղզին ընկաւ։

Աղջիկ աչք բացեց, իշեց օր չորս բոլոր կը մթնէ. ծով է. լաց ու զօռաց ու օրրուաւ. յետև միամտաւ ու խըլմաչ (ոչ քուն, ոչ արթուն) էլաւ, էկաւ պարտուաւ։ Աստուածծուտէն էրկու հրըչտակ էրեց էղուրնեկ, ճամբեց վըր ըտոր։ Էղուրնեկներ էկան, կանան վըր ըտոր գլխուն ու խրսա էրին.

—Իտա գաւալին բան է խապար չունէր ու իտա օղեաք գլօխ էկաւ. էտի օր գարթուն էղնի, մըր խօսքեր լսէ, մենք հանտէ էրկու վէտուր կը թալինք յուտա. Աստ հրամանքով զէն փէտուրներ կապէ ուր օտնէրու տակ, յէլնայ վըր ծովուն, քելէ ինչ օր չոր գտնին։

Աղջիկ աչքեր բացեց, ըլմը քնաւ։ Էղուրնէկներ էլմը զրուցին.

—Իտա կղզու մէջ մէկ ջաուշաղ պառաւ մը կայ. հանտէ ծառի տակ պարկուկ է. իտա աղջիկ թըլս ըսկի չըվախենայ, էնի եօթն օր ու եօթ գիշեր կըքնի. գունտ մը լէ ալեհէ թալէ բերան, էրէ ինչ օր ձուէթ ու կը ծամէ. ծծեր թալէ վըր թևերուն, ամէկ խընց օչխըր դմակ. էրեայ զընտոր ծծէն կտրէ, սղկէ, էնէ ինչօր բուռնուքի, տանէ թալէ վըր ուր իրկայ բրներուն, Աստ հրամանքով կը սաղնայ։

—Աղջիկն էր, քնուց իմցաւ. վէրուց գթէպուրներ, գնաց մըջ կղզուն օրրուաւ, զպառաւ գտաւ, տեսաւ օր քնուկ էր, գողտաւ մօտեցաւ, ծծէն կտրեց. տարաւ սըղկեց, էրեց ինչ օր բուռնուքի, դրեց ի ջեպ. ըստպուն էկաւ, կապեց գթէպրներ օտաց տակ, գծուլն ընցաւ, էլաւ ի ալե։

Շատ ու քիչ գնաց, Աստուած գինայ, գնաց հասաւ մէկ հովուի մը, զուր հալաւ տուեց հովուին, առաւ գհովուի հալաւ, հագաւ. քօղօղ դրեց գլօխ, զապհն առաւ թևերուն ու տուեց զճամբահն առէջ։ Գնաց, մօտեցաւ զուրանց fաւշներուն, հագաւ դաւրեշնակ հալաւ, փոus առաւ վըր վիճերուն, fեաշոլ առաւ իձեռ, ծամեր թորկեց վըր միջաց, քան դրեց ի գլօխ ու թէմ էրեց աղբուրն ու գնաց։ Գնաց հասաւ աղբուր, ջուր խմեց, էրեց «վուշ». արաւ թռաւ, կանաւ առէջ.—Հա դաւրէշ բաբա, ինչ կուզես։

—Ըսկի. ըսեց, հէքիմ իմ. կոլրտիմ ընծի։

—Իմ աղէն բրինցար է. չըս կէռնայ սաղցուս։

—Ֆառսուն աւուր բրինցար էղնի յաւալ Աստուած, իրեք աւուր մէջ կը սաղցում։

—Օր հրմալ է, դաւրեշ բաբա, կանի էդ տեղ, ես իմ աղից հարցուում, գամ։

—Արաւ մտաւ ներս, ջուապ տարաւ աղին , աղէն ըսեց։

—Լաօ, իմ մացեր է գահոց գահ, ընձի նեէիմ էլ ինչ պտի էնէ։

—Աղա, ըսեց Արաւ. բալիի Աստուածծուտեն է ճամբէ. դու յօրի ինցաց կէնես։

—Դը՛ գնա, դը՛ գնա, բի՛ ըսեց։

Արտալ էլաւ դուս. առաւ գդաւրէճ վըր ձեռաց, մոտաւ ի ներս։ Հըտ մըտնելուն Դաւրէճ բաբէն պղինձ մը ջուր տաքցուց, տըկլոպցուց ղէդ բրիճար. իմալ օր էկեր էր, զըտոր աբըներ վըր ուրին չորցեր ու մացեր էր. էտ տեղ արտալ ջուր լցեց ու էտի սիրսուի մը ղէդ բրներ լուաց ու ճմռեց. յըմալ լուաց, օր զըտոր ջան էրեց ապրշում. ըստպլուն բերեց ղէն ծիծն օր փչրեր էր, լցեց զըտոր բրներու մէջ. խօրտո մի փաթեց ու պարկըրցուց։ Թամամ եուսուն ու ին օր բրներու մումուդից ըտոր աչքեր չը կպեր էր, գահոց գահ քնաւ. իմցաւ, ջուր նազր էր, էլմը լողկըրցուց. դեղեց, պարկաւ. իրեք օրն օր քմաւ. վըր իրեք աւուր իմցաւ, օր էղեր էր մօրէ մէկ։

—Դը՛, Դաւրէճ բաբա, ուզէ. օր դուճեաֆիլի մալ տամ քզի. ըսեց։

—Ընծի քու մալ պէտք չէ, ճարամ է կեցէ, կանի քզի էրկու խրսա էնիմ, նոր իմ վիզ զարկիս դու դինաս, չը զարկիս դու դինաս։

Աղջիկ ինչ օր ուր գլխու դալիքներն էն, զըմէն մէկ մէկ խրսա էրեց։ Իրիկ նոր իմցաւ վըր ուր, էլաւ փաթթուաւ կնկայ վզով։

—Ես, մեղայ Աստ, ըսեց. սուճն իմն էր, ես քու հետ բխբախտուտճն էրեցի։

Նոր էլաւ աղջիկ զուր դաւրէճնակ հալըներ հանեց, հագաւ նոր հարսի չորեր. զերսներ լուաց, անուշ հոտեց գինք, գաչքեր դեղեց, ապրուճքներ էցկեց ձեռներ, գուլըճկներ թորկեց վըր թշերուն. չարան օսկիք ջերկեց վըր ճակտին, ծամեր-մանտը մանտը յուստկեց. էլ էղաւ, օր ինչ օր լուանակ տըսնուհնդէ. էկաւ կանաւ իրկայ առէջ։

Իրիկն օր տեսաւ գինիկ, մաճուղ էղաւ, նոր թաժայ առաջ գիրար. նստան ու վէլեցին։

36

ԲԱՑ ՍԵՒ ՔԱՐՍ
(ԱՉ ԳԱՐԱ ԴԱՇՄ)

(Ռուլանիայ բարբառով *)

Կ՚էղնի-չէղնի, մէկ հորթաբած մը կէղնի. էդի դաշտ զուր հորթեր կարծցու. կիշէ օր թէ ձէն մը կիգայ. կը դառնայ էտևանց օր, հանաէ, օձ մը վըր պալին զուրին կը խանչէ, կըսէ.

—Տղա, արի յուտա, քզի բան կըսիմ։

—Չէ, չըմ իդայ, կըսէ տղէն. դու օձ իս, կը խաբիս, զիս խէթիս։

—Տղա, կըսէ օձ. ես քզի չըմ խէթի. ես քաջանց թագաւորի տղէն իմ, իմ պապու մօտէն ըռըգեր իմ, արի, զիս տար իմ պապու մօտ. ինչ օր քու լեզուն ղռւըռւէ, կտայ քզի։

Տղէն է, դէլնայ, հորթեր կը քշէ, տանէ, կենէ մըջ քաղքին. կերթայ մամու կուշտ, կըսէ.

—Մարէ, քէնիմ կտոր հաց դաի. ես կերթամ։

—Տղա, լաօ, կըսէ մամ. դու յօրի՞ զիտա բան կէնիս, քու հորթերու թարկ կիտաս։—Չէ, չարա չկայ կըսէ. ես կերթամ։

Մամն էր. խեղճ ու կրակ էլաւ, քենիմ կտոր հաց ժողուեց, տուեց յինք. տղէն առաւ գնաց, դրեց մըջ ուր հապճին (պարկ), կապեց պառեկ ու էլաւ, գնաց քաջանց թագաւորի տղի մօտ.

Քաջանց թագաւորի տղէն ըսեց.—Տղա, կը տեսնիս զիտա սարն, օր կէրկայ, էդի իմ պապու foof ու սարէն է. հրմա բռնէ զէդ ճամբէն ու էրթանք։

---

*) Ասած է Ռուլանիայ Համզաշեխ գիւղացի Նիկօճ։

Գացին էլան դէմ foef ու սարի վրէն. օձն ըսեց տղին.

—Տղա, դիս Թորկ յուտա. գնա, ըսէ իմ պապուն Թը՝—իմ ակնջկլէն ինչ կիտաս, դքու տղէն բերեր իմ։

Տղէն ակնջկլէն տարաւ. քալանց Թագաւոր խնտացաւ, ըսեց.

—Ինչ օր քու լեզուն դըւռէ, կիտամ։

Պարձաւ, էկաւ, առաւ օձն ու դնաց։ Ճամբէտու հետ օձ սորվըցուց աղին, ըսեց.—Իմ պապու մօտի քարն ուզէ։

Գացին մըտ քալանց Թագաւոր. օձեր չորս բարաձէն լցուան, էկան աչք լուսւ Թագաւորն ըսեց.—Տղա, դը՛ ուզէ օր տամ։

—Թագաւոր ապրած, քու մօտու քար կուզիմ, ըսեց տղէն։

—Տղա, լաօ, իմ մօտու քար դու չըս կըռնայ բանցու, դու, ինչ կէնիս դդարտակ քար. ուզէ, դուճեաֆիլի մալ տամ քզի։

—Չէ, ըսեց. կիտաս, քու մօտու քարն է. չիտաս, քու մօտու քարն է։

Թագաւորի չարէն կտրաւ, էլաւ դմօտու քար տուեց. տղէն առաւ զքար, խնտաննելին էլաւ դուս։ Քալանց Թագաւորի տղէն վազաւ էտևանց.—Տղա, կանի, ըսեց, դէդ քարի մարիֆաթ ցուցուս։

Բերեց զտղէն նստըցուց. դաստըմալ հանեց, փռեց, քար դրեց ի վըրէն, ըսեց.

—Ա՛յ Դարա տաըմ՝ ա՛յ. (քաց, իմ սև քարս, քաց)։ Հըտ գահուն ջուխթ մը արագ թռան, կանան առէջ.—Աւիրինք Թէ չիքնինք։

—Նա աւիրէ՛ք, ճա՛ չիքէք, ըսեց. ձընէ կուզիմ ձի մը, ձեռք մը հալաւ, ձեռք մը սիլաճ, օր իտա տղէն հագնի, խփի, էրթայ։

Են սրճաթ ըմէն բան ճազրուաւ. տղէն հագաւ զչորեր, էլաւ հեծաւ զուր ձին ու դէմ գնաց, ուր քօխի դուռ իջաւ։

Մամն օր տեսաւ զուր տղէն, չկարաւ, հարցուց.

—Տղա, լաօ, էդ յուսասէն գառար զէդ չորերն ու զձին։

—Ըսկի մը՛ հարցու, մարէ, ըսեց տղէն. Աստծու աջողումն էր. դու ճրմա էլի, գնա զԹագաւորի աղջիկն ուզէ ընձի։

—Տղա, լաօ. ես իտա փըռընտուկ՝ իմալ Թագաւորի աղջիկ ուզիմ։

—Մարէ, դու գնա, Աստուած օղորմած է, ես քու տղէն իմ, ըսկի մը՛ վախեցի։

Պառաւն էր էլաւ, գնաց Թագաւորի տուն ուզնկան, խնամաթու դրին. պառաւ նստաւ վրէն.—Թագաւոր ապրած, ըսեց. էկեր իմ, դքու աղջիկ տաս իմ տղին։

Թագաւոր ծիծղաց, ըսեց—Պառաւ. գնա, հինգ ֆիսա օսկի բեր, դքու հարս առ, գնա։

Պառաւ դարձաւ էկաւ, տղէն հարցուց.

—Հա՛ մարէ՛, իմալ էղաւ։

—Լաւ, խոտ մեր աղքատ նալին հինդ ֆիսա փարա կուզէ։

—Իման չկայ, մարէ՛. քնի էլի, Աստուած օղորմած է։

Մամ քնաւ. տղէն հանեց զքար.—«աչ փարա դաբրմ»—էրկու արսալ թռան առէջ.—«աչխար աւիրինք թէ չկինք.—նա՛ աւիրէք, նա չինէք. ձղնէ դուզիմ հինդ ֆիսա փարէն. տեսաւ ուր գլխու վերև դրուկ է.

—Դը՛ մարէ՛, ըսեց. ա՛ռ, դնա՛ թագաւորի մօտ. տո՛ւր, զաղջկէն ուզէ՛։

Պառաւ վէրուց գփարէն, տարաւ, տուեց թագաւորին։

Թագաւորն օր իչեց, տեսաւ գփարէն. մըջ ուր մտաց ըսեց «իմ խնէք կարեր է օր պառաւ գիմ աղջիկ տանի»։

Ընտախուն թագաւոր մհանայ էրեց, ուրիչ բան ուզեց.

—Գնա՛, ըսեց պառաւուն. իմ աղջկան յրմալ ձեռք մը հալաւ պտի բերիս, օր հաւկթի խեճօռքի մէջ տեղաւորի։

Պառաւ դարձաւ մրտ տղէն.—Լաւ, ըսեց. ըստապուն ձեռք մը յրմալ հալաւ կուզէ՝ օր հաւկթի խեճօռքի մէջ տեղաւորի։

—Բան չկայ, մարէ՛, քնի՛. ըսեց, Աստուած օղորմած է։

Մամ քնաւ, տղէն գքար հանեց. էրկու արսալ թռան առէջ.—«աչխար աւիրինք թէ չկինք».—նա՛ աւիրէք, նա՛ չկէք. ձղնէ կուգիմ յրմալ ձեռք մը հալաւ, օր հաւկթի խեճօռքի մէջ տեղաւորի։

Լուսմէն էլաւ, օր ձեռք մը հալաւ հազր՝ գլխու վերև դրուկ է, տուեց մամուն. մամ առաւ, դէմ դնաց թագաւորի տուն, տուեց դհալաւ.—Դէ՛ ըսեց. թագաւոր ապրած. տո՛ւր զհարս, առնիմ էրթամ։

—Թաւո՛ւ, պառաւ. դու յրմալ խօլալի հալով իմ ձեռնէն չըս պրծնի։ Ղղնէ կուգիմ օր foef ու սարհ մի չինիս. չորս դիուց բաղ ու բաղչայ. ըմալ օր խգայ, հասնի չուրի իմ դուռ, դետնի վրէն լէ խալի խալիչա պտի փռիս, օր ներքևէն իմ աղջկայ ձիու ոտք նա դետին առնէ, նա լէ վերևուց արև զարկէ վրէն։

Պառաւ էլաւ, գնաց մրտ տղէն. տղէն հարցուց.—Մարէ՛, ուզիր։

Չէ, լաւ, թագաւոր ըստապուն foef ու սարա կուզէ, մեր դռնէն չուրի ուր foef ու սարի դուռ՝ բաղ ու բաղչա, խալի ու խալիչա պտի էղնի։ Լաւ՛, ընծի ականջ կէնիա՞ արի՛, թագաւորի աղջկայ բարկ տուր. էրթանք մեր ճգուճին աղջիկ մը ուզինք։

—Բան չկայ, մարէ՛, քնի՛, Աստուած օղորմած է։

Մամ քնաւ. տղէն գքար հանեց, էրկու արսալ թռան, կանան առէջ.—«աչխարհ աւիրինք թէ չկինք».—նա՛ աւիրէք, նա՛ չկէք. ձղնէ կուգիմ իտա քօխի տեղ մէկ foef ու սարհ մի դնիք, յուցկայ լէ հարի թագաւորի սարի դուռ բաղ ու բաղչա խալի ու խալիչա պտի փռիք, օր թագաւորի աղջկայ ձիու ոտք գետին չառնէ։

Լուսամթի թագաւորը էլաւ, իշեց օր ինչ իշէ. ըսախ տուէ վըր ուր քաղքին, չորս թարաֆէն բաղ ու բաղչա, ծառ ու ճուղ, գետնի էրես խալի ու խալիչա. էկէ՝ հասէ չուրի ուր foef ու սարի դուռ.

—Հէյ վախ, ըսեց. ըսա պառաւ ջիմ աղջիկ պոի տանի։

Պառաւն էր, լուսամթի էլաւ, գնաց թագաւորի տուն.

—Պը. դոր է, ըսեց. տուէք ջիմ հարս տանիմ, էլ ինչ անուն կը դնիք։

Թագաւորն ըսեց.—Պառաւ, օր յըմալ է, կերթաս, ըսթ ձեռք դիոլ ու զուռնա կը դռնիս, գիդաս ձիով ու ձիաւորով, ճեղով նաճգամով-չաւերի (քամանչա) քաշելով գըռու հարս կը տանիս։

Պառաւն էր, էլաւ գնաց, գըմէն թասարուֆ տեսաւ. առաւ դուր հարսն, էկաւ։

Թագաւորի աղջիկն էր, մէկ վախք մը մնաց, ուր պապու տան արտալի հետ նստաւ, կանաւ։ Տղէն յըմն օր կերթէր ճէջիր, իրկնէ իրկուն դիգէր տուն։

Թագաւորի աղջիկ՝ չէ կնիկ խրսմի սառանայ կէղնի, խաբլուճնով գիրկայ մօտէն խօսք քաշեց, գըարի ահվալն իմցաւ։ Էլան ինք ու արտալ խօսքեր ուրանց էրին մէկ. աղջիկ գըար դողցաւ տղի մօտէն. բացեց.—ահչ գարա տաօրմ. էրկու արտալ թռան առէջ կանան.—«Հէյն, աւերինք, թէ չկրինք».—Նա՛ աւերէք, նա չկըէք, ձղնէ կուզիմ օր իդա foef ու սարէն վերուք, տանիք, դնիք ըսթ ծովու կղզին։

Լուսամթի տղէն էլաւ օր, ինչ էլնի. նա foef ու սարա. նա բան. էլմը յավալգու տուն, էլմը յավալգու չոր գետին։

—Հէյ վախ, ու հէյվախ. ըսեց. ըսա իմ տուն ակօլաւ. թագաւորի աղջիկ ջիմ քար դողցեր է։

Տղէն էր, էլաւ, ընկաւ ի համբախ. քաջանց թագաւոր, դոր իս, էկայ քղի։ Գնաց քաջանց թագաւորի մօտ, բարև բռնեց, կանաւ.

Հա, լաօ, յօրի՛ էկար, հարցուց թագաւոր։

Թագաւոր ապրած, գըռու տուած քար իմ կնիկ դողցէ, առէ զարապ, փախեր է։

—Թաւ, լաօ, ես չըսի՞, դու իմ քար չըս կռնայ մարսի։ Կանի, էղնամ խանչիմ ջիմ օձեր, տեսնամ, որ սալըղ մը կիտայ։

Էլաւ կանաւ բիճակ-դաշուճ, ճչաց. աչխար էդաւ օձ ու էկաւ, վիրնից հարցուց, մարդ սալըղ չը տուեց, ըսեց.

—Լաօ, իմ օձեր խապար չունին. գնա խօլ օձերու թագաւորի մօտ։

Տղէն գնաց, խօլ օձերու թագաւորի մօտ էլաւ դուս։

Խօլ օձերու թագաւոր լէ գուր օձեր բերեց, մէկ սալըղ չը

առաւց. ըսաց.—Տղա, իմ օձեր խապար չունին. գնա մկան թագաւորի մօտ։

Տղէն գնաց, էլաւ մկան թագաւորի մօտ։

—Հան խեր էղնի, հօղածին. դու ինչ կոլորախս իդա վէրքեր.

—Ողլա, թագաւոր ապրած, նալ ու ճեխեաք խորմլա բան մը կայ. իմ քարն է կորէ, ընկերը իմ, կը դաչիմ։

Տղա, լաւ, ըսաց թագաւոր, ես դուս չըմ էլնի. ես չըմ կռնայ խապար էղնի, սար ու ձոր իմ մկներ կոլորտին. կանի, խանչիմ, հարցուսի։

Խանչաց դուր մկներ, գմէն բերաց, մէկ սալըղ չը առաւց։ Թօփալ մուկ մը հոն դէն մացեր էր. հարցուցին թօփալ մկնէն, մուկ սալըղ առաւց, ըսաց.—Ես եօթ ծովու կղզին իմ տեսէ գընացայ։

Թագաւոր ամր էրաց թօփալ մկան.

—Ընկի, ըսաց, էդ մարդու առէջ, տար գկղզին ցուցուս։

Ընկաւ առէջ, տղի հետ լէ բօճի մը կէր, էղան մէկ ու գացին։ Շատ ու քիչ գացին, Աստուած գինցայ, էլան ի ծովու պռուկ դուս։ Տղէն մնաց ի ծովու պռուկ, բօճին ու մուկ լօղալին գացին foef ու սարի դուս, կանան։ Բօճին մնաց դուս կանուկ, մուկ ծակեց, գալատի տկոյ, գնաց արապի ու թագաւորի աղջկայ օրթէն՝ ծկի մօտ բագլեց։ Արապն ու թագաւորի աղջիկ նստած էն, կը խաղէն, քար էն կը թալէր ընտրա դիրկ, էն ընտրան։ Մուկ փչում՝ կըռթ-կըռթցուց. թագաւորի աղջիկ իչեց էն դէն. արապն օր գքար թալեց, առաւ թագաւորի աղջկայ ճկուէթ, պատաւ մկան ծկու վերէն. մուկ սըլվըլաց, առաւ, խածեց գքարն ու դէ գիտի ջվակէ. հասաւ բօճու մօտ ու էրկուս թալին գուրանց ծոլ։

Բօճին ըսաց.—Մուկ, դու չը կառնաս լօղաս, տուր գքարն։

—Չէ, ջըմ իտայ, ըսաց մուկ, դու ճարգաճար մարդ մ'իս, հիւմա չուք մը տեսար, պտի հաչաս, քար բերնէդ պատի։

Փչում ի տեղ դացին, մուկ պտի խեղդէր. բօճին չուշուտ քար բերնէն առաւ, մուկ թալեց չալաքն ու լողաց։ Դրա ոտ մը տեղ չըն գացած էն, մուկ քիսաւ բօճու ոտք, հրա գահուն բօճին հաչաց, քար բերնէն պատաւ. ձուկ կլուց գքար։ Մուկն ու բօճին էլան ջրից, ու նստան ծովու ափ, բագլեցին։ Աւուր մէկ բօղչիք էկան, բօղ թալեցին, Աստու հրամանքով էն ձուկ ընկաւ բօղ, վերուցին, թալեցին ջուր. բօճին առաւ գձուկն ու փախաւ. բերաց դէմ տղի մօտ.

Տղէն խնամցաւ, առաւ գքար, բացեց—ապչ, գարա—դաշըմ։ —էրկու արապ թռան, առէջ կանան.—աչխարհ աւիրինք թէ չիքինք. —ետ՝ աւիրէք, ետ՝ չիքէք, գէն foef ու սարհն յուստէն բերերիք, էլմը էնտեղ տարէք, գիսի լէ հետ։

Լուսմէի աղէն էլաւ, օր foեf ու սարհն Թադաւորի քաղքի մէջ դրուկ է, վազաւ, գնաց Թադաւորի մօտ, ըսեց։

—Թադաւոր ապրած, պիսի ճա՛ կը հարցուս, ճա՛ կը փառիս, Քը դո՛ր գացիր, դո՛ր էկար։

—Լաօ, ես գինամ. դու կատղուկ իս, չճուն իս, դո՛ր տարար ղիմ աղջիկ, դո՛ր բերիր։

—Ձաղջիկդէ յիանէ յօրէ կը հարցուս, քո արապից հարցու, օր հանտայ դրա էրկուս իմ foեf ու սարի մէջ պարկուկ ին։

Թադաւոր ամր էրեց. ջալլաթջին գնաց, ղէրկսի գլօխ լէ կտրեց։

Նոր բաժա բէրեցին, գուր պզտի աղջիկ պսակեց վըր աղին. Հօթն օր, հօթ գիշեր գհարսնիան էրեց. կէրան, խմին, լիացան։ Էն հասաւ ուր մուրազին, դուք լէ հասնիք ձեր մուրազին։

Նախշուն չօկէկ մըջ էղին, դիլբար տարան մըջ գեղին։

37

ՀՈՒՐՆԻԿ ԵՒ ՀՐԵՂԷՆ

(Ռուսաստանեայ բարբառով) *

Կ'եղնէ—չ'եղնէ, թագաւոր մը կ'եղնէ. ըդոր ըսկի ավլաս ու բավլաս չ'եղնէ. գիշեր ու ցերեկ կը մնայ մըջ էդ մարախին ու միտք ու մեալա կենէ։

Էդ թագաւորին մէկ բեռնէ խսրախմ' լէ կ'եղնէ, Աստու տուածին դու իշէ, էդ խսրախ լէ անծին կեղնի։

Կղենի օր մէկ ժուկ ու ժամանակ մը մէջ կ'ընցնայ, գիշերուայ մէկին թագաւոր կը քնի, էրկ կը տեսնի օր, մէկ չայիր չիմաց տեղ մը՝ ընլին ըռանկ—ըռանկ ծաղկօրէնքով, մէկ մարմանտ գետի մ'ափ ինք նստուկ է ու ըր կուշտ լէ ուր պէս մէկ ուրիշ թագաւոր մը։

Էդ թագաւոր ինք արևելուց թագաւորն էր. դու մը'սի ուր կշտի նստող լէ արևմտոց թագաւոր կեղնի, ըդոր լէ ըսկի աւլաս ու բաւլաս չ'եղնէ։

Աստու հրամանքով էդ էրգի մէջ էդ տեղ, էդ էրկու թագաւոր գիրար կը տեսնեն, կը նստին, էդ ջրի խռախ խօշ ու բեշ (կը բաբևեն) կեղնին. մէկ լէ կիշին օր ջրի հետ մէկ խնձոր մը գլորելին գիգայ. արևելոց թագաւոր կը թռնայ տեղէն, կը բռնէ զէդ խնձոր, կը բերէ արևմտոց թագաւորի մօտ։

*) Պատմած է Ղուկաս Տ. Միմասեան—Համգաբեխ գիւղացի: Ժողովրդեան կենդանի եւ վաւերական բարբառով ասուած է. սակայն տառերու իսկական ճիշմաճ, զոր շատ դժուարին էր, այնչափ ուշ չէ դարձած, այլ սովորական ձեւով գրի առած եմ:

—Արի, կըսէ արեւելոց թագաւոր, Աստուած խրսմաք տուից մըղի։

Կը դնին ղէդ խնձոր գուրանց առջև, մէկ լէ կիշին օր էնդիուց մէկ սիպտակ մուրուա դաւրեօ մը գիգայ, fեաշկուլն ի վիզ.

—Նաեօ', կըսէ. կրնատի մըտ ըդոնց։

Երկու թագաւոր լէ գուրանց աճուալ խրսա կէնին դաւրեօին. դաւրեօ կըսէ.

—Իդա ձեր առջևու խնձոր orթլխից կըվիսէք. կէս մէկիդ, կէս լէ մէկէլիդ. կը տանիք ձեր կնկատց հետ կուտիք, քեջալներ լէ կիտաք ձեր ձիանուն. Աստու հրամանքով Թը ձըղի ալաս կեղնի, Թը ձիանուն քուռակ. կըսէ ու կ'անհրևանայ։

Երկու թագաւոր կը չիւարին, կը մնան. դաւրեօի խոսաց վրէն աճս կէնին հըտ իրար՝

—Թը՝ ընծի աղջիկ էղաւ, քղի տղայ, ղիմ աղջիկ տամ գքու տղին. Թը քղի աղջիկ էղաւ, ընծի տղայ, ժըխս դու քու աղջիկ կիտաս ղիմ տղին։

Էդ տէղ էր, էրկու թագաւոր գուրանց խօսք կիտան, կառնին, բեօf fարթմա (օրօրոց գծել) կէնին, ու մէկ լէ կը խրտին, կիմնան օր էրաղ է. հէյվախ կէնին, կը տփին չոճերու ուրանց, մէկ լէ ձեռ կը տանին գուրանց ջէպեր, կիչկին օր խնձոր օղորթ է.

—Հայլօ, կըսին, մակեա՞ր էդ դաւրեօ հը'րչատակ է էղէ, մենք խապար չունինք։

Արևմտոց թագաւոր գուր կնկայ հետ կուտէ ղէդ խնձոր, արևելոց թագաւոր լէ գուր կնկայ հետ, ու գքեջալներ լէ կիտայ գուր ձիուն։

Աստու հրամանքով լին ամիս, լին օր, լին սրնաք, լին դախա օր կը բմի, մէկ տղէ մը կեղնի արևելոց թագաւորին, ըդ սահաթուն աղջիկ մ'լէ կեղնի արևմտոց թագաւորին։

Տղի եօթն օրն օր կը բմի, արևելոց թագաւոր կը խանչայ զմանլիս (խորհրդականներ), օր տղի զանուն դնէ։ Կը fօմին թագաւորի fուպարներ, կիտան—կառնին, տղի անուն կը դնին Հուրնիկ։

Արևմտոց թագաւոր լէ կը fօմայ զմանլիս. զընդոր աղջկայ անուն լէ կը դնին Հրեղէն։

Արևելոց թագաւորի ձին՝ տարին օր կը բմի, որէ քուռակ մը կը ծնի. գձիու քուռկու անուն լէ կը դնին Խամար-քայ։

Արևելոց թագաւորն է՝ գուր տղէն կըղնէ յըմալ շուտաբանց օգի մ'օր, ըսկի իննրնի էրես չը տեսնայ. զհաց ու ջուր լէ էրդըսէն կիտայ։

Թագաւորի տղայ էր, օր քընց գօր կը ջոջնէր։ Օրերուց օր մը կը քնի, նակաստան կը խըրտի. կէլնայ, նըստի տեղաց մէջ. կիչէ օր

թէ մէկ հուրնիկ հրեղէն աղջիկ մը, օր չուտես, չխմիս, թամաշա էնես. հանո ա նստուկ զուր կուչտ։ Դու մըսի, Ս. Սարգիս, «մեռնիմ ուր զօրաց», բերէ զէդ աղջիկ, թալէ էդ տեղն ու գացեր է։

Էդ տեղ տղէն ու աղջիկ պիրար կը հաւնին, խօսք կ'ելտան, կառնին, զմաանըքներ կը փոխին. կէս գիշեր օր կը թմի, Ս. Սարգիս էլմը գիդայ, զաղջիկ կը վերու, թալէ թարքին, աչք բանալուն խրուցելուն՝ կը տանէ, զուր տեղ կըղնէ։

Էդ աղջիկ ալ Թագաւորի աղջիկ Հրեղէն էր, օր Հուրնիկի հետ բեօրմ fարթմա էրած էն։

Հուրնիկն էր, զաղջիկ տեսաւ-չըտեսաւ, էլ քէնի գնաց յետ գնաց. բարկըցաւ, դեղնաւ, հալաւ ու մաշաւ։ Ջուղապ գնաց Թագաւորին, թէ

—Ի՞նչ կէնիս օր, Հուրնիկ ձեռաց գացեր է։

Թագաւոր իմցաւ ուր տղի աճուալ, խանչեց բերեց զուր fուպարներն ու ուաջալներ, թամպա էրեց, ըսեց.

—Լուսուն թալալ խանչել կ'ելտաք. զիմ հողի մէջ ինչ խրօր զանգին ու աղքատ կայ, Թըվս զուրանց աղջկներ զարդրին, բերին իմ fօեf ու սարի առջև. դիօլ ու գուսանք զարկին, իմ տղէն նստի փաճճարհն, իշէ. որ մէկ աղջկան խնձորով զարկէ, զէն աղջիկ ուզինք զիմ տղին։

Լուսումթի էլ էրկիր բլաւ ու էկաւ, ինչ խրօր աղջիկ կէր, զըմէն բօփ էգան, էկան. մարդ կար օր զուր մէկ կով լէ ծախեց, առաւ, էրեց հալաւ, հագուց զուր աղջկան։

Թագաւորի տղէն էր, զէդ բօլուf աղջկներու մէջ չուռ տուեց զալուին. դիտայ իչեց, զէն իչեց, Հրեղէնի սուրաթին ու օրինակին մէկ լէ չտեսաւ. գլօխ տարաւ բերեց, ախ քաչելին էլմ մտաւ ուր fօեf ու սարհն, չօfերուն ափեց, ու գնաց էկաւ մըշ օդին։

Թագաւոր չարհն կտրաւ, զտղէն խանչեց մըտ ուրին.

—Տղա. լաօ, ըսեց, իմ հողի մէջ ինչ խրօր աղջիկ կէր, զըմէն նչանց տուի քզի, չը հաւնար. ասի քու սրտի խորխուրդ ըսէ ընծի, Թըվս յըմալ անs էղնի, իմ Թագաւորուտեն ծախիմ ու քու խօսք կատարիմ։

—Ախօ, ըսեց տղէն. տուր ինձ խուրճի մը ընլին դեղին օսկի ու զխամար քօռակ, ես իմ ձեռով զիմ մուրազն օր չը կատարիմ, մարդ չը կ'ըռնայ։

Ինչ չարա—մուխուն էրին, տղին հետ չէղաւ. տղի բեն բան չը մըտաւ. Թագաւորի լախեն կ'ըտրաւ, ըսեց.

—Լաօ, քու մուր քու գլօխ, դու գինաս, գնա, Աստուած էղնի քզի եարտումչի։

Հուրնիկն էր, պագեց զուր պապու ձեռ, գնաց զխամար քո-

ուակ բաւլից քաշեց. յընկին խուրճի օսկին թափեց գբարճ. յէլաւ հեծաւ. խամար քոռակ մըսի, ճնճուղ ըսէ. բումպարակ ճրմա փէքօլ կէնէր ու սար ու ձոր կէնէր մէկ ու կը թռնէր։ Շատ ու քիչ դնաց, Աստուած գինայ. գնաց մէկ զարզամի ձոր մը ըռասք էկաւ. իչեց օր ձորու պռունկ մէկ ջհնհլ տղէ մը ձիուց իջէ, մզրախ զարկէ 'ի գետին, գլօխ կախէ ու յըմալ գիլայ օր էլ Աստուած նշանց չիտայ։

Հուրնիկ զձիու գլօխ թողեց, մէկ զանկուի հասաւ տղի մօտ, կանաւ.

—Ցօրի 'գիլաս աղբէր. ըսեց. ինչ է ձեռ տուէ քղի. ըսէ բալֆի դարտիդ դարմանմ' էնիմ։

—Գնա՝ զքու ճամբնուն. իմ դարտին դմ պտի դարման էնիս։

—Աղբէր, յօրի, ինչ կէղնի, մեղաւորցայ օր հարցուցի։

Տղէն փշուամ կանաւ, դարձաւ էտևն իչեց ու ըսեց.

—Կը տեսնիս զիդա ձիաւորտան. ըդոնք զիմ ճեռնլուն է զօռովէն քաշած կը տանին. ես լէ էկերիմ յուտա բագլա կէնիմ, ետ էնէ օր զիս պտի սպանին. ետև չէ զիմ հախլուն պընդոց ձեռնէն պտի խլիմ։ Պարծանք չեղնի, ես լէ ջօջ մարդու տղայ իմ. բէբախտ Ցալամ զուր չարխն օր օլրեց ու պապսի մեռաւ, էլ օղլու (այլոց) ձեռ էրկնցաւ վրէս, առևտ զիմ հախլուն, տուինՙ զէդ մարդուն։

Թագաւորի տղէն դարձաւ, իչեց օր օղորթմա հողին ու թփին հսապ կէր, զէդ ձիաւորտանուն չկէր. մէկնաւ տղի հետ ու էրկուս ջուխթ կանան մայտան։

Ձիաւորտան դարձան, փեսի աղբրտոց ըսին.

—Աղբէր, ըդոնք էրկու մարդ, մզի զօրա ամօթ է ընդոնց հետ կռիւ էնինք. դու եօթն աղբէրիք. գացէք զըտոնք մըլէք մայտնից դուս, դարձէք, արէք։

Փեսէն ու աղբրտիք զուրանց բատարուվ տեսան. հեծան զձիան, քչեցին. հըտ հասնելուն-առհա, գուրզ մը թագաւորի տղի առջև։ Թագաւորի տղէն գուրզի ընկնել տեսաւ, աչքեր մթնտեց. թողեց զխամար քոռկու գլօխ, քաշեց զթուր, ընկաւ մըջ ուրանց. ինք տաս, ուր ձին տըսնուհինդ, սպանեց, ձիաւորտանուն լէ ետք բերեց, յըմալ ցրուեց օր զօռ. Բաղտատ հասուց. առաւ զաղջիկ, էկաւ, տղէն լէ վերուց հետ, տարաւ տղի պապու տուն, եօթ գիշեր հարսնիք էրեց. զընդոց հասուց զուրանց մուրազին, ինք հեծաւ ուր ձին ու եալլա։

Տղէն էտևանց բօռաց.

—Իմ անուշ աղբէր, քու անահուն Աստուածն օր կը սիրես քու գործն օր կամեցաւ, յաջողաւ ու էկար, դիտայ ընցար, առանց զիսի տեսնելու չեղնի՛—չեղնի՛ օր էրթաս, յօրի օր քու աղեկուտեն չատ էղաւ վըր ես։

Թագաւորի տղէն էր, դնաց, չատ ու քիչ դնաց, Աստուած դի-նայ, ըռասք էկաւ էլ մը կռւոու մը։ Տեսաւ օր եօթ աղբէր մէկ քա-րաւ է կանած, բրռ մը ասկար լէ մէկ քարաւ՝ ջանկաջանկ կը կռւուին։ Դու մը՛սի, զէդ եօթ աղբէր քուր էկած՝ տուած է մէկ ուրիչ թագա-ւորի տղի, ըզոնք լէ զուրանց քուր չը տուած, էդ սպասպուն թագաւոր ասկար էրէ, էկէ վրը ըզոց կռիւ, օր զօռվէն զաղջիկ քաչէ, տանէ։

Թագաւորի տղէն էդ տեղ դուռուրմիռ էղաւ։

—Հարիւ (եթէ) ես էրթամ չատի քարաւ, էդ եօթ աղբէր պտի ըսին թէ—վախեցաւ։—Թէ էրթամ եօթ աղբօր քարաւ, ըսպասուն պըտի ըսին թէ—ջհնհլ տղայ է, զուր հալարտուտենէն չը գինայ ինչ էնէ։—յրմնուց խելըսին էնէ օր, էրթամ, բարև տամ, որ գիմ բարև վերուց, զէն քարաւ կէրթամ։

Գնաց գնաց՝ բարև տուեց. էն չատուոր քարաւ զըզոր բարև բանի տեղ չը դրին. եօթն աղբէր զբարևն առան. տղէն գնաց դէմ ընդոց ջհրկի հետ ճօթին կանաւ։ Առջի հեղ մեծ աղբէր մայռաց մի տուեց, գնաց էկաւ, ըսկի բան չերեց, ասկար լռւ չը խրտըցուց. էն յրմայ դօրով յրմէն գացին, էկան, բան մը չերին, դօր էկաւ թագա-ւորի տղին։ Հաւրնիկն էր, գիամար քուռկու գլօխ թորկեց, մտաւ մըջ ասկրին,—ախ՛ մըռնիմ քզի, բօգ ձիաւոր Ս. Սարգիս, դու իմ-sus հասնիաց. բօռաց ու մտաւ մըջ ուրանց. տասն լինք սպաննեց, տըսնու հինք զուր ձին, գըմէն լէ էրեց խուրս ու խաւ, դրեց ի գե-տին, գրոփալ Բաղտատ հասուց։

Եօթն աղբէր չիւարան, մացին տեղ ուրանց, զըմլա բան ոնչ տեսած էն, ոնչ լսած։ Կռիւն օր դատարաւ, պրծաւ, առան գթագա-ւորի տղին, տարան զուրանց տուն. եօթն օր խօճախ էրին, չատ ու չատ իհրամով. ըսպասուն իրարու ըսին.—էդ մարդ զուր ջան տուեց մըր ուղուրին, գմըզի պրծուց. ինչ փհօճհօ տանք օր ըզոր լայաղին էղնի։

Պզտիկ աղբէր վերուց ըսեց.

—Ծօրի՛ ինչ տանք, մըր քուր էլ վիր պտի տանք. յրմլա ազրա-յէլ ջհնհլ էլ ուր պտի գտնինք. տանք ըզոր, թըխ էրթայ։

Էդոնք էլ գիրիսմիռ չէղան (չը համաձայնեցան) օր թագաւորի տղին բան ըսէն, պըզտիկ աղբէր էրսով էր՝ գնաց, կանաւ մօտ՝ ըսեց.

—Աբի, գմեր քուր տանք քզի, դու էղի մզի մեծ աղբէր, մենք լէ քզի պզտիկ։

—Ձեր քուր՝ իմ քուրն է, ըսեց թագաւորի տղէն. ես մուրազ ունիմ, քեանի գիմ մուրազ չըմ կատարէրի, աստըւոր հարամ է կեցէ ընծի։

Էդ տեղէն չնոխկլաւ էլաւ Թադաւորի տղէն, ու էլ մը էլաւ համբախ տուեց առջև. չատ ու քիչ դնաց, Աստուած գինայ, գնաց արևմտոց Թագաւորի քաղքին մօտեցաւ. հովիւ մը ըռւասք էկաւ, հարցուց.

—Բարև քեզի, հովիւ աղբէր, ձեր էրկիը իմալ խօճախ կան-նին։

—Մեր էրկրի աղաքն է, կըսէ հովիւ, գեամ կը Թորկին ձիու գլխուն, ձին վիր տուն օր կանաւ, էն տեղ կիջնաս։

Տղէն է, գձիու գլօխ կը Թորկէ. է, խամար քոռակն էր, իմա-տուն, զուր բան գինէը, քշեց, դէմ գնաց պառաւ մը դուռ կանաւ։ Տղէն բօռաց.

—Պառաւ, պառաւ, արի՛ դուս։

Չատուխար պառաւ մի լըմլըմբալին տնէն էլաւ դուս.

—Չօջօ, գիսի էսօր խօճախ չկինաս։

—Ֆու գլխուն ու արևուն մեռնիմ, Թագաւորի տղա. դու իմ քօղտիկ (հիւղակ) իմալ մտնաս, քու լայեղին չէ, տեղ չկայ. գնա, Թագաւորի տուն իջի։

Տղէն էր, «fեօո օլսուն հօխսուլուխ» (կուրանայ աղքատու-թիւնը). ձեռ տարաւ ի ջեպ, բուռ մի օսկի հանեց.

—Հան քեզի, չօջօ, ըսեց. գընծի ու գիմ ձիուն տեղ էրէ։

Պառաւ գոսկիքն օր տեսաւ, օտներ գետնէն կարաւ, չվեըլկեց, մտաւ ի տուն, էլ աման վրը ամնի, պուտուկ վրը պուտկի գարկեց, տեղ լենցուց, խրսխլ մը վռեց ի ցախք. տղին խանչկեց, էկաւ նըս-տաւ ի վրէն, գձին լէ կապեց հաւու Թառի տակ։

Տղէն էլմը բուռ մ' օսկի հանեց, տուեց պառաւուն.

—Գնա չուկէն, ըսեց, ինչ օր պէտք է, բեր։

Պառաւն էր, չվեցիկ մի գարկեց դուռ, մէկլէ ի չուկէն, Թագա-ւորի տղի լայեղին ինչ օր պէտք էր, վազելէն առաւ, էկաւ. չարեց տախտի օրքէն, ըսեցապուն նստաւ, պաղբէրնաւ ու իչեց Թագաւորի տղի էրեսն։

Դօր մի մնաց, Թագաւորի տղէն հարցուց.

—Չօջօ, իդա ինչ դիօլ ու դուսանքի ձէն է, քաղքի մէջուց գիգայ։

—Թաւ, լաօ, չօջօն խուրպան էղնի քզի, մեր Թագաւորի աղ-ջըկայ հարսնիքն է. մըկայ ուզած է հլամունսի օր տանին, աղջիկ չէրթայ։ Էդ մեր Թագաւոր վախտով զուր աղջիկ արևելոց Թագաւո-րի հետ բեօրf-fարթմա կենէ, օր չօջըցաւ, տայ ընդրա տղին. հաւա-տամ ուր զօրաց. բօզ ձիաւոր Ս. Սարգիս, աւուր մէկ կը Թալէ գմեր Թագաւորի աղջիկ զուր բարf, կառնէ կը տանէ արևելոց Թագա-ւորի տղի օդին. էնտեղ գիրար կը տեսնին, կէղնին մաշուղ իրարու,

մատնիք կը փոխին, էլմէ կը դարձու, բերէ։ Մկայ աղջկայ հարսնիքն է, էկած օր տանին ուրիշ թադաւորի տղի. աղջիկ լէ մէկ ձեռ աղուն է առէ, մէկէլ սորացին (սուր). որն օր թ'երթայ, մօտենայ, հա աղուն պտի խմէ, հա ուրին զարկէ, սպանէ. մարդ ասկար, կնիկ, ճիժ, բաւան բռնած՝ կանած, մարդ չ'իշխենայ մօտենայ։

—Ցերօր յըմալ է, ջօջօ, ըսեց տղէն, առ զիդա մատնիք, տար, տուր ուր նշանց, քղի բան չըսէ։

—Թաու զլխուդ մեռնիմ, լաւ, ըսեց պառաւ, ես չ'իշխընամ օր երթամ. թագաւորի աղջկան զաւակ մ' էկածին պէս զիսի կսպանէ։

—Ըսկի մը վախենա, ջօջօ, երօր գացիր, աղջկան մօտեցար, զմատնիք էցուկէ մատդ ու տար բեր, օր զմատնիս տեսաւ, ինք բըխօ ըքղի կը խանչէ ուր մօտ։

Պառաւն էր, էլ ձէն չը տուեց սուս ու փուս էլաւ, գնաց։ Պառաւու տուն ջակօլի, չկէր մօտ չատուտեն. հըտ գահուն հազար սատանուտեն մէկ փարի պէտ հազրեց, դրեց ի չէպ. աղջկայ օդին օր մօտեցաւ, մի խալապալըխ դրեց. մարդիկ ղէն քաշուան, պառաւ ղէն էն դեն ճխտեց, ղէն էն դեն, ճամբան չէնցուց.

—Դու հաչ կեցէք, ես մկայ ղընդոր ճամբուս կեցկեմ, ըսեց։

—Գիտի պառաւ, բալի դու բան մ'էնիս. չորս քարաճուց բօռացին էտ հատամ մախլուխ (խոնուած ամբոխ)։

Ցըմէն ուրախցան, ճանբախ լէնցուցին պառաւուն. պառաւն էր, դունտ ու կծիկ դինք հասուց աղջկայ օդի դռան մօտ. զեկուք բանձըրցուց, քէնի մ' հաղ տարաւ, բերից, թագաւորի աղջիկ հըտ տեսնելուն զուր մատնսի շաւխից ճանչցաւ, հըտ գահուն ձեռաց աղուն ղէն էն դեն թափեց, ղէն էնդհն ու վազաւ պառաւու առէջ.

—Նամա՛ն, ջօջօ, ըսեց, դու բարով իգէր, ըդ մատնսի տէրն դո՞ր է։

—Հանտ ա իմ տուն է, հաչ կեցի. ձէն մը հանի։

Աղջիկն էր, գրկեց զպառաւուն, տարաւ ինեբս. մախլուխն օր զէդ բան տեսան, խնտացան ու թողին, քաշուան։

Ջուապ գնաց թագաւորին թէ պառաւ խանմիշ էրէ զաղջկան, ձեռաց աղուն թալէ, էկէ վըր ճանբխուն։

Թագաւոր ամր էրեց, դիօլ գուսանք զարկին, բռնեցին հարսնիք ու խաղցան։

Թագաւորի խնամիք զբաստաուսէ տեսան օր էն լուսմբի զաղջիկ տանին։

Հուրնիկն էր. մարախ զուրին փաթեր էր, ախ կէնէր օր, զծուխ պէնէրուց կը թալէր. ջաստուխար պառաւ լէ ոտք մը աղջկայ մօտ, հա մէկ տղին, գրողի գզրի պէս հա կէրթէր ու գիգէր.

Որ հասլ պառաւ աղջկան սոլվըցուց, աղջիկ ջուապ էրեց ուր Թագաւոր պապու Թէ՝

—Խնդիրք կենիմ ուրնէ, Թըվ իրէք օր ամ էնէ օր ըսկի մարդ դուս չէլնայ. ես էրթամ, խաս պաղչէն սէյրաճ էնիմ, ժուռ գամ, հաւէսի հանիմ, նոր Թըվ զիսի դնէ ճամբէսու։

Թագաւորն էր, ամ էրեց, բալալ տուեց խանչէլ. իրէք օր վըր իրար իճսաճ դէօրդի (մարդ ըսուած) դուս չէլաւ։

Պառաւն էր, զաղջկայ խաս չորերն հագուց, զինեց—զարդուեց ու առաւ, գնաց ի խաս բաղչէն. զաղջիկ Թորկեց էն տեղ, ինք խապար հասուց տղին, առաւ զտղէն լէ բերեց մըտ աղջիկ. էդ տեղ տեսան զիրար, խնտացան, իրէք օր վըր իրար մացին։

Իրէք օրն օր բմաւ. տղէն զուր հալըներ հագուց աղջկան, աղջկան առաւ, ինք հագաւ, զաղջիկ ճամբեց պառաւու տուն. ինք լէ պառաւու հետ դէմ գնաց Թագաւորի տուն։

Մեծամեծ մարդիկ իզին ուզին Թագաւորից, օր զաղջիկ ճամբըցու։

Թագաւոր ամ էրեց, հարսնցխուրներ Թավան, էկան. դհոլ ու գուսանք զարկեցին, ջրիճ խաղցան, fեճ ու ուրախուտեն էրեցին, յըմալ օր աչխարհ յըմէն Թափան քամաճեն. խօլասա էլ ինչ գլօխ ձի ցաւցուտ. մէկ զօռպա նաճամաքով ծանար ու ազիզ զաղջիկ հեծըցուցին վըր ձիուն. ու առան գացին։

Ըսկի խապար չունէն Թէ զաղջիկ Թորկած, զտղէն է կը տանին։

Զաղջիկ տարողներ լէ եօԹն աղբեր էն, ընդոք՝ լէ ուրիչ Թագաւորի տղայ։ Տարան զաղջիկ ուրանց էրկիր, բերին վըր ուրանց ջոջ աղբօր պռակին, եօԹն օր եօԹ գիշեր զհարսնիսն էրին, խաղցան, տրուջրկին. հարսնիքն օր Ֆրղաւ, բերին հարս ու փեսէն մըտ իրար։

Աղջիկն օր տեսաւ փեսէն, մէկ խրուբճուկ ու պաբուկ մէ, ըսկի բանի տեղ չը դրեց, չէլաւ կանաւ. փեսէն ճհուսօտաւ. ըսեց

—Մակեար մհալ չէնիս օր չէլնիս վըր օտաց, դու չատ մախուլ չան մը աղջիկ իս։

Խօք չատ տարան—բերին, նազ ծախին վըր իրար, խոլասա բարիճաճ, առան խնտանալ։

Կէս գիշերն օր ընցաւ, յըմէն քնան. Հուրնիկն էր, զաղջկուտեն դրեց իջուր. գողտուցիկ էլաւ, առաւ զփէսի խաճճալ, զփէսէն բրդեց, էրեց կտոր կտոր, լցեց մըջ ջըլկրուն, խօճա էլաւ ախուռից քաշեց զձին, ու հեծաւ—գոըխս պառաւի տուն, էկայ քղի։ Գնաց իջաւ պառաւու տուն, ինքն ու աղջիկ տեսան զիրար, խնդացան։

Սաբախուցաճ խրտ աղօբրնին փեսի մամ գիկայ, կը տեսնայ օր

զողէն սպանած. կտրուտած, լցած մըջ ջնջուն. խուցում կը կոտրի, կը տփայ վրը չօֆէրուն, հաւար կը պրծու դուս.

—Գիտի՛ կըսէ, աղջիկ զողէն սպանէ, թորկէ փախեր է։

Աչխարհ իրար կընցնայ. տղի աղբրտանք դաճե-հաւարեն կը զարկին. տուն գլօխ մէկ մարդ կը հնծնայ, դիդայ, թագաւորի սա-րայու առէջ կը կանի։

Թագաւոր որին որ ձր չ'ուէր, ձի կիտայ, որին որ սիլահ չկէր, սիլահ կիտայ ու կըսէ.

—Կերթաք արևմտոց թագաւորի քաղաք։ Հողով ջրով կընցուք, կը դառնաք։

Ձալխամչի (արագավազ) մէկ ձիաւոր լէ կը համբէ, օր արև-մտոց թագաւորին ըսէ—զուր բաստարուճ տեսնի։

Ձիաւորնէ գոլըլի պէս կերթայ արևմտոց թագաւորի մօտ, զուր ջուապ կիտայ, կը դառնայ։

Արևմտոց թագաւորն է, կը խանչէ զուր բէտաբէտ մարդիկ, կըսէ.

—Իմ գրողտարուվ աղջիկ զուր ճեաձլուն սպաներ է. ինք լէ մարդ խապար չունի թէ զոր է, մկայ ասկար էրած է օր գան վրը մի, էլէք օր բաստարուճ տեսնէք։

Էդ խօսաց վրէն զղլուն ընկաւ քաղաք, մէր զմանուվ ուրացաւ, տան գլօխ մէկ մարդ հնծան, մըջ քաղքին մարդ չըմնաց. գացին եօթն աղբօր ասկրի առէջ։

Կուսի ետ վախթին Հուրնիկն էր, պատուհ անէն քաչեց դխա-մար-թայ, հնծաւ, վազեց մըջ կուտուն. ձիուն հրա զանկու մի խտե-լուն՝ ձին կատղաւ. քչեց մըչ ասկրին, զէն էնդին զարկեց, զէն լէ էն, ջարդ ու փչուր էրեց, դրեց դետին. ու ինք դարձաւ, էլմը էկաւ, իջաւ պատուհ տուն։

Էլմը ջուապ էկաւ թագաւորին թէ՝

—Ձքուճ բաստարուճն էրէ, հան դու զմզի հողով, ջրով կընցուս. հա մենք դգդի։

Հողին, քարին նըսապ կէր, էդ ասկրին չկէր։

Էլման էդ թագաւոր տմպլիկ զարկեց, ֆոման էկան. էրկու հը-զար մարդ ջորով կեղնէն. գացին, մըչ մէյոճին կանան։

Վախկոտներու սիրտ վըռվռուն ընկաւ։ Իրարու կըսէն.

—Թալաճ մը քաչէք, մըկայ կարմիր ձիաւոր կըհասնի.

Հրտ ըսելուն կարմիր ձիաւոր մըջ մայոճին ճուվ կանաւ։ Էլմը ընկաւ մըջ ասկրին, ջարդեց, խալի պէս թափեց վրը իրար ու դար-ձաւ։

—Տօ էդի Ս. Սարգիսն էր, Ս. Գէորգն էր, մզի իմտաս հասաւ, կըսէն իրարու։

Էդ եօթ աղբօր մօտէն հինգ սպանուեր էր, մայեր էր էրկուս. էդ էրկուս լէ խանչեցին զմէն զուրանց հողի մարդիկ ու ըսին.

—Էս օր մըր մեռնելու ապրելու օրնէ, խիրաթի (նախանձախընդրութիւն) օրէ, «Ամմուս թալած է չան, չուն չը կերեր էն. եա էրթանք էդ քաղաք չան քաքով իրիցնէք, եա էն է գլօխ մզի տանք դուս, պրծնինք»

Էդ խօսքի վրէն հարի կնիկ լէ հնծաւ. էլ դեվա, ձի, ջորի, էշ, եզ չը մնաց օր չը հնծան գացին, մայեր էր մինակ մէկ պատուս մի տղայ, էն լէ հնծաւ զուրանց ճետ, բանեցրայ անթրոցն առաւ իճեռ ու դնաց, կանաւ մըջ ասկրին. ասկար ճա էն էր, լար. ճա էն էր ծիծղէր, էդըմալ խայտառակ բան որն էր տեսէ, յըմէն վորխոց (չաս ծիծաղելէն վորը ցաւել) էղան վըր էդ տղին։

Էլմը ջուապ էկաւ արևմտոց Թագաւորին.

—Ջուր բաւարուք թըխ տեսնայ, մեր կուխ կուխ է։

Թագաւոր խանչեց, ուր Սաւրազամից հարցուց.

—Էն ինչ աղնահուր մարդ է օր, իդա լէ էղաւ էրկու հազ. գիդայ, գընոց ասկար կը ջարդէ, կերթայ, կռահեցէք (ուշադրութիւն դարձնել), տեսնէք, էդի Աստ մարդ է, ինչ է օր մեր իմաստին գիդայ։

Խոլասա գլօխդի չը ցաւցուք, էլմը էրկու բարաճէն էկան իրար. սուր ու սաք (խաւնափնդոր, արիւնահեղ) կուխ մէղաւ օր, էլ Աստուած նշանց չիտայ. յըմալ էղաւ օր, էլ արուն վերուց ջրաճրեկներ, կէրթէր,. կուռւ նեղ վախքին էլմը արևելոց Թագաւորի տղէն հասաւ, զըմէն ծնի էրեց դեսին, էլ մարդ սաղ չը թողկեց։

Մացեր էր մէկ պատուս տղէն, էն լէ զուր ճլուս գլօխ թողկեց, առաւօրեց, մէկ անթրոց մ'առնա՝ Թագաւորի տղի դլխուն. Թագաւորի տղի գլօխ կոտրաս, ընկաւ պատուս տղի էտև, զարկեց, զէն լէ սպանեց, ըմնու fof կտրեց, յըմալ օր խաբըրբեր (դուժկան) լէ չը պրծաւ Ըսեպուն դարձաւ օր էրթէր ուր խօճախ. ճամբու հետ ըռասք էկաւ Թագաւորին. Թագաւոր բերեց, զուր դասըմալ կապեց ըդոր գլխու բրնին (վէրք)։

Տղէն գնաց, իջաւ պատուս տուն, զուր բրիճ լուաց. դասըմալ հարձկեց, հըտ պատուսն էլմը ճամբեց Թագաւորին։

Պառաւ դունտ ու կծիկ վաղաւ Թագաւորի դիվան. Թագաւոր հարցուց.

—Պառաւ, էդ ինչ դասըմալ է։

—Թագաւոր սազ մնայ, քու դասըմալ է, օր կապեր էր էն տղի բրնի վրէն։

—Պառաւ, էդ մարդ քու տունն է.

—Հրամանքիս, Թագաւոր ապրած. իմ տունն է։

Թագաւոր էլ չը բացվեց, մարդ ճամբխեց, զաղէն առաւ էկաւ. չատ խնամացաւ վըր տղին, էսի սօղին հարցուց.

—Դու ինչ մարդիս, ուստից դիդաս. դմը կէրթաս։

—Ես արևելոց թագաւորի տղեն իմ. կուզիս գնի եա խալաթ (պարգև,) էրէ, եա ջալաթ (գլխատել). քու աղջիկ լէ հանատա իմ մօտն է։

Թագաւորի էրեսն ուր մնաքն ընկաւ.

—Օղորթմա օր, ըսեց մըջ ... մտաց, ճակտի դրուկ չը քանդուի.

Նոր բերեց զաղջիկ պատկեց վըր տղին. ևօթն օր, ևօթ գիշեր զհարսնիսն էրեց. կէրան, խմին, փառաւորան։

Թագաւորի տղի քառասունքն օր թմաւ, խնդրուաւ թագաւորից.

—Իմ իգին ուժը, էրթամ իմ հօր էրկիր։

Թագաւոր լէ էլաւ՝ ինչ օր ուր օանեն (անուան պատուոյն) կը վճռէր, քառասուն դեվի ու քառասուն ձիու բեռ՝ օսկի, արծաթ, պղինձ, պղնձկալ բարձաւ. յըմեն պատրաստուածով զաղջիկ դրեց ճամբու։

Իրեք օր՝ օր գացին, թագաւորի տղեն իգին տուեց ուր հետի մարդկոց, եա դարձուց. ըսեպտուն առաւ զուր կնիկ ու դէմ քշեց, գնաց, իջաւ էն ևօթ աղբօր տուն, օր գընուոց կուուց պրծուցեր էր։

Գիշեր մը մնաց էդ տեղ, էլ պատիւ, էլ ազաթ, էլ իֆրամ. լուս ու մթի չուտ աղօթքնախառն ընկաւ ճամբախ։

Շատ ու քիչ գնաց, Աստուած գինայ, գնաց տախլ էղաւ էն տղին օր, զուր ճօանելուն պրծուցեր էր ուրան, ժըխօ էդ էրկու լէ իրուր հետ աղբէր էղած էն։ Գէնի մ' օր լէ էդ տեղ մացին. էլան, էլմը ընկան ճամբախ։

Գիշու մը տեղ գացին—չը գացին, ճակատաց մէկ ածուճ մածուճ մը, ինք քըց թիզ մը, մուրուս էրկու թիզ, գօբալն ի ձեռ՝ հիպ էլաւ, ըդոնց առջև կանաւ.

—Թագաւորի տղա, ըսեց. քու ճախլուն չի տաս ընծի։

Թագաւորի տղեն զուրին էդ տեղ չը դրեց (չը լսելու զարկաւ).—ըդոր բեամալն ինչ է օր, ըսեց, գիսի դնիմ խըտ ըդրան. ճանճն ինչ է օր, զուր ճնճն ինչ պտի էղնի։

Էդ ածուճ մածուճ, մէկ լէ ըսեց։

Թագաւորի տղեն էլմը ձեն չհանեց։

—Վայ գիտի ըսեց. դու ըսկի զընծի չըս բարթի ու գօբալ մը առնա, բերեց թագաւորի տղի վըզկօթին. թագաւորի տղա, էսօր չըս մեռեր ի, հղար տարի առէջ իս մեռէ. տղեն ընկաւ ի գետին։

Ածուճ մածուճն էր, խօճա էլաւ, բռնեց թագաւորի աղջկայ ծամերուց ու ինչ խսար մալ ու գօլվաթ կէր՝ վերուց խըտ ուրին ու

դէմ գնաց ուր էրի դուռ, կանկցուց· զապրանք լցուց ի ներս, զաղջիկ լէ տարաւ, դրուց մըջ ի տուտաբանդ օդի։

Կէսգաճկէն թագաւորի տղի հայն էկաւ ի դլօխ, զայուին բացուց, դէս ու դէն իյնց օր, նա թագաւորի տղջիկ, նա մալ, նա դօլվար, ինքն ա մացէ, մէկ խամար քուռակ, օր հանտէ կանուկ վըր ուր գլխուն փէքօլ (ոտով դննին խփել, վորել) կենէ։

Մէկ խելի դուպարով էկաւ, կանաւ վըր օտաց. պինք անհախ թալեց խամար քուռկու պատկին ու փօռ ու փօտման էլմը ետ դարձաւ՝ էկաւ մըտ ուր աղբրացուն։

—Նա, նա, խեր էղնի, թագաւորի տղա, ըսեց. էդ ինչ նալ է, էդ ինչ բան է, յօրին իս յըմալ փօսիտա էղէ։

Թագաւորի տղէն մէկիկ մէկիկ զուր գլխու գալիք խրսա էրեց։

— Աստուած քու տուն չակօլէ, ըսեց աղբերացուն, զէդ էնող Հաճի—Ֆնճօն է, կանի զդրա պատմուտեն քզի խրսայ էնիմ. էդի էլ աշխարք չը թորկեց օր չ'աւիրեց. մըր քաղաք լէ բդոր աւերուկն է։ Զբդոր բունին, զրին մըջ փուռն, իրիցաւ, էղաւ փոշի, զվոշին լէ տուին քամու առէջ, էլմը սաղցաւ, էկաւ, մզի զարար տուեց։ Զէտի հաղ մ' լէ չան քաքով վառեցինք. կտրուտեցինք, չներու առէջ թալեցինք, եօթ տարուայ անօթի դիլու բերան տուինք, էլմը չարաս չնդաւ, սաղցաւ, էկաւ։ Մկայ յըմէն չաբաթ օր մեր դօլվրի դռներ բաց կը թորկինք, Հաճի—Ֆնճօն է, դիպայ, զուր էհն ուզած բան կը fօմէ, կը դխիրէ վըր իրար, կենէ խօնա զէզ մը, կիտայ զուր առէջ, ինք կը գըվըդայ ինչ օր սատանի կծկի ու զէն լէ կը գլօրէ ու կերթայ։

Ապա, ըսեց թագաւորի տղէն. ես իմալ տեսնամ զՀաճի—Ֆնճօն։

—Լուսուն չաբաթ է. քաղաք քաղքով պտի էլնանք, դռներ թորկենք բաց, օր զուր բալնած բաներ առնէ՝ տանէ. քզի չեղաւ խսիլ մը փաթինք, դնինք փօղնի ճար (ղռան ետև նեղ տեղ), օր էկաւ, կը տեսնաս թը ինչ ջանավար է։

Շաբաթ օր օր էղաւ, դռներ զմէն թորկին բաց. տղէն պաղտուաւ դռան էտև, տեսաւ օր հանտէ Հաճի—Ֆնճօն գլոր—մլոր էկաւ, զէդ տան միջուն լէ ինչ օր աղէկ բան կէր, զմէն օրրեց, տարաւ. ըստպու էլաւ դուս. ինչ խրտըր մալ օր fօմեր էր, էրեց խօնա դէզ մը, դրեց ի շալաf ու ընկաւ ճամբան։ Տղէն տափուկ տեղէն էլաւ, էտևանց իյնց, մադ էղաւ վըր ըդոր էրթլուն։

Իրկուն օր էղաւ, աղբերացուն հարցուց.—աղէկ բամատա էրէցիր։

—Տեսայ, Աստուած ըդոր տուն չակօլէ, ըսեց տղէն։

—Ըպա իմալ էնին. ըդոր հոգու տեղ իմնանք։

—Հուցար կը մնայ թագաւորի աղջկան, էն բալիի բան մ' էնէ։

Լուս ու մթի էլան, դողտուցի գացին Հաճի—Ֆնճօի էրի (այր) դուռ, էն դին, էն դին դախմնեցին, ծակ մը բացին, դուզ էլան աղջկայ նստած օդէն. ծըկի բերան լէ չինեցին օր Հաճի—Ֆնճօն չը տեսնայ։

Նստան, աղջկայ հետ վիշում ղրուցին, ըստպուն ըսին.

—Իրկուն օր էկաւ, հարցու, տէս, ըդոր հոգին ինչ տեղն է։

Ըդոնք էլան օր իզէն, աղջիկ կպուչկաւ ընդոնց թէ՝—ես լէ գիդամ։

—Ցօ դու ծուռ իս, դոր գիդաս, քզի «Աստու գոգ լէ հասունք, Հաճի—Ֆնճօյի ձեռնէն չընք պըրծնայ», նստի, բալէի հոգու տեղ իմ-նաս, ըդրով չարէ մ' էնինք, թը չէ ուրիշ իլաճ չկայ։

Աղջիկ խաւմիս էղաւ, նստաւ. ըդոնք էլան գացին ուրանց տուն։

Իրկուան Հաճի—Ֆնճօն օր տուն էկաւ, իշեց օր աղջիկ թիզ մը զմռթներ կախեր է, ըսեց.—Աղջի, յօրի՞ իս քու ճիաքն էրէ, մա՞կար ես թագաւորի տղից պակաս մարդ մի՛մ, չը տեսնիս, չէ՞ աչխարք իմ ձեռ զար է։

—Ես ճիաք չէնիմ, ըզա ուրն էնէ՝ ըսեց թագաւորի աղջիկ. բերեր իս պընծի իդա անվերի սարի գլօխ, ճա՛ մարդ կայ, ճա՛ մա-տար. չուրի իրկուան լալ ու կեառ կը նստիմ, հզար բան մտքովս կընցնայ։ Ես օր քառասուն ջառի (աղախին) տէր էնք, մկայ տախտի աւլող մ' լէ չունիմ. ըսկի չէ, քու հոգու տեղն ըսէ, զէն զարդրիմ, նստիմ, հետ խաղամ, օր սիրտս ֆառացնա։

—Է՛յ կնիկ, ինչ բալաճ կը քաչիս, իմ հոգին քու ցախաւելն է։

Սապախտաճ Հաճի—Ֆնճօն էլաւ ավ ու խուօի, թագաւորի տղէն էլմը մտաւ ծակէն, էլ աղջկայ մօտ՝ հարցուց.—Իմցար զհոգու տեղ։

—Հա՛, ըսեց, իդա ցախաւելն է։

—Կնիկ, էդ անաստուած խաբեր է զքզի։

Փշում նստան, ղրուցին, Հաճի—Ֆնճօյի գալու վախքն օր էղաւ, տղէն էլաւ՝ գնաց։ Հաճի—Ֆնճօն էկաւ ի տուն. կնիկ ուրախ—զու-բախ էլաւ առէջ՝ կանաւ։

—Եա՞, խեր էղնի, թագաւորի աղջիկ. էդ ինչ բաս է, էս օր էլար իմ առէջ կանաք. էդ ինչ խրձիկ է զարդրեր իս, բռներ իս ի ձեռդ։

—Քու հոգին է. դու չըսիր «իմ հոգին ցախաւելն է» և լէ զարդրեր իմ, վրէն կ'ուրախանամ։

—Աստուած քզի խեր տայ, «կնիկ արմատ իս, ինչ էնիմ, ծա-մերդ էրկէն է, հմա խելքդի պակաս», ցախաւել լէ էղնի մարդու հոգի։

Աղջիկ էլ՝ զուր ցիաք կախեց, կծկաւ ի ƒoɔk մի։

—Ինչ էլ՝ մոթիներդի թեղ մի կախիր, հոգիդ խօ չէլաւ, հա ինա կոճն է իմ հոգին։

Աղջկայ սիրտ փչում բացուաւ։ Լուսմբի Հաճի—Ֆինճօն էլ՝ գնաց ցիջրուանին։ Էնի գնաց, թաղաւորի տղէն էկաւ՝ հարցուց.

—Ի՞ր է Հաճի—Ֆինճօյի հոգին, խապար էղա՞ր։

—Հա՛, ըսեց, իդա կոճն է։—Կնիկ, էլ՝ խաբեր է զքղի։

Իրկուն էղաւ, տղէն էլաւ, գողտու քաչուաւ Հաճի—Ֆինճօն էկաւ. իրիչեց էրի առջևու դրան սանտի քարին, ըսցապուն ճրկուք թալեց էրի դրան վերևու մեծ զնար չրջեց մէկ դիու, զդուռ բացեց, մտաւ ի ներս, էլ՝ զնարով վակեց զդուռ։

Թաղաւորի աղջիկ էլաւ, կանաւ, ըահաղս զղարդրուկ կոճ ցուցուց.

—Թաղաւորի աղջիկ, էդ ինչ է ըսեց, բռներիս ձեռդ իս

—Չէ՛ քու հոգին է.

—Է՛յ, Աստուած զէն քու փչուր խելք լէ առնի ....

Հաճի—Ֆինճօն դրա խօսք չը թամբաներ էր, աղջիկ զկոճ զարկեց դէտին, մուռզ (դէմքը խոժոռցնել) կախեց, ու գնաց՝ հեռուն նըստաւ։

Հաճի—Ֆինճօն ըսցապուն էլաւ, վաթիուաւ աղջկայ վիզ, հար ինչ ճնճղու լեղու կարդաց, աղջիկ հետ չխօսաւ։

—Կնիկ, ըսեց Հաճի—Ֆինճօն. ախըր ինչ էրի, քու ձեռնէն չը պրծայ. դը կանի, խսա էնիմ քզի զիմ հոգու տեղ։ Իմ հոգին՝ թաղաւորի աղջիկ, իրեք հատ ճնճուղ է, մէկ դևղին, մէկ նարինճ. մէկ լէ բալաֆ (խայտ). աշխարք զըմէն թափին, չը կրնան զընտրցան ուրանց տեղրանուց ժամ ատն. յօրի օր իմ էրի դուռ սանտի մէջ դըրուկ ին, մէկ մեծ զնար մ՝ լէ վրէն քաչուկ, արճիճով չինուկ է։

—Զըմ աւտնայ, ըսեց թաղաւորի աղջիկ. մարդու հոգին լէ ճնճուղ էղնի։

—Կնիկ, իդա դամ, իդա էրթամ (երդման ձև է), զբխաւ լի մեր ե բեագիե (հին մարդոց ուխտն ու դաշինքն էղնի), օղորթ կըսիմ։

Աղջիկ ուրին խրսցու բըլէլուտնին կը դնէր։

Սապահտան դրա ազամմուրթ չը տուեր էր, Հաճի—Ֆինճօն էլաւ, գնաց ուր ցիջրուտեննին։

Թաղաւորի տղէն էլ՝ էկաւ աղջկայ մօտ՝ հարցուց. աղջիկ ցախլ էրեց.

—Ըստոր հոգին դրան մեծ քարի տակ, մըչ սանտին իրեք ճնճուղ է։

Էդ խօսաց վրէն թաղաւորի տղէն աւտըցաւ, էլաւ չուտ մը գնաց, զուր աղբերացուն լէ գտաւ, առան բահ ու բրիչ, էկան. իրեք

օր վըր իրար քանդեցին. իրեք օրն օր բաւ. իջան ի մեծ գնարի վրէն, գնար տուին մէկ դիւս, մէկ խօրտուիկ տանտ մը էլաւ, օր չուտես, չը խմես, քամատա էնես։ Ջանտի բերան բացին, իչեցին օր աղջկայ ըսածի պէս՝ իրեք նիշուն ճնճուղ ի մէջ կը ճըլվըլան։ Արև լէ մացեր էր մէկ քաժ օր պատէր, մէկ լէ իչեցին օր հանտէ. սարի ղլխուց Հաճի—Ֆնճօն կը ճըլվըլայ ու դիպայ։

Հաճի—Ֆնճօն տեսաւ օր ուր էրի դուռ խարալտու (սևութիւն) կերևայ.

—Նա՛ ըսեց, իդա էղաւ հղար տարի, հաւքն ուր թևով, օձն ուր պորտով իմ էրու դուռ չեկեր էր, իդա ինչ բաս է, էս կայ ու չկայ, սատանուտն իմ կնկայ տակն է։

Աղա՛, թէ մէկ ոտք ունէր, տըսուերկուս լէ ճարեց ու հանքակատուր վազեց, յըմալ դիպէր, «ինչ օր Շամա գըտղի»։

Տղէկներ իչեցին օր Հաճի—Ֆնճօն կը մօտենայ. Թագաւորի տղէն դմէկ ճնճղու պլօխ կարեց. հըտ կտրելուն՝ էն տեղ Հաճի—Ֆնճօյի պլօխ ցաւաց։ Հաճի—Ֆնճօն էլ չը կանաւ, հա, կենէր ու դիդէր։ Թէ կը հասնէր, վայ էկեր էր, տարեր էր Թագաւորի տղին ու ուր աղբրացուն, զընտոց աւադ կտոր՝ զաւադ ականջ կը Թորկէր։

Թագաւորի տղէն դմէկ ճնճղու վիզ լէ Թուաց. Հաճի—Ֆնճօյի չոքերու խուտում կոտրաւ, հա կը չոքըտեր ու կէնէր. կէնէր օր գօբալ մարմներ, վըր բեալլին դիդէր, խուաթ չը մացեր էր մէջ։

Թագաւորի տղէն դյեսին ճնճղու վիզ լէ պոթ էրէց. հըտ կտրելուն, տեղրըստեղ Հաճի—Ֆնճօն ընկաւ, մէկ հաղ բերան բացեց, խըբուց. չորցաւ, օտներ պժեց, մուրուս ցցուաւ ի դուս։

Թագաւորի տղէն ու ուր աղբրացուն վազմելէն գացին վըր սատկուկի ջաճեկին. մազմազ դմուրուս փետեցին, զջաճեակ լէ վաուին, վոչին տուին հարաւ քամու դէմ։

Ըսատպուն էկան, զերի դուռ բացին, աչխըրքի ինչ խրտըր մալ ու դօլվաթ կէր՝ էդ տեղն էր. քաղաք քաղքով էրկու ամիս կրտեցին, նոր հաթ էկաւ։

Թագաւորի տղէն էր, առաւ զուր ճախլուն. ինչ խրտըր մալ բերած էր արևմտոց Թագաւորից, էրկու էնքան լէ էդ տեղէն բռնեց. ուր աղբերացուի հետ լէ չնոխկլա էղաւ ու ընկաւ ի ճամբախ։

Էդ երկրի մարդիկ լէ նոր հրուհաթան ու ակնջխախանտ նստան վըր ուրանց մակերուն. դրա. հալա մըկայ Թագաւորի տղին դուռա կէնին, օր զուրանց հոգին Հաճի—Ֆնճօյի ձեռնէն պրծուց։

Թագաւորի տղէն էր, չատ ու քիչ գնաց, Աստուած գինայ, գնաց մօտեցաւ զուր պապու քաղքին։ Ըռատ էկաւ մէկ հովուիմ օր, հաճ տէչ զոչխար սարի կող, ինք լէ նստէ բարձր դարի մը գը-

լոխ, բլուրն առէ ի ձեռ, քօլօղն իջուցէ վըր աչքերուն. ու անուշ մղամից մը առէ ու գիգայ։

—Օխայչ, ըսեց Թագաւորի տղէն, չուտուենց բլուրի ձէն ակնջիս չառնար էր. հովվիւ, հովվիւ, մէկ դիտայ արի, բօռացա։

Հովիւ հըտ գահուն բլուր դրեց գետին, վազաւ.

—Ա՛ռ ըսեց, իտա ճանկ օսկին քզի, վազի քաղաք, ակնջկլա տար զիմ պապուն, ըսէ, քու տղէն, փառք Աստու, սաղ—սալամաթ էկաւ։

Հովիւն էր, աւր ումրի մէջ դռր էր տեսէ էդ խրցըր փառա. դռակիք լըցեց ի տուրիկն (պարկ) ու ջվակեց։

Թագաւորն օր առաւ զակնջկլէն, խանչեց զուր դարբասի մարդիկ, ջոջ ու պզտիկ, զէրէխէն ու զօտնագնէն, հարի ծծկեր տղէն լէ. յըմէն հեծան, գացին Թագաւորի տղի առէջ. խնտացան, առաք վառաք բերին, իջուցին զուր ըստաբանց օտեն, օր քամամ կլոր իրաք տարի չըր տեսերի։

Նոր քաժա բերին զՀուրնիկն ու զՀրեղէն պատկեցին, քառասուն օր, քառասուն գիշեր, գհարսնիան էրին, գովընդ բռնին, կերան խմին, խնտացան։

Ըդոնք հասան ուրանց մուրազին։

Էրկնուց իրաք խնձոր իջաւ. մէկ ըսողին, մէկ լսողին՝ մէկ ղէ ջաղամաթին. զընծի լէ բան չը մնաց [1]։

1) «Էրկնուց իրեմ խնձոր» եռեմ ըսուռն կը նշանակէ. «մէկ ըսողին», որ ըսուռն ընդունէ ասելու, «մէկ լսողին», որ ըսուռն ընդունի լսել ի միս առնելու. «մէկ ջաղամաթին», որ եկած չեն, ըսուռն ընդունին՝ հրապուրուին, գան լսելու։

38

ԱՆԽՕՍ ԱՂՋԻԿ

(ՍՕՑԼԱՄԱՋ ԽԱՆԸՄ)

(Ռուլանեխայ բարբառով) *

Մէկ թագաւոր մը կեղնի, էդ թագաւոր ուր այ քերուց կը fonնայ. ճեֆիմ կը բերին վրէն. ճեֆիմ կըսէ.—Ձուկ մը կայ մըջ ծովուն. թէ գէն ձուկ բռնեցին, բերին, ընդոր լեղին հանին, լըցին թագաւորի այքեր, կը սաղնայ։

Էլաւ թագաւորի տղէն առաւ զճեֆիմներն ու մէկ հզար բonչի մը, գացին։ Թonչիք բon թալեցին մըջ ծովուն, օր մը չէ, էրկու, Աստու հրամանքով գէն ձուկ բռնեցին, դրեցին օսկէ լակնի (կոնք) մէջ, տուին թագաւորի տղի ձեռ։

Թonջիք ամէկ վազան, ակնջկլա տալան թագաւորին, տղէն մնաց էտևանց, ձուկն էլաւ իլեզու, ըսեց.

—Թագաւորի տղա, իմալ օր դու մէկ իս, ես լէ մէկ իմ. արի, զիսի թրվկ, էրթամ. քու աղէկին աղէկ կէնիմ։

Թագաւորի տղէն լէ վերուց զձուկ թալեց 'ի ծով։

—Հզար տալր իմ պատ fonնայ, զէդ ձուկ պտի պրծում, ըսեց։ Հաւար տալան.—ինչ կէնիս, օր քու տղէն զձուկն թալեց ծով։

Թագաւոր ամր էրեց, օր զտղէն սուրկուց էնին ուր երկրէց։ Գչեցին, տղին հանին ուրանց սիճօրէց դուս։ Տղէն էր, ընկաւ ճամբան ու գնաց։ Շատ ու քիչ գնաց, Աստուած գինայ, մէկ լէ իշեց օր ճամբան վրէն օձ մը մուկ մը բռներ է, էդ խուճարա մուկ ըմալ կը վժվժէր, ըմալ կը ճըվճըվէր, օր տղի սիրտ էլ թամուլ չը տուեց, զարկեց, զօձ սպանեց. մուկ փախաւ, մտաւ ծակ։ Տղէն էլմը ճամբան տուեց առէջ, գնաց։ Տղէն մէկ արտաբօյ տեղ գնաց, չը գնաց, դար-

*. Պատմած է Համզաշէխ գիւղացի ճեֆեաք ասող Եճկօճ։

ձաւ, իշեց օր մէկ պայտ մի էշանց վաղնելին դիդայ. կանաւ, պայէն էկաւ հասաւ, հարցուց.—Աղբէր, դմր կէրթաս—Իսկի, կէրթամ խարիպ քաղաք մը դատելուս—Ես լէ քզի ընկեր։

Էղան ընկեր ու գացին։ Փշու մ' ատղ գացին, իշեցին օր ուրիշ պայեմ' լէ էշանց կը բռնայ ու դիդայ։ Կանան, էկաւ հասաւ.

—Դմր կէրթաք, աղբէր. ըսեց.—Կէրթանք խարիպ քաղաք մը։

Իրեքն էղան աղբէր.—Մեռնինք հիւրաց, ապրինք հիւրաց. խօսք տուին իրարու, ու էլան, ընկան ճամբան։ Գացին մէկ ջոջ քաղքի մը մէջ, ուրանց դուբեան մը բռնեցին, էն մէկ աղբէր էղաւ խայվաջի, մեկել էրկուն լէ ամեկ բանի մ' էղան, դեպրադէ դեպրադէ (հետզհետէ) գօլվաթուրցան, էղան դուճի մալի տէր։

Էղաւ օր էդ քաղքի մէջն լէ մէկ աղջիկ մը կէր, անուն Սօյլամազ—խաճըմ էդ աղջիկ ըսկի մարդու հետ չը պրսւցէր, որն օր պընդոր տէր պրսւցը, թագաւոր կը պսակէ վրը ընդոր։

Էլան էն էրկու աղբէր կանան, ըսին թագաւորի տղին.

—Աղբէր, էս օր գու մեր ջոջն իս. քզի կարդենք, դոր գայ մըզի։

Զէ, մէ, ըսեց թագաւորի տղէն. նրմա տեսաւ, օր նախա չը պրծու, ըսեց.—Դու գինաք, իմալ կէնիք էրեք։

—Աղբէր, ըսեցին. մենք պտի Սօյլամազ խաճմն ուղենք քզի։

—Թաւ. «Սօյլամազ—խաճըմ ուղինք քզի»։

—Քզի դաւի չը կայ, մենք կիտանք պրսւցը։

Էլան էդ աղբրտան, առան զթագաւորի տղէն, գացին աղջկայ պապու մօտ. Մենք էկեր ինք օր քու աղջիկ տաս մեր աղբօր։

—Թըխ էղնի, օր գիմ աղջիկ տուեցիք պրսւցը, ես լէ կիտամ։

Էդ էրկու աղբէրն էն, էլան առան, զթագաւորի տղէն, գնացին, զմուճդին ու դէմ գացին աղջկայ մօտը։

Ճամբէն էն մէկ աղբէր զթագաւորի տղին քաչէց թաճնա, ըսեց.

—Աղբէր, ես կէղնիմ մուկ, դու գիս դիր քո ջեպ, օր գացինք Սօյլամազ խանըմի մօտ, դու գիս թորկ, ես կէրթամ, մենիմ ընտրա չրախպի (աշտանակ) տակ։ Ներս օր մտար, բարև տուր. աղջիկ՝ գինամ քու բարև չառնի, դարձի իմ բարաճ, ըսէ.—Չրախպա աղբէր, բարի իրկուն քզի. ես քու բարև կառնիմ։ Դարձի էլմը աղջկան ըսէ. Սօյլամազ խանըմ, մծուլիմ' էրէ, ականջ էնինք, էնի քզի ականջ չէնէ. նոր էլմը դարձէք իմ բարաճ, ես ըսպապուն կը գրուցիմ։

Ըդոնք էն, էլան հիւրաց գացին մըտ Սօյլամազ խանըմ։ Ներս մտան թը չէ, թագաւորի տղէն յուչիկ մը զմուվ հանեց, թորկեց. մուվ գնաց, մտաւ չրախպի տակ։ Թագաւորի տղէն բարև տուեց. Սօյլամազ խանըմ չառաւ գըդրա բարև. գարձաւ չրախպին.

—Բարի իրկուն, չրախպա աղբէր։ Չրախպէն գրարևն առաւ։

—Սօյլամազ խանըմ, մծուլի մ' էրէ, ականջ էնինք։

Սօյլամազ խանըմից ձէն չէլաւ. տղէն զարձաւ չրախպին։

—Զրախպա, աղբէր՝ մժուլիմ՝ էրէ, ականջ էնինք։

Զրախպէն էլաւ ղրուցք։ մանկիս ըմէն ականջ էրին։ Ըսեց.

—Իրեք հոգի մէկ արտ մը կ'իսրար կը ցանէին, մէկ կէղնի լծքի տէր, մէկ արտի տէր, էն մէկվել լէ սերման տէր։ Ցանքից օր կը խըլլըսին, մէկ ժուկ մը կը մնայ. արտ կը հասնի, կը բերին քաղին, ծեծին, կէրնին, կը չէղջին, ըսեպուն գիկան օր կ'իսին մըջ իրար. կը կուռւին, ջոջ խալապալըխ մի կը սարքին։ Սերմի տէր կըսէ. ընծի կը հասնի, արտի տէր կըսէ ընծի, լծի տէր կըսէ ընծի. խազի՛, մուշբի՛, ըսա էդի վիր ստի հասնի։—Խազին ըսեց՝ կը հասնի լծքի տիրուն, մուշբին ըսեց՝ կը հասնի արտի տիրուն. Սօյլամազ խանըմ վէրաւց. ըսեց՝ Աստուած ձեր պէս շարխաբ գեռնուվի տանէ, էդ յիմալ շարաբ կէնիք. կը հասնի ցորնի տիրուն։

—Խազի, մուշբի, ըսեց աղէն, դու ծնա՞ս իք օր Սօյլամազ խանըմ ղրուցեց.—Ըմէն հրա իրար ըսեցին—հա՛։

Էդոնք էլան, գացին. թագաւորի աղջիկ գնաց չրախպի բոլոր.

—Տօ փիցուկի չրախտա, ըսեց. դու յօրի հրա յիս չը ղրուցիս. էդ յօրի խարիպ մարդու հետ կը ղրուցիս։

Բռնեց ջարդեց, բրդեց չրախպէն, թափեց դուս։

Էն լուսմէն, էլ մը թագաւորի աղէն ու մանկիս էկան մրա աղջիկ։ Տղէն հրա մոնեղուն մուկ թորկեց. ըտհաղա լէ մուկ գնաց, մտաւ աղջկայ բարձի տակ։

Թագաւորի աղէն էլ մը բարև տուեց, աղջիկ ղարև չառաւ.

—Բարի երկուն քզի, բարձ աղբէր.

—Բարո՛ խերով էկար. թագաւորի տղայ։

—Բարձ աղբէր, մժուլի մ' էրէ, ականջ էնինք։

Բարձ աղբէր վէրաւց, ըսեց.—Մէկ տէրտէր մը, բարզի մը ու ճանար մը կէղնին, ըղոնք կըննկնին ճամբայ, կերթան, մեջ մեջ մութ կ'իտայ վրէ ուրանց, կըսին.—գօրով գիրար պահինք, չեղնի՛ ջանավար, մանավար մըջ քնան ուտի տղի։

Առջի հեղ գօր ընկաւ ճանարին, էն երկուս քնան։

Նաճար էլաւ ուրին խաղնելիք, փեսէ իսաճ մը չընեց, դրեց յօն։ Սնաբն օր բաւ, ճանար իմցուց զբարզին, ինք քնաւ։ Ըստախուն բարզին մուղաս կեցաւ։ Բարզին իչեց, օր հանուէ, նաճար փեսէ իսաճ մը չընէ, դրէ յօն. ըսեց.—Էդի զուր մարիֆաքն է ցուցուցեր, կանի, ես լէ զիմ մարիֆաք ցուցում։

Բարզին լէ էլաւ ձեռք մը կնկայ հալաւ կարեց, հագուց։

Սնաբն օր բաւ, գօր էկաւ տէրտրոջ. տէրտէր էլաւ։

Տէրտէրն էր, առջի հեղ էլաւ լուացուաւ, խաչ հանեց էրես, բերեց կրակ վառեց, իչեց կուչա ու բոլոր, տեսաւ օր մէկ նոր հարս

մը կանուխ է։ Տէրտէր խղճուկ, միամիտ, բանից խապար չունէր. դարձաւ.—ըալա օրչնած, արի նատի. է, վէտից ձէն կէլնի, ժամ գիդայ։ Տէրտէր էլաւ կանաւ, ձեռ թալեց օր բերբեր, նստըցուցէր, հարս չըբվաց ի գետին՝ էղաւ քառասն ու չորս կտոր։

Տէրտէր էր, կանաւ լաց.—վայ, վայ ըսեց, էղայ պարտատէր, մտայ մեղքի տակ, իմալ զէդ fուլֆաթ սալանեցի։

Տէրտէր էդ տեղ կանաւ ժամ ու պատարագի, լաց ու պաղատկեց, Աստուածուտեն օղորմացաւ. զէդ վէտէ իճնին հոգի տուեց։

Լուս ու մթի իրէք լէ էլան, զէդ վէտէ կնկայ վրէն զիրար տարան, բերին (կռուեցան). ճաճար ըսեց՝ ընծի կը հասնի, բարգին ըսեց՝ ընծի, տէրտէր լէ ըսեց՝ ընծի. մըկայ խազի, մուշթի, շարեաթ ձեր ձեռն է, էդ վէր կը հասնի։

Խազին ըսեց՝—կը հասնի ճաճարին. մուշթին ըսեց՝—կը հասնի բարգուն. Սօյլամազ խանըմ վէրուց, ըսեց.—Աստուած զձեր շարեաթ դեռնուվի տանէ. տէրտէր կանաւ, արնէ արտասունք թափեց, Աստուածուտեն ընդրա խղճն իչեց, զվէտեն հոգևորցուց, հոգի էկաւ ինք, էդի տէրտէրոջ կը հասնի։

—խազի, մուշթի, օրհաս մացէք. էրկու հաղ կը զրուցէ։

Մանկիս էլան դացին, Սօյլամազ խանըմ էկաւ բարձի բոլոր, վերուց զբարձ, ձևըռտեց, էրեց ճղիկ ճղիկ, թալեց մէկ դի։

Լուսմթի fօման, էլ մը էկան. թագաւորի տղէն զմուկ թորկեց. ըստպուն մուկ գնաց, մտաւ աղջկայ միճտարի տակ։

—Միճտար աղբէր. ըսեց թագաւորի տղէն. կիչիմ, օր բարձ աղբէր յօտա չէ, դու մծուլիմ էրէ, ականջ էնինք։

—Վըր իմ գլխուն, ըսեց Միճտար. ականջ էրէք։

—Կեղնի մէկ բխտիար մարդ մը սիվտակ մուբռաւոր, մէկ լէ ալէխաուն նոր էր ընկէ չաճեճ. էն մէկէլ լէ նորահաս տղէ մը, նոր էր մրէ պէխեր։ Գէլնան, կըննկնան ճամբախ, կերթան մէկ սարի մը գլօխ. կիչին օր հանդէ բաժա նոր հարս մը էն դիուց զընգլուկ-զարդրուկ գիգայ։ էն ծեր մուրքաւոր ըսեց.—չէ, որլլա իմն է, էն ջհճել լէ ըսեց.—չէ, էդի նոր հարս է, ես ջհճել տղայ, յիս կը հասնի. խազի՛, մուշթի՛, շարեաթ էրէք. վէր կը հասնի։

Խազին ըսեց.—Ընդոնց ջոջ էն մուրքաւորն է, կը հասնի ընտրան. մուշթին ըսեց.—չէ, կը հասնի էն ալէխաուն մարդուն. Սօյլամազ խանըմ վէրուց ըսեց.—Աստուած ձեր շարեաթ դեռնուվի տանէ, կը հասնի էն նորահաս տղին, օր բաժա պէխեր մրեր է։

—խազի, մուշթի, դու ճա՞s էք օր Սօյլամազ խանըմ իտա լէ իրէք հաղ՝ օր զրուցեց։—Հա, ըսեցին, մենք Աստու առէջ ճաս ինք, աղջիկ ճալալ ու խոռ էղնի քզի։

Էլան ըստպուն Սօյլամազ խանըմ ուղին թագաւորի տղին. դճօլ

ու դուսանք գարկին, խաղ ու խնդում էրէցին, բերին զէդոնց պատկեցին։ Էն մէկ աղբէր առաւ գթուր՝ կանաչ մութ տեղ. տղէն էրեց չերեց աղջիկ չը դնաց մօտ։ Պարկաւ՝ քնաւ. Սօյլամազ խանըմ լէ միամտաւ՝ քնաւ։ Չէն տեսար օր, պատ բլաւ. ու յուշապ մը բերան բաց ու ծագալին գինք թալեց ներս. օրոտում ընկաւ էդ յօտէն։ Ծուշապ դէմ էրէց վըր տղի տեղաց, օր զտղէն կլուցէր, թուր քաշող աղբէր մութ տեղէն վազաւ՝ ընկաւ վըր յուշապին, բրդեց, էրեց-թուքուն, թալեց փաճճարի տակ։ Դու մ'ըսի էդ յուշապ լէ սէր թալեր էր էդ աղջկան, էկեր էր զտղէն կլուցէր՝ առնէր զաղջիկ ուրին։

Սօյլամազ խանըմ նակատաց թռաւ, իմցաւ, իշեց դէս ու դէն բան չկայ. լըլկեց զտղէն, տեսաւ տղէն սաղ էր. նոր էն մութ կանող աղբէր բօռաց.—Սօյլամազ խանըմ. էլ մը՛ վախեցի, զքու խանգիմ զուրպան էրեցի քզի։

Նոր Սօյլամազ խանըմի զիպար բացուաւ, խնտացաւ, էկաւ ընկաւ վըր տղին օտաց։

Ասանցրմ, չատ չէրկնցունք, ժամանակ մը մէջ ընցաւ, էն մէկ աղբէրն ըսեց թագաւորի տղին. —Աղբէր, էլի առ զքու ֆոլֆաթ, էլ մը էրթանք դըպա մըր էրկիր։

Գացին, թագաւորից խղին առան, էկան, բարձան զտուն ու դը՛քչէ, գացին հասան էն տեղն, օր թագաւորի տղէն զմուկ օձի բերնէն պրծուցեր էր.—Դէ, թագաւորի տղա, ըսեց էն մէկ աղբէր, ես էն մուկն իմ, օր զընծի գալլմ օձու ձեռնէն պրծուցիր, իմ իզին տուր, ես մոնեմ իմ ծակ։

Թագաւորի տղէն նոր սարվախք էղաւ. դ՛արի, տես ինչ վախտուան իրար վզով, պագըռտեցին, խնտացան։ Մուկ ջոկնուաւ, մտաւ ի ծակ, ընդոնք քչեցին, էկան։ Էկան ծովու պռունկ էլան դուս. ըսեպուն էն մէկկել աղբէր կանաչ, ըսեց.—Թագաւորի տղա, ես լէ էն ձուկ աղբէրն իմ, օր զընծի պրծուցիր. դը կանի, ես քու պապու աչքերուն լէ դնէ բերիմ, նոր զիմ իզին տուր։

Ձուկ գինք թալեց 'ի ծով՝ առաւ զդեղն, էլաւ ի դուս, տուեց տղին.—Դը՛ գնա, ըսեց. Աստուած քո բան յաջողէ։

Տղէն քչեց էկաւ, ձէն հասաւ ուր պապուն թէ—քու տղէն կարգուեր է,հըտ ուրին քու աչքերու դեղ լէ բերեր է։

Էկան ձիով ու ձիաւորով, զուռնով վերցին զտղէն, առաք փառաք տարան թագաւորի սարի դուռ՝ իջուցին։ Դեղ հասուցին. թագաւորի աչքեր հըտ դահուն բացուաւ՝ նոր էլաւ թաժա զուր տղին հարանիքն էրեց, քառասուն օր վըր իրար ֆեֆ ու խաղ ու խնտում էրէցին, ըսեպուն թագաւոր բերեց զուր թախտ ու բաճ թասլիմ էրեց տղին.

Մնաց ժամանակ մը, տղի վրէն սաֆար (կռիւ) բացուաւ.

տղէն էր ժողուեց զուր օրուն, գնաց զուր դուռման ալր էրեց, դարձաւ էկաւ, նոր նստաւ, ու վիկեց զուր թաղաւորուէն։

Ցիսուս միան, Տէրն իմ խաչէ, օր հասնի յըմէն նեղածներուն, յեսի ասոլին լէ պիդա ըսողին։

39

ԽԻԿԱՐԻ ԽԸՍԷՆ

(Ռուլաճեսայ բարբառով) *

Մէկ ըռընճպար մը ուրին լուծք կէնէր, տեսաւ օր պայէ մ' էն դիուց դիզայ, իշեց օր պայի էտեւանց լէ զուր հայուրն էկաւ. բօռաց համբորդին.—Աղբէր, արի յուտա, մատ մը հաց կիր, նոր դնաս Հանտէ իմ հաց լէ էկաւ, բաւիմ քու խրսմաք մէջն է։

Պայէն թողեց զճամբէն, ջոկուաւ, էկաւ մըտ ըռընճպար. ըռընճպար հանեց զհաց, հացուոր լէ բերեց զապուրն ու զճաշ, դրին օրթէն։

Ճամբորդ հաց կերաւ, իշեց օր հացից չորս հինդ չեհիդ համ գիդայ. դու մըսի ցորեն, գարի, կորեկ, դղիլ, տարեկան, աշնցան թաւ խառն է հրտ իրար. ձեռ զարկեց սերմնացանի մէջ, իշեց օր թէ սերսուռ գարնցան է, հարցուց.

—Ա'ղբէր, ես զիդտ բանին կանգնամ. դու մաքուր գարնացան կը ցանիս, էլ յօրի քու հաց հարիր ըռանկէն է։

—Աղբէր, ըսեց ըռընճպար, ես քինէ պայիմ, Աստուց ինչ պայիմ. ես կը ցանիմ, հրմա իմ ցորեն պտուղ չիտայ. յէրդն ապով կը ցանիմ օր տաւրին իտարա էղնի։

—Օր յըմալ է, խրատ մը տամ քզի, կը վերմուս զիմ խրատ։

—Հա, դու ըսէ, թըխ էղնի վըր իմ էրկու յաչիչ, յօրի չըմ վէրու։

---

* Սոյն ոէֆիաթն ետքայ Բուսեցի Սարիբեղ փոխր ինչ տարբեր պատմած է, ճա Բանլուլին կր վերադրէ, փոխանակ Ախիկարին, նաեւ փոխանակ Սամբոլին՝ ի Բաղտատ կատարուած է դէպքը, կասէ։

—Ականջ էրէ, ըսեց ճամբորդ։ Հար ինչ կը տեսնիս խրատ մ' էնի. ինչ սպանուիլ ջանալար ըլլաս դիգաս, հորիդ մը'թորկի գնանի էրես, ու թէ հակեար նեղ ընկաը. ես Իվիկարն իմ, հարցու, արի Սաամպօլ, գիս գտի. էլ խրնդ իմ անուն էվեր անուն չկայ։

Իվիկարն էր, գէդ բամպին տուեց, էլաւ գնաց։ Իրկուն օր էղաւ, ըրբենպար դուր լուծքն հարձկեց, տուեց գմալն յաւէջ, չիտկուաւ գէպի վեղ. մէկ արտաբօյ մը դբաւ չը գացեր էր, իշեց օր ճամբու վրէն էրկու հատ խրզրլ կարմիր օձ սպանուիլ քալուիլ է, վերուց գօձեր վրը խարպնկոթին ու բամաւեա էնէլին գնաց։ Մէկ լէ գլօխ բանձրցուց օր հասեր է ուր դուռ։—Վայ—վայ ըսեց, ես քմալ Իվիկարի բամբին չը պահեցի, գօձեր չը հարնցի ի գետին։

Ըրբենպարն էր չիւար մնաց. չարնաչար էլաւ, գուր տան ըռուդ վերեց, գօձեր պահեց յօն։

Գնաւ, լուսմէի էլաւ օր, Աստու հրամանքով էդ էրկու օձ լէ էղած մէկ մէկ չիւարի ծառ, յրմալ օր խրնդ ձիթխցի մը գերան։

Խրլդ Թափան, էկան, մար մացին ու հարցուցին.

—Աղրէր, իդա չոր տեղ, էդ պատի ըռգան մէջ՝ էդ ծառեր ուտէն դուս էկան։—Ըրբենպարն ըսեց.—Որն օր գիմ վեհտերու օտէն ըսեց, դէն ծառեր կիտամ ուրին, թէ չըսեց, հազար դուրուց կառնիմ գիմ վեհտերու դին։

Ինչ խրտեր ճար ինչ վեհտերու անուն տուին, չը կրցան գէդ ծառերու օտէն(ինչենի)հանէն. ժրխօ ըրբենպար՝ որն օր չկրնէր հանէր, հրդար դուրուց կառնէր մօտէն։ Մարդն ըղհրմալով գօլվաբուորցաւ, էղաւ բուճար. ձեռքըւաւ ըստապուն ձի առաւ, էղաւ ծանոթ բազրկան մի. գնաց բազրկընուտնին։

Էդ ծառներու ձէն ցրվրաւ աշխար. չորս դիուց Թափան, էկան օր ըդոնց օտէն գտնէն, մէկ չը կըռցաւ։

Էդ ջուապ հասաւ մէկ ծանոթ բազրկնի մ' լէ։ Շատ չը քշից, աւուր մէկ էդ բազրկան լէ ուր բեռով, բարձով էկաւ դրեց ըդ ըրբենպըրի տան խէչ։ Հարցուց, փնտռեց, սալըղ առաւ օր ըրբենպար տուն չէը, ըսեց.

—Իդա աղէկ էղաւ, հուճար մնաց կնկան, բալէի զկնիկ խաբիմ, խօսք քաչիմ մօտէն, իմնամ զծառերու օտէն։

Բազրկան էր, յէլաւ գնաց մէկ փաթ մ' օլրտաւ ծառերու բոլոր, իշեց օր ըչը խեղք բան մը չը կտրէ գըդոնց օտէն իմնալու, վրը կրնկին դարձաւ, մտաւ ի մըջ գեղին. յուտա հարցուց, յունա հարցուց, փարա տուեց դէս ու դէն, խոլասա ինչ գլօխ ձի ցաւցում, գկնիկ խանմիս էրէց, կնկայ հետ մէկնաւ։ Մէկ քէնիմ օր ընցաւ, բազրկան գուր սրտ բացեց կնկան, ըսեց.—Դու չը կը՞ռնաս, քու

իրիկն օր էկաւ, հարցուց, գծառներու օտէն լմնաս, ըսիս ընծի, վերում գդալ ու ծառներ տանիմ ի մըր էրկիր։

Կնիկ խօսք տուեց, էդ տեղ խօսքեր ուրանց էրին մէկ ու բազ-լեցին օր իրիկն իգէր։

Եղաւ օր մէկ վախք մը ընցաւ, ըռըճնպար բազրկնուտեննից դարձաւ։ Կնիկ ճիաք կախ ճա գնաց յառէջ, ճա լէ հարցուց։ Ըռըճնպար մնաց մըջ մարախին, հարցուց.—Տօ կնիկ, էդ յօրին էդ յըմալ սևաւորներ ես. չ'էղնի բան մը ձեռ տուէ քզի։

—Ինու տուն ակօլեցիր, ըսեց կնիկ, գացիր դու լէ բազրկնուտենի հլամունսի fար էնէր, մկա գծառներու օտէն ընծի ըսէր, գդու եօթ պապու դատումն էրեր էնք, հանդէ ամիս մ' էղաւ բազրկան մը դրե մըր տան խեջ, քզի բաիլու կէնէ.

—Կնիկ, քու ինչ գործ նէ գծառներու օտէն յիմնաս. դու հըմա կեր ու խմէ, հագի ու պարկէ, մկա ձրն է քզնէ դատում ուզէ, քու ինչ ցաւն է զէդ բաներուն կը խառուիս, դու քու կնկնուտէն էրէ, քու տան ու աեղին լէ։

—Չէ, ըսեց կնիկ, իդա դամ, իդա էրթամ օր, գծառներու օտէն պտի ըսիս, թ' օր չըսեցիր, քզի կնկնուտեն չըմ էնի։

Կնիկ, դու ու քու Աստուած, գադար մացի չարի իրկուն, ուռք ու ձեռ քաշուին, վշում հէհնաի, ուտէ գդու գլօխ, կըսիմ, ինչ էնի։

Ըռըճնպարն էր էլաւ, գնաց ի ժամ. հըտ դրբին բազրկան մտաւ ներս, կնիկ ակնջկլա տուեց.—Դու հաչ մացի, խօսք տուեց օր թէ իրիկուան ըսէ. արի գդալ մտում իդա անտուկ, իրկուան օր հարցուցի ես, դու գդու ակնջով լսէ։

Բազրկան էր,անտուկ բացեց, մտաւ ի մէջ, նստաւ ու գանկըջներ սրեց։ Իրկուան ըռըճնպարն էկաւ ի տուն, կնիկ էլ եամաճ չը տուեց, խոլասա ճարիճն աճրզաւ. չարճաչար զուր արտ բացեց, ըսեց.

—Ինու խաթըր չըմ կոտրի, կնիկ, կըսիմ. ճրմա խօսք մտդի մնայ, մըր ծառներ ջուխթ մը օձ ին։ Կնիկ իրէք հաղ թախիր առաւ, բազրկան մըջ անտկին կը լսէր։

Լուսմթի ըռըճնպարն էլաւ, գնաց ի ժամ, կնիկ զբազրկան հանեց անտկէն, ճամբըցուց, գնաց։

Բազրկան էր, ուրախնալին գնաց. նստաւ ի մանլիս, ըսեց.

—Թանչէք զէդ ծառներու աէր, ես զընդոր ծառներու օտէն պտի հանիմ։ Թանչին զրռըճնպար էկաւ, բազրկան հարցուց.

—Հայ, ես ծառներու օտէն պտի հանիմ, մըր ծարքն ինչ է։

—Իմ ծառներու գին բալու է, ըսեց ըռըճնպար։

—Չէ, ես զէն ու զէն չըմ գինայ, ես դրլխոազ կը գաչիմ։

—Ինչ օր քու ջաճ ճազ կենէ. ըսեց ըռըճնպար։

—Ես օր գտայ զքու ծառներու օտէն, իրէք բան կուզիմ քեզնէ, թէ չը գտայ՝ իմ բազկիցուտեն թասլիմ կէնիմ քզի։

—Հա, ես խապուլ էրեցի։

—Ջաղամաք դու ըհա՞ս իք, ըսեց բազրկաց. ըդոր ծառներ ջուխթ մը օձ լին։

Ըդրցնգար տեղզատեղ լալկաւ, մնաց, չկաբաւ. ճամբախ մը չը կրնցաւ գանէր. էդ գախ Խիկարն ընկաւ ուր միտք, օր նեղ աւուր պտի հասնէր ուրին. քէթխըրաւ մէկ դիու, քերեց գանկջի տակ (ամօթ զդաց) ու ըսեց բազրկնին.

—Ընծի սապր էրէ, իմ բազրկաց կէս մացեր է չօլ, էրթամ, բնրիմ. նրբօր էկայ, սրի, ձեռ թալ, զքու իրէք բան առ, գնա։

Ջաղամաք նախ տուեց զէդ խօսաց. ըդրցնգար էլաւ, գնաց։

Հեծաւ զուր ձին, ձիուն հարաման, խամչուն բարաման. չըփ—հա չըփ Սաամզօլ դմր իս, էկայ քզի. գնաց, հարցուցելով գտաւ զԽիկարի տուն, դէմ իջաւ ի դուռ։

Խիկար էլաւ առէջ, բարևնաւ, զըդրցնգար տարաւ ի ներս, հարցուց.—Աղբէր, քզի չէղնի բան մը ձեռ տուեր է։

Ըդրցնգար լէ խրսա էրեց—թէ ճալ ու ճէխիաթ իդրմայ՝ բազրկան մ' էկաւ, զիմ ծառներու օտէն ճանչցաւ, մըկա լէ իրէք բան կուզէ յիսնէ։—Ջու վիզը կոտրի, ըսեց Խիկար, դու չէղնի մարդու բան խրսայ էրեր իս։

—Հա ողլա, ըսեց, ես իմ կնկան խրսայ էրի, իմալ էնէնք, անզգամ էր ու հայասրզ, ձեռնէն չը պրծայ։

—Օր յրմալ է, քու կնիկն է խրսայ էրէ. զէն իրէք բան լէ օր քզնէ կուզէ բազրկաց, մէկ զքու կնիկն է, էրկուս լէ ծառներ. զիմ խօսք չը պայեցիր, յետի սօղին լէ իդա օրին հասար։

Ըդոնք էդ խօսաց մէջն էն, Թագաւորից մարդ էկաւ Խիկարի էտևն։ Խիկարն ըսեց.—Գնա, ըսէ, Թագաւոր սաղ մնայ, ես օր բարի խօճախ ունիմ։

Մարդ գնաց, կրնկին դարձաւ, էկաւ էլ մը.

—Թագաւոր կըսէ, Թըվ զուր բարի խօճախ լէ հետ բերէ, ըսեց։

Խիկար էլաւ, առաւ զըդրցնգար, գնաց, ճամբախ բամպի էրեց։

—Տես, աղբէր. կէրթանք ի Թագաւորի դիվան, չէղնի էլնես վերին դին նստես. մէկ լէ հացից էտև ձմերուկ կը բերին, չախու կուզին, չէղնի զքու չախուն ի տաս։

Խօճա էլան գացին, օր հասան Թագաւորի դիվան, ըդրցնգար Խիկարի խրսէն մոռցաւ. քշեց, դէմ գնաց, վերի գլօխ նստաւ. որ էկաւ. կանաւ, տեղ տուեց, գնաց ներքին դին, վրը փոչուն նստաւ։

Մնաց մէկ խելի վախք, հաց կէրան, պրծան. ձմերուկ էկաւ, չախու ուզին, մէկ ձէն չէրեց, էդի էն դին թռաւ ու զուր չա-

խուն թալեց, դնաց։ Ձմեռուկ կերան. պրծան, թադաւոր գչախուն վերուց, ըսեց։—Մանկիս, դու շատ մացէք, իմ խեզիներն օր ճղին, տարան, իդա իմ խեզիներ միջի չախուն է։

—Հա՛ մենք շատ ինք, ըսին մանկիսներ։

—Խիկար, հա՛յ գիտի, դո՞ւ լէ դող կը պայիս, ըսեց թագաւոր։

—Հացն ի գինի, տէր կենդանի, ես խապար չունիմ, ըսեց։

Թագաւոր ամր էրեց, օր լուսմէն չուտ էդ ըռընճպէր պլօխ գարկին։

Խիկար խնդրուաւ, ըսեց.—Թագաւոր տպրած, նիւի կէնիմ քղնէ. պիմ խօճա'խ տուր, դիշնրսի տանիմ, լուսմէն էլմը բերիմ։

—Փու խաթրի համար կը թորկիմ, Խիկար. նրմա վախտամ թէ խրատ ի տաս։—Աստուած շատ է, ըսեց. իմ լեզուն ընդրա հետ պտի չը թացուի։

Խիկարն էր, առաւ պրռընճպար, գնաց ուր տուն. դռնէն օր մտաւ, ըսեց.—Կնիկ. կնիկ, պէն կատուն բռնէ, բի։

Կնիկ գկատուն բռնեց, բերեց. Խիկար գկատուն առաւ ի ձեռ, փամփէրով գարկեց գլխուն ու ըսեց.

—Թհրմօի կատու, չէ քղի ըսի վերի դին մը նստի, յօրի նըստար վերին դին. չէ ըսի չախու մի տայ, դու դչախուն յօրի տուեցիր։ Լուսուն թագաւոր քղի կը տանէ, դու ինչ ջուապ պտի տաս։ (Հայլէ՛, պլօխ կախէ, ինչ օր իյու, ականջ կէնէ)։ Գինամս ինչ պտի ըսես թագաւորին, լուսմէն օր քղի կը խանչէ, կէրթաս, կըսես թէ «ջաղամար, մանկիս, իմ պապ բազրկան էր. Ցետո տարին Դեղթափայ դեռուկ գարկին, գիմ պապ սպանին, գմալ յըմէն քչեցին, տարան, դէդ չախուն լէ իմ պապու սրտի մէջ գարկած էն. մկա առեր իմ դչախուն, ընկեր իմ, կոլրտիմ (անտրի կատու, չիտակ ականջ էրէ), գիմ պապու խասաս կը գաշիմ, օրչնեալ Աստուած, օր թագաւոր էլաւ տէր, էլ դուր վօղպատ չըմ թորկին։ Կատու, չիտակ ականջ էրիր. առ հա՛, փամփ մը լէ կատուի գլխուն։

—Կատուն էրեց.—Նահ՛ւ, նահ՛ւ։

Էլան պարկան, լուսմէն թագաւորի խաւազներ էկան, դէդ ըռընճպար առան, տարան օր խեղդին։ Ըռընճպար դնաց, կանաչ թագաւորի դիւաց, ըսեց.—Ընծի բուսխաթ տուէք, մէկ էրկու խօսք կրուցիմ, հրպա գիս խեղդէք։

Բուսխաթ տուեցին. ըռընճպար լէ իմալ օր Խիկար բամպա էրեր էր կատուի, դէն ըմալ լէ խօսաց թագաւորի առէջ։ Թագաւոր էլ ճար չը գտաւ, ըսեց.—իանչէք գԽիկար։

Խիկարն առան էկան. թագաւոր ըսեց.

—Խիկար. Աստուած քու տուն չակօղէ, դու արուէնք էր, բերիր, Թողիր գիմ փողպատ. մըկա ըդ մարդ կանչ համ դուր արուէնք կուզէ, համ դուր պապու խասաս. չէղնի դու սորուբցուցեր էր։

—Չէ, յերդուաւ Խիկար, ես ընդրան բան չըմ ըսերի։ Թադաւոր տեսաւ օր էլ գուր փողպատ չը կըռնէր պըծուցէր, խանչէց պրռըննպար մէկ ծանոթ բազրկաց մը, ուր fսուց թասլիմ էրէց ընդրան, նոր աղատաւ։

Ընդրննպար էլաւ, էկաւ Խիկարի մօտ.

—Դէ ըսէց, ես կէրթամ էրկիր, ինչ խրատ պտի տաս ընծի, օր էն բազրկնի ձեռնէն լէ պրծնիմ։

—Իհատ իշէ, ըսէց Խիկար. դէլնաս, կէրթաս քու էրկու ծառի մէջ արծէլ մը կը կապիս, գինիկդի կը վէրուս, դնիս ի վրէն. իրէք հատ սրգտա լէ կը զարկիս առջև. բազրկաց օր էկաւ, իշէց, էնի լաւ պտի էնէ օր գինիկ ծառէց բերէ ցած, ձեռն օր թալէց գիրէք սրգտին, բռնէց, դու վէտ մը զարկ վրը վրգfօֆին, թըլս իդայ ցած. քաշէ գիրէք սրգտէն, տուր ձեռ ու բօռա. թէ վասգի', մո'ւծթի, դու ծհատ մացէք, էդի ձեռ թալէ իրէք բան, թըլս առնէ գուր էդ իրէք սրգտէն, հեռհնայ»։ Զբազրկաց ըդյըմալով դիր ի ճամբու, նոր արի գինիպադի բոլոր։ Զէդ լէ քզի ըսիմ. կէրթաս մէկ եաղգ (սև) ձի մը խամ կը կապիս, իօրոտ մը կը կերցուս. ամիսն օր բոլրաս, կը հեծնիս գձին, գէլնաս մէկ անվերջ սարի մը գլօխ, գինիկ կիջցուս, կը կապիս ձիու պոչ ու կը թորկիս սըլսըլէաններու ու քարուքանէքներու մէջ, էդ յըմալ ջազարաթով գէն կապանիս, նոր կը դառնաս,իդաս իմ մօտ, իմ աղջիկ կիտամ քզի, քզի լէ մարդուտնով ճամբու կը դնիմ։

Ընդրննպարն էր, էլ չը կանաւ. գիշեր ցերեկ էրեց մէկ ու հանքակաւուր գինք հասուց ուր տուն։ Զձին կապեց խամ, գնաց արծէլ մը չինաց գէրկու ծառի մապէն, բերեց գինիկ դրեց ի վրէն. բազրկաց էկաւ, օր գինիկ բերէր ցած, իմալ օր բռնեց գսրգտէք, գէն տեսար օր թրփայ ի ցած։ Ընդրննպար հըտ դահուն վազաւ, քաշեց գսգտէք, տուեց ի ձեռ. գէն էդ յըմալով ճամբու դրեց. նոր էկաւ, առաւ գինիկ, տարաւ անվերջ սարի մը գլօխ, կապեց ձիու պոչ, խամչի մը զարկեց ձիուն, ձին չա էլաւ ու առաւ գինիկ, գէդ քար ու քըռէաններու մէջ գըռըցուց, յըմալ էրեց օր, գինկայ փըռտրկներ հաննց հաւճն։

Էդ տեղէն ըստապուն գարձաւ. էկաւ տուն, գուր թասարուճ տեսաւ, գձիաւորտան հազրեց. նոր—թաժայ ձիով, ձիաւորով, հալւով, գաթով, խորովով, գնաց Խիկարի մօտ. զաղջիկն առաւ։ Խիկար լէ էլաւ գուր աղջկայ ոտ ու ձեռ տեսաւ. օսկով, արծթով, սրճաթով, fօսրfով, խուրճնով, դալմով, fամարով ճամբու դրեց։

Զաղջիկն առան էկան, նոր պսակեցին վրը ընդնպրին, հօթն օր, հօթ գիշեր հարսնիք էրին, կէրան, խմեցին, ձղի մէջ յիշացին։

«Մընիմ քզի սուրբ Թալինոս, օր տուիր գրդոնց մուրազ»

40

ԿՆԻԿԸ ՋՈՐԻՒ ՓՈԽԱՐԿՈՒԱԾ

(Արձիւռւ բարբառով) *

Կէղնի, չէղնի էրկու մարդ—մէկ կաթչի (ջորեպան), մէկ էլ ձիաւոր, յէլան որ գնան քաղաք. ճամբաս մէ խատ կամչիմ' տեսան. կաթչին ձիուց իջաւ ցածը, մէկ ծէը մէկ բռնեց մէկ էլ ծէը մէկ, կռիւ խանեցին վրէն։ Ձիաւոր կաթճուն ասաց.—Աղբէր, դադրը', արէ, խատ քե բան անենք. նստի, կսա աննենք, վեր գոխ չատ փորձանք իկի, կամչին տանք իննոր։

Ձիաւոր ասաց.—Ես էլայ, գնացի քաղաք, չարոս, պազար կան էկայ, մէկ մարդ ձիկ կանչեց.—դա տղա, դա տղա, արէ, էլի ձիկ մշակ։—Շատ աղէկ կէղնի, ասի։

—Մկայ գնա, ճեվարին արէ, հետ քէ էրթանք մեր տուն։

Հեվարին էկայ, գնացինք տուն, խաց կերանք, պարկանք։

Էս տեղ մէկ խորօտ աղջիկ կէր, էդ աղջիկ, մէկ կնիկ էկան։

Մարդն ասաց.—Կը տեսնամս. էս իմ կնիկն ա, էս իմ աղջիկ. արէ, իմ աղջիկ տամ քե, իմ պիքուճ ունեցածս վեր քե իպա անիմ. քե անիմ ձիկ փեսայ, լաճ ու խօր պէս ապրինք։—Շատ աղէկ կանես, ասի։ Էլան, կանչեցին, տէրտէր բերին, պսակ արաց։

Մարդ դիւս էլաւ, գնաց. ես իմ չորեր խանեցի, մանէի մէջ տեղաց, մէկ մէլ տեսայ օր դուռ ափեցին. էդ դուռ տվողն էդ մարդն էր (իւր աներ), ասաց.—տղա, տղա, արէ, խալաւներր խագի, ճվալներր (պարկ) առ, էրթանք մէ տեղ ոսկի ինք լցի, բերինք, սօրա մանիս քո կնկայ ծաց։

Էլանք գնացինք. սալիմ' րուսաք էկանք, էն տեղ խոր մի կէր,

* Սոյն ճէֆիաթը պատմած է Առնիբարնակ մի Մոկացի, որ այլ եւ այլ վայրեր մնալով խառնակ բարբառ մի կր գործածէր։

քերան բաց, մարդը ասաց.—Արէ՛, էհի էս խորի մէջ, էս ճվալներ կտամ քե, դու լից մէջ խսունց օսկիք. ասաց ձիկ օր չուանով քաշեմ, վեր կելնես դիւս, կը բառնանք ջորիներաց, կը տանինք։

Գնացինք, ես էջայ խոր, տեսայ օր մէջ լցուն օսկի էր, ես էն չուալներ լցի, տուի դիւս, խլրտանք. չուան կախեց, ես դիւս էկայ. տեսայ մէկ չուալ մնացեր էր խորու տակ, էն մարդ ասաց ձիկ.

—Դա տղա, էջնը, էն մէկէլ լից։

Էլանք, չուալներ պառցինք, ես էջայ խոր, էդա մէկն էլ լցի, տուի, դիւս քաշեց, չուան էջուց, ձիկ էլ քաշեց չուր խորի կէս, չախուն թալեց, չուան կտռեց. ընկայ մէջ էդա օսկիքտերաց.—կաբրեի, լաւ ականջ էլայ։

Մէջ խորին գնացի էտեղ, էն տեղ, տեղ մը չը գնտայ. դու մի ասի, էդա խորի տէր մարդասպան ա, չատ մարդեր էդ ոսկիյտերաց համար սպաներ, թալեր էր խոր։

Տեսայ մէկ արջ, խորի տակ մէկ ծակ կայ, էդ ծակից կուգայ, ամեն լեշեր կուտի, ես էլ երբ կը փռֆռի էդ տեղ, հընկայ էդ արջու էտևէն, լարեցի, լարեցի, չուր էլայ լիւս աշխարհ։

Տիւս պտըտեցի դէս, պտըտեցի դէն, էկայ քաղաք, գնտայ դիւքաճներէրի առէջ էլմ էն մարդ. էդա մարդ ձիկ տեսաւ, խանչեց, ամա ձիկ չճանչցաւ. խարցուց ձիկ.—Դա տղա, ինչ տղայ իա՞—Աղքատ տղայ իմ։

Ասաց՝—Գնա՛, դորմ՛ արէ՛, քե տանեմ մեր տուն։

Խօսացինք էլի առջի դրուն պէս։

Գնացի տուն, տեսայ խացին յետ մէկ կնիկ, մէկ աղջիկ էկան, (կաբրեի, լաւ ականջ էլայ, էս աղջիկ իմ կնիկն իւ)—էս իմ աղջիկն ա, ասաց էն մարդ, արէ՛, վեր քե պսակեմ, դու էլի ձիկ տղայ, ես էլիմ քե խէր, մէկ տեղ ապրինք, իմ մալ, թամալ զմէն կանեմ վեր քե։

Պսակեց, խարճխան արինք, առջի գիշեր, որ խանի չորերս, պտի մտնինք դօշակ՝ նամաճ դուռ ափեցին, էլմ էն մարդ ասաց.

—Էլի, խալաւներդ խագի, կաբրներն առ, էրթանք Ֆլաճ սարի տակ, օսկի կայ, առնինք, գանք. էտև արէ՛, աղջկայ խետ քներ։

Էլանք, դացինք էն խորի վերէն. էջայ առաջուան պէս. լցի, չուրլներ, խանեցի դիւս, ես էլ գիւս էկայ, տեսայ մէկ չուալ դատակ մնացեր էր—Դա տղա, ասաց, էջի, էս մէկ չուալն էլ լցիր, առնենք, տանինք։

Ասի.—Ձէ, ձիկ կտռտես, սպանես, էլ չեմ էջնի, էս էլ դիւ էջի. իսօ աշխարհք չաւիրի։

Մարդը էջաւ, լցեց չուալ, չուան էջուցի, քաշեցի. մատաւ չուր կէս տեղ, դանակ թալեցի, չուան կտռեցի, գնաց խորի մէջ. ես էլ իմ կաբրներ պարցի, էկայ տուն։ Մէր, աղջիկ էկան իմ դէմ, ասին.

—Ծուր ա մեր մարդ, չուր ա մեր խէր։

Ասի.—Չարկեցին, սպանեցին։

Էս—տեղ ես էն տան վերէն մնացի, աղջիկն ասի, նստայ. էս հալատուքիւն էն տեղէն ի մնացեր ի. մկայ ես իմ խեհաքն պրծայ, դորիս դէռ ասայ։

Ասաց.—Ձիաւոր աղբէր, լաւ ականջ արա, ձիկ մէկ քախմ ձիեր ունի, օր մէկ մէկէլից ֆանլան էր, ամէն կոնից ջոկ-ջոկ, որ ամէն վիր որ ձի պէտք էղնէր, դուղէր, ինձանից կառնէր, իսուր խամար չատ սեխներ պռնեցի, խարխրից աւելի, էդ սեխներ (ձիասլան) ձիանք աղէկ չպախելու խամար վզքերներ կտրեցի, դորիս մէկ արաբ սեխ պռնեցի, մէկ ժամանակ էդ սեխ մնաց իմ մօտ։ Դու մնալ, իմ կնիկ գոնի օր տնից կէղնի, ձիներ կը խէծնի, գողտիկ կերթայ սիրականի մօտ. իդոր խամար իմ ձիեր չէին կլաւնայ (դիրանալ), ինուր խամար ես էդքան արբնի տակ մտայ. առանց էս բան գիտնալու։ Ձիաւոր ախպէր, լաւ ականջ էրայ, ասայ։

Մէկ գիշեր էկաւ սեխս, ձիկ ասաց.—Աղա՛, աղա՛, էլի՛, տէս, քեօ կնիկ դուր գնայ։

Էլա, տեսայ օր բօզ ձին ի խէծեր, դնացեր, ասի.

—Սեի՛ս, սև ձին ձի խամար քաչէ դիւս։

Սև ձին քաչեց, թամքեցի, խէծայ, քամկից գնացի, գնացի, տեսայ մէկ քարոտ դաշտի մէջ, պաղ—ցուրտ ձմեռուայ ժամանակ, օր իմ ձին քէլայ, իմ խոգին կը մղկտայ. տեսայ էդ տեղ մեծ կօնախներ կայ, մէջ օդէք չինուկ, իմ ձին կնիկ կպպեր ի դուռ, գնացեր ի ներս, էդ պաղ սառուցներու վերէն ձիու ոտներ սառելու մօտ իս էս էչայ ձիուց, կպպեցի իդոր կուշտ, մտայ ներս, տեսայ օր մէկ խատ արաբ մը կայ օր մէկ պռուկ էրկինքն ի, մէկ պռուկ գետինքն ի։

Առջի դռնէն մտայ սրահի մէջ, տեսայ որ իմ կնկան ասայ։

—Էօեախզ կնիկ, դու էս օր ինչի՞ անգան էկար. կնիկս էլ կասէր.—ինչ անեմ, ակուն էլաւ։ Ին գախ էնի տարաւ, իսլի մէկ խատ օսմառ իտու իմ կնկան իրեսին, օր իրեսից կրակ թռաւ. իմ խոգին էլ մղկտաւ, իս ձիկ ասի թէ՝—այ անօրէն, իս էս կնիկ եօթը տարի առեր իմ, մէկ ծանտր, թթու չ'ասերիմ, էս ինչպէս կը դանի։

Տեսայ օ կնիկ նստաւ էն տեղ, լացաւ. արաբն էլ օսկի իպրիղ լակացը առաւ, իսի դիւռ լուացուի. իս էն տեղ ձիկ տուի դռան ցալտէն, իմ Աստուծու անուն տուի, իմ թուր կալանից քաչեցի, օտաց մատների վրէն կայնայ, զարկի, էդ սև արաբի գլօխ կտրեցի. գլօխ գնաց դռնէն տիւս, ջանդակ մնաց ներս։ Ես էն տեղէն չուտմ' իմ ձին քաչեցի, խէծայ, վախայ էկայ, իմ տուն էչայ, ձին բասլիմ արի սեխին, իմ չորեր չու-չուտ խանայ, մտայ իմ տեղ։

Տեսայ օր իմ կնիկ, էդ արաբի գլօխ դրեր ի մէջ օսկի սինուն, լալով, կոռալով էկաւ, մտաւ ի ներս։ Ես իսկի չիշնամ (չեմ համար-

ձակիը) խօսայ, իսկի ձիկ էն տեղ չիմ դնի։ Ուրն օր, տասն օր լացաւ, կոուաց, չուր գլոխ խոտաւ, տաս օրից uorա ասի.— Այ կնիկ, խէրիք չելաւ, օր դու լաս, կոուաս էդ չար գլխի վերչեն։

Էս խօսք իմ բերանս էր, մէկ էլ տեսայ կնիկ դօշակի տակէն ճալոտմ խանեց դիւս, էզարկ ձիկ, ասայ։—Այ չուն, չուն դառնաս՝ իյնաս աչխարհ պարտիս։ Զիաւոր աղալէր, ասաց կաբռնին, լաւ ականջ էրայ։ Ես մնացի չուն եօթը տարի. մէկ օր մեր քաւոր տէրտէրի դուռ գնացի, տեսայ օր խայ կը թխէն, տիրուխնին ասաց.—Առ էս խայերը, լիս չան, վայ—վայ, մեղք իս։

Տէրտէր ասայ.—Էս օվ ա օր դու կը մեղքընաս։

Ասայ.—Մեր սանախէրն ա, ... որ իր կնկան առաք սիրական գնայ, սալանեց, էն էլ իճատս ճալոտով պարկեց, իսուր արաց չուն. մկայ էս եօթ տարի ա, չուն ա էս խոդս։

Ասաց տէրտէր.—Կնիկ, իսուր ճարմ չկայ, ճարը ինչ իս։

—Իսուր դէղ եօթ տարուան անծին էրնջիկ իս։

—Իս ար տեղէն եօթ տարուան անծին էրնջիկ բերիմ։

—Դէ իմ խերանց նախիր էն դարնի, մէկ հատ ինանց մէջ կայ, գնայ, առ, արի։

Տէրտէր գնաց, առէց էկաւ։

Գնաց, պիրեց մէ խատ կսապ. մորթեց, օճախներ չինեց, պըղինձներ չարեց վերչեն, միս կոտուրչէն uorա, լցեց մէջ պղինձներաց, վառեց, իփեց, էնպէս իփեց օր իդոր օսկոռներն էլ խալաւ, էլաւ ջուր, իմ ձեռ ոտ պռնից, կնիկ էլ ճխտից էդ եռման ջրին, Աստուծոյ սուրբ չնորքով իս էլ էլայ աչխար մարդ։

Նստանք, խորհեցինք թէ ինչպէս կէղնի, ինչպէս չէղնի՝ գնտանք էս խորհուրդ, օր իս էլ էլնիմ չարչի, ուրնինք, ծուռ, ճօթ առնիմ, ֆռալով էրթամ, էն քաղաք ման դամ։

Գնացի, տեսայ իմ կնիկ, էդոր խզմեթճիք դիւս էկան, ասի.

—Խաներմ, ծուռ բան չառնիս, խանմ իզի կանչեց վերև, գնացի վեր, տեսայ օր կրնա էդ չոր գլոխ հանած, դրէ էդ մէջ սիճուն, վերչեն կուլայ, կը կօուայ։

Ես իմ աչքիր ման տուի չորս կողմ, տեսայ էն ճալօտի մէկ ծէր դօշակի տակէն էրևաց. իս մօտացայ, մօտացայ, քաչեցի ճալօտ, առի դաղտիկ, դրի իմ փեշի տակ։ Էդ օր պազար արեց, պրծաւ, ճալօտ վերցուցի, զարկի կնկան, ասի.—Դու կաբր իր, կաբր դարձի։

Իմ կնիկ էլաւ մէ կաբր, թէ չիս հաւատայ, տես որ էս իմ կաբր իմ կնիկն ա, տես, ճալա արտասունք աչքերից թափում ա։

Ասաց կաբռնին.—Դէ, ձիաւոր աղալէր, մկայ կռպան (խարազան) ձիկ կը խասնի թէ քո։

Ես իսալք իմ արի, կռպան քո կը խասնի, ասայ։

Կաբռնին գնաց, ասաց.—Մարդ Թող իր կնկան խսկի չասի Թէ լաւ ա, կատարեալ ա. ահա կնկան ամենալաւը իմ կնիկս էր, ինչ տեսակ էլաւ։

41

ՄԱՐԳՐՏԱՑԱՐ

(Վանայ բարբառով *)

Կելնի—կելնի մէյ որբևվերի մարդ, ինոր կելնի մէյ լաճ, մէյ աղջիկ, էն աղջիկ չատ խօրատ կելնի էդա մարդ կը փրսայուի. մէյ խատ կնիկ մը կառնի, էդա կնկան էլ մէյ խատ գէշ աղջիկ մը կելնի։ Էդա կնիկ խորթ աղէյներաց չուզէ, ինչի որ ուր խորթ աղջիկ իճաճ աղէն խօրատ էն, ուր աղջիկ գէշ ի։ Մէյ օր իրկան կասի։—Քեա, մարդ, դիւ որ ձիկ կը սիրես, պիտի էսա աղէն իճաճ էսա աղջիկ կուրիսցուցես։

Մարդ տեսաւ որ կնիկ չատ զօռ արաց, ուր իրնի ճայհն (ամօթ) գնաց, ուր ճար կտրաւ, ասաց։—Վախնամ խին գէշ էլնի չանք առաջին։ Էլաւ ուր կօռ ու կօռատիկ, լաճ ու աղջիկ առեց, խորթ մէրն էլ էրկու խատ օռ կլօճ թխեց, խետքեր իդիր. գնացին—գնացին, չատ ու քիչ գնացին, Աստուած գիտի, աղէյներաց ոտքեր ցաւաց. ասին.—Պապօ, մե դմր կը տանես. էսա քեսրներաց մէջ մեր ձեռ ու ոտք կտռատաւ, մեր կատամ կօտռաւ։

---

* Սոյն ձէֆիաքի մի մասը պատմած եւ միւս մասը երգած է Եղիսաբէթ Կափաճճեանց, որ մօտ 30 տարի Վանէ Վաղտրատպատ գաղթած լինելով՝ լեզուն շատ տեղ խառնած էր, որով տպիպուեցայ պ. Համազասպ Տռատճեանցի օգնութեամբ ուղղել։ ,,Գառնիկ աղբէր'' կոչուած ձէֆիաքն է սա, որ առելի ուղիղ ,,Մարգարտատարն'' է, որ ընտիր եւ օրինակելի ձէֆիաք է, որպէս ընթերցողներն պիտի տեսնեն։ Տարա մի այլ ճուղն գրի առած եմ ձռւարատպատ գիւղի բարբառով Արիստակես վարդապետ Զուլոյեանէ լսելով. որը առելի լաւ է։

Պապօն ասաց.—Էյ ձագերս, քեռը, քուն ինչ կանեար անգութ, անեիկեր էնի, էլմ չանք խորթ մէր աղէյ կելնի։

Ամաճ պապօն տեսաւ օր ձագեր նեղացեր ին, լեզուներներ կախուեր, նղիրներներ կարեր էր (ուժասպառ եղած), սրտերներ նուաղեր էր, շոք զարկած անտէր գետուռ պէս, ընկեան խոլքերի տակ, կը խուին։ Պապօն էս տեսնալու պէս ձեռ խոուր ուր մուրուս. աչքեր արտասուքախառ կօռ իղար գետին, կօռտին իթալ վրէն, խով արաց վեր ուր ձագերաց. ինքն էլ նստաւ, գլուլ—գլուլ արընախառն արտասունք թափեց վեր ուր երկու անտէր ձագերաց։ Աղջիկը արթընցաւ, ասաց.—Պապօ, մենք անօթի ինք։

—Մէ փչուր մէլ սապր արա, ասաց, թող աղբէրդ էլ զարթնի։

Կտորմ մնացին. չմնացին, աղբէրն էլ զարթնաւ, պապօն ուր քեռակի վերևէն ալնախ քեռակեց, ուր կնկայ տուած էրկու թափ-թափէն խանեց, տուեց տղէյներաց՝ տղէյներ կերան։

Շատ միտք արաց ուր անդդամ կնկեան թողնելու, ուր խեղճ ձգեր առնել, ծլարուելլ, ամա չկեարցաւ. տղէյներաց անտէր թողնելու՝ էլաւ, գնաց։

Քիչ մնաց՝ տղէյներ արթնցան, տեսան կօռ կայ, կօռտիկ կայ, պապօն չկայ. էլան անտէր գետուռ պէս, ըս տեղ ընկեան, ըն տեղ ընկեան։—Պա՛ ա՛ ա՛ պեծ, պա՛ ա՛ ա՛ պեծ կանչեցին, ամաճ պապօ չգնտան. ճարեր կտրաւ, էկան նստան, իրենց խորթ մօր տուած չոր կլոճ կերան։ Քիչ մնացին, շատ մնացին, ծարուրցան. խասան մէյ տեղ մը որ գոմշու ոտաց տեղ ջուր կեր, աղբէր ասաց.—Տատօ, ես ծարաւ եմ։

Քեօրն էլ ասաց՝—Էսա տեղէն որ խմես, գոմշ կը դառնաս, ես քե չեմ կանայ չախե։

Կովի ոտաց տեղ խասաւ, էլմ սգնայ ասաց, ձիու խասաւ, էլմ սգընայ, եղնիկի ոտաց տեղ խասաւ, էլմ սգընայ։

—Տատօ, տատօ, ես ծարաւ եմ, ասաց էլմ։

—Աղբէր, եղնիկ կը դառնաս, շատ կը փախնիս, քե սարեր, քեսարեր կը թալես, ձիզնից կը զատանաս, ձի կարօտամաչ կանես։

Խասան գետուռ ոտաց տեղ. ասաց.—Տատօ, Սուրբ Գէորգ գիտի, ես պիտի խմեմ։

Քեօր տեսաւ ճար չկայ, ուր աղբէր, ուր թալաւ կանի (կը վտանգէ), ասաց.—Ճայնամ. մեռնելուց աղէկ ի, թող էղնի գետուռ, վեր սրտիս կը պախեմ, սկուն իմ կարօտ կառնիմ։

Տղէն էր, գնաց խմաւ, էլաւ գետուռ, ընկեաւ քիւրոջ խուխից։

Կերթան, քեօրն էլ կը ծարուրնայ, կերթան, կը խասնին մէյ աղբրի, որ էն տեղ չուխտ չիճարի ծառ տնկուած էր՝ էն տեղ աղ-

ջիկ ջուր կը խմի. դեռահասիկ աղբօր կը կեսպի էգա կանանչ խոտերաց մէջ արածալու, ինք կելնի ծառի վերէն, սարիճ (զոլ) տեղ մը կը նստի ճեարկեախ անելու։ Ան տեղէն կը տեսնայ թագաւորի խոյամները (ծառաչք), ձիանքառը կը բերեն, որ ջրեն, աղջկան չուք կառնի աղբրի վրէն, ձիանք կը խրտընին, կը թողնեն, փախչեն։ Կերթան թագաւորու լաճուն կը բերեն. թագաւորի լաճ կը լսի, կը թեզուի (ղարմանայ) կսսի.—եա, եա, էսա ինչ էլերի, չելնի դիւսման իկա։

Կելնի, կիւրճ կառնի ձեռ, ձիանք կառնի, կերթայ. աչքը ըդեղ կը թալի, ըն տեղ կը թալի, կսսի.—Կեծ, ես ասեմ չանք լիւռնակ, դիւ ասա չանք արև, չուխտ իրես կը տեսնուի. դասցա, դասցա բերնից վարդ, բռահաճ կը թափի. աչքեր, կեծ, չանք բարի լուսու աստղեր կը պսպղան։

Թագաւորու լաճու աչքեր մնաց բաց, բերնին ջուր գնաց, ասաց.—Աղջիկ, քե որ խոմն ի բիրի ըս տե։

Աղջիկը ասաց.—Խորթ մօր դարս։

Ասաց.—Աղջիկ, էգա տեղ կաց, ես չուխ գամ, քե տանեմ։

Էն դեհէն քրդու կնհն որ իկեր էր, ծաղիկ ժողուեր, էսա յմհն կը լսի. թագաւորու լաճ որ թողնի, կերթայ, կուգայ, իրեք դիր կը պռռայ.—Աղջիկ, ցած էջիր Կը տեսնի օր աղջիկ չէ էջնի, սև խաղած պառաւ մ, սև խաղած կնհն, համաճ փեչեր կը քշուի, կսսի.—Ահա բոբիկ սրբեր, անօթի քրդերդ, ու թունի ծառ, աղջկան լանկեմ կը զանի, կը թալի մէջ կեօլին։

Կուօմ կը մնայ, թագաւորու լաճ կուգայ, կիրիչկի վեր, կը տիանայ ոչ էն ճռեաճ ի, ոչ էն աչքերն ի, մէկ էլ կը մեզի վեր ուր, կսսի, ուրին ուրին—Պալէի ես կը խապուիմ, աղջիկն էն աղջիկն ի, կը խարցուցի աղջկան.—Աղջիկ, քե ինչ էլեր ի, դիւ իմ այիչ փոխուեր իս։

Աղջիկն ի, կսսի.—Ասըւորիս վերէն ճեճելին պախք չկայ, դիւ իմ դասցիչ խապա՞ր էս, աչքերսի forցաւ քիւ ճանըսիս իրիչկելով, էրեսիս գեօն գնաց արևուց երեւելով, սիրտս սիւցաւ քեօ կաօտուվ։

Թագաւորու լաճնէ, կսսի.—Խաւր լեզուն էլ ուր խեռ խաղցր ի։

Համաճ կնհն ծառից կէջուցի, թալի ձիու քարկ, կառնի գեառնիկ աղբէր, չուխ տուն մէկ աչքարացի կը խասնի։ Կերթան եօթ օր, եօթ գիշեր խարանիս կանհն, խեռ ճասի պառաւու աղջկան կը փսսակեն. փսայուելուց uorա՝ իրեք գիշեր, իրեք ցերեք կընցնի վեր թագաւորու լաճուն, թագաւորի լաճ կը տեսնայ որ էսա աղջիկ էնոր տեսած աղջիկ չի, էն տեսածն էլ եա էրազ էր, եա փէրի։

Էս թող էս տեղ մնայ, գնանք տեխ մեր աղջիկ։

Աղջիկ կեօղի պառուկ չատ մնալով՝ քիչ մնալով Աստուծոյ խրամանքով կելնի վունջ մանուշակ չիմանքառաց մէջ. գիշեր աստղերաց մայիլ կանի (հլուցնել կուայ), ցերեկը արեգական. լուսնըկի չաղով ուր իրես կը լուայ, գիշեր ցերեկ դառն արցունք կը թափի դառնիկ աղրօր խամար։

Շատ կընցնի, քիչ կընցնի, մէ օր էլ տեսանք թագաւորու ձիանք էլմ էկան էդ աղբըրի վերէն ջուր խմելու։ Ջուր խմեցին. մէյ ձին բերան էթալ, վունջ մանուշակ կերաւ. վունջ մանուշակ էլաւ մատնիք ձիու փորի մէջ։

Թագաւորի ձիանք չատ խօրատ էլնելուն խամար թագաւոր մէյ պառաւ էր բերե, որ ձիանքառաց վերէն ալիչ ուլինք կարէր, ձիանք ալք չառնեն։ Էդա պառաւն ի յրմեն օր կերթայ, եր դօր կուգայ էդա ձիուն, որ մատնիք ինոր փորն էր, ձին կը վունգտայ. մատնիք դիւա կը թռնի մէջ պառաւու դէօդին. պառաւ կառնի, կերթայ տուն. կը տիսնայ մէյ խատ խրեղէն մատնիք. կը դնի ուրանց պատխան։ Պառաւ որ յրմեն օր կերթայ թագաւորու տուն խզմիին (ծառայութեան), դառնայ կուգայ, կը տիսնայ տախտ աւիլուկ, խաց թրչուկ. ցան—ցախ դրուկ, սոխն սոկուկ. յրմեն բան հազր (պատրաստ) տեղ պա տեղ արած, չարապըրած, գիտիս կէօ պառաւու առջիննեկ լահ մ' էլնէր փսայուած՝ բազա խարս բերած։

Պառաւ էտա բաներ որ կը տիսնայ, կը չկուի, կը թեպուի, կը զարմանայ, մնայ, կասի.—Նա'ռապ, էտա ով ի որ էտա բաներ կանի. չարքըն ին թէ խրիչտակներ, վերքինքն ին թէ դրկցի աղջիկներ։

Սօրա պառաւ օրմ չէ, օրմ ակլա կը դնի, ուրենց աւելուքքի կողով կը կոթծի վեր ուր, կը նստի տանտան (թոնիրտան օրմ) պատի տակ, տիսնայ, խէնք էտա ով ի, կանի։ Աղջիկն ի առանց դիտնալու պառաւու արած, կէշնի, աւել կառնի ձեռ, պաչլայի աւել առնել. աւելուց բերի, կոլոնի կողովի մօտ, կողով կը վերցի որ աւելուցք մէջ լցի, մէկ էլ պառաւ կողովի տակէն չոտ մը ձեռ կը թալի, կը բունի. կը տիսնայ որ ինչ—խուռնիկ խրեղէն աղջիկ ի, աչքեր չուխտ զմրիւխտ մը, իրեսներ կէօ ջանք լիւսնակ մը. կասի.

—Դիւ ով ես, որ իմ բաներ կանես։—Կասի անմէր տղայ եմ։

Աղջիկ պառաւն կասի.—Դիւ ով ես։ Կասի.—Անտղայ մէր եմ։ Կասի.—Ես քե տղայ, դիւ ձի մեր։

Օր օր կընցնի, չաբաթ կընցնի, ամիս կընցնի. պառաւ իննա աղջիկ սիրով ետմիւր կընցուցին. թագաւորի տան ուլնիքներ պառաւ կը բերի, մէյ տեղ կը չարենն։ Մէկ օր պառաւ կուգայ, ճաղլ կանի աղջկան, կասի.—Աղջի, էս օր թագաւորը ուր ձիանք, երկեր-

կու, տաս—տաս ցլրեց ըս տեղ, ընտղ պախ։ Աղջիկն ասաց.—Այ մարէ, ընչի՞ մէյ խատ էլ չբերեցիր, մենք պախենք։

Մէրն է, աղջկան խաբր չկոտրելու համար կերթայ, թագաւորուց ձի մը կուզի. թագաւորն է, կասի.—Այ պառաւ, տու ինչ ձի պիտի կանաս պախես։

Պառաւն է, կասի.—Ինչ ձի կուտաս, տուր։

Թագաւորն է, կասի.—Մէյ խատ էնա չեչել, բօխալ, մէկ աչք կօր, Աստըծոյ կազապ ձիանքաներաց տուէք, թող պառաւ տանի։

Պառաւը կառնի, կը բերի տուն։

Խեղճ աղջիկն ի, որ կը սիսնայ, կասի.—Ես էլ իմ բաղդից ի։

Աղջիկն ի, պաբայեց (սկսեց) ձիուն եմ տալ. քմրել, չախիլ, մաժել, մաժմըժել, սկուն որ ձին մէյ ամառան մէջ էլաւ Արճակու ծովից քաշուած խրեղէն ձի։ Որ թագաւորու վաեհն կը լցուի, կելնի ձիաք ժողուվելու. վիր որ տուիր էր, սաղը խատուկ եա առեց. ծրծղալու խամար ասաց։ —Մէյ գայէք, էն պառաւ տուն տեսէք, էն ձիու ուսկրներ դէօր է խորեր։ Թագաւորու մարդեր էկան պառաւ տուն, գնացին փայախ, տեսան, ինչ.— դեյ ազբահատ կայնէ էն տեղ. որ յրմեն փնչալէն գետնի տկէն բոզ—դուման կը խանի, յրմէն խրխնչալուն տիրոջ դիւռման չուր Խորոսան կը փախցուցի։ Իսոնք որ տեսան, չկրցան ներս մանել, կանչեցին պառաւուն, պառաւն էլ կանչեց աղջկան։ Աղջիկ գնաց տեխ ձին, իդա կատղուկ ձին խետ աղջկան տխսան, ես ասեմ արևիւ արջւի մորդի մոմի պէս խալաւ, դիւ ասա, բոցի վերուի արդար եղի պէս խալաւ, կընցկըռտուաւ, քաշկմշկուաւ, էկաւ աղջկան ձեռ պագեց. աղջիկ էրկու խապար փսփսաց ականջին, իտուր թագաւորու խոլամներաց ձեռ, տարան։ Թագաւոր ուր բեօշկից որ տխսաւ, գլխուց մուխն էլաւ, ասաց.—Ծօ, վայ, մօտ էս ճատու պառաւ ինչ չնորհ կայ։

Թագաւորու լաճ էլ ասաց.—Բեաշկե ես մէկ էլ փսայուի, էսա ձին խեծնի, իմ սրով, նետով ամպեր պատռտի։

Ձին տարան, կապեցին տաննեօթը գուբինի զնգիլով, յիսունը խինգ կալչ թոկերով. զնգիլներ վարագայ սար կապեցին, թոկեր եղերով բխպռեցին։

Գետանք մկայ տեխ մեր ճատիճ. մէջ ճատուց, մէջ թագաւորու լաճուց քեաճ մը կը ծնի, քիչեր ցերեկ թագաւորու լաճուն անդադար կանի, չթողէ քնի, թագաւորու լաճն է, ճար մէջ կը կտրի. կօրոխկի դաւրեշներ կը կանչի, կասի.—էկէք, տեսէք, եարապ, էս ինչ պտուղ ի։

Դաւրեշներ կասին.—Թագաւոր ապրած, էսա քեաճ խալալ սիրու զաւակ չի, իդոր մէյ ճար կայ, օրոխկիս ըս տեղ մէյ խատ պառաւ մօտ աղջկիկ մը կայ, էն աղջիկ կը բերիս, նատի իդոր մօտ

մարգրիտ չարի, չարվար յրմէն թարաւ կանի։ Թագաւոր ըս տեղ կինի, ըն տեղ կինի, ոչ էդա պառաւ կալա կնտնի, ոչ էդա պառուս աղջիկ, մէկ էլ կը մեղի, վեր ուր կասի.—Ծօ, վայ, ջոջ էչ փակեախն եմ մոռցի, չեղնի՞ էսա մեր պառուս տուն ի։ Կորոխկի պառուս մօտ, խնչ աղջկան, կանչի։

Պառաւն է, աղջիկ կառնի, կերթայ թագաւորու տուն. ամաճ (բայց) քեօխք մէկ քեաչի աղջկան էրեսի վերչէն, մտածելով որ էն աղջիկ որ ձիանքտերաց մէյիլ արաց—էյ, ճեհել մարդեր դաճա չոտ ուր մէյիլ կանի։

Աղջիկն ի, կերթայ, կը նստի օրօրոցի մօտ, կօրօրի, մարգրիտ կը չարի. մէյ տեխէն էլ ուր գլխու գեացած դարտեր կուլայ, գեառնիկ աղբօր կարօտով կերուի, կերթցի։ Թագաւորու լաճն ի, իսորից սորա ծանտր—ծանտր կը քնի։

Մէկ օր խառ—խառ էրազ կը տեսնայ, չոտ կը զարթընի, աղօթընի ճղճղուած վախտ, մթան լուսիս կուու գեախ, գեօ ուր ժամխարն ճալա ուր գիւղու ժամ չկանչած, լուսու մօլլէն չկանչած, կը տեսնայ որ ինչ—Վարադայ սարէն էկած էն անուշ Գէլվազ (քամիի անուն) ուր խետ կը բերի անուշ ձէն մը, որ դարտ ունեցողի դարտեր կը խոլցուցեր, ճհեղներաց էլ չատ բան միաք կիցգէր։

Թագաւորու լաճն ի, ուչքն էլ կը բանայ, տեսնայ որ տուն, տեղ, սար, քեար, որն կուլայ, սրն կը խնդա ձէնից, մէկ էլ վեր կը թռնի, կը վազի, կերթայ, տեսնայ կեօ էն աղջիկն ի, ուր դարտեր կուլայ, կայնի, ականջ կանի աղջկան խապրերաց։ Թագաւորու լաճու մազեր քիւ-քիւ կը կայնի, ինչ որ կը տեսնայ էսա աչխարհի մէջ հողածնի կալպուճեն։

—Ես ու իմ աղբէր, իմ մէր, իմ խէր՝ մագրիտչար-մարգրիտչար [1].
Մէրսի մեռաւ, խէրսի խորթ մէր էբեւ.
Խորթ մէրսի պապօյիս ջանին խասուց.
Ասաց.—քեօ աղէկներ ուաս պիտի անես.
Թէ չէ, քե կնկնուրճեն չեմ անի.
Խորթ մէրսի շար կլոճ թխեց, մե կերթցուց.
Պապօն մե ասաց.—այ որդիք, երթանք ի հանտ.
Ես ասի.—պապօ, ես ծարաւ մեռայ.
Առաւ պապօն, տարաւ մե վեր աղբրին.
Էն տեղ ես ու իմ աղբէր ջուր կուշտ խմանք.
Գնացինք, նստանք մէջ մէ հանտիմ.
—Մենք էլմ ծարաւ մեռանք, պապօ.
Պապօս ասաց.—գնացէք ինա սարին խոտ.

1. „Marqris .cur, մարգրիս շար"-ր կրկնել ամէն տողի վերջը։

Մինք էլանք, գնացինք որ ջուր խմինք.
Պաղլօս կօռ անկեր, կօռտին թալեր վրէն.
Էլանք որ կօռ կէր, կօռտին վրէն, պաղլօս չկէր.
Ասինք.—պաղլօն դա չի, մ՛այ աւար, մ՛այ աւար.
Պաղլօն դա չի մ՛այ մ՛աւար—աւար, աւար,
Առինք կօռ ու կօռտիկ, քօռ ու աղբէր, գնացինք.
Գնացինք չատ ու քիչ, Ասուած դինաի.
Աղբէրս ասաց.—տատօ, ես ծարաւ մեռայ.
Ասի.—Աղբէր ջան, քե էլնիմ ղուրպան.
Դոմչու ոտաց տեղ խմիս, կէլնիս գոմէշ.
Ես քե չեմ կարայ պախիր ու չախիր.
Ասաց էլմ.—տատօ ջան, ես ծարաւ մեռայ.
Ասի.—եզան ոտաց տեղ խմես, կէղնիս եզ.
Շատ ու քիչ գնացինք, աղբէրս էլմ ասաց.
—Տատօ, ծարաւ էրուայ, ծարաւ վառուայ,
Ասի.—գետու ոտաց տեղ է, խմի՛, աղբէր ջան.
Աղբէրսի գետու ոտաց տեղ կուչտ խմաւ.
Էղաւ գետունիկ, բուրուալէն ընկեաւ էտեսի,
Շատ ու քիչ գնացինք, հանտիմ հասանք.
Բեօր ու աղբէր նստանք օօռ կլօճ կէրանք.
Էլանք, գնացինք, աղբրիմ՛ հասանք.
Էնա աղբրի վրէն ջուր կուչտ խմանք.
Գետունիկ աղբերսի կապեցի ծառի տակ.
Ես էլ էլա չինարի ծառի վերէն.
Ծառի վերէն բրկեախ դրի, բրկեախ արի.
Թագաւորու ձիանք էկան, ջուր խմեցին.
Իմ չառաւիղ տեսան, խրտնան, վախան.
Գնացին թագաւորու լաճուն ասին.
Թագաւորու լաճ ձիանք առաւ, էկաւ.
Իրիկվեց ջուր, տեսաւ իմ չառաւիղ.
Իրիկվեց չինարի ծառ, ձիկ տեսաւ.
Ասաց.—աղջի, դիւ ինս ես, ճինս ես.
—Ես Ասործոյ ծառան եմ, ասի.
Ասաց.—աղջի, դիւ կաց, ես իգամ, քե տանեմ.
Թագաւորու լաճ գնաց, դել չէր իկէ.
Բրդու կենէ, մէր ու աղջիկ էկան.
Կենէն ձիկ ասաց.—աղջի, ձիկ էլ խան ծառ.
Ինչ որ արաց չխանի ծառ, ճար կլորաւ.
Մէր կզաւ, կենէն էխան քեամկին, խանեց ծառ.
Էկաւ բրկեախ ձեռնէս խլեց, ձիկ թալեց տակ.

Ես ընկեայ մէջ ջրին, էլայ փուջ մանուշակ.
Թագաւորու լամ էկաւ, իրիշկեց ծառ.
Իրիշկեց, տիսաւ էն աղջիկ չէի.
Ասաց.—աղջի, դիւ ընչի բդսնայ իս էլէ.
Ասաց.—էն կանցար իրիշկերիմ, աչքերս չլուեր ի.
Էն կանցար նստեր իմ, արև, էրեսաէ սևցեր ի.
Արև զարկեր՝ բերանսէ քեդրուեր ի.
Ասաց.—աղջի, արի ցած, քե տանեմ.
Կճեն տարան, Թագաւորու լաճուն խետ վսակեցին.
Իմ խօրտիկ գեառնիկ աղբէրն էլ տարան.
Ես էլայ փունջ մանուշակ Կապուտ կողկայ աղբրի կողքին.
Թագաւորու ձին էկաւ, փունջ մանուշակ կերաւ.
Ձիու բերնի մէջ ես էլայ օսկի մատնիք մը.
Պառաւ էկաւ, ձիանքտեղացց ուլինք կարէր.
Էն ձին փռնգաւց, ես բերնէն դիւ ընկեայ.
Պառաւ ձիկ տարաւ, էդիր պատուխան.
Ես էն մատնիքն ի, որ կելնէի աղջիկ.
Էմէն օր թոնիր կը վառի, խաց կը թխի.
Պառաւ մէկ օր փեթակի խոև պախ էդիր.
Ես էլմ էլայ, դարպար սրբեցի, թոնիր վառի.
Ձեռներս լուացի որ պտի նստի պատուխան.
Պառաւն ձեռս բռնեց.—աղջի, դիւ ով ես, ասաց.
Ասի.—դիւ ձիկ մէր, ես քե որդի.
Էլանք մէր ու աղջիկ, մէյ տեղ նստանք.
Մէյ օր պառաւ ասաց ձիկ.
Թագաւորու ձիեր տուեր էն պախ.
Ասի.—մէյն էլ դիւ բեր, պախինք.
Մէյ կռոտ ձի էլ պառաւ իբե, ես պախեցի.
Տանէ տան ձին կու թիւրի, ջուր կու խմցուցի.
Ձիու բոլոր կը պըրտի.
Առոյտ, խոտ ու ծաղիկ կու թափէր.
Թագաւորու ձիանք գնացին, ժողուեցին.
—Էրթանք, ասին, պառուու ձին բերենք.
Ասին.—լաւ, լաւ ձիանք որ խաուուցին.
Պառուս ձին էլ զաքի խաուուկ էր.
Էկան, ձին տիսան, զարմանշ մացին.
Ձիուն ասին.—էլի վիր, էլի վիր՝ չելաւ.
Ասին.—ով պիտի դիւս խանի ձիուն.
—Միւմպարեի մալ, վիր էլի ասի.
Ձին թռաւ, կայնաւ, դիւս էլաւ.

Թագաւորու լաճ իրիկնէց, ասաց.
—Էսա ինչ զարմանք ձի ին պախեր.
Թագաւորու լաճուն կնիկ տղէմ' էլաւ.
Էն տղէն ոչ քուն ունէր, ոչ դատարում.
Ուր միս վեր ուր ճանին կուտէր.
Թագաւորու ճար կտրաւ.
Օրօրնկէց, դաւրէս կանչեց. խարցուց.
Դաւրէս ասաց.—Էսա տղէն խալալ սերոյ պտուղ չի.
Ձեր ձին չահող, պահող աղջիկը բեր.
Որ դէղ անե, օրօրոցին մարդբիտ չարէ.
Մարգրիտ կը չարեմ, գեառնիկ աղբօր վերէն կուլամ.
Մարգրիտ չարիմ, էսա օրօրոց օրօրիմ։

Թագաւոր որ էսա խաղ լսաւ, իմացաւ ուր դլխու գեացած, կասի.—Ծօ, էսա ինչ էլաւ իմ դլխօս։

Համաճ էն գեախ լինե կուդեայ, էն աղջկան կը գրկի, կը դնի վեր ուր բախտին. արաբու պուկօչ կնիկ ուր տեղին մէջ պարկած կը քնէր, կը խռէր, կեօ գիտես արջ մեր մտէր քիթ, էն գեախ լինէ Թագաւոր ուր ճալաձին կասի.—ըդանայ (այդպէս) չլուէ—չլուէ ուր տղէն կուտայ կապել վրը ուր սրտին, կը կապի էն ձիու պոչ, որ մեր աղջիկ էլեր մանիք։

Ձին ի, կառնի, սալէսար, քարեքար կը վազնի, մէյ կտոր Մաքեայ կը թողնի, մէյ կտոր Թէյհրան, ուր չահող աղջկան ոխ էնորից կառնի։

Թագաւորն ի, յըմէն արարած աչխարհ ձէն կուտայ որ հազրուեն, գեան խարանիս։

Թագաւորն ի, եօթ օր, եօթ գիշեր խարանիս կանի, ուր խալալ խարանացուն կառնի։

Էսա էս տեղ Թողնենք, էրթանք տեղ խորթ մեր։ Խորթ մերն ի, ինչ որ կը լսի ուր սրտագեալար աղջիկ սդնայ սասուն պախտիմ' կը տիրանայ, ուր խալալ աղջկան կասի.—Աղջիկ, էլեր էրթանք, պախտի դուռ բացուեր ի, բալիք քե ընդուցիմ էնոր տեղ։

Կառնի ուր Տիրամօր քեաշմշած աղջիկ, կէրթայ, էն օր կը խասնի Թագաւորու տուն, որ կեօ խարանիս կանեն։ Թագաւորու դուռ կը կը դանի, չըխկ ու չըխկ։

Կասեն.—էն ով ի։ Կասի.—Բաց, խուրնի խրեղէն աղջկան մերն իմ։

Աղջիկն ի բեօշկից կիրիչկի, կը տիանայ որ ուր խորթ մերն ի, հաւար կը Թալի ներս, բերել կուտայ։ Թագաւորու լաճն էլ չատ կուրախանայ։

Քեանի սհաթ կընցնի, աղջիկ տարան պիտի լողկցուցեն, որ վսայուի։

Խալուրներ խանին, դրին թաշտ, տարին որ մէյ խատ ջուր լցեն վրէն. աղջկան նատած թաշտ մանուշակով, գինեբբիւկով իլին լցուաւ, էն տեղ աղջկան վերցին, տարան նատըցցին վեր թախտին։ Ուր մօր կանչեցին, էկաւ, ուր խրեղէն ծամեր կը սանտրէր։ Ծամեր սանտրած գեախ որ կը ծծղէր, փուշ—փունջ վարդ իճաճ ըռահաճ կը թափէր, չարան—չարան մարգրիտ կը թափէր։ Որ ուր խերճնական դարեր միաք կենէր, կուլէր։

Խորթ մեր չարեց, զարդրեց, արաց գեօ երկնքի լուսնակ մը, իակեց ուր առաջ, խատ ուր խորթ աղջկան զնաց պտըռելու ծովափ։ Տարաւ ծովափ, ասաց.—էկէք, մէյ խատ էլ ըս տե լողկցէք։

Աղջիկներն ինչ խալուրներ խանին, մտան ծով։ Սևաւոր ճատին ինքն ուր աղջկան աչքով արաց, դիւս իխան, էն մէկէլ աղջիկ, արաց որ դիւսն էլլեր, բռնեց, քեարմ կապեց ոտ, իթալ անյատակ ծով։

Ատրծաւ խրամանքով ձիւկն էկաւ, թել կտրեց, աղջիկ կուլ իտուր։

Խեղճ աղջիկ ըճիւր-ըճիւր իլաց մէջ ձկան փորին, ասաց.

—Ցղէն խորուէթ, մօրուէթ պիտի ուրախանայ։

Աղջկան արտրաքներ թափաւ վեր ձկան ճիկրին, ճիկեար մըռմռաց, ուր տփեց ըս տե, ընտեղ, ասաց.—Վ՛ույ, էս ինչ սև էր էկաւ իմ գլուխս։

Էսա թողնենք, դանք թեխ խորթ մեր։ Խորթ մէրն ի, մէկէլ աղջկան պիքուճ խալուրներ ու զարդարանք խագուցի ուր տիրամօր քեաշմիչած աղամանուն, կառնի, կը տանի թագաւորու տուն, կը խափի, կասի։—Իմ խալալ աղջիկ ընկեաւ ծով, խեղդուաւ։

Ուր աղջկան խատ թագաւորու լաճ կը փսայուի։

Կը մնայ մէկ երկու ամիս, թագաւորու տնեցիք կասին.

—Էսա մեր խարս քեանի լուինք, մանուշակ, գինեբբիւկ կը թափէր, քեանի կուլէր, կը ծծղէր, վարդ, ըռեհաճ, մարգրիտ կը թափէր, մկայ ինչ էլաւ որ իգոնք կառան։

Դարձան, ասին։—Ջայիր (թերևս) ծննդկան ի, ինոր խամար ժիւլ մը կտուեր ի, բան չկայ. ժիւլ մէլ կելնի, էդ Ատրծու բանն ի։

Գեզի կասեմ, էս բանի վերէն մէյ օր կլօրակուտ ժամխարմ կելնի. կոչնակ կառնի, կերթայ ծովափու տներաց մարդեր ժամ կանչելու։ Էդա աղօթրնախառն կօչնդի քեաղցրիկ ձէն կերթայ, կը խասնի ծովու միջէն դիւս էլած մօրէ մերկ պէպախթ աղջկան, որ կայներ էր ծովու եզր, կը բաղդակոծուէր։

Ժամխար թող պտըռի ծովու պուռվի, փեանք, քե ասեմ. ով է էդա ջուրթ աղջիկ։ Է՛յ, քեօ միաք կուգեայ. էն աղջիկ որ թողու-

ցինք ձկան վրա . . . ձկնկն ուր ճկռի մռմռից աղջկան դարձ չկարայ տանի, կը բերի, որտեղ որ կուլ էր տուե, էն տեղ ափ սրտից վեր կանի։

Աղջիկն ի, կելնի կը կայնի էն տեղ, կը կանչի բարի լուսու սիրուն Քրիստոս, կասի.—Նա Ծիրամօր քահանան խինդ կանթեղ, քեռ բարի լուսով չող մը թալ սևաւորիս, բալիի ես ըս տեղէն ազատուեմ։

Էսա կասի, կը նստի ծովափ քեռքի վերէն. երիչկի տեխ աղօթարանն էն դեսի Վարագայ ղղղուն քեռմին բարակ կօշնդիմ ձէն կը բերէ ուր ակնջին, խաչ կը խանի ուր սիրտ, փառք կուտայ Աստըծուն։

Էսա տեղնի ժամկաբ, որ ուր տկըլ-տկըլ «Օրհնեալ է Աստուածծ» ասելով կը մօտանայ։ *)

Պառաւի ճատի աղջիկը, մէկ օր գինք սուտ հիւանդ կձևացնէ, կը հեծկըտայ, տքայ ու կուլայ. թագուոր անդադար կը լինի, կը հարցնէ թէ սիրտն ինչ կուզէ. նա կը յայտնէ թէ ոչինչ բանով չաւողջանար, այլ երեն Գառնիկ աղբէր մորթեն, որոյ միսը ուտէ, կառողջանայ։

Թագաւորը կը զարմանայ, ինքն իրեն կասէ.—Մինչև այժմ կինս կասէր թէ Գառնիկն իմ եղբայրս է. ինձ աւանդ յանձնեց որ լաւ պահպանեմ. այժմ կինս հիւանդացաւ, խնդրը ցնորեց։

Կնոջ խնդիրը ուշացուց.—Սպասենք, ասաց. սորա վերջը։

Սորա վերան անցաւ քանի օր, աղջկան մի ձայն հասաւ որ իւր Գառնիկ աղբէրն էր կը պոռար. կասէր.—Ճատի աղջիկն դանակն է սրած, սուտ հիւանդ ձևացած որ զիս մորթեն։

Աղջիկն երբ ժամհարի կոչնակի ձայն կը լսէ, տխուր տխուր կերգէ։

Աղջիկ չաքըով իլին բերան կը բանայ, ուր դարձը խեռ խառնելով ժամխրին տեխ ուր կը կանչի։

—Ժամկաբ-ժամկաբ, որ քեռ ժամ կը կանչես,
Եօթ խաչ որ քեռ իրեռ կը խանես,
Քեռ բարի լուսու Աստուած կը սիրես.
Էրթաս թագաւորու լաճուն ասես,
Որ իմ Գառնիկ աղբէր չղինես.
Սուտ ու վնդոր խապար մալիկ չանես։

Բանի անդամ այս ձայնը կը կրկնուի, կերթան թագաւորին կը յայտնեն, նա կգայ, կը գանէ իւր իսկական կինն. պատսպարէ, կը տանէ տուն. պառաւի աղջիկն ձիու պոչը կը կապէ։

*) Սոյն նեհեաթի վերջի մասը կորուած էր համառօտութիւնը այս տեղ առի։

42

ԽՕՃԱ ՅԻՒՍԵՓԻ ԳԵԱՌՆԻԿ ՏՂԷՆ

(Քոկաց բարբառով *)

Ժամանակով մէկ խօճա Ցիւսէփ կըլնը. աս խօճա Ցիւսէփ չատ խարուսա կըլնը. անուր չատ օչխար կըլնը։ Խօճա Ցիւսէփը խովիւ օխչարը կառնը, կերթայ սար։ Անուր ավլաս չըլնը. ան մէկ ժամանակ Աստուած խրաման կէնէ, անիւր կնիկ ծուցվուր կըլնը։ Աչնան ժամանակ կըլնը. խովիւ կառնը օխչար, կիւգայ տուն։

Խօճա Ցիւսէփ տուն չի, գնացեր ուր խամար պազրկանութեան։ Ան մէկ օր անուր կնիկ ցաւ կըլնը, պտի տղա բերի, կըսը.

—Խովիւ, գնա դրկեցաց տուն. ան կնկեան կանչի, իգայ։

Խովիւ կէսախ։—Վալա իս չիմ երթար, կերթամ, կէսախմ, ան կնըկ չէկաւ։

Ի՞նչ պատճառի.—Պատճառը՝ իս ըզի տամ դուան յիսիւ, իրիշկիմ, ինչա կնըկ տղայ կը բերը։ Էլաւ դիւա, էկաւ ըսաց՝ չէրի։

—Գինա, յիւրիշ կնկեայ կանչը, ըրիս իգայ։

Էլաւ գիւա-դէօռ, էկաւ, դիր մէլ ըսաց.—Ան էլ չէրի։

—Գինա ուսթի տուն, անուն կնկտիք բօշ ին, բալխի մէկը իգայ։

Խովիւ էլաւ դէօռ, էլմ դարձաւ, էկաւ, ըսաց.—Գինացի. կընկըտիք, ան ըսաց՝ դիւ գինա, ան ըսաց, դիւ գինա, մէկն ալ չէկընւ։

Ըսաց.—Ըրիս չի գնան, իմ ճարն ալ Աստուած։

Մնաց խովիւ խոխ դուան, խօճա Ցիւսէփը կնիկն ալ ընկերի խոջիւ ցաւուն։

Խովիւ տըսաւ յիրդըսվի իրեք աղվընիկ էջան մէջ տախտըն,

*) Գտած է Մոկացի Օհան։

տըսան իրեքն ալ էղան կնըկ, ընկեան կնկան թիվքիր, անունց կարգը ինչ էր, կատարըցըն։

Խովիւ քամաճա կէնի, տըսաւ մէկ տղայ էղաւ, մէկը զաղէն կը վաթըթը, մէկն ալ կնկեայ տեղը չընըց։ Կնկեայ խելքը դինացեր ի, իրեքն ալ ուրինց աղվընիկ խագեան, կէրթէն. ան մէկ ըսաց.—Ինչու մէկ տուղա (խնդրուածք) չէրինք աս տղի համա։

Ան մէկ ըսաց.—Իս ինչ տուղա տ'էնիմ. ան Աստուծուց տուղա կէնիմ, ինչ գեաս Աստուած ստեղծեր ի, էրունք, թուչունք, անունց լիզուն խասքանայ։

Ան մէկը ըսաց.—Իս ան Աստուծուց կուզիմ, ինչ մուրազ էնէ, անուր մուրազ կատարի։

Ան մէկն ալ ըսաց.—Իս ան Աստուծուց տուղա կինիմ հոգիով ալ, մարմնով ալ զարքայութին տանը։ Թաան, գինացըն։ Խովիւ էկաւ իւր գիւմ, տըսաւ մաքին ծներ, գեառ մը բիրիր ի. խամա խասաւ, գեառ գրկից, առաւ, իրի խըտ կնկեայ կչտըն, զաղէն առըց, իդի յէռջև մաքուն։ Խովիւ զաղէն պախեց յիւր խամար։

Կնըկ ագախաւ օր գեառ խըտ յիւր կչտըն կը պռայ։

Ձեռ կասյ, էրախա, բան չի գեայ, գեառ մնակ ի, կըսի.

—Փառք քի, Աստուած. չէ դիւ ըզի տուբը, Թըղ գեառ ընը։ Կը մնա խըղուսուն, դրկեցի կընկախք կգեան, կը տեսնըն գեառ մը բիրիր ի։ Ադ կնըկն ալ կրնը ուր գեառ կը չախի, կը մնայ, խօճա Ցիւսէփ կգեայ տուն.—Կնըկ, ադ ինչ գեառ ի։—Մարդ, Աստուած ան տուբր ի, իմ Գեառնիկ տղէն ի։

Խովիւն ալ տղէն յիւր խամար կը պախի։ Տղէն ջօջըցաւ. էղաւ չուր խընգ տարեկան։ Կը մնայ մէկ օր, մանչ սարին կը նստի խովիւ, խըտ տղին կը խօսա—Տղա, տուղա էրա Աստուծուց։ Ըսաց.

—Ի՞նչ տուղա ինիմ։—Ըսա, աս փատ ընըս օսկը։

Ինչ խա տղը ըսելուն՝ փատ օսկը դարձաւ. խովիւ ըսաց.

—Որ սկուն ի, տղա՝ ըսա. մանչ աս սարին մէկ ֆօսկ ու սարայ չինուր, Մըսրայ փաշի աղջըկ մէջը ընը, ինչ Աստուած ստեղծիրը մէջը ընը. իմ խովիւ խէր մէջը ընը, դէօռ բան չընը։

Տղէն խըտ ըսելուն տըսաւ մէկ ֆօսկ ու սարայ էն տեղ չինուկ, դէօռ բան չկայ. խէրն ալ կչտըն չի։ Իրիչկից օխչար գինացըն. մընակ ընկեաւ խիւ օխչարըն, գինաց։ Էկան, էկան գեղի քամակ։ Աղբիր մի կէր ան տեղ, տղէն գինաց, վըր աղբրին նստաւ, խատ աղբրի խատ ջրին կը խաղայ։

Ան օրն ալ խօճա Ցիւսէփի մէյվաճ (հիւր) էկած ի, յիւր կնկայ ըսաց.—Կնիկ, սափիւր առ, գինա, մէկ պաղ ջուր մը բի, խմինք։

Կնըկ էլաւ, զսափիւր առից, գինաց, Գեառնիկ տղէն ընկեաւ խիւ, գինաց։ Գինաց, տըսաւ մէկ տղէ մի վըր աղբրին նստիր ի,

կանչէր։—Ա՛յ տղա, էլի վէր, իմ խուն չգեայ, քի զարկի։ Տղէն էլաւ, կանգնաւ։

Խուն զմեր ընցաւ, գինաց դախ տղէն, տըսաւ, խուն դադրաւ վըր էրկու յոտաց, խա տղին կը խօսայ, էրկու սահաք խա մէկ մէկու կը խօսան։

Կնիկ ալ էլաւ, զուր աման էլից, զարձաւ, կանչէց։

—Խայ տղա, դիւ վէր տղէն խա։—Խովիւու տղէն իմ։

—Վէր խովիւու։—Չիմ գիտի։

—Էրթանք մի տուն։—Չէ, ես տ'էրթամ մա օխչար։

Կնկի էկաւ տուն, խօճա Ցիւսէփ ըսաց.—Կնիկ, էս գիւ եռսուն տարուայ կնիկ իս, իս չի տիսիր գիւ խա մէկի զրուցիր, ասուր ըզի մէյվաճ էկած ի, իս քի ըսըցը, «գինա, ջուր մի բէ, համինք». աս էրկու սահաք կայ նոր կիւգաս, գիւ խա վէ կը խօսէր։

—Խա, մարդին չիմ խօսէր, իս մէկ աճեպ (զարմանալի բան) տիսայ. մէկ տղա վըր աղբրին էր, կըլնէր խընդ տարեկան տղայ. իս ասի, «տղա, գինա ղէն, խուն չի գա, քի զարկի». իս տեսայ տղէն կանգնաւ, խուն գինաց դադրաւ վըր յիւր ոտքերուն, խա տղըն խօսաւ, իս ան թամաշան կինի. ան աբով հանադեանայ։

Գիւ չի գիտցար վէր տղէն էր։—Իս խարցնցի, ըսաց «խովիւու տղէն իմ»։—Գէւր գինաց։—Ըսաց, «տ'էրթամ մա օխչար։»

Օխչար չուր առից գեղի արտեր, անքան կանչըցըն, մարդ չկեր խա օխչրին։ Էլան գեացին, տըսան խօճա Ցիւսէփը օխչարն ի, խովիւ չգեայ խըտ։

Տղէն էկաւ, անոր խարցըցըն։—Քիւ խէր յէւր ի։

—Մէկ էօճկ ու սարայ չինաւ, իմ խէր մնաց մէջ։

Խօճա Ցիւսէփ էլաւ, զուր օխչար, զտղէն առից-էկաւ տուն։

Տղէն թռաւ ուր գիրկ։ Իրար ճանչըցան, չատ ուրախացան։

Խովիւ յէւր տեղ կը մնայ, Թըխ մնայ։

Խընդ վեց տարի ալ կընցնը, կըլը տըսուերկու տարեկան. ան մէկ օր մէր կերթայ դրկեցի տուն կրակը. կիրիչի տուն կլան, տղէն կը խարցնի։ Ի՛նչ իղիր ի, վրէ կլաս, մարէ։

—Ան տղէն կը ճանչընաս, ինչ խա քի կը խաղէր յերէկ։—Խա։

—Մեռեր ի։—Մարէ, վրէ մեռեր ի։—Զրմեն տի մեռնըք։

—Իմ խէրն ալ տի մեռնը։—Խա, տի մեռնը։

—Իս ալ տի մեռնըմ։—Գիւ ալ տի մեռնըս։

—Մարէ, սկուն տեղ կերթամ օր Թէ չմեռնըմ։

—Որդի, գիւր էրթաս, տը մեռնըս։

Տղէն Թորկի-կերթայ, ինչ ինին չդադրըր։

Տղէն օր կերթայ. կըսայ։—Օղորմած Աստուած, իմ խօր աներ, աներ, կօրիճկներ, գերաններ, օսկր, արծաթ գառնայ։

Կիրիչին էղիր ի օսկը, արծաթ։

Տղէն Թորկեց, գինաց։ Դիւր գինաց, խարցնեց, կեասկին—դրամն կը մեռնըն. գինաց-գինաց մէ ծուռ ըռաս էկաւ, կիրիչի մէկ պառաւ ծուռիս պառուկ նստիր ի, չիրիւ մը առի, ծուռիս ջիւր դիւս կը թափիր։ Մէկ եաճէն կը թալի, մէկ եաճէն կիւգայ մանչ ծուռիսն էլա։ Պառաւ ըսաց.

—Հայ կանանչ կարիճ տղա, դիւ դիւր տ'էրթաս։—Տ'էրթամ ան տեղ ինչ չըն մեռնըր։ Ըսաց.—Կաց խա դը, չըս մեռնըր։ Ասաց ինչիս, էստեղ չը՞ն մեռնըր։

—Կը խէս աս ծուռ, աս չիրիւ, թալիմ, թալիմ, չուր ցամքէ. իսան գեայ, չինը գեղ, գուբան մէջ բանը, սէլ բանը, քաղաք չնըն, նուր իս տը մեռնըմ։

—Դիւ պոի մեռնաս Ըսաց.—Խա, պոի մեռնըմ։

—Օր մեռնըլ կեայ, չըմ կենայ դաս։

Զդաղրաս, էլաս գինաց։ Գինաց-գինաց. ինչ կիրիչկի, մէկ ծառ, ծառ էնքան բանձր ի, էրեգակ ծառի կէս տեղն ի, կիրիչկի խաւքսամ ձէն կիւգայ. խաւք կը կանչը։—Է՛, կանանչ կարիճ տղա, դիւր կէրթաս։

—Կեամ ան տեղ, ինչ չըն մեռնը, մաքի ինչիս՝ մեռնիլ չկայ։

—Կը խէս աս բանձր ծառ։ Ըսաց.—Խա։

—Իս անքան տը ծուռիմ, էլնը խաս իմ բիւնին, նիւր իս ընկնիմ, մեռնըմ։—Զըմ դադրի աս տեղ, ըսաց. իթուղ գինաց։

Գնաց չաս ու քիչ Աստուած գիտի, մէկ դաշտ ըռաս էկաւ, օ քան էրևանայ դաշտը կայ. մէկ չայիր, մէջը մէկ ձի կայ, ձին ըսաց.—Է՛, կանանչ, կարիճ տղա. դիւ դիւր կէրթաս։

—Կերթամ ան տեղ, ինչ մեռնիլ չկեայ, ինչիս, աս տեղ մեռնիլ չկեայ։

—Կը խէս աս չայիր, անքան տ'արածամ օր, չուրանայ, չայիր դառնա չոր. քամին առնը, տանը, բոզ մնայ. նիւր իս տը մեռնըմ։

Ըսաց.—Ձէ, դիւ տը մեռնըս։ Ըսաց.—Խա, անմեռնիլ չկեայ, տը մեռնըք։ Զդաղրաս ան տեղն ալ, գինաց։ Գինաց-գինաց, նեղացաս, ըսաց.—Ինչ մը նստիմ զդա, խանգիմ, էրթամ։

Ագախ գինաց (քնեց), տեսաս կօ մէկ պաղչիմ մէջ ի, կիրիչկի մէկ խալուր մարդ ջուր կէնը։

—Հայ, տղա, ըսաց. առ ան բախը, ջիւր կապէ աս եաճ։

Տղէն բախ առաց, ջիւր կապաց, տըսաս ան խալուրբ բաժա ալկաիր (տունկ) կը կտրի։—Ամի, ինչու ալկաիր կը կտրիս, ախսուս ի։

—Է՛, սրդը, ան իւկ չի, աս կը կտրիմ, տաս տարեկան տղէն կը մեռնը, աս կտրիմ, տըսնըլնգ տարեկան տղէն կը մեռնը։

—Ամի, մենք ալ տը մեռնինք։ Կեասկ.—Խա, տը մեռնինք։

—Օր մենք տը մեռնըք, իս տ'էրթամ իմ խօր-մօր մօտ մեռնըմ։

Խալիւր ձեռ խուռ՝ առաւ իրեք խնձիւր, էտուս—Ռի պէտք կիւգեայ ըսաց.

Տղան աչքեր իրաց, հանդ ինչ նստի, բան չդեայ։

Ցիտ դարձաւ Դարձաւ էկաւ, տըսաւ ձին։

Ձին անքան չայիրը կիրիր, ընկիր գետըն, կը խառնը, ըսաց.

—Է, կանանչ, կարիճ տղա, դիւ էկար, բան մը չկեա մա քի, տաս ըզի, ուտիմ։ Խնձիւր մը էտուս ձիուն, ձին գիննաւ կիրաւ, էղաւ երկու տարուընիկ ճուտաճ։ Էթուղ, գիննաց։

Էկաւ, խոսաւ խաւքուն, խաւք ընկեր վըր բիւնին իւր ծրտի վրայ, կը խառնը։—Է, կանանչ կարիճ տղա, ըսաց. դիւ էկար, բան մը չկեայ խա քի, տաս ըզի, ուտիմ։

Էխան խնձիւր մը լէ, էտուս անուս։

Խաւք խնձիւր կերաւ, էղաւ բազա Ցարիս, Թուաւ գինաց։

Տղէն էթուղ, գինաց, խոսաւ պառւուն, կը տանի օր ալ ծուվ չկեայ, մեկ փշուր մնացիր ի, պառաւ ոտ գրիր ի մանջ, ընկեր ի ան տեղ, կը մեռնը։ Ըսաց.—Է, կանանչ կարիճ տղա, դիւ էկար։

Ըսաց.—Խա, իս էկայ։

Բան մը չունիս, տաս ըզիկ, իս ուտիմ, մեռնըմ։

—Վ.ալա մեկ խնձիւր ունիմ։

Խնձիւր էտուս պառւուն, ինչ պառաւ գինձիւր կերաւ, էղաւ տըսնըչուրս տարեկան։

Պառաւ գինաց ուր ճալի, ան էկաւ յիւր տուն։

Տղէն ի, կէրթայ, կիրիչի, տուն չկեայ. վիր կը խորցնի, տան սալղ չտան։ Ան էղաւ խիւաք, ան էղաւ խիւաք, մեկ խալիւուր մարդ մը կար մանջ ան քաղքին, ըսաց.—Ադ ինչ էղիր ի։ Ըսին.—Ճանըմ. մեկ աղեմ էկեր ի, խօճա Ցիւսէփի տուն կը խորցնի, կեասի. տանուր տուն, տուիք, տուն արծաթ, օսկի իւ։

Ըսաց.—Հէ, իմ պապէն կըսայ, կար մէ քեաղքի մէջ մեկ մարդ. տունն արծաթ, օսկը էր։

Տղէն չատ փնտրտեց, բանմ չխասկացաւ. ըսաց.

Գիրիզմանքնիր ըզի նչանք տուէք։

Գինաց գիրիզմանքիր տսաւ, գիօր խաչքար ճանչցաւ. գիրկ իրի բիւլիւր, խամբիւրից։

Մարաւ, էկաւ վըր սրտին. ինքն ալ տեղ զտեղ մեռաւ, գինաց գրախտ։